Today Artsakh is the power of faith and love, art and culture of the world Armenians, which reigns here in this holy land. This power inspires and gives hope, assures and encourages working, creating, performing and being useful. Our Motherland, we all need this power, energy, efforts, deeds and creation emanating from its power.

I am sure that the results of the discussions will promote improving the effectiveness of working out a strategy for the development of relevant areas.

I am sure that the upcoming discussions during this conference will be interesting and useful, and the atmosphere of the conference will be favorable for the emergence of new ideas. I wish you fruitful work and new successes.

Today, here in our holy Artsakh world, which we acquired at a very expensive price, I want to mention the brilliant words of Catholicos Vazgen the First: **«The creation of the Motherland is heroism; the improvement of the Motherland is virtue».**

Thank you!

Послание министра образования, науки, культуры и спорта
Республики Арцах Лусине Караханяна участникам
международной научной конференции
«Прошлое, настоящее и будущее армянской государственности»

Ваше Святейшество,
Уважаемые участники конференции,
Дамы и господа, уважаемые гости!

Позвольте от имени Министерства образования, науки, культуры и спорта Республики Арцах и от себя лично сердечно приветствовать вас на открытии Пятой международной конференции «Прошлое, настоящее и будущее армянской государственности», посвященной 30-летию независимости Республики Арцах и Республики Армения. Хочу выразить свою радость и гордость от пребывания здесь и участия в этом значимом и важном мероприятии.

Нас всех очень воодушевляет то, что Объединению молодых ученых и специалистов Арцаха и Научно-исследовательскому институту «Арцах» и господину Арутюняну за эти годы удалось сплотить ученых, преподавателей, студентов и представителей государственных институтов из разных стран и университетов, которые готовы внести свой вклад в развитие научно-исследовательской мысли в экономической, социальной, дипломатической сферах двух армянских республик.

Особенно радостно, что в подобных конференциях принимают участие наши соотечественники из диаспоры, которые с готовностью обмениваются с нами богатыми знаниями и опытом, приобретенными в авторитетных зарубежных научных центрах. Это обстоятельство в огромной степени способствует возможности постоянного проведения научных конференций, организуемых Объединением молодых ученых и специалистов Арцаха.

Программа этой конференции связана с проблемами права, политологии, международных отношений, экономики, истории, литературы, социальной и других сфер. Мы убеждены, что лучший способ улучшить социально-экономическое и политическое положение наших граждан - это устойчивое развитие экономики, образования, научной мысли, безопасности, строительства нашей армии, сохранение нашей культуры и уникальных национальных ценностей, о которых должен узнать весь мир.

Наше культурное наследие составляло часть нашей судьбы, оно прошло все этапы нашего становления и исторического развития и всегда разделяло с нами наши победы и поражения. И сегодня мы слышим голос наших предков: они говорят с нами посредством своих творений и передают нам свою мудрость, чувство прекрасного, а главное, сознание и чувство достоинства. И сегодня Арцах-сосредоточие веры, искусства и культуры мирового армянства, которые по-прежнему сильны на нашей святой земле. И сегодня наша Родина и все мы нуждаемся в этой мощи, которая дает энергию и силы для новых дел.

Уверена, атмосфера конференции будет способствовать рождению новых идей, а результаты обсуждений и дискуссий будут полезны для повышения эффективности стратегий развития соответствующих сфер. Желаю вам плодотворной работы и множества достижений.

Сегодня, на святой земле Арцаха, за которую мы заплатили непомерно дорогой ценой, хочу напомнить слова Святейшего Патриарха Вазгена Первого: **«Создание Родины - героизм, его созидание - добродетельность».**

Спасибо.

Գորիսի պետական համալսարանի ռեկտոր
Արտուր Դուկասյանի ուղերձը
«Հայոց պետականության անցյալը, ներկան և ապագան»
միջազգային 5-րդ գիտաժողովի մասնակիցներին

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ



MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT OF THE REPUBLIC
OF ARMENIA

ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ ГОРИСА

GORIS STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, ք.Գորիս, Ավանգարդ 2

• Республика Армения, г.Горис, Авангард 2

• 2 Avangard st., Goris, Republic of Armenia
(+374 284) 2-27-67, 098 19 67 01

www.gorsu.am, gorissu@mail.ru

№ 01-19/290

«11» 09 2021թ.

Հարգարժան Ա.Հարությունյան,

«Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան»

միջազգային երիտասարդական 5-րդ գիտաժողովի մասնակիցներ

Ընդունեք մեր ջերմ շնորհավորանքն ու երախտագիտությունը Արցախի Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին նվիրված այս կարևոր գիտական միջոցառման կազմակերպման առթիվ, որը ևս մեկ անգամ վկայում է, որ արցախցու ոգին կոտրել հնարավոր չէ, Արցախը կարող է ապաքինվել և վերանորոգ հավատով շարունակել իր դարավոր երազի ճանապարհը:

Արդեն 30 տարի հայաշխարհի Արցախը, ապավինած իր հնավանդ պատմությանը, ազգային, հոգևոր արժեքներին, ազատ ու ինքնիշխան ապրելու հաստատակամությամբ բազում փորձություններ հաղթահարելով՝ պահպանում է ինքնեղությունը, անկախությունը, ստեղծարար ոգին:

Մեծագույն հպարտությամբ ու երախտագիտությամբ վերստին հիշում ու կարևորում ենք այն հայրենանվեր գործիչներին, նվիրյալներին, որոնք մեծ ջանքերի շնորհիվ ու սեփական կյանքի գնով ձևավորեցին Արցախի պետականաշինության հիմքը, այն սրբադասված նորոյա հերոսներին, որոնց շնորհիվ այսօր Արցախը ոտքի է կանգնում պատուհասած արհավիրքից և հավատում վաղվա օրվան, կրթության, գիտության, մշակույթի ոլորտի այն ներկայացուցիչներին, որոնք նոր եռանդով փորձում են սերունդ կերտել, մշակութային արժեքներ ու գիտական արդյունքներ ստեղծել՝ միաջազգայնորեն ճանաչելի դարձնելու Արցախը, հաստատագրելու նրա՝ ազատ ու անկախ ապրելու անբեկանելի իրավունքը:

Գորիսի պետական համալսարանը մշտապես կարևորել է Արցախի գիտակրթական համակարգի հետ համագործակցությունը, որը ամուր հիմքերի վրա է դրված ինչպես Արցախի պետական համասարանի, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի, այնպես էլ Մեսրոպ Մաշտոց, Գրիգոր Նարեկացի համալսարանների ու գիտական տարբեր կազմակերպությունների հետ: Արդեն երկու տարի է, ինչ ԳՊՀ-ն արդյունավետ կերպով համագործակցում է Արցախի ամենակտիվ հասարակական կազմակերպության՝ Արցախի երիտասարդ գիտնականների ու մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) հետ, որը նոր փուլ մտավ «ԱՐՑԱՄ» գիտահետազոտական ինստիտուտ հիմնադրամի հետ համագործակցության հուշագրի ստորագրմամբ: Բնչպես հայտնի է, ԱԵԳՄՄ-ն Արցախում ծավալում է բազմարդյունք գործունեություն՝ միավորելով Արցախի երիտասարդ գիտնականներին ու

մասնագետներին, նպաստելով նրանց գիտական ու ստեղծագործական զարգացմանը, մասնագիտական աճին, միջազգային ինտեգրմանը, Հայաստանի ու Արցախի հասարակական, գիտակրթական կյանքին ակտիվ մասնակցությանը: ԱԵԳՄՄ-ի ու Գորիսի պետական համալսարանի հետ համագործակցությունը հասցրել է արձանագրել տեսանելի արդյունքներ, որոնք, հուսով եմ, շարունակական կլինեն:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և անձամբ իմ անունից ողջունում եմ «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 5-րդ գիտաժողովի մասնակիցներին, կազմակերպիչներին՝ ի դեմս ԱԵԳՄՄ հիմնադիր նախագահ, «Արցախ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր Ավետիք Հարությունյանի՝ այս դժվարին իրապայմաններում Արցախի ու Հայաստանի գիտական ներուժի մեկտեղման և արդի հիմնախնդիրների քննարկման համար օրապահանջ հարթակ ստեղծելու համար:

Մասնակիցների որակյալ կազմը, զեկուցումների թեմատիկ շրջանակը հրաշալի նախադրյալներ են ստեղծում՝ մեկտեղելու հայոց պետականության հիմնախնդիրներով զբաղվող գիտնականներին, լսելի ու քննարկելի դարձնելու գիտության մեջ նախաքայլեր անող երիտասարդների նորահայաց տեսակետները, ստեղծելու բարենպաստ մթնոլորտ՝ գաղափարների փոխանակման, գիտական երկխոսության ծավալման, արտասահմանյան գիտական հաստատությունների ու գիտնականների հետ համագործակցության ձևավորման համար: Նաև այսպիսի միջոցառումների կազմակերպմամբ Արցախն աստիճանաբար կդառնա արդիական գիտական հիմնախնդիրների քննարկման տարածաշրջանային ու միջազգային կենտրոն:

Արցախը հայրության հայրենասիրական մղումների վառ դրսևորումն է, մեր ազգային Ոսկե երազի օրրանը, արժանապատվությունը, Սիրո ու Հույսի տունը: Բոլոր ժամանակներում մենք պարտավոր ենք հաստատակամորեն հաղթահարելով բոլոր դժվարությունները՝ շարժվել առաջ, մշտապես բարձր պահել այն մարդկանց անունները, որոնք իրենց ավանդն են ունեցել Արցախի Հանրապետության ազատագրության, պաշտպանության ու զարգացման գործում, շարունակել նրանց գործը՝ պատմական անարդարության վերականգնման անկտրորում կամքով ու հավատով:

Հաջող ընթացք եմ մտղթում միջազգային գիտաժողովի աշխատանքներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ

 ԱՐՏՈՒՇ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ



ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐԵԻԱՅԻ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՌԱՉՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ*

ՀՏԴ 930.2 (479.25:560)

DOI: 10.52063/25792652-2021.3-23

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական ղեկավարի
Ժամանակավոր պաշտոնակատար և տնօրենի խորհրդական,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
p. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ruben.safrastyan@fulbrightmail.org

Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1990-ական թթ.-ին
Թուրքիայի վարած քաղաքականության բուն էությունը հասկանալու համար, ի
թիվս այլ գործոնների, անհրաժեշտ է հաշվի առնել նաև նրա
տարածաշրջանային աշխարհառազմավարության առանձնահատկություն-
ները: Ցավոք, այն հաճախակի անտեսվում է հետազոտական գրականության
մեջ:

Սույն հոդվածի նպատակն է քննել Թուրքիայի աշխարհառազ-
մավարության հետ առնչվող որոշ հիմնարար գործոններ, ինչպիսիք են՝
պատմականը, գաղափարականը և աշխարհաքաղաքականը: Հոդվածը
հեղինակի կողմից նախապատրաստվող մենագրական հետազոտության մասն
է կազմում:

Մասնավորապես պատմական նյութի հիմքով ընդգծվում է Թուրքիայի
համար Հարավային Կովկասի կարևոր նշանակությունը և քննության են
առնվում խորհրդային Միության փլուզումից հետո նրա տարածաշրջանային
ռազմավարության ձևավորման տեսական հիմքերը:

Հոդվածի աղբյուրագիտական հենքն են կազմել ինչպես սկզբնաղբյուրի
նշանակությունն ունեցող պաշտոնական նյութերը, այնպես էլ ժամանակի
մամուլը և հետազոտական գրականությունը:

Հիմնաբառեր՝ Թուրքիա, Հայաստան, Հարավային Կովկաս,
աշխարհառազմավարություն, աշխարհաքաղաքականություն, եվրասիականություն,
պանթյուրքիզմ:

Նախաբան

ԽՍՀՄ փլուզումից և Հարավային Կովկասում անկախ պետությունների
առաջացումից հետո Թուրքիան փորձեց արագորեն օգտվել տարածաշրջանում տիրող
խառնաշփոթ իրավիճակից և լրացնել առաջացած վակուումը: Սկսեց ձևավորվել
տարածաշրջանային նոր աշխարհառազմավարություն, որի շրջանակներում
մշակվեցին Հայաստանի նկատմամբ քաղաքականության հիմնադրույթները:

* Հոդվածը ներկայացվել է 07.12.2021թ., գրախոսվել՝ 12.12.2021թ., տպագրության
ընդունվել՝ 25.12.2021թ.:

Թուրքիայի աշխատանքային մեջ այդ կարևոր տեղաշարժերի առանձնահատկությունների բացահայտումը դժվարացնում է այն հանգամանքը, որ այդ երկրում չի ձևավորվել ավանդույթ՝ կանոնավոր կերպով պաշտոնապես հրապարակելու արտաքին քաղաքականության սկզբունքային դրույթներն ու տեսլականները, կիսելու դրանք հանրության հետ: Չեն հրապարակվել լայնածավալ պաշտոնական «Արտաքին քաղաքականության ռազմավարություն» կամ հայեցակարգային բնույթի այլ նմանատիպ փաստաթղթեր: Այդ բացը լրացնելու նպատակով անդրադառնում ենք 1990-ական թթ. Թուրքիայի արտաքին քաղաքական ռազմավարության փոփոխությունը պայմանավորած և հիմնավորած պատմական ու գաղափարական գործոնների ընտելությանը:

Պատմական անցյալի գործոնը

Ինչպես ցույց է տալիս անդրադարձը ոչ այնքան հեռավոր անցյալին, Հարավային Կովկասը ունեցել է Թուրքիայի համար կարևորագույն նշանակություն: Երիտթուրքերի կառավարման շրջանում այն ընկալվում էր պանթուրքիզմի գաղափարական-քաղաքական հայեցակարգի շրջանակներում՝ որպես պատմեչ, որն անհրաժեշտ է հաղթահարել՝ ուղղակի կապ հաստատելու համար Ռուսական Կայսրության կազմում բնակվող կովկասյան թաթարների և այլ թյուրքալեզու ժողովուրդների հետ: Պատահական չէր, որ 1914 և 1918 թթ.-ին Օսմանյան կայսրության գործերը ներխուժեցին Հարավային Կովկասի տարածք՝ նպատակ ունենալով զավթել այն և շարունակել հարձակումը Հյուսիսային Կովկասի ուղղությամբ:

Առաջին հարձակումը, որը տեղի էր ունենում հայ ժողովրդի դահիճ Էսվերի անմիջական ղեկավարության ներքո, ավարտվեց թուրքական բանակի ջախջախիչ պարտությամբ: Թուրքերին չհաջողվեց օկուպացնել Կովկասը և սկսել իրականացնել իրենց պանթուրքիստական ծրագրերը: Դրան հետևեց Հայոց ցեղասպանությունը, որի նպատակն էր ոչնչացնել Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչությանը՝ այդպիսով վերացնելով «թյուրքական աշխարհի» մեջ մխրճված «հայկական սեպի» արևմտյան հատվածը և հող նախապատրաստելով Կովկասի ուղղությամբ պանթուրքիստական ծրագրերի իրականացման համար:

Օգտվելով այն հանգամանքից, որ Ռուսաստանում հեղափոխության հետևանքով ռուսական բանակը լքել էր Կովկասյան ռազմաճակատը, Անդրկովկասը դուրս էր եկել Ռուսաստանի կազմից և բռնել էր ինքնիշխան պետականաշինության ճանապարհը, սակայն հնարավորություն չունենալով պաշտպանել իր սահմանները՝ Օսմանյան Թուրքիան հերթական անգամ հարձակվեց Հարավային Կովկասի վրա: Այս անգամ թուրքական ագրեսիայի հիմնական թիրախներից էր Արևելյան Հայաստանը: Չնայած այն հանգամանքին, որ հայ ժողովրդին հերոսական Սարդարապատի ճակատամարտում հաջողվեց պարտության մատնել թուրքական բանակին, սակայն նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով ծանրագույն վիճակում, ստիպված էր ստորագրել իրեն պարտադրված Բաթումի պայմանագիրը, որը վերածում էր Հայաստանը Օսմանյան կայսրության վասալ պետության: Այդ տիրահոջակ պայմանագիրը ունեցավ ընդամենը մի քանի ամսվա կյանք, քանի որ Օսմանյան կայսրությունը պարտվեց Առաջին համաշխարհային պատերազմում:

Վերը նշված իրադարձությունները հանգամանակից ուսումնասիրված են պատմագիտության կողմից, մասնավորապես՝ Ե. Սարգսյանի, Յ. Սիմոնյանի, Գ. Պետրոսյանի և այլոց աշխատություններում, ինչը հնարավորություն է տալիս մեզ կանգ չառնելու դրանց ավելի մանրամասն բնութագրման վրա:

1920 թ.-ի սեպտեմբերին քեմալական Թուրքիան հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Այդ հարձակումը սկզբունքորեն տարբերվում էր նախորդներից: 1914 թ.-ին հարձակման թիրախը ողջ Կովկասն էր, որը մաս էր կազմում Ռուսական կայսրության: 1918 թ.-ին թիրախը նույնպես Կովկասն էր, որը

սակայն արդեն չէր մտնում Ռուսաստանի կազմի մեջ: Առաջին դեպքում թուրքերը կռվում էին ռուսական բանակի դեմ, իսկ երկրորդ դեպքում ռուսական գործոնը, որը հանդես էր գալիս բոլշևիկյան Ռուսաստանի կերպարանքով, որոշիչ դերակատարում չուներ: Ի տարբերություն նախորդ հարձակումների՝ 1920 թ.-ի թուրքական ագրեսիայի թիրախը Հայաստանի Հանրապետությունն էր, իսկ ռուս-բոլշևիկյան գործոնը դարձել էր որոշիչ՝ նպաստելով, ըստ էության, քեմալականների ծրագրերի իրականացմանը: Դեռ պատերազմից ամիսներ առաջ Մուսթաֆա Զեմալը Հայաստանի վրա հարձակման նախապատրաստվող զորքերի հրամանատար Զ. Զարաբեքիրին ռազմած գաղտնի ծածկագրում գրում էր. «Մենք չենք ձեռնարկի որևէ որոշիչ գործողություն առանց բոլշևիկների հետ քաղաքական համաձայնության գալու, ինչպես նաև առանց փոխադարձ հարաբերությունները հստակ պարզաբանելու» (Սաֆրասոյան, 86): Նա լավ գիտակցում էր, որ Թուրքիայի ապագան, նրա արևելյան սահմանները կախված են ռուսների հետ համագործակցությունից ([Atatürk] 1995, 146-147): Զանի դեռ այդ համագործակցությունը լիարժեք չէր, Զեմալը չէր համարձակվում պատերազմ սկսել Հայաստանի դեմ (Türk İstikâl Harbi, 80): Միայն այն բանից հետո, երբ Զեմալը համոզվեց, որ հաջողվել է ռուս բոլշևիկների հետ հաստատել փաստացի դաշնակցային հարաբերություններ, և նրանց խոստացած օգնության զգալի մասը արդեն հասել է Թուրքիա, նա Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի (ԹԱՄԺ) կառավարության անունից հրաման տվեց հարձակվել Հայաստանի վրա ([Atatürk] II 1995, 189-190): Այդպիսով քեմալականներին հաջողվեց ոչ միայն չեզոքացնել ռուսական գործոնը, այլև օգտագործել այն իրենց ծավալապաշտական ծրագրերը իրականացնելու համար:

Առկա էր նաև մեկ այլ տարբերություն. 1918 թ.-ին երիտթուրքերի կառավարությունը շահագրգրված էր, որ հայոց պետականությունը պահպանվի, սակայն ռևենսա շատ փոքր տարածք, չլիկ կենսունակ և գտնվի Թուրքիայից լիովին կախվածության մեջ (Պետրոսյան, 2018, 3-20): Այդ մոտեցումը ամրագրվեց Բաթումի պայմանագրով:

Զեմալականների նպատակը այլ էր, նրանք որոշել էին ընդհանրապես «մեջտեղից վերացնել» Հայաստանի Հանրապետությունը, քանի որ եկել էին եզրակացության, որ «...անհնարին է, որ Հայաստանը... որոշի իր բախտը լիովին կապել Թուրքիայի և իսլամականության հետ» (Karabekir 901): Սակայն հասկանալով, որ, ինչպես նշեցինք վերևում, այդ հարցը առանց բոլշևիկների հետ քննարկելու հնարավոր չէ լուծել, նրանք նախընտրել էին սկզբից պարտադրել Հայաստանին ստորագրել մի այնպիսի պայմանագիր, որի նախօրինակը Բաթումի պայմանագիրն էր: Այդ պայմանագիրը ստորագրվեց 1920 թ.-ի դեկտեմբերին Ալեքսանդրապոլում: Սակայն մինչև դրա ստորագրումը քեմալականների բանակի Գլխավոր սպայակոյտը հանդես էր եկել առաջարկով, որ բոլոր դեպքերում «հարավից Ադրբեջան տանող ճանապարհները պետք է լինեն լիովին անվտանգ», որն արժանացել էր Մուսթաֆա Զեմալի հավանությանը ([Atatürk] 1990, 322):

Հայաստանի դեմ պատերազմի շրջանում, մասնավորապես հենվելով ձեռք բերված առաջին հաջողությունների փաստի վրա, Զեմալին հաջողվել էր գաղտնի շփոմների մեջ մտնել Մեծ Բրիտանիայի հետ (Sonyel 359-360) և օգտագործել այդ հանգամանքը բոլշևիկների վրա ճնշում գործադրելու և նրանցից տարածաշրջանային հարաբերությունների հարցերում որոշ զիջումներ կորզելու նպատակով (Tellal 170): Փաստորեն այդ ճարպիկ խաղը տվեց արդյունք: 1921 թ.-ի մարտին ու հոկտեմբերին ստորագրվեցին Մոսկվայի և Կարսի անարդարացի պայմանագրերը Խորհրդային Ռուսաստանի հետ, որոնց արդյունքում բոլշևիկները զիջեցին թուրքերին Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող հարավկովկասյան տարածքներ, այդ թվում՝ Արևելյան Հայաստանի զգալի հատվածը՝ բաժանելով մնացյալ մասը Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի միջև: Դա հնարավոր եղավ իրականացնել, քանի որ ինչպես

հասկացել էր Զեմալը նախքան Հայաստանի վրա հարձակվելը, բոլբուկները քեմալականներից «մեծ օգուտ» էին սպասում ([Atatürk] I 1995, 146-147) «իմպերիալիստական» Արևմուտքի դեմ պայքարում:

Այդպիսով դադարեց գոյություն ունենալ ազատ ու ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը, և իրականություն դարձավ պատերազմի գերագույն նպատակը՝ «մեջտեղից վերացնել Հայաստանը»: Մեկ տարի չանցած՝ 1922 թ.-ի մարտին, Մուսթաֆա Զեմալը ԹԱՄԺի ամբիոնից հայտարարեց. Հայկական հարցը «ամենաարդարացի» ձևով լուծված է (Türkiye Büyük Millet Meclisi):

Զեմալականներին հաջողվել էր «լուծել» Հայկական հարցը, սակայն չլուծված էր մնում տարածաշրջանային ռազմավարության գլխավոր խնդիրը՝ տիրանալ Հարավային Կովկասին և, եթե հաջողվի, նաև Հյուսիսային Կովկասին: Այդ նպատակը Թուրքիան նախապատրաստվում էր իրականություն դարձնել 1942 թ.-ին, երբ օգտվելով Խորհրդային Միության՝ ծանր իրավիճակում հայտնվելու հանգամանքից՝ պատրաստվում էր հարձակվել նրա վրա (Корхмазян 137-153), ուստի Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Վրաստանի սահմանի վրա կենտրոնացրել էր 26 դիվիզիա (Документы министерства 34-39, 67-68): Ազրեխայի նախապատրաստումը ուղեկցվում էր պանթյունիստական կատաղի քարոզչությամբ, որը կառավարող շրջանների կողմից դիտարկվում էր որպես դրա գաղափարական հիմնավորում (Кондакчян 198-205): Խորհրդային բանակի հաղթանակներն ու բեկումը, որոնք տեղի ունեցան նացիստական Գերմանիայի դեմ պատերազմում 1943 թ.-ին, ստիպեցին Թուրքիային հրաժարվել Հարավային Կովկասի վրա հարձակվելու ծրագրերից:

Հետագա տասնամյակների ընթացքում, երբ Խորհրդային Միությունը դարձել էր աշխարհի հզորագույն տերություններից մեկը, իսկ Թուրքիան «սառը պատերազմում» նրան հակադրվող Արևմտյան դաշինքի մաս էր կազմում, Հարավային Կովկասի նկատմամբ ծավալապաշտական ծրագրերի իրականացումը բացառվում էր:

Թուրքիայի հարավկովկասյան աշխարհառազմավարության գաղափարական հիմնավորումը 1990-ական թթ.-ին

Խորհրդային Միության փլուզումը 1991 թ.-ին Թուրքիայի համար հնարավորություն ստեղծեց մշակելու նոր ռազմավարություն Հարավային Կովկասի նկատմամբ: Անհրաժեշտություն առաջացավ նաև մշակել դրա գաղափարական հիմնավորումը: Այդ շրջանի թուրք դեկավարների առաջին մոլումը դիմելն էր պանթյունիզմին, քանի որ պատմականորեն այդ գաղափարախոսությունը ուներ լայն տարածում (Надеин-Раевский 138-139): Ամենաբարձր մակարդակով սկսեցին հնչել այդ ոգով ձևակերպված հայտարարություններ: Դրանց տուրք տվեց Նույնիսկ այնպիսի զգուշավոր քաղաքական գործիչ, ինչպիսին Սյուլեյման Դեմիրելն էր: 1992 թ.-ի սկզբին, այսինքն՝ Խորհրդային Միության փլուզումից դեռ մեկ ամիս էլ չանցած, նա, զբաղեցնելով վարչապետի պաշտոնը, ազդարարեց «հսկայական Թյուրքական Աշխարհի» ծնունդը, որի սահմանները, ըստ նրա, ձգվում են Ադրիատիկ ծովից մինչև Զինաստան (Cumhuriyet):

Սակայն շուտով թուրքական կառավարող շրջանակներին, ինչպես և ինտելեկտուալ վերնախավին ակնհայտ դարձավ, որ պանթյունիզմի ժամանակը դեռևս չի եկել (Kaliber 30): Սկսեցին նոր գաղափարախոսական հայեցակարգի փնտրտուքներ, այնպիսի հայեցակարգի, որը հնարավորություն կտար քողարկելու Թուրքիայի ծավալապաշտական նկրտումները և կլիներ ավելի ընդունելի աշխարհի համար: Այդ փնտրտուքների արդյունքն էր Եվրասիականությունը (*Avrasyacılık*): 90-ական թվականների սկզբից «Եվրասիա» հասկացությունը սկսեց կարևոր տեղ զբաղեցնել Թուրքիայում ընթացող քաղաքական քննարկումներում՝ ընկալվելով որպես հիմնական հայեցակարգ, որը ուրվագծում է Թուրքիայի տարածաշրջանային աշխարհառազմավարությունը, միջազգային հարաբերությունները և ազգային անվտանգությունը, չնայած դրա կենտրոնական բնույթի կամ գուցե նաև դրա

հետևանքով այն մեծապես քաղաքականացվեց և գիտական առումով հանդես եկավ խիստ անորոշ սահմանված կերպարանքով: Հետզհետե ավելի գործածելի դարձան բացառապես քաղաքական պատկերացումների վրա հիմնված «Եվրասիայի» բնորոշումները, որոնք հանդես էին գալիս մի քանի տարբերակներով: Դրանցից առաջինը, հետևելով Արևմուտքի և Արևելքի որոշ երկրներում տարածում գտած տեսություններին, ըստ որոնց՝ «սառը պատերազմի» տարիներին գոյություն ունեցած «Կասպիտալիստական Արևմուտք - Սոցիալիստական Արևելք» հակամարտությունը դրա ավարտից հետո փոխարինվել է «Հարուստ Հյուսիս - Աղքատ Հարավ» հակամարտությամբ, Եվրասիան բնութագրում է որպես «Հարավ»՝ ի հակադրումն հարուստ ու զարգացած «Հյուսիսի»: Այդ մեկնաբանությունը հիմք հանդիսացավ ձախ մտավորականների ու քաղաքական գործիչների, ինչպես նաև իսլամամետ մի շարք ուժերի համար՝ ձևակերպելու Թուրքիայի եվրասիական քաղաքականության մի այնպիսի տարբերակ, որն ըստ էության իրենից ներկայացնում էր լիարժեք այլընտրանք «ավանդորեն» արևմտամետ բնութագրվող քեմալական արտաքին քաղաքական ռազմավարությանը: Այս մոտեցման հիմքում դրված էր «արևմտյան իմպերիալիզմի» դեմ եվրասիական գլխավոր տերությունների՝ Թուրքիայի, Իրանի ու Ռուսաստանի համագործակցության գաղափարը: Այս տեսակետն առաջ քաշողները քննադատում էին Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Արևմուտքի շահերին ստորադաս լինելու և երկրի բուն շահերը անտեսելու համար: Նրանք հանդես էին գալիս որպես Թուրքիայի՝ Արևմուտքից անկախ արտաքին քաղաքականության կողմնակիցներ: Նրանց թվում էին ինչպես ձախ, այնպես էլ իսլամամետ մտավորականների ու քաղաքական շրջանակների նշանավոր ներկայացուցիչներ: Թուրքիայի սոցիալիստական շարժման վետերան Դոդու Փերինչեքը, որը պաշտպանում էր վերոհիշյալ տեսակետը, իր գրքերից մեկի համար չափազանց բնորոշ վերնագիր էր ընտրել՝ «Եվրասիայի ընտրությունը՝ Թուրքիայի համար անկախ արտաքին քաղաքականություն» (Avrasya Seçeneği: Türkiye İçin Bağımsız Dış Politika İstanbul, 1996): Նրա այդ գիրքը ավելի վաղ գրած հրապարակախոսական հոդվածների ժողովածու էր և չէր պարունակում տեսական ընդհանրացումների արժեք ունեցող ձևակերպումներ: Սակայն հեղինակի ձգտումը՝ եվրասիականությունը մեկնաբանել որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր, այլընտրանքային ռազմավարություն, որի նպատակը հակադրվելն էր «ավանդական» արևմտամետ քաղաքականությանը, աննկատ չմնաց թուրքական հասարակության որոշ հատվածների կողմից և որոշակի տարածում գտավ ձախակողմյան հայացքներ ունեցող քեմալականների շրջանում:

1990-ականների Թուրքիայի քաղաքական ու մտավորական ընտրանին, այնուամենայնիվ, հիմնականում արևմտամետ էր և հավատարիմ էր մնում Աթաթյուրքի ռազմավարական նախընտրությանը: Այդ թեև ներկայացուցիչները պրագմատիկ էին և քաջատեղյակ, որ Թուրքիան տնտեսապես ու քաղաքականապես դեռևս պատրաստ չէ Եվրասիայում միակ քաղաքական գերիշխող ուժի վերածվելու: Այդ պատճառով նրանք Թուրքիայի արտաքին քաղաքականության եվրասիական ուղղությունը համարում էին Թուրքիա-Արևմուտք հարաբերություններին ստորադաս և ձգտում էին Եվրասիայում իրենց քաղաքականությունը կորոդիանացնել Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ-ի նպատակների հետ: Միաժամանակ նրանք եվրասիական տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության տարածումը կարևոր հաղթաթուղթ էին համարում Արևմուտքի հետ այնպիսի հարցերի սակարկման գործում, ինչպիսին էր, օրինակ, Եվրոպական Միությանը Թուրքիայի լիիրավ անդամակցությունը կամ Կիպրոսի խնդիրը: Այդ շրջանակների կողմից շրջանառության մեջ դրվեց «Եվրասիայի» զուտ աշխարհագրական բնորոշումը, որը առկա էր, օրինակ, Թուրքիայի ԱԳՆ-ի կայքէջում՝ «Եվրոպայից Միջին Ասիա ձգվող ընդարձակ տարածք»: Ըստ էության, այդպիսով փորձ էր արվում խուսափել հասկացությունը քաղաքականացնելու մեղադրանքներից (Turkish Foreign Policy):

Առաջին հայացքից զուտ վերացական հետաքրքրություն ներկայացնող Եվրասիայի սահմանների բնորոշման խնդիրը խորքում ուներ, ինչպես տեսանք, կարևոր նշանակություն՝ Թուրքիայի աշխարհառազմավարության շարժառիթները բացահայտելու տեսակետից:

Եվրասիայի վերաբերյալ թուրք բարձրաստիճան ազդեցիկ գինվորականների աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական տեսակետների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք շատ ընդհանրություններ ունեն վերևում նշված արևմտյան ուղղվածության ընտրանու հայացքների հետ: Չինվորականությունը Եվրասիան և Նախևառաջ Հարավային Կովկասը դիտում էր որպես Թուրքիայի անվտանգության համար վտանգ ներկայացնող անկայուն տարածաշրջան: Վտանգի հիմնական աղբյուր նա համարում էր Ռուսաստանի ազդեցությունը և ռազմական ներկայությունը այդ տարածաշրջանում (Torumtay): Այսպիսով՝ անկհայտ է դառնում, որ գինվորականության ուշադրությունը գլխավորապես կենտրոնացած էր Հարավային Կովկասի երեք պետությունների վրա: Միաժամանակ նրանք, ինչպես նաև շատ և շատ թուրքական քաղաքական գործիչներ, կարծում էին, որ, ինչպես նշել էր պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ Շադի Երգյուվենչը, Թուրքիան կարող է իր ազդեցության տակ վերցնել Եվրասիայի բազմաթիվ տարածաշրջաններ (Ergüvenç): Այդ տարիներին թուրք բարձրաստիճան գինվորականության շրջանում երևան էր եկել ամերիկամետ սպաներից բաղկացած մի խմբավորում, որը միաժամանակ ընդդիմանում էր ԵՄ-ի հետ ինտեգրացմանը: Նրանք Եվրասիան դիտում էին ոչ թե անկայունության աղբյուր, այլ որպես Թուրքիայի համար կարևոր աշխարհաքաղաքական առավելություն: Չնայած իրենց արևմտամետ կողմնորոշմանը՝ նրանք այդ տարածաշրջանում կանխատեսում էին ուժեղ մրցակցություն եվրոպական տերությունների և հատկապես Գերմանիայի հետ: Այս եզրակացությանն էր հանգել, օրինակ, 1998 թ.-ին Թուրքիայի ռազմական ակադեմիաների կողմից կազմակերպված սեմինարին ներկայացրած իր զեկուցման մեջ գնդապետ Նազմի Չիգմեչին (Ögüt):

1990-ականներին Թուրքիան տարիներ շարունակ կառավարվում էր կոալիցիոն կառավարության կողմից: Այդ շրջանում ԱԳՆ-ն գտնվում էր Ժողովրդավարական-Ձախ Կուսակցության (ԺԶԿ) հսկողության ներքո, ուստի հատուկ ուշադրություն է անհրաժեշտ հատկացնել այդ կուսակցության ղեկավարների հայացքներին: Ընդհանուր առմամբ նրանք պաշտպանում էին Թուրքիայի արտաքին քաղաքականության արևմտյան ուղղվածության ռազմավարությունը, սակայն անում են որոշ վերապահումներ: Օրինակ՝ 1995 թ.-ին վարչապետ և ԺԶԿ-ի առաջնորդ Բյուլենթ Էջևիթը հանդես էր եկել «Տարածաշրջանային ուղղվածության արտաքին քաղաքականություն» վարելու առաջարկով: Նա կարծում էր, որ ապագայում օգտագործելով Եվրոպայի ու Ասիայի տարրերը՝ հնարավոր կլինի ստեղծել Եվրասիայի գերտարածաշրջանի պետություններից բաղկացած ընդհանրություն, իհարկե, Թուրքիայի ղեկավարությամբ: Այդ ինտեգրացման գործընթացները նկարագրելու նպատակով նա նույնիսկ առաջարկել էր օգտագործել հատուկ եզրույթ՝ avrasyalaşma – եվրասյականացում (Avrasya Dergisi, II):

Կոալիցիոն կառավարությունում արտգործնախարարի պաշտոնը զբաղեցնող Իսմայիլ Ջեմին, որը նույնպես ներկայացնում էր ԺԶԿ-ն, չէր խուսափում հրապարակայնորեն և ամենայն հստակությամբ բացահայտել Թուրքիայի՝ հեռուն գնացող ծրագրերը: Այսպես, օրինակ, ժամանակին նա հայտարարել էր. «Մենք, անտարակույս, կանդամակցենք Եվրոպական Միությանը, սակայն մեր տեսադաշտը ավելի ընդարձակ է: Մեր նպատակն է դառնալ Եվրասիայում որոշումներ կայացնող կենտրոն» (Ögüt):

Վերևում քննարկված տեսական մոտեցումներն ու դատողությունները Եվրասիայի վերաբերյալ, որոնք լայն տարածում էին ստացել 1990-ականներին Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, պարզորոշ վկայում են, որ

Եվրասիայում, հետևաբար նաև Հարավային Կովկասում Թուրքիայի գերիշխանության գաղափարը՝ այս կամ այն հիմնավորմամբ, կիսում էին երկրի ընտրանու լայն շրջանակները: Նշենք նաև, որ Թուրքիայի բնակչության լայն խավերը Հարավային Կովկասում Թուրքիայի գերիշխանության հաստատումը ընկալում էին որպես հնարավորություն՝ «վերագտնելու անցյալի իրենց մեծությունը» (Gökay, Langhorn):

Թուրքական աշխարհաքաղաքական միտքը 1990-ական թթ.-ին

1990-ական թթ.-ի ընթացքում Թուրքիայում առաջ քաշվեցին մի շարք նոր աշխարհաքաղաքական հայեցակարգեր ու մոտեցումներ, որոնք ազդեցին նաև այդ երկրի արտաքին քաղաքական նոր ռազմավարության ձևավորման վրա: Դրանց հիմնական նպատակն էր օգտագործելով աշխարհաքաղաքականության գործիքակազմը՝ հիմնավորել Թուրքիայի նոր, ավելի կարևոր տարածաշրջանային դերակատարումը որպես ինքնուրույն ու թելադրող «ուժի կենտրոն»:

Այսպես՝ արդեն 1990-ական թվականների սկզբներին գիտական ու քաղաքական շրջանառության մեջ դրվեց մի նոր հայեցակարգային բնույթի եզրույթ՝ «կենտրոնական տերություն», որը փոխառնված էր ամերիկացի քաղաքագետների՝ դեռևս 1980-ական թվականներին հեղինակած աշխատություններից: Այդ հասկացությունը սկսեց կիրառել Թուրքիայի 1990-ականների առաջին կեսի առաջատար քաղաքագետներից Օրալ Սանդերը: Նա չհասցրեց ավարտուն տեսք հաղորդել իր մոտեցումներին, քանի որ կյանքից հեռացավ արդեն 1995 թ.-ին, սակայն նույնիսկ նրա նախնական մեկնաբանությունները Թուրքիայի՝ որպես «կենտրոնական տերության» մասին վկայում էին, որ թուրքական աշխարհաքաղաքական միտքը թևակոխում էր կարևոր կերպարանափոխումների փուլ: Օ. Սանդերը, իր հոդվածներից մեկում անդրադառնալով Թուրքիայի արտաքին քաղաքականության առջև բացվող նոր հնարավորություններին, գրում էր, որ անհրաժեշտ է ի սկզբանե հաշվի առնել այն հանգամանքը, որ նախկինում Թուրքիան եղել է լայնածավալ կայսրություն, ժամանակի հզորագույն տերություններից մեկը և նրա այդ «ռազմավարական դիրքը» մտնում է անփոփոխ նաև այսօրվա պայմաններում, քանի որ Թուրքիան, դառնալով փոքր «ազգ-պետություն», պահպանել է միաժամանակ իր դերակատարությունը որպես «կենտրոնական տերություն» (Sander 46): Նրա կարծիքով՝ այդ հանգամանքը պայմանավորված է այն փաստով, որ Թուրքիան իր հսկողության տակ է պահում Բոսֆոր ու Դարդանել նեղուցները (Sander 45): Այդպիսով Թուրքիան հնարավորություն է ստանում ոչ միայն գտնվել համամիջուրակային զարգացումների ազդեցության ներքո, այլ նաև ազդել դրանց վրա, եզրակացնում էր նա (Sander 45-46):

Օ. Սանդերը պատկանում էր թուրք քաղաքագետների ու աշխարհաքաղաքագետների այն սերնդին, որոնց մոտ դեռևս սուր էր սառը պատերազմի տարիներին առաջացած Հյուսիսից՝ հզոր Խորհրդային Միության կողմից շատ ավելի թույլ Թուրքիային սպառնացող «վտանգի» զգացողությունը, որը զսպող դեր էր խաղում նրա աշխարհաքաղաքական բնույթի հետագա դատողություններում: Այդպես նա դիմում է միջազգային հարաբերությունների հետազոտման բնագավառի դասականներից Հանս Մորգենթաուի «Քաղաքականությունը՝ ազգերի միջև» աշխատությանը և հենվելով դրա վրա՝ հանդես է գալիս հետևյալ դատողություններով. ռազմավարական նշանակություն ունեցող, աշխարհաքաղաքական դիրքեր զբաղեցնող փոքր երկիրը կարող է ձեռք բերել ավելի մեծ ազդեցություն, քան թե իրեն թույլ կտա իրական ներուժը, սակայն այս դեպքում նա կարող է կանգնել ապակայունացման վտանգի առջև (Sander 45):

Անցյալ դարի 90-ական թթ.-ին թուրքական աշխարհաքաղաքական մտքի ուշագրավ երևույթներից է, անտարակույս, Ռամազան Օզեյի կողմից 1994 թ.-ին առաջ քաշված «Թուրքական կենտրոնական գերիշխանության տեսությունը» (Özey 57-59): Դրա հիմնական տարրերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. Անատոլիան,

այսինքն՝ Փոքր Ասիան, «աշխարհի միջնաբերդն» Է (kale) և Անատոլիայում իշխող երկիրը՝ Թուրքիան, տիրապետելով այդ միջնաբերդին, հնարավորություն ունի իր հսկողության տակ առնել «ներքին շրջանակի» մաս կազմող տարածաշրջանները, որոնք, ըստ թուրք աշխարհաքաղաքագետի, Բալկաններն են, Մերձավոր Արևելքն ու Կովկասը: «Ներքին շրջանակից» դուրս գտնվող տարածաշրջանները կազմում են «արտաքին շրջանակը» (Özey 58-59): Ի մի բերելով իր այդ դատողությունները՝ Օզեյը, հիմնվելով հայտնի անգլիացի աշխարհաքաղաքագետ Յ. Մաքսինդերի վրա, առաջարկում է հետևյալ բանաձևը. «Այն ազգը, որի ձեռքում է գտնվում աշխարհի միջնաբերդը՝ Անատոլիան, կառավարում է ներքին շրջանակը՝ Բալկանները և Մերձավոր Արևելքը: Այն ազգը, որը կառավարում է ներքին շրջանակը, գերիշխում է արտաքին շրջանակում, այսինքն՝ աշխարհում» (Özey 59): Այսպիսով՝ Ռ. Օզեյը դեռևս 1990-ական թվականներին եկել էր մի «պարզ» եզրակացության՝ Թուրքիան կառավարելու է աշխարհը: Այդ հեղինակին խորթ չէր նաև պանթյուրքիզմը, քանի որ իր գրքում նա նշում էր, որ աշխարհի կենտրոնում գտնվում է «Թյուրքական աշխարհը», որը և Թուրքիայի հետ համատեղ պետք է իշխի ողջ աշխարհի վրա (Özey 41):

Ռ. Օզեյը միակը չէր, որ Թուրքիայի աշխարհագրական դիրքը բնութագրում էր որպես «բնական միջնաբերդ», որը գտնվում է Բալկանների, Կովկասի ու Մերձավոր Արևելքի կենտրոնում: Այդպիսի դատողություններով հանդես էր գալիս, օրինակ, Մուսթաֆա Յըլմազը: Սակայն նա, ի տարբերություն Ռ. Օզեյի, ցուցաբերում էր ավելի զուսպ մոտեցում և խուսափում էր հետևություններ անելուց Թուրքիայի՝ աշխարհում գերիշխող դիրքի մասին՝ սահմանափակվելով միայն պնդմամբ, թե «միջնաբերդի» դիրքը Թուրքիային հնարավորություն է տալիս ունենալու իրարից տարբերվող «մի շարք երկրներանքային տնտեսական, քաղաքական ու ռազմական» մոտեցումներ (Yilmaz 72):

Այսպիսի պատկեր ունեթ թուրքական աշխարհաքաղաքական միտքը իր գոյության առաջին տասնամյակի ընթացքում: Նրա այդ շրջանի հիմնական միտումն էր ներկայացնել Թուրքիան որպես տարածաշրջանային և նույնիսկ համամիջուրակային ձևաչափերում ձևավորվող աշխարհաքաղաքական «ուժի կենտրոն»:

Եզրակացություն

Հոդվածում ներկայացված փաստերը վկայում են, որ 1990-ական թթ.-ին տեղի ունեցավ կարևոր բեկում Թուրքիայի տարածաշրջանային աշխարհառագմավարական մտածելակերպում՝ հաղորդելով դրան ծավալապաշտական ուղղվածություն: Այդ բեկումի վրա ներազդեց նաև երկրի՝ պատմականորեն ձևավորված ազդեցիկ քաղաքականությունը Հարավային Կովկասում, որի հիմնական թիրախը Հայաստանն էր:

Օգտագործված գրականություն

1. Պետրոսյան Գ., Թուրքիայի կողմից հայոց անկախ պետության ճանաչման շարժառիթները և նպատակները, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2018 № 3 (27):
2. Սաֆրաստյան Ռ., Մուսթաֆա Զեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Ե., 2019:
3. Документы министерства иностранных дел Германии. Германская политика в Турции (1941-1943 гг.), М., 1946.
4. Кондакчян Р.П., Пропаганда пантюркизма в Турции в годы Второй мировой войны, Բանբեր Երեվանի Համալսարանի, Ե., 1974-Ի.
5. Корхмязян Р.С. Внешняя политика Турции в годы второй мировой войны, Проблемы истории Турции. М., 1978.

6. Надеин-Раевский В., Пантюркизм: идеология, история, политика. Экспансионистская доктрина: от Османской империи до наших дней и судьбы Турции, России и Армении. М., 2017.
7. Avrasya Dergisi, II.
8. Avrasya Seçeneği: Türkiye İçin Bağımsız Dış Politika İstanbul, 1996.
9. Cumhuriyet, 23 Ocak, 1992.
10. Ergüvenç S. Turkey's Strategic Importance in Military Dimension: A Regional Balance Holder, Turkey at the Threshold of the 21st Century: Global Encounters and/vs Regional Alternatives. Ed. By: Mustafa Aydin. Ankara, 1998.
11. Gökay B., Langhorn R. Turkey and the New States of the Caucasus and Central Asia. London, 1996.
12. Kaliber A., The Post-Cold War Regionalisms of Turkish Foreign Policy, Journal of Regional Security (2013), 8:1.
13. Ögüt K. Avrasya Stratejileri Üzerine, Aydınlanma 1923, Sayı: 21.
14. Özey R. Jeopolitik ve Jeostratejik Açısından Türkiye. İstanbul, 1998.
15. Perinçek D., Avrasya Seçeneği: Türkiye İçin Bağımsız Dış Politika İstanbul, 1996.
16. Sander O. Turkish Foreign Policy: Forces of Continuity and Change, Turkish Review, Winter 1993, Volume: 7, Number: 34.
17. Torumtay N. Değişen Stratejilerin Odağında Türkiye. İstanbul, 1996.
18. Turkish Foreign Policy, - <http://www.mfa.gov.tr/>.
19. Türkiye Büyük Millet Meclisi: I. Dönem.
20. Yılmaz M. Türkiyenin Geo-Stratejisi Açısından Günümüz Olaylarının Değerlendirilmesi. – Üçüncü 1000'E Girerken Türkiye: Kutlu Doğum Sempozyumu – 1999. Yayına Hazırlayan: Ömer Turan. Ankara, 2000.

Works Cited

1. Avrasya Dergisi, II.
2. Avrasya Seçeneği: Türkiye İçin Bağımsız Dış Politika [Independent Foreign Policy of Turkey], , İstanbul, 1996.
3. Cumhuriyet, 23 Ocak, 1992.
4. Ergüvenç S. Turkey's Strategic Importance in Military Dimension: A Regional Balance Holder, Turkey at the Threshold of the 21st Century: Global Encounters and/vs Regional Alternatives. Ed. By: Mustafa Aydin. Ankara, 1998.
5. Dokumenty ministerstva inostrannyh del Germanii. Germanskaja politika v Turcii [Documents of the Ministry of Foreign Affairs of Germany. German Politics in Turkey] (1941-1943), M., 1946.
6. Gökay B., Langhorn R., Turkey and the New States of the Caucasus and Central Asia. London, 1996.
7. Kaliber A., The Post-Cold War Regionalisms of Turkish Foreign Policy, Journal of Regional Security (2013), 8:1.
8. Kondakchyan R., Propaganda pantjurkizma v Turcii v gody Vtoroj mirovoj vojny [Propaganda of Pan-Turkism in Turkey during the Second World War], Banber of Yerevan University, Y., 1974, I.
9. Korkhmazyan R., Vneshnjaja politika Turcii v gody vtoroj mirovoj vojny, Problemy istorii Turcii [Foreign Policy of Turkey during the Second World War, Problems of the History of Turkey]. M., 1978.
10. Nadein-Raevsky V., Pantjurkizm: ideologija, istorija, politika. Jekspansionistskaja doktrina: ot Osmanskoj imperii do nashih dnei i sud'by Turcii, Rossii i Armenii. [Pan-Turkism: ideology, history, politics. Expansionist doctrine: from the Ottoman Empire to the present day and the fate of Turkey, Russia and Armenia]. M., 2017.
11. Perinçek D., Avrasya Seçeneği: Türkiye İçin Bağımsız Dış Politika İstanbul, 1996.

12. Ögüt K., Avrasya Stratejileri Üzerine, Aydınlanma 1923, Sayı: 21.
13. Özey R., Jeopolitik ve Jeostratejik Açından Türkiye. İstanbul, 1998.
14. Petrosyan G., T'urqiyai koghmic hayoc ankaş petut'yan twanachman sharjhar'it'nery' & npatakner'y', Banber Erevani hamalsarani. Mijazgayin haraberut'yunner, Qaghaqagitut'yun [Motives and goals of Turkey's recognition of the independent Armenian state, Banber Yerevan University. International Relations, Political Science], 2018 № 3 (27).
15. Safrastyan R., Must'afa Qemal. payqar Hayastani Hanrapetut'yan dem (1919-1921 tt.) [Mustafa Kemal: The Struggle against Republic of Armenia (1919-1921)], Y., 2019.
16. Sander O., Turkish Foreign Policy: Forces of Continuity and Change, Turkish Review, Winter 1993, Volume: 7, Number: 34.
17. Torumtay N., Değişen Stratejilerin Odağında Türkiye. İstanbul, 1996.
18. Turkish Foreign Policy, - <http://www.mfa.gov.tr/>.
19. Türkiye Büyük Millet Meclisi: I. Dönem.
20. Yılmaz M., Türkiyenin Jeo-Stratejisi Açısından Günümüz Olaylarının Değerlendirilmesi. – Üçüncü 1000'E Girerken Türkiye: Kutlu Doğum Sempozyumu – 1999. Yayına Hazırlayan: Ömer Turan. Ankara, 2000.

ARMENIA IN TURKEY'S SOUTH CAUCASUS GEOSTRATEGY: SOME HISTORICAL AND THEORETICAL OBSERVATIONS

RUBEN SAFRASTYAN

*Institute of Oriental Studies of NAS RA,
Acting Scientific Lead Advisor to the Director,
Doctor of History, Professor, NAS RA Academician;
Yerevan, Republic of Armenia*

To understand the essence of Turkey's policy towards the Republic of Armenia in the 1990s it is important to take into account, among other factors, also the peculiarities of its regional geostrategy. Unfortunately, this approach is often overlooked.

This article aims at examination of some of the basic factors related to Turkey's geostrategy, such as historical, ideological and geopolitical. In particular, based on the research of historical facts, the importance of the South Caucasus for Turkey is emphasized. In addition, theoretical base for the formation of its regional strategy after the collapse of the Soviet Union is examined.

The sources of the article were both the official materials and the press of the time, as well as the research literature.

Keywords: *Turkey, Armenia, South Caucasus, geostrategy, geopolitics, Eurasianism, Pan-Turkism.*

АРМЕНИЯ В СТРАТЕГИИ ТУРЦИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ: НЕКОТОРЫЕ ИСТОРИЧЕСКИЕ И ТЕОРЕТИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ

РУБЕН САФРАСЯН

*исполняющий обязанности научного директора Института
востоковедения НАН РА, советник директора,
доктор исторических наук, профессор, академик НАН РА,
г. Ереван, Республика Армения*

Учет особенностей региональной геостратегии Турции является необходимым условием для более глубокого понимания сути ее политики по отношению к Республике Армения в 1990-е годы. К сожалению, этот аспект часто упускается из виду в исследовательской литературе.

Целью настоящей статьи является изучение тех исторических, идеологических, а также теоретико-геополитических факторов, которые оказали влияние на геостратегию Турции. Статья является частью монографического исследования, подготовленного автором.

В частности, на основе привлечения исторического материала, подчеркивается важное значение Южного Кавказа для Турции, рассматриваются основные теоретические факторы формирования ее региональной стратегии после распада Советского Союза.

Источниковедческую основу статьи составили как официальные материалы и пресса, так и исследовательская литература.

Ключевые слова: *Турция, Армения, Южный Кавказ, геостратегия, геополитика, евразийство, пантюркизм.*

SEVERAL EPISODES OF HISTORY FALSIFICATION IN SVANTE CORNELL'S WORK*

UDC 930.2(479.24)

DOI: 10.52063/25792652-2021.3-34

EDUARD ZOHRABYAN

Yerevan State University,
Chair of History of the Neighboring Countries of Armenia,
Ph.D. in History, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia
eduardzohrabyan@ysu.am

The aim of the article is to reveal the false and imaginary theses in S. Cornell's work under the influence of falsification of Azerbaijani historiography on the basis of reliable, accurate sources and facts, to show their lack of connection with reality.

The main objectives of the article are to present the general approaches to the interpretation of realities at the amateur level and Azerbaijani historiographical and informative falsification on a field detached from the history of S. Cornell's work, to reveal the essence of distorting the facts, events, concepts presented by Cornell, summarize the bankruptcy of the wish of S. Cornell to deliver the desired as a reality.

The author has used a number of scientific methods, in particular, analytical and historical comparative methods.

The author puts forward the premise that the false theories and theses in Cornell's work are bankrupt, unsubstantiated, that they can not contribute to the peaceful regulation of Armenian-Azerbaijani relations.

The author concludes that the falsification of history in general, and particularly by Azerbaijan and their foreign authors is rejected both in scientific and practical political means.

Key words. Artificial state, falsification of history - gerrymander, perpetuation of history, Turkic-speaking Muslims, localization of ethnic identity, historical homeland, region, newcomers, nomadic herdsmen, demography, ethnic unification, administrative-territorial changes.

Introduction

The falsification of Azerbaijani historiography and political thought is carried out by various methods. It is manifested in Azerbaijan both through anti-Armenianism and anti-Armenian propaganda of political, historiographical circles, as well as through the publication of falsifying works ordered to foreign authors abroad. Among the latter is the work of the Swedish scientist, politician Svante Cornell¹ titled "Small Nations and Great Powers. A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus", in which, in addition to the

* Հոդվածը ներկայացվել է 06.12.2021թ., գրախոսվել՝ 19.12.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

¹ Svante E. Cornell is a co-founder and director of the Institute for Security and Development Policy. He is the Research director of Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, the Joint Center operated by ISDP in cooperation with the American Foreign Policy Council (AFPC).

problems of ethnic conflicts in the Caucasus region, in order to satisfy his clients, the author distorted the historical realities and touched upon some episodes of the so-called "history of the 18th century" in Azerbaijan. The intentionality and partiality of S. Cornell's theses and assertions about the latter are obvious, as they are not based on facts and are groundless, built exclusively by the methods of Azerbaijani propaganda.

There was no political-ethnic formation called Azerbaijan in the Eastern Transcaucasia until 1918. This fact is also confirmed by the Azerbaijani historian I. Bagirova, who is writing. "At the beginning of the 20th century, the revolutionary movement of the masses defending their class, social and civil rights coincided, stimulated the national movement in the suburbs, most of which had not yet completed the formation of a united nation. The process of formation of the national self-consciousness of the Azerbaijanis, its separation from pan-Turkism and pan-Muslimism began in the second half of the 19th century and ended in 1918. with the creation of a united nation-state" (Багирова 86).

With the creation of an artificial state in 1918, the Democratic Republic of Azerbaijan however, ended not the formation of national self-consciousness of Azerbaijanis but the localization of the ethnic identity of Turkic-speaking Muslims in the region, the search for the creation of a homeland, and the process of formation of the so-called Azerbaijani nation continues in our time. "Throughout the past century, there has been an ongoing crisis of ethnic identity among Azerbaijanis. On the one hand, the historical memory of the Azerbaijanis is not directly related to the current formation of their identity, on the other hand, the historical depth and geographical area of that memory are not clear (Խառնապետյան 301): Meanwhile, with the encouragement and direct instruction of the political leadership of Azerbaijan, the Azerbaijani historiography aims to make the history of Azerbaijan as old as possible through historical construction. That line, which started in 1918-1920 during the DRA years (Шнирельман 119-129), was consistently implemented in both Soviet and post-Soviet historical periods.

The process of "Azerbaijanization" and perpetuation of the history of Azerbaijan

In the Soviet period, in particular, by the first secretary of the Communist Party of Azerbaijan since the 1930s, Mirjafar Baghirov, under the direct auspices of the USSR leadership, the process of turning Turkic-speaking Muslims into a nation with the Azerbaijani ethnographic title began. It was on the basis of the Marian theory of the genealogy of the Azerbaijanis put forward by him that the process of the historical construction of the Azerbaijaniization of the history of Azerbaijan began. The criterion of forming a titular nation arising from political opportunism became the main, inviolable starting point of the history of the Republic of Azerbaijan. Particular attention was paid to the issue of writing the history of the republic, moreover, that history had to be written from the position of the title ethnos (Չոլլու 33): In 1934 the Faculty of History of the Azerbaijan State University was founded, in 1940-1941 the Chair of History of Azerbaijan (Шнирельман 132-133), the first textbooks of the history of Azerbaijan were published: the first in 1939, the second in 1941 (Шнирельман 134): The process of Azerbaijaniization of history continues both in 1941-1945 and in the new textbooks of Azerbaijani history published in academic publications.

The contribution of Heydar Aliev, who was known as the real author of the idea of "Azerbaijaniization", is enormous in the unfinished work of "Azerbaijaniization" of the history and identity of Azerbaijan (Խառնապետյան 308):

The only way to implement this idea is the falsification and gerrymander of not only the history of Azerbaijan, but also the history of the region. Cornell chose that method and consciously made Azerbaijani falsification.

In order to properly understand the purpose of the publication of the work, its content, the true essence of the author's ideas, one can first explain the motivation for creating the book, the interests of its author and the source of their funding. This book, for example, was published with the financial support of the Allievs' Foundation of Azerbaijan and with the means of a Europe-Azerbaijani company founded in 2006. This fact speaks for itself; it indisputably testifies to the author's ordering, the intentionality of the work, the defense of the falsification of Azerbaijani historiography through the distortion of historical facts.

Many of the ideas expressed in the book are controversial, contradictory and obviously distorted, the purpose of which is to present the desired and order as a reality, to mislead the public, to misinform, and ultimately to justify Azerbaijani aggression against the Republic of Armenia and Artsakh through the terrorist war.

On page 18 of the work, the author begins with referring to ancient references as a proof argument, of course, without mentioning a specific source. Whereas elementary scientific ethics and logic requires unbiased, credible research based on reliable facts and sources, which was not obtained by the mentioned author.

Back in the 1940s, Z. Yampolski developed and circulated the concept of "ethnogenetic continuity in the territory of Azerbaijan" in official Azerbaijani historiography, the author of which sought to "substantiate" the Turks' settlement and permanent existence in modern Azerbaijan, based on the Aghwan theory of Azeri descent (Ямпольский). This theory was later developed by Z. Buniatov to a new level of falsification, introducing the so-called late Aghwan concept (Бунятов). G. Abdullayev, one of the Azerbaijani authors, using the well-known vicious methods of historical construction encouraged in Soviet Azerbaijan, in 1958 wrote that in the second half of the 18th century, the "political unification" of North-Eastern Azerbaijan took place within an ethnically homogeneous population (Azeris) The unification of Azerbaijani lands around Quba or another political center would contribute to the "creation of a national state" (Абдуллаев 12). None of these statements correspond to the real historical-ethno-political picture of the region.

In our time S. Cornell, having this false concept invented by the above-mentioned and other Azerbaijani authors, went further developing their minds.

S. Cornell writes, "The khanates in the north, that is in the present-day Azerbaijan, included Baku, Shirvan, Ganja, Nakhijevan, Karabakh, and Yerevan" (Cornell 18). The listed khanates, as it is known, were separate semi-independent administrative units subject to Persia; they could not be included in the "territory" of the non-existent state of Azerbaijan (Մխիթարյան). It is noticeable that S. Cornell repeats the theses of Azerbaijani forgers, further expanding the imaginary territorial understandings of "Azerbaijan" in the 18th century. This misunderstanding, skillfully used by the Azeri forgers and their foreign authors, is due to the fact that in the 16th and 17th centuries, all the states of the Transcaucasia were subjugated to the Persian royal court by the ruler of Atropatene, whose residence was Tabriz (Ансари 32-33): This whole territory was included in one financial-tax-military system, which was one of the four similar administrative-territorial units of Persia: Iraq, Fars, Azerbaijan and Khorasan. The use of one common tax-financial name, Azerbaijan, as correctly observed by P. Chobanyan, "left its mark on the emergence of new terminology, as well as on the further misunderstanding of ethno-religious processes and became a subject of political speculation" (Չոբանյան 32): Baba Khan (Shah of Fatali) wrote in his letter to King George XII of Georgia that "Georgia is the best country in Azerbaijan and the Persian rulers have always been friendly to the Georgian kings (Չոբանյան 36). It is obvious that the use of the common name Azerbaijan in relation to other territories of Georgia and other regions subjugated to Persia at that time had a purely symbolic nature, implying

their tax-financial subordination to Atropatene. The elimination of this factor of direct subordination from the middle of the 18th century gives rise to a new, purely territorial, but again symbolic perception of the so-called financial-administrative khanates of the Eastern Transcaucasia.

If we view by the same logic of Cornell, the administrative-political unit of Arminia with Dvin in the center formed in the early 8th century during the Arab rule, which included Armenia, Georgia, Aghwank (Azerbaijani people consider their historical homeland) and the Near Caspian regions, we can say for sure that Georgia and Aghwank were Armenia or Armenian territories. The mentioned author has a deliberate confusion of terms and place names.

The Falsification of the Ownership of Territories

S. Cornell names territories of Karabakh and Yerevan as part of the present-day Azerbaijan. Even if we consider Karabakh as a disputed territory from the perspective of the international law, how can the author include Yerevan, the capital of the Republic of Armenia, into the borders of Azerbaijan? It is hard to claim that it is just a mistake by the author as the intention to present the text the same way is seen in other parts of the book such as considering the Iranian khans of the region being "Azeris" (Cornell 18). In fact, S. Cornell's work uses the principle of a selective approach to historical memory inherent in Azerbaijani false historiography. In order to please his client, the political elite of Azerbaijan, S. Cornell builds the narrative of the book on unfounded, distorted facts, on the basis of which it can be assumed that "Armenia is not Armenia, Karabakh is Aghwan land, Armenians are newcomers, and the khanates of Yerevan and Nakhijevan are" Western Azerbaijan" (Тунян, Муса Гасымлы, Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг. 216)

On the same page 18, the author writes about the above-mentioned khanates the following claim: "This would mean that the regions would not be incorporated outright into the Russian empire; they would be under Russian rule but without the status of being part of Russia itself" (Cornell 18). Mr. Cornell maybe does not know the essence of the colonial policy of the Russian Empire in general; its main difference from the colonization led by the Western powers was to incorporate all the conquered territories into their empire with the use of administrative governance universal for the whole empire. In addition, all the conquered territories might have had direct borders through land; that is why maintaining a colony such as Alaska was not in their vision of long-term state administration.

On page 19, S. Cornell writes the following sentence: "After Peter the Great's abortive Persian expedition in 1722, the Ottoman and Persian empires concluded an alliance in 1727, recognising the threat from the north and the danger of allowing their mutual enmity to jeopardize the security of both empires" (Cornell 19). Here once again it is obvious that the author intentionally describes the events as if Russia enlarged its presence in the region, the regional powers opposed Russian presence. However, we have to pay attention to the fact that the Russian and Ottoman Empires concluded a treaty in 1724 in Constantinople (modern-day Istanbul) which legalized and allowed Russia to keep its conquests in the eastern costs of Caspian Sea whereas Russia would not oppose the Ottoman conquest of Eastern Armenia. Moreover, we have to ask the author of the book the following question: Which Iranian administration signed a treaty with the Ottomans in 1727? This is an important question because of the fact that the signatory side did not have power in Iran whereas in a few years later, in 1730, Nader (Iranian Shah in 1736-1747) started a war against the Ottomans in order to push them out from the Iranian borders which at that time included Eastern Armenia.

False Concepts of Azerbaijan's «Statehood» and «Arrival of Armenians»

It should be noted that when talking about the formation of a state called Azerbaijan in the Eastern Transcaucasia in the 18th century (Svante E. Cornell, p.18), S. Cornell involuntarily repeats the fictitious opinion of the traditions of ancient centuries of Azerbaijani statehood, and hence the next distorted thesis about the "arrival of Armenians" in the region rises.

One of the false concepts currently widely circulated in Azerbaijani historiography is that the proclamation of the Democratic Republic of Azerbaijan in 1918 restored the centuries-old traditions of the Azerbaijani statehood. In fact, this false concept is based on the consciously distorted assertions that the state of Azerbaijan has existed in the Eastern Transcaucasia since ancient times, as in the 18th century. But the facts prove the opposite. In the 18th century, there was no ethnic name or especially political formation under the name of Azerbaijan in Eastern Transcaucasia. The most obvious proof was presented by the first representative of the Turkic-speaking Muslim intelligentsia of the Eastern Transcaucasia, M. Shahtakhtinsky. In 1891 in his article "How to Call the Muslims of the Transcaucasia" he suggested to call the Turkic speakers of the Transcaucasia not "Tatar" or "Muslim" but "Azerbaijani" and the Turkic languages of the Transcaucasia Azerbaijani (Шахтактинский). In fact, he was the first to introduce the artificial terms "Azerbaijani" and "Azerbaijani", proposing to adopt that term instead of Tatar as the ethnonym of the Turkic-speaking Muslim population of the Transcaucasia. If in the late 19th century there was no Azeri ethnic community in the Transcaucasia, then there was no state formation of Azerbaijan, moreover in the 18th century it could not include administrative units such as Shaki, Shirvan, Ganja, Baku, Nakhijevan, Karabakh, Yerevan khanates mentioned by the falsifier historian. The above-mentioned khanates under the Iranian royal court passed to the Russian Empire according to the signed treaties of Gulistan 1813 and Turkmenchay 1828. Therefore, it is a falsification and downright the statement that there was an Azerbaijani state in the 18th Eastern Transcaucasia with a common territory, culture and language. In addition, in 1828 with the treaty of Turkmenchay the khanates of Yerevan and Nakhijevan passed to Russia and on the basis of the Ordubad mahal, by the decree of the tsar in 21.03.1828 there was formed an Armenian region. Unwillingly, a question arises as to why, according to Azeri historiography, and their favorite foreign writers, in the 18th century, instead of the supposedly existing Azerbaijani political formation, no Azerbaijani administrative unit or an Azeri region was created. In 1918, the name of Azerbaijan, a newly created state formation in the East Transcaucasia, was not chosen by chance. It pursued far-reaching political and strategic goals. In this regard, the Persian author Enaetollah Reza writes: "The naming of Aran and Shirvan in the Caucasus" as Azerbaijan "was done according to the policy and demand of the Turks" (Էնաեթոլլահ 151).

Another speculated view is closely related to the above mentioned question, according to which in the territory of Eastern Armenia, which passed to Russia in the 18-19th centuries, more Azeris lived than Armenians. This is one of the favorite topics of Azerbaijani President I. Aliiev, which he exploits on all occasions, consciously forgetting the fact that in the 18th and 19th centuries the Azerbaijani ethnic concept and society did not exist so they could not form a majority. Besides, it is necessary to explain why the number of Armenians in those territories decreased, how the process of de-Armenianization of Eastern Armenia took place and the Persians and partly Turkish-speaking Muslims settled here, etc. This is explained by the Turkish-Persian wars of the 16th-17th centuries, the desolation of settlements in Eastern Armenia, the resettlement of nomadic Turkish tribes, and the deportation of 300,000 Armenians from Armenia by Shah Abbas I in the early 17th century. Despite the deportation of the Armenian population to the depths of Persia from Shah Abbas I and the influx of foreign tribes, the Armenian

people were the main population of the Armenian Highlands, and both Armenians and many foreigners continued to use the name Armenia in all these states (Չոբախյան 32). Later, in the 18th century, King Heraclius II of Georgia deported the population of the Ararat Valley. After the unsuccessful attempt to capture Yerevan Fortress in 1804, Russian General P. Tsitsianov resettled 11,100 Armenian families from the territory of Eastern Armenia, more than 55-500 people in Georgia. Nevertheless, as P. Potyomkin wrote in the early 19th century, "most of the rule of Yerevan Khan consisted of Armenians" (Иоанисян 99).

Throughout its existence, the Safavid state pursued a policy of resettlement of the nomadic, semi-nomadic Turkish tribes belonging to the Shiite Islam in the Transcaucasia, in particular, in the plains of Karabakh (Բարսախյան 21). Despite this fact, it should be noted that in 1823, according to Russian tax lists, 96.67% of the population of the five mahallas of Karabakh were Armenians, and 3.33% were Tatars (Բախխանյան 18). Turkic tribes appeared in Nagorno-Karabakh in the last thirties of the 18th century, until 1921, when Nagorno-Karabakh was illegally annexed to Soviet Azerbaijan they did not exceed 3-4% of the population (*История Азербайджана* 237).

According to another view of Azerbaijani historiography, Armenians appeared in Artsakh only after the Treaty of Turkmenchay in 1828, and because they were "newcomers" they could not constitute themselves in the territory of Artsakh. This view is refuted by the Azerbaijani author G. Abdullayev in a monograph published in Baku in 1965, where he wrote: "The Karabakh region included ... Five Armenian melikdoms, the owners of which, during the reign of Nader Shah, enjoyed all the privileges of the rulers in their territories; they had their own armed forces; By declaring himself a khan Panah Ali (1748-1760) tried to subdue the meliks by using mean methods and tricks" (Абдуллаев 90-92). This testimony of the Armenianness of Artsakh shows that Armenians lived in Artsakh since ancient times, until the Treaty of Turkmenchay in 1828. The imaginary thesis of the Azerbaijani authors about the arrival of Armenians in Artsakh is also denied by the fact that "General N. Abkhazov first accommodates Persian-Armenian immigrants to Karabakh in the city of Barda (Partav) or its surroundings with unfavorable climate. Due to the deplorable situation, 300 of the 750 families sent to Karabakh will soon leave. Only 450 families or 2,000 people remain, that is 1.6% of those who immigrated to the borders of the Russian Empire (Արքայախանյան 223).

As for the "arrival" of Armenians in general, this concept was denied by Abbas Kuli-Agha Bakikhanov, who is considered to be the founder of Azerbaijani academic historiography in the 19th century. In his famous work "Gulistan-Iram" he writes . "Greek historians write that Darius (6th century BC -E.Z.) launched a campaign with a large number of troops, wanting to punish the Scythians for the desolation of Armenia and Azerbaijan" (Бакиханов 20). It is clear from what has been said that neither the Greek historians, nor Abbas Kuli-Agha Bakikhanov, who refers to their reliable information, can write their stories in accordance with the wishes of the future Azerbaijani falsifiers serving them. As it is commonly said, comments are unnecessary. In connection with the description of the Arab invasions, A. Bakikhanov writes. "The annals of Tabal, works of Guzid, Rauzat al-Asfa, and others state that the caliph Umar ibn al-Khattab/al-Farooq/ ordered Surak ibn Amr to obey Azerbaijan when he conquered Persia. He carried out the order of the caliph, then moved to Shirvan, sending before him Qukayra ibn Abdullah from Armina (Armenia), and Abd al-Rahman ibn Rabia from Mughan" (Бакиханов 27). These small parts of the work unequivocally testify to the continuity of the Armenians both in terms of their locality and in the historically unchanged homeland. The Azerbaijani historiography wants to present the opposite of this undeniable fact. However, only A. Bakikhanov's work, in fact, basically shows the bankruptcy of the concept of the "arrival of Armenians" of the foreign Azerbaijani forgers hired by them.

At the same time, it is clear from A. Bakikhanov's work that in the 7th century Azerbaijan (Atropatene-E.Z.) was one of the north-western regions of Persia, where the Turkish nomadic tribes settled in the following centuries. It is different from Shirvan in the Eastern Transcaucasia, on which the name Azerbaijan was spread only at the beginning of the 20th century.

According to the Treaty of Turkmenchay in 1828, the Armenians got the right to return, they lived in their historical homeland, from where they were deported in previous centuries, that is, they moved from one part of their historical homeland to another. The history of nations has always been characterized by both internal and external migration movements. Speaking about the resettlement of Armenians, Azerbaijani historiography deliberately avoid the facts of resettlement of Muslims. And they unequivocally prove that due to the resettlement policy pursued by the tsar's court, the Transcaucasia has not become Christianized, but the number of Turkic-speaking Muslim elements has increased to a greater extent. In the spring of 1828, the Russian treasury relocated 20,000 Chervonets, equivalent to 4 million rubles, for the resettlement of Muslims led by Agha-Mir-Feti Tabrizi, from the Iranian province of Azerbaijan to the Transcaucasia. At the same time, 16 000 Chervonets were relocated for the resettlement of 8249 Christian families - Armenians, Assyrians, Greeks - from Persia to the Ararat Valley. Moreover, out of 16,000 Chervonets, only 8,000 were spent on the resettlement of Christians, significantly less than the amount spent on Muslims. The mass resettlement of Tatar tribes from Iran forced the Russian Council of Ministers in 1832 to limit the settlement of Russian sectarians in Karabakh (Тунян, Карабахский конфликт 70, 71). Only the inhabitants of the 4 settlements of the village of Uzamchi and Gharadagh were allowed to settle in Karabakh, whose number was 700 people (Тунян, Муса Гасымлы, Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг. 215).

Only the inhabitants of the 4 settlements of the village of Uzamchi and Gharadagh were allowed to settle in Karabakh, whose number was 700 people (Тунян, Муса Гасымлы, Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг. 215).

As it can be seen from the above, due to the policy of the tsar's court to neutralize the Iranian influence in the region, the number of Turkic-speaking Muslims, willingly or unwillingly, increased through their relocation to the Transcaucasia. In other words, the thoughts on the arrival of Armenians do not speak in favor of Azerbaijanis at all. Moreover, the policy of mass resettlement of Tatar tribes in the territories from Iran to the Russian Empire was aimed at the process of deiranization in a geographically newly formed territory, which would objectively contribute to the unification of Turkism, the formulation of the pretense of acquirement of homeland.

Conclusion

The Turkish-speaking Muslims who invaded Transcaucasia in the 12th and 17th centuries and settled here were constantly displaced by the nomadic way of life. In the 19th century, the undisguised desire to prevent the formation of administrative divisions in Transcaucasia and the formation of mono-ethnic zones, the policy of inter-population settlement of tsarism created favorable conditions for the spread of nomadic Turkic-speaking Muslims, mainly for spreading in the region. This circumstance later, in the search for the homeland, became an occasion for Turkic-speaking Muslims to assert pretenses for the indigenous historical territories of all the peoples who had occupied it.

In the 19th century and at the beginning of the 20th century, all the above processes concerning Turkish-speaking Muslims took place not only as a result of the policy pursued by the Russian royal court, but often with its open encouragement. It can be asserted with absolute certainty that the process of ethnic unification of the Caucasian Tatars, the formation of their identity, the emergence of the preconditions for statehood

took place precisely because of the policy pursued by the Russian Empire and then by the Soviet government. Therefore, the strongly anti-Russian view expressed in the Azerbaijani historiography, according to which Russia is the cause of the misfortune of the Azerbaijani nation, that they were divided due to the Russian conquests to North and South Azerbaijan, is groundless and false. T. Svetokhovskiy, a Polish scholar, made a very correct observation, noting that the transformation of ethnic identity and the ethno-unification of Turkic-speakers in the Eastern Transcaucasia in the early 20th century was a result of changes in the framework of the Russian power, which was stimulated by a new type of Turkic intelligentsia and Literary Turkic language (Светоховский 8).

According to the Soviet census of 1920, 1923, 1926, which were also conducted in the Azerbaijani SSR, the term Azerbaijani was not used, despite the existence of that republic. The names of Turks or Tatars are mentioned in the mentioned censuses, which means that there was an Azerbaijani state, but there was no Azerbaijani people. Only in the 1937 census was the Azerbaijani ethnic first circulated and given citizenship. The Azerbaijani author Alekperov testifies to this, writing that "the Azerbaijani ethnonym has been widely used among the population only since 1936" (Алекперов 71). This is a fact that the artificiality of that society is not yet fully formed.

Thus, the small number of facts presented above even make the attempts to falsify history in Cornell's book even more obvious. Maybe Mr. S. Cornell would do a favor to study the Armenian monuments of tens of thousands of centuries-old material culture scattered in the territories he considers to be Azerbaijan, and then make new judgments about the affiliation of those territories.

Maybe he would ask himself and his Azeri colleagues why these monuments of Armenian material culture were built or how they appeared in the so-called "territory of Azerbaijan", why are these monuments, such as more than a thousand khachkars were barbarically destroyed by the Azerbaijanis in Jugha in Nakhijevan in order to eliminate the traces of Armenianness.

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Հ., Արցախը 18-19-րդ դարերում, Երևան 2015:
2. Բաբայան Դ., Ղարաբաղյան հակամարտություն, պատմական, իրավական և այլ ապակտներ, «21-րդ դար», թիվ 1(17), 2005:
3. Բալայան Վ., Ազատագրության և պետականության համար պայքարի պատմական և գաղափարական դրսևորումները Արցախում (17-րդ դարի երկրորդ կես-2007 թվական), դոկտորական ատենախոսության սեղմագիր, Երևան., 2013:
4. Չոլյան Ս., Ազգային քաղաքականությունը Խորհրդային ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղի խնդիրը, «21-րդ դար», թիվ 4(18), 2007:
5. Էնաեթոլլահ Ռեզա, Ազարբայջան և Առան, Երևան 1994:
6. Խառատեան Հ., «Ադրբեջանցիները», «կովկասալեզուները» և «իրանալեզուները». ինքնության զարգացումներն Ադրբեջանում, «Հանդես Ամսօրեայ», Վիեննա-Երեւան, Մխիթարյան տպ., 2012:
7. Մխիթարյան Գ., Արեւելյան Այսրկովկասի վարձաքաղաքական կազմավորումները ԺԸ դարի երկրորդ կեսին, Երեւան, 2018:
8. Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Էջմիածին, 2006:
9. Аббас-Кули-Ага Бакиханов, Гулистан-Ирам, Редакция, комментарии, примечания и указатели З. М. Буниатова, Баку 1991.
10. Абдуллаев Г., Из истории Северо-Восточного Азербайджана в 60-80 г.г. 18 в., Баку, Изд-во АН Аз. ССР, 1958.

11. Абдуллаев Г., Азербайджан в 18 веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965.
12. Алекперов А. К., Исследование по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960.
13. Багирова И. С., Политические партии и организации Азербайджана в начале 20 века 1900-1917, «ЕЛМ», Баку, 1997, стр.86.
14. Буниятов З., Азербайджан в 7-9 вв., Изд. Академии Наук Азербайджанской ССР, Баку, 1965.
15. Иоанисян А., Россия и армянское освободительное движение, Ер. 1990.
16. *История Азербайджана*, под. ред. Сумбатзаде А. С., Гулиева А. Н., Изд. АН АЗ, ССР, Баку 1958.
17. Мухамид-Рафи Ансари. Дастурал Мулук, Ташкент, 1991.
18. Шахтагинский М., Как называть Закавказских мусульман, - «Каспий», № 93, Баку, 1891.
19. Шнирелман В., Войны памяти, . Мифы, идентичность и политика Закавказье, ИКЦ «Академкнига», Москва 2003.
20. Светоховский Т., Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербайджане,- Азербайджан и Россия: общества и государства, Вып. 4, Москва, 2001.
21. Тунян Валерий, Карабахский конфликт, Ереван, 1999.
22. Тунян Валерий, Муса Гасымлы, Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг.: в поисках исторической истины, Москва, «Инсан», 2014, 528 с., Հայադիտարկումը հարցեր, հավնելու 1(7), ԵՂՂ հրատ.
23. Ямпольский З., Об этногенетической непрерывности на почве Азербайджана, «Вопросы истории Кавказской Албании», Баку, 1962.
24. Svante E. Cornell, Small Nations and Great Powers, A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus, 480 pp. Richmond: Curzon Caucasus World, 2001.

Works cited

1. Abrahamyan H., Arcaxu' 18-19-rd darerum, [Artsakh in the 18-19 centuries], Erevan, 2015.
2. Babayan D., Gharabaghyan hakamartut'yun, patmakan, iravakan ev ayl aspektner [The Karabakh Conflict, Historical, Legal and Other Aspects], «21rd DAR», N1(17), 2005.
3. Balayan V., Azatagrut'yan & petakanut'yan hamar payqari patmakan ev gaghap'arakan drsevorumner' Arcaxum (17-rd dari erkrord kes-2007 t'vakan), doktorakan atenaxosut'yan seghmagir, [Historical and Ideological Manifestations of the Struggle for Liberation and Statehood in Artsakh (the second half of the XVII-2007), abstract of the doctoral dissertation], Erevan., 2013.
4. Zolyan M., Azgayin qaghaqakanut'yuny' Xorhrdayin adrbejanowm ev Ler'nayin Gharabaghi xndiry', [National policy in Soviet Azerbaijan and the Problem of Nagorno-Karabakh] «21-rd DAR», N4(18), 2007.
5. E'naet'ollah R'eza, Azarbayjan ev Ar'an, [Azerbaijan and Aran] Erevan 1994.
6. Xar'atean H., «Adrbejancinery'», «kovkasalezunery'» ew «iranalezunery'». inqnut'yan zargacumnern Adrbejanum, «Handes Amso'reay», [“Azerbaijanis”, “kavkazalezu” and “iranalezu”: the Development of Identity in Azerbaijan], Vienna-Erevan, Mxit'aryan tp., 2012.
7. Mxit'aryan G., Arewelyan Aysrkovkasi var`aqaghaqakan kazmavorumner' JhY' dari erkrord kesin, [Military-political formations of the Eastern Transcaucasia in the second half of the X century], Erevan, 2018.

8. Chobanyan P., Hay-r'us-vracakan p'oxharaberut'yunnery' JhY' dari erkrord kesin, [Armenian-Russian-Georgian relations in the second half of the XV century], E'jmiac'in, 2006:
9. Abbas-Kuli-Aga Bakihanov, Gjulistan-Iram, Redakcija, komentarii, primechanija i ukazateli Z. M. Bunijatova, [Gulistan-Iram, Editorial Board, Comments, Notes and Indexes by Z. M. Bunijatov], Baku 1991.
10. Abdullaev G., Iz istorii Severo-Vostochnogo Azerbajdzhana v 60-80 g.g. 18 v., [From the history of North-Eastern Azerbaijan in the 60-80 years of the 18th century], Baku, Izd-vo AN Az. SSR, 1958.
11. Abdullaev G., Azerbajdzhan v 18 veke i vzaimootnoshenija ego s Rossiej, [Azerbaijan in the 18th century and his relationship with Russia], Baku, 1965.
12. Alekperov A. K., Issledovanie po arheologii i jetnografii Azerbajdzhana, [Study of archaeology and Ethnography of Azerbaijan], Baku, 1960.
13. Bagirova I. S., Politicheskie partii i organizacii Azerbajdzhana v nachale 20 veka 1900-1917, [Political Parties and Organizations of Azerbaijan in the early 20th century], «ELM», Baku, 1997, str.86.
14. Bunijatov Z., Azerbajdzhan v 7-9 vv., [Azerbaijan in the 7th-9th centuries], Izd. Akademii Nauk Azerbajdzhanskoj SSR, Baku, 1965.
15. Ioanisjan A., Rossija i armjanskoe osvoboditel'noe dvizhenie, [Russia and the Armenian Liberation Movement], Er. 1990.
16. Istorija Azerbajdzhana, [History of Azerbaijan], pod. red. Sumbatzade A, S., Gulieva A. N., Izd. AN AZ, SSR, Baku 1958.
17. Muhamid-Rafi Ansari. Dastural Muluk, [Dastural Muluk], Tashkent, 1991.
18. Shahtahtinskij M., Kak nazvyvat' Zakavkazskih musul'man, [How to call Transcaucasian Muslims], «Kaspij», № 93, Baku, 1891.
19. Shnirelman V., Vojny pamjati, Mify, identichnost' i politika Zakavkaz'e, [Wars of Memory, Myths, Identity and Politics of Transcaucasia], IKC «Akademkniga», Moskva 2003.
20. Svetohovskij T., Russkoe pravlenie, modernizatorskie jelyty i stanovlenie nacional'noj identichnosti v Azerbajdzhane,- Azerbajdzhan i Rossija: obshhestva i gosudarstva, [Russian Reign, Modernizing Elites and the Formation of National Identity in Azerbaijan - Azerbaijan and Russia: Societies and States], Vyp. 4, Moskva, 2001.
21. Tunjan Valery, Karabahskij konflikt, [Karabakh Conflict], Erevan, 1999.
22. Tunjan Valery, Musa Gasymlı, Anatolija i Juzhnij Kavkaz v 1724-1920-e gg.: v poiskah istoricheskoj istiny, [Anatolia and the Caucasus Jugni in 1724-1920-ies: in Search of Historical Truth], Moskva, «Insan», 2014, 528 s., Հայաստանի պատմության հարցեր, հավնդն (Questions of Armenian Studies) 1(7), YSU PH.
23. Jampol'skij Z., Ob jetnogeneticheskoj nepreryvnosti na pochve Azerbajdzhana, «Voposy istorii Kavkazskoj Albanii», [On ethnogenetic continuity on the soil of Azerbaijan, "Epos of the history of Caucasian Albania"], Baku, 1962.
24. Svante E. Cornell, Small Nations and Great Powers, A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus, 480 pp. Richmond: Curzon Caucasus World, 2001.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ԶԱՆԻ ԴՐՎԱԳՆԵՐ ՍՎԱՆԹԵ ԶՈՐՆԵԼԼԻ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԷՂՈՒԱՐԴ ՉՈՐԱԲՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչի ժ/պ,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Հոդվածի նպատակն է հավաստի, ստույգ աղբյուրների և փաստերի հիման վրա բացահայտել Ս. Զորնեյի աշխատության մեջ աղբրեջանական պատմագրության կեղծարարության ազդեցությամբ տեղ գտած ստահող ու մտացածին թեզերը, ցույց տալ իրականության հետ դրանց առնչության բացակայությունը:

Հոդվածի հիմնական խնդիրներն են՝ ներկայացնել Ս. Զորնեյի աշխատության՝ պատմականությունից կտրված հարթության վրա, սիրողական մակարդակում իրողությունների մեկնաբանության և աղբրեջանական պատմագիտական ու տեղեկատվական կեղծարարության ընդհանրական մոտեցումները, բացահայտել պատմությունը նենգափոխելու՝ Ս. Զորնեյի կողմից ներկայացվող փաստերի, իրադարձությունների, հասկացությունների խեղաթյուրման եղանակները, ցանկալին որպես իրականություն մատուցելու ձգտման սևանկությունը:

Հեղինակն օգտագործել է մի շարք գիտական մեթոդներ, մասնավորապես՝ քննական-վերլուծական և պատմահամեմատական մեթոդները:

Հեղինակն առաջ է քաշում այն հիմնադրույթը, որ աղբրեջանական կեղծապատիր պատմագիտության հայեցակարգերի հիմքով Ս. Զորնեյի աշխատության մեջ տեղ գտած կեղծ դրույթներն ու թեզերը սևանկ են, փաստագրուկ և որևէ կերպ չեն կարող նպաստել Հայաստան-Աղբրեջան հարաբերությունների խաղաղ կարգավորմանը:

Հեղինակը եզրակացնում է, որ պատմության կեղծարարությունն առհասարակ և, մասնավորապես, աղբրեջանցի և նրանց ձայնափող օտար հեղինակների կողմից մերժելի է թե՛ գիտական և թե՛ գործնական-քաղաքական առումներով:

Հիմնաբառեր՝ *արհեստածին պետություն, պատմության կեղծարարություն և նենգափոխում, պատմության անընդհատականացում, թյուրքախոս մահմեդականներ, էթնիկ ինքնության տեղայնացում, պատմական հայրենիք, տարածաշրջան, եկվորներ, քոչվոր-անասնապահներ, ժողովրդագրություն, էթնոհամայնություն, վարչատարածքային փոփոխություններ:*

О НЕКОТОРЫХ ФАКТАХ ФАЛЬСИФИКАЦИИ ИСТОРИИ В КНИГЕ СВАНТЕ КОРНЕЛЛИ

ЭДУАРД ЗОГРАБЯН

*и/о зав. кафедрой истории сопредельных стран Армении
Ереванского государственного университета,
кандидат исторических наук, доцент
г.Ереван, Республика Армения*

Целью статьи является на основе достоверных источников и фактов опровергнуть лживые и вымышленные тезисы, которые нашли место в книге С.

Корнелли под влиянием азербайджанской историографии, показать, как в ней путем искажения фактов, в отрыве от историзма и на дилетантском уровне с позиции азербайджанской фальшивой историографии без выяснения глубинной сути представлены исторические факты.

В работе над статьей автор использовал ряд научных методов, в частности, аналитический и историко-культурный методы.

Мы подчеркиваем, что, потворствуя тенденциозным лжеисторикам, зарубежные авторы никоим образом не способствуют урегулированию конфликта и дальнейшему мирному сосуществованию двух соседствующих республик.

Автор, анализируя интерпретацию исторической действительности в книге С Корнелли, приходит к выводу о том, что академически необоснованные концепции, искажение и фальсификация истории со стороны как азербайджанских, так и зарубежных авторов неприемлемы с научной точки зрения. Подобный подход к теме также не имеет практической пользы и с политической точки зрения.

Ключевые слова: искусственно рожденное государство, фальсификация и искажение истории, непрерывность истории, тюркоязычные мусульмане, локализация этнической идентичности, историческая родина, регион, приезжие, кочевники-животноводы, демография, этноконсолидация, административно-территориальные изменения.

ԱՐՑԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ (XVI-XVII ԴԱՐԵՐ) * 1

ՀՏԴ 94 (479.25)

DOI: 10.52063/25792652-2021.3-46

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
mmalkhasyan@ysu.am

Սույն հոդվածում ներկայացված են Արցախի պատմական ժողովրդագրության՝ XVI-XVII դարերին առնչվող մի քանի խնդիրների վերաբերյալ լուսաբանումներ, որոնք հիմնված են սկզբնաղբյուրների տեղեկությունների վրա: Այդ իսկ նպատակով մեր առջև խնդիր է դրվել առանձնացնել և դասակարգել սկզբնաղբյուրներում եղած պատմաժողովրդագրական տեղեկությունները, վերլուծել նրանց նշանակությունը Հայաստանում տեղի ունեցող ժողովրդագրական ընդհանուր գործընթացների համատեքստում և ցույց տալ, որ XVI-XVII դարերում, չնայած անբարենպաստ տարածաշրջանային իրավիճակին և քոչվորակենցաղ ցեղերի միգրացիոն ակտիվությանը, օտար Էթնիկ ներթափանցումները դեռևս զգալի չէին Արցախի տարածքում, և հայ բնակչությունը բացարձակ գերակշռություն էր պահպանում: Այսպիսով՝ ուսումնասիրության նպատակն է վերը նշված ժամանակաշրջանում՝ XVI-XVII դարերում, Արցախի պատմական ժողովրդագրության որոշ խնդիրների լուսաբանումը, որը կատարվել է պատմաբնական և պատմահամեմատական մեթոդների համադրությամբ:

Հետազոտության ընթացքում հավաքված տեղեկությունները խմբավորվել են չորս տեսակների՝ բռնագաղթերին և զանգվածային գերեվարումներին առնչվող հիշատակություններ, Հայաստանում փաստացի բնակվող հայ բնակչության թվաքանակին և ընտանիքի անդամների թվին վերաբերող տվյալներ, օտար (մասնավորապես՝ քրդական) ցեղերի միգրացիայի մասին տեղեկություններ և հայկական բնակավայրերի ցանցը ներկայացնող ցուցակներ: Ի վերջո, կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բնակչության բռնագաղթի ու զանգվածային գերեվարումների դեպքերը, ի տարբերություն Հայաստանի մեծագույն մասի, Արցախում համեմատաբար քիչ են եղել, ինչը պայմանավորված է հայ մելիքական ինստիտուտի պահպանման գործոնով: Նաև պարզվել է, որ Ս. Էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսությունների նվիրապետության ներքո գտնվող բնակչության ընդհանուր թիվը կարող էր որոշ վերապահումներով շուրջ 3.5 մլն լինել, ինչը չափազանց մեծ ցուցանիշ էր բննարկվող ժամանակաշրջանի համար: Պարզվել է նաև, որ Արցախում հայկական ընտանիքի անդամների միջին թիվը գերազանցել է Հայաստանի ընդհանուր ցուցանիշին: Հետազոտության կարևոր եզրահանգումներից մեկն էլ այն էր, որ պատմական ճար գավառում՝ Զարվաճառում ու Բաշաթաղի հյուսիսային

* Հոդվածը ներկայացվել է 01.11.2021թ., գրախոսվել՝ 10.12.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍԸ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ «20TTSH-074» ծածկագրով գիտական նախագծի շրջանակներում:

մասում, հայ բնակչությունը գերակշռող էր XVI-XVII դարերում, ինչը փաստվում է XVII-XVIII դարերով թվագրվող հայկական գյուղացանկերի առկայությամբ և միայն XVII դարի երկրորդ կեսից սկսած՝ քրդական վրանաբնակ ցեղերի միգրացիոն գործընթացների մեկնարկի հիշատակությամբ:

Հիմնաբառեր՝ Արցախ, պատմական ժողովրդագրություն, հայ բնակչություն, XVI-XVII դարեր, Օսմանյան կայսրություն, Սեֆյան Պարսկաստան, բռնագաղթ, Թաշաթաղ, Բարվաճառ:

Մուտք

XVI դարի առաջին տասնամյակներին Օսմանյան կայսրությունը և Սեֆյան Պարսկաստանն իրենց տիրապետությունն են հաստատել Հայաստանի տարածքում և սկզբից ևեթ աշխատել ներմուծել սեփական պետական-քաղաքական համակարգը՝ ներդնելով վարչատարածքային բաժանման իրենց սկզբունքները: Պարսկահպատակ Արևելյան Հայաստանի տարածքի մեծ մասն ընդգրկվել է Չոլխուր-Սաադի (Արարատյան կամ Երևանի), Ղարաբաղի (Արցախի), Շիրվանի, Ատրպատականի բեկլարբեկությունների (կուսակալությունների), իսկ օսմանահպատակ Արևմտյան Հայաստանը՝ Վանի, Էրզրումի, Չըղըրի (Ախալցխայի), Կարսի, Դիարբեքիի, Սեբաստիայի Էյալեթների (նահանգների) մեջ (Սաֆրասոյան, 285-302; Անսայան, 14-20; Չոլալյան, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., 176-190; «Հայոց պատմություն», հ. III, գ. I, 625; Саркисян, 357-380): Այդ վարչամիավորներում իրենց իշխանության ամրապնդման կարևորագույն գործիքներից մեկը ժողովրդագրական քաղաքականությունն էր, որը դրսևորվում էր օտար Էթնիկ տարրերի վերաբնակեցմամբ (օրինակ՝ 1510-1520-ական թթ. եզրագծին քրդական ցեղերի զանգվածային վերաբնակեցումները Արևմտյան Հայաստանի հարավում), հայերի բռնագաղթերով (օրինակ՝ 1570-ական թթ. վերջին Արարատյան դաշտից բնակչության մի ստվար մասի տեղահանումը Օսմանյան կայսրության արևմտափոքրասիական շրջաններ, կամ 1604 թ. պարսից շահ Աբաս I-ի (1587-1629) կազմակերպած զանգվածային բռնագաղթը) և այլն: Այս գործընթացներից համեմատաբար զերծ էին մնում այն գավառներն ու բնակավայրերը, որոնք գտնվում էին հայ մելիքների ժառանգական հողատիրության սահմաններում: Այդպիսի իրավաքաղաքական կարգավիճակ ուներ Արցախը, որտեղ հայ մելիքների իրավունքները համապատասխան իրավական ակտերով վերահաստատվել էին շահական արքունիքի կողմից:

Սույն ուսումնասիրության նպատակն է վերը նշված ժամանակաշրջանում XVI-XVII դարերում, Արցախի պատմական ժողովրդագրության որոշ խնդիրների լուսարանումը:

Քննարկում և արդյունքներ

XVI-XVII դարերում Հայաստանի տարբեր հատվածների ժողովրդագրական նկարագրի մասին տեղեկությունները պահպանվել են զգալի ցրվածությամբ և տարբեր մանրամասնությամբ: Եթե որոշ դեպքերում օտար վարչակազմերն աշխարհագիր մատյաններ են կազմել, ապա այլ դեպքերում էլ նման տեղեկություններ մեզ չեն հասել: Այդ իսկ պատճառով ժողովրդագրական իրավիճակին առնչվող ցանկացած, նույնիսկ անուղղակի տեղեկություն անհրաժեշտ է համարվում դուրս բերել մեզ հասած սկզբնաղբյուրներից:

Արցախի մասին ժողովրդագրական բնույթի տեղեկությունների մեջ նախ որոշել ենք դուրս բերել բռնագաղթերին առնչվող տվյալները: Նմանատիպ առաջին հիշատակությունը հանդիպում ենք օսմանյան հեղինակի՝ Իբրահիմ Փեչևիի երկում: Նա առանձին գլխով նկարագրել է 1533-1535 թթ. թուրք-պարսկական պատերազմական գործողությունների ընթացքում օսմանյան մեծ վեզիր Իբրահիմ փաշայի գլխավորած բանակի կողմից Երևանի, Նախիջևանի ու Արցախի տարածքում

իրականացված բնակչության թալանը, ինչպես նաև գեղանի աղջիկների և անգամ տղաների գերեվարումը (Փափագյան, 106; «Թուրքական աղբյուրներ», հ. Ա, 34): Հատկանշական է, որ մանրամասնությունները վերաբերում են նախևառաջ Երևան-Նախիջևան գոտուն, և Արցախի մասին հիշատակությունն ավելի համեստ է: Սա բացատրվում է նրանով, որ այստեղ պահպանված հայկական ավանդական հողատիրության համակարգը նաև ենթադրում էր հայկական զինական ուժի անվայրություն, որով հնարավոր էր ապահովել անվտանգությունը և պաշտպանել հայ բնակչության շահերը:

Արցախին առնչվող զանգվածային գերեվարումների ու բռնագաղթի մասին հաջորդ հիշատակությունը վերաբերում է 1580 թ.-ին և այս անգամ ևս Օսմանյան կայսրության արշավանքի հետևանքով է: Այդ տարի օսմանյան զորքերը 1580 թ.-ին հերթական անգամ ներխուժել են Արևելյան Հայաստան՝ Արցախ, Գեղարքունիք ու Երևան՝ առանձնակի դաժանությամբ վարվելով Երևանի բնակչության հետ: Քաղաքի շինություններն ավերելուց հետո նրանք կուսակալությունից բռնագաղթեցրել են շուրջ 20 հազար կանանց ու երեխաների («Թուրքական աղբյուրներ», հ. Ա, 46-47): 1580 թ.-ին օսմանյան զորահրամանատար Օսման Յոզղեմիրի ասպատակությունների մասին ձեռագրի մի հիշատակարանում Խարայել գրիչը հաղորդում է հետևյալը. «Երեկ ազգ մի կայր Ղայտաղ կու ասեն և գերեաց բազում տեղիս՝ Ղարայաղլն, Ղարաղաջն, Խաչեն, Վարանդայ մինչև Տիգակ... երեկ Քուրտն Էառ Խոյ, Սալմաստ և Նախչվան և գերեցին և թալնեցին... վայ և եղուկ ազգիս Հայոց...» (ՄՄ, № 4173, 95ա; «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)», հ. 2, 252; Չուլայան, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1555-1595 թթ.), 47): Փաստորեն, Արցախում զանգվածային գերեվարումներն ընդգրկել են Խաչենը, Վարանդան ու Դիգակը:

Սկզբնաղբյուրներում հանդիպող տեղեկությունների հիման վրա մեր նախորդ ուսումնասիրություններում դուրս ենք բերել, որ Արևելյան Հայաստանում հայ հոծ բնակչություն էր կենտրոնացված հատկապես Արարատյան դաշտում, որտեղից XVI դարում և XVII դարի սկզբին քանիցս կազմակերպվել են հայերի բռնագաղթեր: Հայությունը գերկենտրոնացված էր և բնակչության գերակշիռ մեծամասնությունն էր հատկապես մելիքական տների հովանու ներքո գտնվող Արցախում, Գեղարքունիքում, ինչպես նաև Սյունիքի մյուս հատվածներում, Փանձակում, վրացահպատակ Լոռիում (Մալխասյան, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում Ժ2 դարում, 55-56):

Հաջորդ խումբ տեղեկությունները, որոնք վերաբերում են XVI դարի վերջին, առնչվում են ոչ թե բռնագաղթերին, այլ Հայաստանում փաստացի բնակվող հայ բնակչության թվաքանակին: Ըստ այդմ՝ XVI դարի վերջին Երևանի ու Փանձակի նահանգներում (որի մեջ այդ տարիներին դիտարկվում էր նաև Արցախը), ըստ Խուան Պարսկաստանցու (XVI-XVII դարեր), 250 հազարական ծուխ բնակչություն կար, իսկ ըստ Սիդոնի եպիսկոպոսի մի գրության՝ 1587 թ.-ին «Մեծ Հայքի» կաթողիկոսի իրավասության տակ կար ավելի քան 260 հազար հայ ընտանիք, Սսի՝ ավելի քան 20 հազար (Կարապետյան, 97): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վանա լճի ավազանում գործում էր Աղթամարի կաթողիկոսությունը, իսկ Փանձակ-Ուտիքում և Արցախում՝ Փանձասարի կաթողիկոսությունը, ինչպես նաև այն, որ մեր կողմից հայ բնակչության ընտանիքի միջին մեծության գործակիցը 7.6 ենք հաշվարկել մեր նախընթաց ուսումնասիրություններում (Մալխասյան, 16-րդ դարում բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը Հայաստանում՝ առանձին վարչամիավորների օրինակով, 30-38; Նույնի՝ Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում Ժ2 դարում, 52-72), ստանում ենք, որ Սիդոնի եպիսկոպոսի գրության համաձայն՝ 1587 թ.-ի դրությամբ Հայաստանի տարածքում միայն Ս. Էջմիածնի նվիրապետության ներքո, որը XVI դարի վերջին թուրք-պարսկական պատերազմների ծանրագույն հետևանքներով լի ժամանա-

կաշրջան էր ապրում, կար մոտ 2 մլն հայ բնակչություն: Այս թվին զուգահեռ հաշվարկելով Խուան Պարսկաստանցու թվերը և դիտարկելով Լ. Սահակյանի և Ա. Մելքոնյանի կողմից մուսուլմանների համար ընդունելի համարվող ընտանիքի միջին մեծության 6 գործակիցը (Սահակյան, 63; Մելքոնյան, 112)՝ միջինացված գործակցով հաշվարկով ստանում ենք, որ Գանձակի ու Երևանի նահանգներում օսմանյան բռնագավթման սկզբնափուլում կար յուրաքանչյուրում շուրջ 1.75 մլն բնակչություն: Փաստորեն, այս երկու թվերի հաշվարկը բերում է միմյանց հակառակ ծայրահեղությունների, քանի որ այս դեպքում բնակչության ընդհանուր թիվը 3.5 մլն է ստացվում, իսկ եթե նկատի ենք ունենում, որ «ծուխ» ու «ընտանիք» եզրույթները տարբեր են, և ծխի անդամների թիվը միջինում 8-10 էր (Մալխասյան, Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում – 17-րդ դարի առաջին կեսին, 120), հետևաբար Ամենայն Հայոց և Գանձասարի կաթողիկոսներին ենթակա հայաստանյան բնակավայրերում բնակվում էին շուրջ 4-5 մլն մարդիկ: Թե՛ 3.5 և թե՛ 4-5 մլն թվերը միայն երկու վարչամիավորների բնակչության հանրագումարի պարագայում փոքր-ինչ անհավանական ենք համարում, մանավանդ երբ հաշվի ենք առնում Սիդոնի եպիսկոպոսի հաղորդած տվյալների հիման վրա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նվիրապետության ներքո՝ վերը հաշվարկված մոտ 2 մլն թվաքանակը: Հավանաբար եպիսկոպոսը նկատի է ունեցել Ս. Էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսությունների նվիրապետության ներքո գտնվող բնակչության ընդհանուր թիվը, որը, փաստորեն, չի ներառում միայն Աղթամարի կաթողիկոսության ենթակայության ներքո գտնվող բնակավայրերը և ավելի տրամաբանական պատկեր է ցույց տալիս: Ամեն պարագայում այս թվերը ցույց են տալիս, որ Նշված տարածքներում, չնայած XVI դարում տեղի ունեցած արհավիրքներին, հայ բնակչությունը բավական հոծ էր: Պատկերը գուցե ավելի ամբողջական լիներ, եթե մշակված և հրատարակված լինեին 1590 թ. Կոստանդնուպոլսի պայմանագրով Արևելյան Հայաստանում Օսմանյան կայսրությանը ժամանակավորապես անցնելուց հետո անցկացված աշխարհագրի հարկացուցակները:

Անցնելով XVII դարի առաջին կեսին ժողովրդագրական իրավիճակը ներկայացնելուն՝ նշենք, որ այս ժամանակաշրջանի վերաբերյալ հետաքրքիր պատկեր ենք ստանում հայերեն ձեռագրերի հիշատակարանների տվյալները ուսումնասիրելիս: Ընթերցելով նշված ժամանակաշրջանի մոտ 3 հազար հիշատակարաններ՝ մեր նախընթաց ուսումնասիրություններում դուրս ենք բերել աղբյուրագիտական տեսանկյունից մեզ համար կարևոր մոտ 650 հիշատակարաններում ներկայացված ընտանիքների մասին տվյալները (Մալխասյան, Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում – 17-րդ դարի առաջին կեսին, 13-15, 117-119): Հաշվարկների արդյունքում ստացել ենք հետաքրքիր մի պատկեր. ընտանիքների անդամների միջին թիվը XVII դարի առաջին կեսին առանձնապես մեծ է եղել Վանա լճի ավազանում, Էրզրումի նահանգում, Արցախում, Արարատյան կուսակալության մեջ մտնող Կոտայքում և մի քանի այլ շրջաններում (միջինը՝ 7.5-8, երբ Հայաստանի միջին ցուցանիշը 7 էր) (Մալխասյան, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դարի առաջին կեսին, 96-99): Մինչև ժողովրդագրական անցման առաջին փուլի տեղի ունենալը այս պատկերը բնական է, քանի որ ծնելիության մակարդակը սովորաբար ավելի բարձր էր լինում այն տարածքներում, որտեղ սննդի և առհասարակ էներգիայի ռեսուրսները շատ էին, իսկ նշված տարածքները Հայաստանի ամենառեսուրսառատ հատվածներն էին, աչքի էին ընկնում մի դեպքում հացահատիկի ու այգեգործական արտադրանքի (Արարատյան դաշտ, Էրզրումի նահանգ), մյուս դեպքում՝ անտառափայտի ու պտուղների (Արցախ) մեծ ծավալներով, իսկ Վանա լճի ավազանը՝ նշված բոլոր ռեսուրսներով ու ձկնամթերքով:

XVII դարի առաջին կեսին Հայաստանում տեղի ունեցած ժողովրդագրական ամենազանգվածային աղետը պարսից շահ Աբաս I-ի կազմակերպած բռնագաղթն էր:

Ուսումնասիրողներից մի քանիսն անդրադարձել են բռնագաղթի տարածքային ընդգրկման խնդրին, և այս առումով առանձնահատուկ են Գ. Բադալյանի հետազոտությունների արդյունք հանդիսացող քարտեզները, որոնցում քարտեզագրված բռնագաղթի տարածքն ընդգրկել է Արարատյան կուսակալությունը, Վանա և Ուրմիո լճերի միջակայքը, Գանձակից մինչև Էրզրում և Թորթում ընկած տարածքը (Բադալյան, Հայերի բռնագաղթը Շահ-Աբաս 1-ինի կողմից Պարսկաստան XVII դ. սկզբին, 51; Նույնի՝ Հայաստանը XVII դ. առաջին կեսին, 50): Բռնագաղթն ընդգրկել է ոչ միայն Արևելյան Հայաստանի Արարատյան կուսակալությունը (ներառյալ՝ Նախիջևանը), այլև Գանձակի գավառը, Ուրմիո, Սալմաստի, Խոյի, Մակուի վարչամիավորները, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի արևելյան ու հյուսիսային մասերը, Էրզրումի նահանգի արևելյան ու կենտրոնական հատվածները և Կարսի նահանգն ամբողջությամբ (Մալխասյան, Շահ Աբաս Ա-ի կազմակերպած հայ բնակչության բռնագաղթի տարածքային ընդգրկման խնդիրը, 64): Մեր հոդվածի ուսումնասիրման խնդրի տեսանկյունից ուշագրավ է, որ հայ մելիքների կողմից տևորինվող Արցախը և Նրա հետո սերտորեն կապված Սյունիքի կենտրոնական ու արևելյան մասերը խուսափել են ժողովրդագրական այս արհավիրքից: Ժամանակակից հեղինակները Նույնիսկ խոսում են շահական արքունիքի կողմից հայ մելիքների ժառանգական իրավունքների պաշտոնական վերահաստատման մասին: Այդ մեծագույն աղետից խուսափելը դրականորեն է անդրադարձել Արցախի հետագա զարգացման վրա, քանի որ պահպանվել է տեղի հայության տնտեսական ու ռազմական հզորությունը, ինչը երաշխիք էր բնակչության՝ որպես ժողովրդագրական մեկ համալիրի բնականոն ու անվտանգ զարգացման համար: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ Արցախին չի հաջողվել ամբողջությամբ խուսափել բռնագաղթին հաջորդած 1606-1609 թթ. Մեծ սովի արհավիրքներից, որ պատել էր Հայաստանի ամբողջ տարածքը և հարևան երկրամասերը:

Մեր ուսումնասիրության հաջորդ կարևոր խնդիրը Արցախի ու Սյունիքի հարևանության գոտում օտար Էթնիկական տարրի՝ մշտական բնակչության մասը դառնալու ժամանակաշրջանի՝ XVII դարում արհեստականորեն թվագրված լինելու հարցի քննությունն է: Այս համատեքստում նախ անդրադառնանք Զաշաթաղում օտար Էթնիկական ներթափանցումների խնդրին: Ա. Հակոբյանի կարծիքով՝ Զաշաթաղը մասնատվել է Զաշաթաղի և հյուսիսարևմտյան Ալբաուտ գավառների (մահալների) շահ Աբաս I-ի օրոք, քանի որ այդ ժամանակ լայն տարածում էր գտել քոչվոր ազնվականությանը զինվորական ծառայության դիմաց հողային տիրույթների կամ հարկային մասնակի իրավունքների շնորհումը: Նա հավելում է, որ 1609 և 1620 թթ. շահական հրովարտակներով հաստատվել են Մելիք Հայկազ II-ի սեփականատիրական իրավունքները Զաշաթաղի և Կապանի մահալներում (այդ թվում՝ Աղավնո գետի հովտում) ունեցած կալվածքներում՝ պաշտպանելով Նրան թուրք-պարսկական պատերազմում օսմանյան բանակի կողմն անցած քոչվոր ցեղերի ոտնձգություններից (Յակոբեան, 239; «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հ. I, պ. II, վավ. 9, 15): Մելիք Հայկազի օրոք աստիճանաբար զգալի են դարձել քոչվորական արշավանքները, որոնցից մեկի ժամանակ մելիքը Նույնիսկ գերի է տարվել Գանձակ (Հախվերդյան, 93): Հենվելով շահի պալատական պատմիչ Իսքանդար բեգ Մուշեղի վկայությունների վրա՝ Հ. Փափազյանը ենթադրել է, որ Մելիք-Հայկազյանների թշնամիները «շահսևան» (շահին սիրող) հայտարարված ցեղերն էին, ուստի Ա. Հակոբյանն իր հերթին ենթադրել է, որ 1886 թ. ռուսական ծխական վիճակագրության ցուցակում Մինքենդի գյուղական հասարակության կենտրոն Շահսևավարու (արքա ծխավոր) անունը, որ չի Նույնանում քրդական կամ թյուրքական որևէ ցեղանվան հետ, կարող է առաջացած լինել «շահսևան»-ի թյուրքական հորջորջումից (Յակոբեան, 238-240): Թեև դժվար է համաձայնվել իմաստային տեսանկյունից խիստ տարբեր երկու բառերի զուգադրմամբ նման եզրահանգման հետ, սակայն ուշագրավն այն է, որ Ա. Հակոբյանը շեշտում է, թե սովյալ տարածք քոչվորները երկար ժամանակ

ներթափանցում էին լոկ որպես սեզոնային արոտավայրեր (Յակոբեան, 240): Աղավն գետի միջին ավազանում, առհասարակ, օտար քոչվորներ առաջին անգամ հիշատակվում են Չաքարիա Բանաբեռնու կողմից, երբ նա ներկայացնում է Բաշաթաղի Յոչիս գյուղի մոտ վրանային բնակություն ունեցող քրդերին (Չաքարիա Բանաբեռնի, 95): Այս առնչությամբ Պ. Չոբանյանը կարծում է, որ վրանաբնակ քրդերը չէին վայելում պարսից իշխանությունների հովանավորությունը և մուտք չէին գործել Ծար (Չոբանյան, 226): Ամիրգունա խանը խստորեն կանխել է քրդական ասպատակությունները Երևանի խանությունում, օրինակ՝ երբ Մասիսից հարավ բնակվող քրդական ցեղերը որոշել են ասպատակել Շարուրի դաշտը, նրանց սոսկալի հարված է հասցվել Թահմասպուլի կողմից, որը մինչ այդ անցել էր Գեղարքունիքով և Վայոց ձորով և քրդերի չէր հանդիպել (Չոբանյան, 228): Նշված ժամանակաշրջանում քոչվորական ասպատակությունների սպառնալիքն ստիպել է հայ մելիքներին և հոգևոր վերնախավին ամրացնելու իրենց տնօրինության ներքո գտնվող տարածքները, հետևաբար լրացուցիչ ամրակայվել են բերդերը, իսկ վանքերը պատվել են պաշտպանական պարիսպներով, ինչը ժամանակագրական հաջորդականությամբ նկատելի է Արցախի և Սյունիքի հարթավայրային գոտիներից դեպի նախալեռնային և լեռնային շրջաններ բարձրանալուն համընթաց:

Դարավերջին ևս մեկ կարևոր փաստ կա, որ Բաշաթաղի մշտական բնակչությունը հայեր էին: 1691-1692 թթ.-ին Բաշաթաղի մելիք Յախնազարը մի շարք գյուղերի տանուտերերի հետ շարիաթական դատարանով կնքված համախոհական դիմում է ներկայացրել պարսից արքունիք՝ տեղական բնակչության շահերը հողային վեճի ժամանակ պաշտպանելու համար: Այստեղ թվարկված գյուղերի (Յալաք, Բայանկուր, Վաղազաղուն (Վաղազին), Սուարանց, Դուշի, Մերիկ, Յարար, Աֆաթխար (Աղբաթխեր), Մինքենդ, Փուկ, Յոչաս (Յոչանց), Յալուզղամ, Արավիս) քեղխուղաները հայեր էին (Անդրիաս, Ամիր Խաչեն, Մարտիրոս, Պողոս, Մելքում, Առաքել, Իսախան, Յակոբ, Պետրոս, Սարգիս, Գիքոր և այլք) (Կոստիկյան, 168-175):

XVIII դարի մի շարք հիշատակություններ նույնպես հաստատում են հայ բնակչության առկայության փաստը, թեև տեղի են ունենում նաև անբարենպաստ գործընթացներ:

1730 թ.-ին դեռևս հիշվում են Բաշաթաղի գավառի Եզնագումեր, Խանաձափ, Խազնավար (Խոզնավար), Յոչանց, Յակ, Միրիկ, Սպիտակաջուր, Բարագուրիս և այլ գյուղեր, իսկ Չրաղլու գյուղում, որ XIX դարի վերջին հայաթափված էր, պահպանված 4 տապանաքարերից մեկը 1608 թ. է թվագրվում (Յակոբեան, 240, 242): Պ. Չոբանյանի կարծիքով՝ քրդական ու մահմեդական այլ տարրերի ներթափանցումը Բաշաթաղ նշմարելի չափեր է ընդունել 1730-1734 թթ.-ին օսմանյան ռազմակալման շրջանում, ինչի մասին վկայում է Աբրահամ Կրետացին, և XIX դարի առաջին քառորդում միայն դարի կեսերին թվական գերակշռություն ձեռք բերելով հայերի նկատմամբ (Չոբանյան, 222, 227-228, 229): Աբրահամ Կրետացին խոսում է Խնձորենկից դեպի արևելք՝ ձորի մեջ, կարաչորուր քրդական ցեղերի վայրենությունների մասին, որոնց հետևանքով 1730-1734 թթ.-ին հայ բնակչության մի սովոր մասը նույնիսկ քարայրներում է բնակություն հաստատել (Աբրահամ Կրետացի, 150):

Ավելի հյուսիս՝ Վերին Խաչենում (Ծարում), XVIII դ. երկրորդ կեսին նշմարելի է դառնում քրդական ծագում ունեցող քոչվոր քյուլանի ցեղը: Ըստ Գ. Բադալյանի՝ նրանց թիվը դարավերջին այնքան է մեծացել, որ որոշ սկզբնաղբյուրներում գավառը հաճախ Զյուլանու երկիր է անվանվել (Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, 461): Ֆրանսիական ծագմամբ ռուս պետական գործիչ, պատմաբան ու ազգագրագետ Ի. Շոպենը 1830-ական թթ.-ի սկզբի դրությամբ Արևելյան Ղաթախտանի մի մասը կազմող Ղաթախտան մարզի տարածքում հաշվում է քյուլանի ցեղի 389 ներկայացուցիչներ, որոնք շիա դավանանքին էին պատկանում, դեռևս քոչվորակենցաղ էին և ձմեռում էին Սևանա լճից հարավ-արևելք ընկած շրջաններում (Шопен, 528):

Արցախի և Սյունիքի սահմանակցման գոտում հայ բնակչությունն ունենալու մասին կարևոր տեղեկություն ենք ստանում Սիմեոն Ա Երևանցի Կաթողիկոսի (1763-1780) հաղորդած հարկացուցակներից: Հատկանշական է, որ հարկատու կարող էր լինել միայն հայ բնակչությունն ունեցող բնակավայրը: Սիմեոն Ա-ի ատենադպիր Երեմիա Օշականցու երկը, որը, ինչպես և «Զամբռ»-ը, գրվել է 1765 թ.-ին, տալիս է հայաբնակ բնակավայրերի առավել ամբողջական պատկերը, ըստ այդմ՝ Քաշաթաղ-Քարվաճառ գոտու բնակավայրերը հիշատակված են որպես Մայր Աթոռին հարկատու, ինչը նշանակում է, որ նրանց բնակչությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդ էր, այսինքն՝ հայ էր, այլապես չէր կարող հարկատու լինել Հայոց Եկեղեցուն: Սիմեոն Երևանցու աշխատության Իժ գլխում, որ վերնագրված է «Որում ցույց են տրվում Երևանի նահանգում գտնվող վանքերի ինչպիսին լինելը, այլև նրանց թեմերն ու վիճակները, մուլքերը և մյուս ձեռք բերված ունեցվածքները՝ առանձին-առանձին» (Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, 379), ներկայացված է Դադիվանքի («Զամբռ»-ում՝ Խութավանք) որպիսությունը: Այստեղ թվարկված են հարկատու գյուղերը, և մատնանշված է վարչական կացությունը. «Ունի վիճակներ՝ Զյուլանի ողջ երկիրը, որի հայերեն անունն է Ծարի երկիր, որը սահմանակից է Խամսային (իմա՝ Արցախի հայկական մեյլիքություններին – Մ.Ս.), սակայն Էջմիածնի վիճակ է և այժմ Երևանի իշխողի ձեռքի տակ է: Սրա գյուղերն են՝ Էրք, Ճիլանց, Կարմիրշեն, Սալամալիք, Քավթառանց, Ուռուցիոր, Ատարենիս, Ծուղորուղաշեն, Հոսաբակ, Կյավալու. Սրանք լեռան այս կողմում են, կից Գեղամա Արեգունում: Իսկ լեռան (իմա՝ Սոթքի (Արևելյան Սևանի) լեռների – Մ.Ս.) մյուս կողմում Մեծ Ծար, Կաթ, Անուխս, Խոլոզանց, Դաշտակ, Հաճար (Հաճավ – Մ.Ս.), Ապահեն, Ճումեն, Քարատակ, Չվար, Մոս, Սևաջուր, Ծովատեղ, Խրանց, Հալուճ, Մոթանց, երկու Դավաչխուր՝ մեծ եւ փոքր, Լեւ, Յանշաղ, Բարսեղիշեն, Մեյրան, Երիցիշեն, Խութավանք, Չափար, Կյարաք, Նորշեն, Խնդթրավանք (Խնթրավանք – Մ.Ս.): Ունի նաեւ մենաստաններ՝ իր ձեռքի տակ, Խնդրավանքի մենաստանը եւ Ծարի մենաստանը» (Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, 396; քարտեզագրումը առդիրում՝ Բաղայան, Սևանա, Շղվազա, Մաքենյաց և Հութա վանքերի թեմերը): Մեջբերված հատվածից պարզ է դառնում, որ Ծարի գավառն այդ ժամանակաշրջանում գտնվում էր Երևանի խանության կազմում և ենթարկվում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ծարից արևելք և հարավ-արևելք բնակավայրերի մասին հիշատակության բացակայությունը պայմանավորված է այն գործոնով, որ դրանք գտնվում էին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գանձասարի կաթողիկոսի իրավասության ներքո: «Զամբռ»-ի տեղեկությունները հավաստում են, որ անգամ 1760-ական թթ.-ի կեսերին Վերին Խաչենում (Ծար-Քարվաճառում)՝ մինչև Քաշաթաղ, գործ ունենք հայաբնակ գյուղերի ցանցի հետ:

Եզրակացություն

Ի մի բերելով մեր հետազոտության ընթացքում քննարկված հիշատակություններն ու տվյալները՝ պետք է փաստենք, որ հավաքված տեղեկությունները խմբավորել ենք չորս ուղղություններով՝ բռնագաղթերին ու զանգվածային գերեվարումներին առնչվող հիշատակություններ, Հայաստանում փաստացի բնակվող հայ բնակչության թվաքանակին և ընտանիքի անդամների թվին վերաբերող տվյալներ, օտար (մասնավորապես՝ քրդական) ցեղերի միգրացիայի մասին տեղեկություններ և հայկական բնակավայրերի ցանցը ներկայացնող ցուցակներ: Այսպիսով՝ կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բնակչության բռնագաղթի ու զանգվածային գերեվարումների դեպքերը, ի տարբերություն Հայաստանի մեծագույն մասի, Արցախում համեմատաբար քիչ են եղել, ինչը պայմանավորված է հայ մեյլիքական ինստիտուտի պահպանման գործոնով: Նաև պարզվել է, որ Ս. Էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսությունների նվիրապետության ներքո գտնվող բնակչության ընդհանուր թիվը կարող էր, որոշ վերապահումներով, շուրջ 3.5

մլն ինել, ինչը չափազանց մեծ ցուցանիշ էր քննարկվող ժամանակաշրջանի համար: Պարզվել է նաև, որ Արցախում հայկական ընտանիքի անդամների միջին թիվը գերազանցել է Հայաստանի ընդհանուր ցուցանիշին: Հետազոտության կարևոր եզրահանգումներից մեկն էլ այն է, որ պատմական Ծար գավառում Քարվաճառում և Քաշաթաղի հյուսիսային մասում, հայ բնակչությունը գերակշռող էր XVI-XVII դարերում, ինչը փաստվում է XVII-XVIII դարերով թվագրվող հայկական գյուղացանկերի առկայությամբ և միայն XVII դարի երկրորդ կեսից սկսած քրդական վրանաբնակ ցեղերի միգրացիոն գործընթացների մեկնարկի հիշատակությամբ:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամ Կրետացի, Պատմություն, աշխատասիրությամբ՝ Ն. Ղորղանյանի, Երևան, 1973:
2. Չաքարիա Զևաքեռցի, Պատմութիւն, աշխատասիրությամբ՝ Ա. Վիրաբյանի, Երևան, 2015:
3. «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, հատոր Ա, Երևան, 1961:
4. «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)», հատոր 2, կազմեց՝ Վ. Հակոբյանը, Երևան, 1956:
5. «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հատոր I, հրովարտակներ, արակ II (1601-1650 թթ.), կազմեց՝ Զ. Փափազյանը, Երևան, 1959:
6. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 4173:
7. Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, աշխատասիրությամբ՝ Վ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական ծանոթագրությունները՝ Գ. Բաղայանի, Երևան, 2003:
8. «Հայոց պատմություն», հատոր III, գիրք I, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010:
9. Անասյան Հակոբ, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:
10. Բաղայան Գեղամ, Հայաստանը XVII դ. առաջին կեսին (քարտեզ), մասշտաբ՝ 1:3 600 000, «Հայաստանի ազգային ատլաս», հատոր Բ, Երևան, 2008, էջ 50:
11. Բաղայան Գեղամ, Հայերի բռնագաղթը Շահ-Աբաս 1-ինի կողմից Պարսկաստան XVII դ. սկզբին (քարտեզ), մասշտաբ՝ 1:4 000 000, «Հայաստանի ազգային ատլաս», հատոր Բ, Երևան, 2008, էջ 51:
12. Բաղայան Գեղամ, Սևանա, Շղվազա, Մաքեյայց և Հուլթա վանքերի թեմերը (քարտեզ), մասշտաբ՝ 1:400 000, Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, Երևան, 2003, առջի 1:
13. Չուլայան Մանվել, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980:
14. Չուլայան Մանվել, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1555-1595 թթ.), «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1961, թիվ 3, էջ 43-54:
15. Կարապետյան Մերուժան, Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ., «Պատմաբանասիրական հանդես», 1986, թիվ 2, էջ 59-109:
16. Կոստիկյան Զրիստինե, Քաշաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատոր 20, Երևան, 2001, էջ 168-175:
17. Հախվերդյան Սերգեյ, Ուրվագծեր Սյունիքի Քաշաթաղի մելիքության պատմությունից, «Հայոց պատմության հարցեր», հատոր 9, Երևան, 2008, էջ 88-107:
18. Մալխասյան Միքայել, 16-րդ դարում բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը Հայաստանում՝ առանձին վարչամիավորների օրինակով, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2021, թիվ 1, էջ 30-38:

19. Մալխասյան Միքայել, Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում – 17-րդ դարի առաջին կեսին, Երևան, 2020:

20. Մալխասյան Միքայել, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում Ժ2 դարում, «Էջմիածին», 2016, թիվ 7, էջ 52-72:

21. Մալխասյան Միքայել, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դարի առաջին կեսին, «Հայագիտության հարցեր», 2016, թիվ 1, էջ 94-104:

22. Մալխասյան Միքայել, Շահ Աբաս Ա-ի կազմակերպած հայ բնակչության բռնագաղթի տարածքային ընդգրկման խնդիրը, «Հայագիտության հարցեր», 2019, թիվ 3, էջ 49-65:

23. Մելքոնյան Աշոտ, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին եռեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994:

24. Յակոբեան Ալեքսան, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը. Բ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատոր 27, Երևան, 2009, էջ 224-253:

25. Չոբանյան Պավել, Զարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատոր 20, Երևան, 2001, էջ 204-232:

26. Սահակյան Լուսինե, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007:

27. Սաֆրասոյան Արամ, Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դարում (պատմական ակնարկ), «Արևելագիտական ժողովածու», հատոր 1, Երևան, 1960, էջ 285-302:

28. Փափազյան Ավետիս, Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (XVI-XVIII դդ.), «Պատմաբանասիրական հանդես», 1992, թիվ 1, էջ 101-115:

29. Саркисян Ерванд, Административная и демографическая политика османского правительства в Западной Армении, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատոր 5, Երևան, 1970, էջ 357-380:

30. Шопен Иван, Исторический памятник состоянія Армянской области въ эпоху ея присоединенія к Россійской имперіи, СПб., 1852.

Works Cited

1. Abraham Kretaci, Patmut'yun, ashxatasirut'yamb N. Ghorghanyani, Erevan, [History, edited by N. Ghorghanyan, Yerevan,] 1973.

2. Zaqaria Qanaqer'ci, Patmut'iwn, ashxatasirut'yamb A. Virabyani, Erevan, [History, edited by A. Virabyan, Yerevan,] 2015.

3. «T'urqakan aghbyurnery' Hayastani, hayeri ev Andrkovkasi myus jhoghovurdneri masin», kazmec` A. Safrastyany', hator A, Erevan, [Turkish Sources on Armenia, Armenians and Other Transcaucasian Ethnicities, Yerevan,] 1961.

4. «Manr jhamanakagrut'yunner (XIII-XVIII dd.)», hator 2, kazmec V. Hakobyany', Erevan, [Small Chronicles (XIII-XVIII Centuries), Volume 2, edited by V. Hakobyan, Yerevan] 1956.

5. «Matenadarani parskeren vaveragrery'», hator I, hrovartakner, prak II (1601-1650 t't'), kazmec H. P'ap'azyany', Erevan, [Persian Documents of Matenadaran, Volume 1, Edicts, edited by H. Papazyan, Yerevan] 1959.

6. Mesrop Mashtoci anvan Matenadaran, d'er'agir [Matenadaran after Mesrop Mashtots, Manuscript] № 4173.

7. Simeon Kat'oghikos Yerevanci, Jambri', ashxatasirut'yamb V. Hambard'umyani, patmaashxarhagrakan c'anot'agrut'yunnery G. Badalyani, Erevan, [Jambri', Edited by V. Hambardzumyan, Historical-Geographical Notes by G. Badalyan, Yerevan,] 2003.
8. «Hayoc patmut'yun», hator III, girq I, Erevan, HH GAA patmut'yan institut, [History of Armenia, Volume III, Book I, Yerevan, NAS Institute of History,] 2010.
9. Anasyan Hakob, XVII dari azatagrakan sharjhumnern Arevmtyan Hayastanum, Erevan, [XVII Liberation Movements in Western Armenia, Yerevan,] 1961.
10. Badalyan Gegham, Hayastany' XVII d. ar'ajin kesin (qartez), masshtab 1:3 600 000, «Hayastani azgayin atlas», hator B, Erevan, 2008, e'j 50 [Armenia in the First Half of the XVII Century (Map), Scale: 1:3 600 000, "National Atlas of Armenia", Volume II, Yerevan, 2008, p. 50].
11. Badalyan Gegham, Hayeri br'nagaght'y' Shah-Abas 1-ini koghmic Parskastan XVII d. skzbin (qartez), masshtab 1:4 000 000, «Hayastani azgayin atlas», hator B, Erevan, 2008, e'j 51 [The Deportation of Armenians by Shah-Abbas I at the beginning of the XVII Century (Map), Scale: 1:4 000 000, "National Atlas of Armenia", Volume II, Yerevan, 2008, p. 51].
12. Badalyan Gegham, Sevana, Shghvaga, Maqenyac ev Hut'a vanqeri t'emery' (qartez), masshtab 1:400 000, Simeon Kat'oghikos Yerevanci, Jambri', Erevan, 2003, ar'dir 1 [The Dioceses of the Sevan, Shghvag, Makenis and Hout Monasteries (Map), Scale: 1:400 000, Simeon Kat'oghikos Yerevanci, Jambri', Yerevan, 2003, Attachment 1].
13. Zulalyan Manvel, Arevmtyan Hayastany' XVI-XVIII dd., Erevan, [Western Armenia in the XVI-XVIII Centuries, Yerevan] 1980.
14. Zulalyan Manvel, T'urq-parskakan paterazmnery' Hayastani teritoriayi vra ev nranc hetevanqneri' (1555-1595 tt'), «HSSR' GA Teghekagir hasarakakan gitut'yunneri», 1961, t'iv 3, e'j 43-54 [The Turkish-Persian Wars on the Territory of Armenia and Their Aftermath (1555-1595), Bulletin of the Academy of Sciences of the USSR, 1961, No. 3, pp. 43-54].
15. Karapetyan Merujhan, Yerevani bnakchut'yan e'tnikakan kazmi ev t'vaqanaki p'op'oxut'yunnery' 1600-1724 tt', «Patmabanasirakan handes», 1986, t'iv 2, e'j 59-109 [Changes in the Ethnic Composition of the Population of Yerevan in 1600-1724, "Historical-Philological Journal", 1986, No. 2, pp. 59-109].
16. Kostikyan Kristine, Qashat'aghi 17-rd dari patmut'yany' veraberogh mi p'astat'ught', «Merd'avor ev Mijin Arelvqi erkrner ev jhoghovurdner», hator 20, Erevan, 2001, e'j 168-175 [A Document on the 17th Century History of Kashatagh, "Near and Middle Eastern Countries and Peoples", Volume 20, Yerevan, 2001, pp. 168-175].
17. Hakhverdyan Sergey, Urvag'er Syuniqi Qashat'aghi meliqut'yan patmut'yunic, «Hayoc patmut'yan harcer», hator 9, Erevan, 2008, e'j 88-107 [Outlines from the History of Kashatagh Melikutyun in Syunik, "Issues of Armenian History", Volume 9, Yerevan, 2008, pp. 88-107].
18. Malkhasyan Mikayel, 16-rd darum bnakchut'yan teghabashxman y'ndhanur pathkery' Hayastanum` ar'and'in varchamiavorneri o'rinakov, «Patmut'yun ev mshakuyt'» hayagitakan handes, 2021, t'iv 1, e'j 30-38 [The General Picture of the Population Distribution in Armenia in the 16th century on the Example of Several Administrative Units, "History and Culture" Armenological Journal, 2021, No. 1, pp. 30-38].
19. Malkhasyan Mikayel, Jhoghovrdagrakan gorc'y'nt'acnery' Hayastanum 16-rd darum – 17-rd dari ar'ajin kesin, Erevan [Demographic Processes in Armenia in the 16th Century – in the First Half of the 17th Century, Yerevan], 2020.
20. Malkhasyan Mikayel, Jhoghovrdagrakan gorc'y'nt'acneri mitumneri' ev ar'and'nahatkut'yunnery' Hayastanum JhZ darum, «E'jmiac'in», 2016, t'iv D, e'j 52-72 [Trends and Peculiarities of Demographic Processes in Armenia in the 16th Century, "Echmiadzin", 2016, No. 4, pp. 52-72].

21. Malkhasyan Mikayel, Jhoghovrdagrakan gorc'y'nt'acneri mitumneri' ev ar'and'nahatkut'yunnery' Hayastanum XVII dari ar'ajin kesin, «Hayagitut'yan harcer», 2016, t'iv 1, e'j 94-104 [Trends and Peculiarities of Demographic Processes in Armenia in the First Half of the 17th Century, "Armenological Issues", 2016, No. 1, pp. 94-104].

22. Malkhasyan Mikayel, Shah Abas A-i kazmakerpac' hay bnakchut'yan br'nagaght'i tarac'gayin y'ndgrkman xndiry', «Hayagitut'yan harcer», 2019, t'iv 3, e'j 49-65 [The Problem of Territorial Coverage of the Massive Deportation of the Armenian Population Organized by Shah Abbas I, "Armenological Issues", 2019, No. 3, pp. 49-65].

23. Melkonyan Ashot, E'rzrumi nahangi hay azgabnakchut'yuny' XIX dari ar'ajin er'esnamyakin (patmajhoghovrdagrakan usumnasirut'yun), Erevan, [The Armenian Population of Erzurum province in the First Thirty Years of the XIX century (historical-ethnographic study), Yerevan,] 1994.

24. Yakobean Aleksan, Hakarii vernahovti norayayt vimagrery'. B, «Merd'avor ev Mijin Arevelqi erkrner ev jhoghovurdner», hator 27, Erevan, 2009, e'j 224-253 [The Newly Discovered Inscriptions of the Hakari Valley: B, "Near and Middle Eastern Countries and Peoples", Volume 27, Yerevan, 2009, pp. 224-253].

25. Chobanyan Pavel, Qarvatwar'i e't'nik dimagc'i harci shurj, «Merd'avor ev Mijin Arevelqi erkrner ev jhoghovurdner», hator 20, Erevan, 2001, e'j 204-232 [On the Question of the Ethnic Feature of Karvachar, "Near-Middle Eastern Countries-Peoples", Volume 20, Yerevan, 2001, pp. 204-232].

26. Sahakyan Lusine, Bard'r Hayqi Baberd, Sper, Derjan gavar'neri teghanunnern u jhoghovrdagrut'yuny' XVI dari o'smanyany ashxarhagir matyannerum, Erevan, [Toponyms and Demographics of Baberd, Sper, Derjan Provinces of Bardzr Hayk in the Ottoman Geographical Records of the 16th Century, Yerevan,] 2007.

27. Safrastyan Aram, O'smanyany kaysrut'yan varchakan bajhanumy' XVII darum (patmakan aknark), «Arevelagitakan jhoghovac'u», hator 1, Erevan, 1960, e'j 285-302 [The Administrative Division of the Ottoman Empire in the 17th Century (Historical Review), "Orientological Collection", Volume 1, Yerevan, 1960, pp. 285-302].

28. P'ap'azyany Avetis, T'urqakan aghbyurnery' Hayastani ev hayeri masin (XVI-XVIII dd.), «Patmabanasirakan handes», 1992, t'iv 1, e'j 101-115 [Turkish Sources on the Armenians of Armenia (XVI-XVIII Centuries), "Historical-Philological Journal", 1992, No. 1, pp. 101-115].

29. Sarkisjan Ervand, Administrativnaja i demograficheskaja politika osmanskogo pravitel'stva v Zapadnoj Armenii, «Merd'avor ev Mijin Arevelqi erkrner ev jhoghovurdner», hator 5, Erevan, 1970, e'j 357-380 [Administrative and Demographic Policy of the Ottoman Government in Western Armenia, "Near and Middle Eastern Countries and Peoples", Volume 5, Yerevan, 1970, pp. 357-380].

30. Shopen Ivan, Istoricheskij pamjatnik sostojanija Armjanskoj oblasti v jepohu eja prisoedinenija k Rossijskoj imperii, SPb., [Historical Monument of the State of the Armenian Oblast (Region) in the Era of its Accession to the Russian Empire, St. Petersburg,] 1852.

SOME QUESTIONS ON THE HISTORICAL DEMOGRAPHY OF ARTSAKH (XVI-XVII CENTURIES)

MIKAYEL MALKHASYAN

*Yerevan State University, Chair of History of Armenia,
Ph.D. in History, Associate Professor
Yerevan, Republic of Armenia*

This article covers several issues related to the historical demography of Artsakh in the XVI-XVII centuries, based on the information from the primary sources. To this end, we have the tasks of classifying the historical-demographic information in the primary sources, analyzing their significance in the context of general demographic processes in Armenia, showing that in the XVI-XVII centuries, despite the unfavorable regional situation, migration activities of nomadic tribes were not significant within the territory of Artsakh, and the Armenian population maintained an absolute majority. Thus, the aim of the study is to cover some issues of the historical demography of Artsakh in the above-mentioned period, in the XVI-XVII centuries, which was done by means of combination of historical and historical-comparative methods.

The information collected during the research was grouped into four types: references related to deportations and mass captives, data on the number of Armenians actually living in Armenia and number of family members, information on migration of foreign (particularly Kurdish) tribes, and lists of Armenian settlements. Finally, as a result of the study, it turned out that the cases of deportation and mass captivity of the population, in contrast to most of Armenia, were relatively few in Artsakh, which is due to the preservation of the Armenian royal institution of melikdoms. In addition, it turned out that the total population of the dioceses subject to the Catholicos of St. Etchmiadzin and Gandzasar may, with some reservations, be around 3.5 million people, which was too high a figure for the period under discussion. It turned out that the average number of Armenian family members in Artsakh exceeded the general index of Armenia. One of the possible conclusions of the research was that in the historical Tsar province (in Karvachar and in the northern part of Kashatagh), the Armenian population was predominant in the XVI-XVII centuries, which is evidenced by the existence of Armenian village lists dating back to the XVII-XVIII centuries.

Keywords: *Artsakh, historical demography, Armenian population, XVI-XVII centuries, Ottoman Empire, Safavid Persia, deportation, Kashatagh, Karvachar.*

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСТОРИЧЕСКОЙ ДЕМОГРАФИИ АРЦАХА (XVI-XVII ВЕКА)

МИКАЭЛ МАЛХАСЯН

*доцент кафедры истории Армении
Ереванского государственного университета,
кандидат исторических наук,
г. Ереван, Республика Армения*

В данной статье освещается ряд вопросов, связанных с исторической демографией Арцаха в XVI-XVII вв., основанные на информации из

первоисточников. Для достижения этой цели мы поставили задачу классифицировать историко-демографическую информацию в первоисточниках, проанализировать их значение в контексте общих демографических процессов, происходящих в Армении и показать что, несмотря на неблагоприятную региональную ситуацию и миграционную активность кочевых племен, в XVI-XVII вв., их присутствие на территории Арцаха было еще незначительно, и армянское население составляло абсолютное большинство. Таким образом, цель исследования – охватить некоторые проблемы исторической демографии Арцаха в указанный период – в XVI-XVII веках, что было выполнено с применением исторического и историко-сравнительного методов.

Информация, собранная в ходе исследования, была классифицирована по четырем типам: ссылки, связанные с депортациями и массовыми пленениями, данные о количестве армян, фактически проживающих в Армении, и о количестве членов их семей, информация о миграции чуждых (преимущественно курдских) племен и списки армянских поселений. В результате исследования мы пришли к выводу о том, выяснилось, что случаев депортации и массового пленения населения, в отличие от большей части Армении, в Арцахе было относительно немного, что связано с сохранением армянского княжеского (меликского) института. Выяснилось, что общая численность населения епархий, подвластных католикосам Св. Эчмиадзина и Гандзасара, может, с некоторыми оговорками, составлять около 3,5 миллионов человек, что является слишком высокой цифрой для рассматриваемого периода. Выяснилось также, что среднее количество членов армянских семей в Арцахе превышало общий показатель по Армении. Одним из важных выводов исследования было вывод о том, что в исторической провинции Цар (в Карвачаре и в северной части Кашатага) в XVI-XVII веках преобладало армянское население, о чем свидетельствует наличие списков армянских деревень, датированных XVII-XVIII веками.

Ключевые слова: *Арцах, историческая демография, армянское население, XVI-XVII вв., Османская империя, Сефевидская Персия, депортация, Кашатаг, Карвачар.*

**ՄԻ ԶԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ ՀԵՏԽՈՐԻՐՂԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՉԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ.
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ***

ՀՏԴ 9(55)+9(47.925)

DOI: 10.52063/25792652-2021.3-59

ԱՐՏՅՈՄ ՏՈՆՈՅԱՆ

ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
artyom.tonoyan@ysu.am

Հոդվածի նպատակն է քննել հետխորհրդային Ադրբեջանում պատմական զեղծարարությունների հիմնական ուղղությունները, ինչպես նաև պատմական կեղծիքների տարածման նպատակները:

Հիմնական խնդիրն է նկարագրել և բացատրել պետության ներգրավվածությունը նշված զեղծարարությունների տարբեր ասպեկտներում:

Հոդվածում նկարագրական-վերլուծական մեթոդի հիման վրա քննության են առնվել Ադրբեջանում իրականացվող պատմագիտական զեղծարարություններում նկատվող նոր միտումները, ցույց են տրվել դրանց գլխավոր թիրախները, ինչպես նաև կեղծ պատմագիտական հետազոտությունների օգտագործումը այդ պետության հակահայկական քաղաքականության մեջ:

Թեև Ադրբեջանում արվող պատմական զեղծարարությունների թիրախում են այդ երկրի բոլոր հարևանները, ներառյալ նաև Վրաստանն ու Ռուսաստանի Դաշնությունը, սակայն հոդվածում շեշտը դրվել է այն զեղծարարությունների ներկայացման ու մասնակի քննության վրա, որոնք վերաբերում են Հայաստանին ու Իրանին:

Ներկայացվել են նաև Ադրբեջանում գործող այսպես կոչված գիտական կենտրոնները, քննվել դրանց կողմից հրատարակված «պատմագիտական» ուսումնասիրությունները, ինչպես նաև դրանցում պատմական փաստերի կեղծամբ հայ ժողովրդին հասցեագրվող այն կեղծիքները, որոնց նպատակը միայն սեփական հանրության շրջանում հայատյացության քարոզի խորացումն է և հայերի դիվականացումը:

Հոդվածի հիմնական եզրակացությունն այն է, որ հետխորհրդային Ադրբեջանում պատմագիտական հետազոտություններում տեղ գտնող զեղծարարությունները հետևանք են պետական պատվերների և առանձնակի լայն թափ են հավաքել Իլիամ Ալիևի կառավարման երկրորդ շրջանից սկսած:

Հիմնաբառեր` հետխորհրդային Ադրբեջան, կեղծ պատմագիտական ուսումնասիրություններ, զեղծարարություն, հայերի դիվականացում, հակահայկական քարոզչություն, հայատյացություն, հակագիտական մոտեցումներ:

* Հոդվածը ներկայացվել է 26.10.2021թ., գրախոսվել՝ 25.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Ներածություն

Ադրբեջանում պատմագիտության ոլորտում իրականացվող գեղծարարությունները և ի մասնավորի դրանց ուղիղ առնչությունը հայոց պատմության տարբեր դրվագների ու իրողությունների միտումնավոր նենգափոխման հետ, նորություն չեն ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան մասնագետների համար (տե՛ս, օրինակ, Шниерельман 2003) :

Ադրբեջանի պատմաբանների կողմից պատմության նենգափոխումը և գեղծարարությունները, որոնք դեռևս խորհրդային տարիներից խրախուսվել են Ադրբեջանի նախկին նախագահ Յեյդար Ալիևի կողմից (Шниерельман 2003: 160), հետխորհրդային շրջանում և հատկապես Իլհամ Ալիևի նախագահության երկրորդ շրջանից մտել են բոլորովին նոր հուն, ուստի որոշ իրողությունների, տեղի ունեցող փոփոխությունների և տպագրվող նոր աշխատանքների ներկայացումը կարևոր է:

Յետխորհրդային Ադրբեջանում պատմագիտական գեղծարարությունների քաղաքականությունը, որն ունի մի քանի հիմնական ուղղություն և ծառայում է բացառապես քարոզչական ու գաղափարախոսական նպատակների, իրականացվում է պետական ծրագրավորմամբ, բարձր ֆինանսավորմամբ և վերևից իջեցվող հստակ պատվերներով:

Ադրբեջանում հետխորհրդային շրջանում պատմագիտական գեղծարարությունների հարցում պետության ներգրավման և պետական մակարդակով դրանց խրախուսման, պատվերների իջեցման առաջամարտիկներից մեկը հենց Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցության և 1992-1993թթ.-ին Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էյչիբեյև Էր, սակայն մոտեցումների, ընտրված թիրախների ու ծավալների առումով վերջինս Էապես զիջելու Էր հենց իրեն հաջորդած Յեյդար Ալիևին և նրա որդուն՝ Իլհամ Ալիևին:

Թիրախային հիմնական ուղղությունները, նպատակներն ու գործիքները

Ադրբեջանում պետական մակարդակով խրախուսվող և իրականացվող կեղծ պատմագիտական հետազոտություններում առաջնահերթությունը տրվում է հետևյալ 2 գերակա և թիրախային ուղղություններին՝

- Իրանական ուղղություն,
- Հայկական ուղղություն:

Հիմնական նպատակները, որոնց կյանքի կոչման և գաղափարախոսական հենքի ապահովման համար ստեղծվում են կեղծ պատմագիտական աշխատանքներ, արվում գեղծարարություններ, հետևյալներն են՝

- «Մեծ Ադրբեջանի» և «ազգայնական» գաղափարախոսության տարածում:
- Ադրբեջանականության գաղափարախոսության պատմագիտական հիմքերի փնտրտուք:

• Ազգակերտման գործընթացի արագացում և այսպես կոչված «ադրբեջանցի» Էթնոսի վերջնական ձևավորում, ինչպես նաև ադրբեջանական ինքնության արհեստական բյուրեղացում:

• Ադրբեջանական հասարակության մեջ լայն համախմբում ապահովող «թշնամիների» (հայեր, իրանցիներ, ռուսներ) կերպարի ձևավորում և դրա վրա ադրբեջանական՝ արդեն բյուրեղացող ինքնության խարսխում:

Հիմնական գործիքներն ու մեթոդները, որոնք օգտագործվում են պատմական ճշմարտությունների ու փաստերի նենգափոխման գործում և դառնում հենման կետ ազգակերտման և ինքնության բյուրեղացման տևական գործընթացի համար, հետևյալներն են՝

• Հարևան ժողովուրդների պատմության և մշակութային ժառանգության յուրացում:

- Աղրբեջանի տեղաբնիկ ժողովուրդների պատմության և մշակութային ժառանգության յուրացում:
- Պատմական հանրահայտ փաստերի կեղծում, միֆերի ստեղծում և կեղծ պատմագիտական «հետազոտություններով» դրանց նյութականացում, իրենց իսկ ստեղծած միֆերին «պատմական իսկության» արժեքի հաղորդում:

Իրանական ուղղություն

Իրանական ուղղությամբ Աղրբեջանի կողմից իրականացվող պատմագիտական գեղծարարություններն ունեն ավելի խորը արմատներ և ժամանակային առումով ներառում են Խորհրդային Միության գոյության և հետխորհրդային ողջ ժամանակաշրջանը:

Հիմնական թեզերը, որոնք գեներացրել է Աղրբեջանի՝ այսպես կոչված «ազգային պատմագիտությունը» խորհրդային ու հետխորհրդային շրջաններում Իրանի ուղղությամբ, հետևյալներն են՝

1. Պատմական Ատրպատականը, որը աղրբեջանցի պատմաբաններն անվանում են «Հարավային Աղրբեջան» (աղրբ. Cənubi Azərbaycan, Güney Azərbaycan)¹ այսպես կոչված «Միացյալ» կամ «Մեծ Աղրբեջանի» մի մասն է, հարավային մասը, որը հյուսիսայինից, այսինքն՝ ժամանակակից Աղրբեջանի Հանրապետության տարածքից իբր անջատվել է 19-րդ առաջին երեք տասնամյակների ընթացքում:
2. «Մեծ Աղրբեջանի» մաս են կազմել նաև ժամանակակից ԻԻՀ Ղազվին, Համադան, Չանջան, Գիլան, Զրդստան Նահանգները և Թեհրանը:
3. Սեֆյան և Ղաջարական դինաստիաները աղրբեջանական են:

Իրանական ուղղությամբ արվող գեղծարարությունների հիմնական նպատակը իրանական պատմական ու մշակութային ժառանգության յուրացումն է (Ասատրյան, Գևորգյան 1990), տարածքային հավակնությունների համար «պատմագիտական հիմքերի ստեղծումը», ինչպես նաև համապատասխան գրականության ապահովումը պանթյուրքական շրջանակների հետ տարվող գաղափարախոսական աշխատանքների, Իրանում պանթյուրքականության տարածման և տեղի թյուրքախոս բնակիչների ինքնության խեղման համար:

Հայկական ուղղություն

Դեռևս 2005թ.-ին Հ. Դեմոյանը կշել է 11 հիմնական քարոզչական թեզ (Դեմոյան 2005: 58-29), որոնք գեներացրել է Աղրբեջանի՝ այսպես կոչված «ազգային պատմագիտությունը» մասամբ խորհրդային ու հետխորհրդային շրջաններում: Դրանք են՝

1. Հայերի՝ եկվոր և աղրբեջանցիների՝ բնիկ լինելու տեսակետի ամրագրում:
2. Հին ժամանակներից սկսած՝ հայ էթնոսի զավթողական հակումների դրսևորում:
3. Հայկական անկախ պետականության բացակայության տեսակետի ամրագրում:
4. Հին և ժամանակակից հայերի անհամապատասխանելիության տեսակետի զարգացում:
5. Հայոց թագավորների օտարազգի ծագման տեսակետի տարածում,
6. Միջնադարյան հայ հեղինակների «աղվանացում»:
7. Արևելյան Հայաստանի, մասնավորապես՝ Արցախի տարածքում հայկական տարրի բնակեցման ժամանակաշրջանի նեղացում:

¹ Եզրը լայն կիրառություն է ունեցել նաև Խորհրդային Միության գոյության ողջ ընթացքում և «Իրանական Աղրբեջան» տարբերակի հետ միասին օգտագործվել ոչ միայն աղրբեջանցի պատմաբանների կողմից:

8. Հայոց ցեղասպանության պատմական իրողության հերքում:

9. Վերջին 200 տարիների ընթացքում հայերի կողմից աղբբեջանցիների ցեղասպանության իրականացման մտացածին տեսակետի ամրագրում:

10. Երևանի Նահանգի աղբբեջանական ծագումը և Առաջին հայկական պետականությունը աղբբեջանական իշխանությունների թուլյութվությամբ այստեղ կազմակերպելու մասին տեսակետ:

11. Հայկական պատմական տեղանունների թրքացում կամ դրանց աղբբեջանական անվանումների հիմնավորման փորձեր (Դեմոյան 2005: 58-29) :

Անցած 16 տարիների ընթացքում Հ. Դեմոյանի բերած 11 կետերին ավելացել են Նաև Նորերը, որոնց մի մասը թեև առաջ է քաշված եղել Նաև Նախկինում, սակայն լայն շրջանառություն է ստացել միայն վերջին տարիներին, իսկ 2020թ.-ի 44-օրյա պատերազմից հետո դարձել են Աղբբեջանում ամենաբարձր պետական մակարդակով տարվող հակահայկական քարոզչության, ՀՀ տարածքային ամբողջականության հանդեպ դրսևորվող Նկրտումների հիմնական առանցք: Դրանք են՝

- Չանգեզուրի՝ իբր պատմական աղբբեջանական տարածք լինելը և այստեղ 1917-1920թթ.-ին դաշնակցականների կողմից «աղբբեջանցիների ցեղասպանության» իրականացումը (տե՛ս, օրինակ, Նօրիմանօղլու 2018) :

- ՀՀ Գեղարքունիքի ու Շիրակի մարզերի՝ իբր պատմական աղբբեջանական տարածքներ լինելը՝ տեղանվանական կեղծիքների զուգորդմամբ և Նշված մարզերը համապատասխանաբար Գյոյջա (Göyçə) և Շորագյալ (Şorəgəl) անվանելով:

- Ընդհանրապես ՀՀ տարածքը «Արևմտյան Աղբբեջան» (Qərbi Azərbaycan) և ողջ ՀՀ տարածքը «պատմական աղբբեջանական հողեր» անվանելու միտման խորացում և պատմագիտական գեղծարարություններով լի աշխատանքներում Նշված տերմինի լայն շրջանառում:

- Իբր հայերի կողմից իրականացված «թյուրք-մուսուլմանների ցեղասպանությունների» ժամանակի ու աշխարհագրության ընդլայնում:

Առանձնակի թափ են հավաքել պատմագիտական գեղծարարությունները՝ կապված իբր հայերի կողմից աղբբեջանցիների «կոտորածների և ցեղասպանության» հետ: Առանձնացնում են դրանց երեք շրջան՝ առաջինը անվանելով «1905-1906թթ. զանգվածային կոտորածներ», «զանգվածային ջարդեր» (աղբբ.՝ 1905-1906-ci illər kütləvi qırğınları), երկրորդ շրջանը՝ «1918-1920թթ. ցեղասպանություններ» (աղբբ.՝ 1918-1920-ci illər soyqırımaları), և վերջինը՝ երրորդը՝ «խոջալուի ցեղասպանություն» (աղբբ.՝ Xocalı soyqırımı) եզրերով:

Աղբբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայքում Ներկայացված են 1905-1906թթ.-ը իբր հայերի կողմից աղբբեջանցիների «ջարդերի» ժամանակագրություն և աշխարհագրություն, որը Ներառում է 15 վայր՝ Բաքու, Երևան քաղաք, Նախիջևան, «Շարուր-Դարալագյազ», Երևանի Նահանգ, Էջմիածին, Սուրմալու, Գանձակ, «Արաշ», Շուշի, Խոջալու, «Ջավանշիր», «Չանգեզուր», Ղազախ, Թիֆլիս (AMEA Tarix institutu 2017a) :

Նույն ինստիտուտի կայքում «1918-1920թթ. ցեղասպանություններ» բաժնում առանձնացված է 9 ենթաբաժին՝ հետևյալ անվանումներով՝

- Մարտի 31-ի ցեղասպանություն (AMEA Tarix institutu 2017b),
- Բաքվի գավառի թյուրք-մուսուլմանական ցեղասպանություն (AMEA Tarix institutu 2017c),
- Շամախի գավառի թյուրք-մուսուլմանական ցեղասպանություն (AMEA Tarix institutu 2017d),
- Ղուբայի գավառի թյուրք-մուսուլմանական ցեղասպանություն (AMEA Tarix institutu 2017e),

- Լենցորանի գավառի թյուրք-մուսուլմանական ցեղասպանություն (AMEA Tarix institutu 2017f),
- Ղարաբաղի շրջանի թյուրք-մուսուլմանական ցեղասպանություն (AMEA Tarix institutu 2017g),
- Չանգեզուրի գավառի թյուրք-մուսուլմանական ցեղասպանություն (AMEA Tarix institutu 2017h),
- Երևանի նահանգի թյուրք-մուսուլմանական ցեղասպանություն (AMEA Tarix institutu 2017i),
- Նախիջևանի գավառի թյուրք-մուսուլմանական ցեղասպանություն (AMEA Tarix institutu 2017j),
- Արևելյան Անատոլիայի թյուրք-մուսուլմանական ցեղասպանություն (AMEA Tarix institutu 2017k),
- Հարավային Ադրբեջանի թյուրք-մուսուլմանական ցեղասպանություն (AMEA Tarix institutu 2017L):

Կերչին 15 տարիների ընթացքում Ադրբեջանի ԳԱԱ Պատմության, Արևելագիտության ինստիտուտների, Բաքվի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի աշխատակիցներ Ա. Աբիշովի (Abişov 2007; 2014a; 2014b; 2014c), Ա. Իսգանդարովի (İsgəndərov 1997; 2006; 2012; 2012; İsgenderov 2011)¹, Կ. Իսմայիլովի (İsmaylov 2014), Վ. Գաֆարովի (Qafarov 2016), Բ. Զարիմովի (Kərimov 2012), Ն. Մուսթաֆայի (Mustafa 2014), Գ. Նաջաֆլիի (Nəcəfli 2014; 2015; 2016; 2017), Է. Նաջիևի (Nəciyev 2017), Ն. Մամմադզադայի (Məmmədzaadə 2014), Ի. Նիֆթալիևի (Нифталиев 2014), Ս. Ռուստամովա-Թոհիդիի (Рустамова-Тоғиди 2009; 2010; 2013a, 2013b), Յ. Սաֆարիի (Səfəri 2016), ինչպես նաև Բաքվի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի նախկին դեկան (1994-2004թթ.) և ԳԱԱ Պատմության ինստիտուտի նախկին տնօրեն (2004-2021թթ.) Յադուբ Մահմուդովի կողմից կամ վերջինիս խմբագրությամբ (Maxmudov 2013; Mahmudov 2016) լույս են տեսել տասնյակ իբր «գիտական» հետազոտություններ, հոդվածներ ու մենագրություններ, որոնցում պատմական փաստերի կեղծմամբ, տարատեսակ զեղծարարությունների միջոցով հայ ժողովուրդը ներկայացվել է որպես «ցեղասպան» և առանց որևէ պատմական հիմքի՝ հայերին են վերագրվել վերևում արդեն թվարկված «թյուրք-մուսուլմանական ցեղասպանությունները»:

Կեղծ ցեղասպանությունների թեմայով Ադրբեջանի ԳԱԱ կողմից հրատարակված գրքերի մեծ մասի դեպքում առաջին էջին որպես «ծրագրի ղեկավար և առաջաբանի հեղինակ» գրված է Յադուբ Մահմուդովի անունը, իսկ երկրորդ էջին փակցված է շրջանակ, որում գրված է. «Գրվել է Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլիամ Ալիևի նախաձեռնությամբ» (տե՛ս, օրինակ, Mustafa 2014): Սա նշանակում է, որ կեղծ ցեղասպանությունների մասին «հետազոտությունները» և դրանց հաջորդող տպագրությունները արվում են անմիջապես Ադրբեջանի նախագահի հովանավորությամբ և պետական ֆինանսավորմամբ: Հեղինակների հոնորարները և տպագրության ծախսերը երբեմն վճարվում են Հեյդար Ալիևի անվան հիմնադրամից (տե՛ս, օրինակ, Rüstəmovə-Tohidi 2013), որի նախագահը Ադրբեջանի առաջին փոխնախագահ Մեհրիբան Ալիևան է, նաև Ադրբեջանում քաղհասարակության զարգացման աջակցության հիմնադրամից (տե՛ս, օրինակ, Zülfüqarlı 2013): Բացի այդ, թեմայով զբաղվող զեղծարար պատմաբանները արժանանում են պետական պարգևների, մրցանակների, ստանում բարձր պաշտոններ և այլն²:

¹ Ա. Իսգանդարովը նաև Ադրբեջանի 6-րդ գումարման խորհրդարանի պատգամավոր է:

² Պետական բազմաթիվ պարգևների և մրցանակների են արժանացել Յադուբ Մահմուդովը, Անար Իսգանդարովը և այլք:

Թեև Ադրբեջանի պատմագիտական գեղծարարությունների այս ուղղությունը սկսել է սկզբնավորվել 1997թ.-ին¹ և պետական քաղաքականության վերածվել արդեն 1998թ.-ից², սակայն դրա ամենակտիվ փուլը, դատելով Ադրբեջանում լույս տեսած գրքերի ժամանակագրությունից, եղել է 2011-2016թթ.-ին: Պատմական գեղծարարություններ իրականացնող հիմնական «գիտական» կենտրոններն են ԳԱԱ Ա. Բակիխանովի անվան Պատմության ինստիտուտը, ԳԱԱ Չ. Բունիաթովի անվան Արևելագիտության ինստիտուտը, Բաքվի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և մասամբ՝ նաև Բաքվի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը (տե՛ս, օրինակ, Азизли 2011):

Հայերին վերագրվող կեղծ գեղասպանությունների աշխարհագրության միտումնավոր ընդլայնումը, Ադրբեջանի տարբեր վարչական շրջանների անվանումների հատուկ շեշտադրումը, ինչպես նաև անգամ Ադրբեջանի տարածքից դուրս՝ Իրանի և ժամանակակից Թուրքիայի տարածքներում «հայերի կողմից իրականացված գեղասպանությունների» հորինումը ունի երեք հիմնական նպատակ՝

1. Հակահայկական ու հայատյաց քարոզչության թիրախ դարձնել ոչ միայն այսպես կոչված «Էթնիկ ադրբեջանցիներին», այլ նաև այդ երկրում բնակվող տեղաբնիկ ժողովուրդներին, որոնց հանդեպ Ադրբեջանում եղել է և հիմա էլ կա խիստ վերապահ մոտեցում, «անջատողականության» և «հայերի հետ համագործակցության» վախեր: Եթե Լենքորանի դեպքում թիրախ են թայիշները, ապա Շամախիի և Ղուբայի դեպքում քարոզչության թիրախ են կովկասյան պարսիկները (թաթերը), լեզգիներն ու ավարները:

2. Հակահայկական ու հայատյաց քարոզչության թիրախ դարձնել պատմական Ատրպատականի տարածքում բնակվող և հայերի հանդեպ դրական վերաբերմունք ունեցող թյուրքախոս իրանցիներին, իսկ նույն տարածքի պանթյուրքական խմբավորումների համար ապահովել հակահայկական քարոզչության կյուբ (տե՛ս, օրինակ, Նեօֆի 2015) :

3. Հայ ժողովրդին «գեղասպան» դարձնելով՝ աշխարհում ստեղծել հայերի բացասական իմիջ և խոչընդոտել թուրքերի կողմից իրականացված հայոց գեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին:

Եզրակացություններ

✓ Հետխորհրդային Ադրբեջանում պատմագիտական հետազոտություններում տեղ գտնող կեղծիքներն ու գեղծարարությունները հետևանք են պետական պատվերների:

¹ Ադրբեջանում թեման «գիտական շրջանառության մեջ դրած» առաջին պատմաբանը համարվում է Բաքվի պետական համալսարանի և ԳԱԱ Պատմության ինստիտուտի աշխատակից, այժմ այդ երկրի խորհրդարանի անդամ Անար Իսգանդարովը, ով 1997թ.-ին հրատարակել է իր՝ «1918-ci il Mart qirğınının tarixşünaslığı» (1918թ. մարտի կոտորածների աղբյուրագիտություն) աշխատանքը՝ ապահովելով մասնագիտական և քաղաքական կարիերա: Ա. Իսգանդարովը հետագա տարիների ընթացքում արժանացել է բազմաթիվ պետական պարգևների և մեդալների, իսկ իր հարցազոտյցներից մեկում հայտարարել է, որ շնորհիվ իր կատարած «հետազոտությունների»՝ Ադրբեջանի նախագահ Յ. Ալիևը 1998թ.-ին ընդունել է որոշում, որով մարտի 31-ը Ադրբեջանում հայտարարվել է «ադրբեջանցիների գեղասպանության օր»:

² Ադրբեջանի նախկին նախագահ Յ. Ալիևի՝ 1998թ. մարտի 26-ի հրամանագրով մարտի 31-ը Ադրբեջանում նշվում է՝ որպես «ադրբեջանցիների գեղասպանության օր»: Բացի այդ՝ 2013թ. սեպտեմբերի 18-ին ԱՀ գործող նախագահ Ի. Ալիևի մասնակցությամբ տեղի է ունեցել իբր 1918թ. հայերի կողմից ԱՀ Ղուբա քաղաքում գեղասպանված մուսուլմանների հիշատակին միհրված Ղուբայի գեղասպանության հուշահամալիրի (Ներառյալ թանգարանը) բացումը, ուր ամեն տարի մարտի 31-ին «գեղասպանության զոհերի ոգեկոչման երթի» շրջանակներում այցելում են ԱՀ քաղաքացիները:

- ✓ Դրանց նպատակներից մեկը հայերի «ցեղասպան» իմիջի ստեղծումն է և սեփական հասարակության շրջանում հակահայկական քարոզչության խորացումը:
- ✓ Հակահայկական բովանդակությամբ կեղծ գիտական ուսումնասիրություններն ու զեղծարարությունները սոր հուն են մտել հիվամ Ալիևի կառավարման երկրորդ շրջանից սկսած և լայն թափ հավաքել հատկապես 2011-2016թթ.-ի ընթացքում:

Օգտագործված գրականություն

1. Դեմոյան, Հայկ (2005). «ԼՂ հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին». *Տարածաշրջան տեղեկագիր հատուկ թողարկում*, Նորավանք ԳԿՀ, Երևան, էջ 58-59:
2. Ասատրյան Գառնիկ, Գևորգյան Նիկոլայ (1990), *Ադրբեջան. յուրացման սկզբունքը և իրանական աշխարհը*, Երևան:
3. Isgenderov, Anar (2011). *Realities of Azerbaijan 1917–1920*. Bloomington.
4. Мамедзаде, Натиг (2014). *Геноцид азербайджанцев в Карабахском регионе Азербайджана (1918-1920)*. Баку.
5. Махмудов, Ягуб (2013). *Геноцид азербайджанского народа 1918 года: организаторы и палачи*. Баку.
6. Нифталиев, Ильгар (2014). *Геноцид азербайджанцев в Иреванской губернии (1918-1920)*. Баку.
7. Рустамова-Тогиди, Солмаз (2009). *Март 1918 г. Баку. Азербайджанские погромы в документах*. Баку.
8. Рустамова-Тогиди, Солмаз (2010). *Куба. Апрель-май 1918 г. Мусульманские погромы в документах*. Баку.
9. Рустамова-Тогиди, Солмаз (2013a). *ШЕМАХА. Март-июль 1918 г. Азербайджанские погромы в документах, том I. Город Шемаха*. Баку.
10. Рустамова-Тогиди, Солмаз (2013b). *ШЕМАХА. Март-июль 1918 г. Азербайджанские погромы в документах, том II. Селения Шемахинского уезда*. Баку.
11. Шниерельман, Виктор (2003). *Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье*. Москва.
12. Abışov, Vaqif (2007). *Azərbaycanlıların soyqırımı (1917-1918-ci illər)*. Bakı.
13. Abışov, Vaqif (2014a). *Bakıda 1918-ci il mart soyqırımı*. Bakı.
14. Abışov, Vaqif (2014b). *Şamaxı qəzasında Azərbaycan xalqına qarşı soyqırım (1918-1920)*. Bakı.
15. Abışov, Vaqif (2014c). *Quba Qəzasında Azərbaycan xalqına qarşı soyqırım (1918-1920)*. Bakı.
16. AMEA Tarix institutu (2017a). Ադրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, 1905-1906-ը illər kütləvi qırğınları. <http://tarixinstitutu.az/page/80/kutleviqirgin>. (Accessed: 21/11/2021).
17. AMEA Tarix institutu (2017b). Ադրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, 31 mart soyqırımı. <http://tarixinstitutu.az/page/79/31mart>. (Accessed: 21/11/2021).
18. AMEA Tarix institutu (2017c). Ադրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, Bakı qəzasında Türk-müsəlman soyqırımı. <http://tarixinstitutu.az/page/82/genocideinbaku>. (Accessed: 21/11/2021).
19. AMEA Tarix institutu (2017d). Ադրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, Şamaxı qəzasında Türk-müsəlman soyqırımı. <http://tarixinstitutu.az/page/83/genoicdeinshamakhi>. (Accessed 21/11/2021).
20. AMEA Tarix institutu (2017e). Ադրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, Quba qəzasında Türk-müsəlman soyqırımı. <http://tarixinstitutu.az/page/84/genocideinguba>. (Accessed 21/11/2021).

21. AMEA Tarix institutu (2017f). Արրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, Lənkəran qəzasında Türk-müsəlman soyqırımı. <http://tarixinstitutu.az/page/85/genocideinlankaran>. (Accessed 21/11/2021).
22. AMEA Tarix institutu (2017g). Արրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, Qarabağ bölgəsində Türk-müsəlman soyqırımı. <http://tarixinstitutu.az/page/86/genocideingarabakh>. (Accessed 21/11/2021).
23. AMEA Tarix institutu (2017h). Արրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, Zəngəzur qəzasında Türk-müsəlman soyqırımı. <http://tarixinstitutu.az/page/87/zengezur>. (Accessed 21/11/2021).
24. AMEA Tarix institutu (2017i). Արրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, İrəvan quberniyasında Türk-müsəlman soyqırımı. <http://tarixinstitutu.az/page/88/genocideiniravan>. (Accessed 21/11/2021).
25. AMEA Tarix institutu (2017j). Արրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, Naxçıvan qəzasında Türk-müsəlman soyqırımı. <http://tarixinstitutu.az/page/89/genocideinnakhchivan>. (Accessed 21/11/2021).
26. AMEA Tarix institutu (2017k). Արրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, Şərqi Anadoluda Türk-müsəlman soyqırımı. <http://tarixinstitutu.az/page/90/genocideinanadolu>. (Accessed 21/11/2021).
27. AMEA Tarix institutu (2017L). Արրբեջանի ԳԱԱ Պատմության ինստիտուտի կայք, Güney Azərbaycanda Türk-müsəlman soyqırımı. <http://tarixinstitutu.az/page/91/genocideinsouthernazerbaijan>. (Accessed 21/11/2021).
28. Aşırılı, Akif (2011). *31 mart soyqırımı: 1918-1920-ci illər mətbuatında*. Bakı.
29. İsmaylov, Kamran (2014). *Zəngəzurdə Azərbaycan xalqına qarşı soyqırım (1918-1920)*. Bakı.
30. İsgəndərov, Anar (1997). *1918-ci il Mart qırğınının tarixşünaslığı*. Bakı.
31. İsgəndərov, Anar (2006). *Azərbaycanda türk-müsəlman soyqırımı probleminin tarixşünaslığı 1918–1920-ci illər*. Bakı.
32. İsgəndərov, Anar (2012). *Azərbaycan həqiqətləri: 1917–1920*. Bakı.
33. Qafarov, Vasif (2016). “Şamaxı soyqırımında Azərbaycanın məruz qaldığı itki və tələfatlar (Fövqəladə Təhqiqat Komissiyasının materialları əsasında).” *“Azərbaycan və Şərqi Anadoluda türk-müsəlman əhaliyə qarşı soyqırımları (1914-1920-ci illər)” mövzusunda həsr olunmuş III beynəlxalq elmi konfransın materialları*. Bakı, ss. 303-311.
34. Kərimov, Bəhmən (2012). “1918-1919-cu illərdə Lənkəran qəzasında ermənilərin törətdikləri soyqırım.” *Bakı Universitetinin xəbərləri. Humanitar elmlər seriyası*. №2, ss. 151-160.
35. Mahmudov, Yəqub (2016), elmi redaktor və ön sözün müəllifi. *Azərbaycan xalqına qarşı 1918-ci il soyqırımları*. Bakı.
36. Mustafa, Nazim. *İrəvan quberniyasında azərbaycanlıların soyqırımı (1918-1920)*. Bakı, 2014.
37. Nərimanoğlu, Hacı (2018). *Zəngəzur köç, deportasiya, soyqırımı, işğal tarixi*. Bakı.
38. Nəcəfli, Güntəkin (2014). *1918-1920-ci illərdə Şərqi Anadolu, Naxçıvan və İrəvan bölgəsində ermənilərin türk-müsəlman əhaliyə qarşı törətdikləri soyqırımları (BOA-nın sənədləri əsasında)*. Bakı.
39. Nəcəfli, Güntəkin (2015). *1917-1918-ci illərdə Urmiya bölgəsində azərbaycanlılara qarşı soyqırımı (ATASE-nin sənədləri əsasında)*. Bakı.
40. Nəcəfli, Güntəkin, Eyvazova Nigar (2016). “Azərbaycanda və Şərqi Anadoluda türk-müsəlman əhaliyə qarşı soyqırımı alman arxiv sənədlərində.” *“Azərbaycan və Şərqi Anadoluda türk-müsəlman əhaliyə qarşı soyqırımları (1914-1920-ci illər)” mövzusunda həsr olunmuş III beynəlxalq elmi konfransın materialları*. Bakı, ss. 540-547.

41. Nəcəfli, Güntəkin (2017). "Zəngəzur qəzasında türk-müsəlman əhaliyə qarşı erməni soyqırımları yeni arxiv sənədlərində (1918-1920)." *AMEA Tarix İnstitutu "Elmi Əsərlər" "XX əsrdə türk-müsəlman əhaliyə qarşı soyqırımları" mövzusunda IV Beynəlxalq elmi konfransın materialları. Xüsusi Buraxılış*. № 64, 65, 66. Bakı, ss. 77-83.
42. Nəciyev, Elnur (2017). "Denikinçilərin və erməni daşnaklarının Lənkəran qəzasında törətdiyi soyqırım." *AMEA Tarix İnstitutu "Elmi Əsərlər" "XX əsrdə türk-müsəlman əhaliyə qarşı soyqırımları" mövzusunda IV Beynəlxalq elmi konfransın materialları. Xüsusi Buraxılış*. № 64, 65, 66. Bakı, ss. 317-321.
43. Rüstəmov-Tohidi, Solmaz (2013). *Quba. Aprel-may 1918-ci il. Müsəlman qırğınları sənədlərdə*. Bakı.
44. Səfəri, Həsən (2016). *Cənubi Azərbaycan: 1918-ci il soyqırımı*. Bakı.
45. Zülfüqarlı, Məhərrəm (2013). *Şamaxı soyqırımı: 1918*. Bakı.

Works Cited

1. Demoyan, Hayk (2005). «LŁ himnaxndri šowrj k'arozč'owt'yan ev hakak'arozč'owt'yan kazmakerpman ev irakanac'man ełanakneri masin». Taracašrjan» tełekagir hatuk t'olarkum [On the Methods of Organizing and Carrying out Agitation and Anti-propaganda around the Nagorno-Karabakh Problem." Region Bulletin special issue], Noravank' GKH, Erevan, əj 58-59:
2. Asatryan Gařnik, Gevorgyan Nikolay (1990), Adrbejan. yurac'man skzbunk'ə ev iranakan ašxarhə [Azerbaijan: the Principle of Appropriation and the Iranian World], Erevan:
3. Isgenderov, Anar (2011). *Realities of Azerbaijan 1917–1920*. Bloomington.
4. Mamedzade, Natig (2014). Genocid azerbajdžancev v Karabaxskom regione Azerbajdžana (1918-1920) [The Genocide of Azerbaijanis in the Karabakh rRegion of Azerbaijan (1918-1920)]. Bakı.
5. Maxmudov, Jagub (2013). Genocid azerbajdžanskogo naroda 1918 goda: organizatory i palace [The Genocide of the Azerbaijani People in 1918: Organizers and Executioners]. Bakı.
6. Niftaliev, Il'gar (2014). Genocid azerbajdžancev v Irevanskoj gubernii (1918-1920) [The Genocide of Azerbaijanis in the Irevan Province (1918-1920)]. Bakı.
7. Rustamova-Togidi, Solmaz (2009). Mart 1918 g. Bakı. Azerbajdžanskije pogromy v dokumentax [March 1918 Bakı. Azerbaijani Pogroms in the Documents]. Bakı.
8. Rustamova-Togidi, Solmaz (2010). Kuba. Aprel'-maj 1918 g. Musul'manskije pogromy v dokumentax [Cuba. April-May 1918. Muslim Pogroms in Documents]. Bakı.
9. Rustamova-Togidi, Solmaz (2013a). ŠEMAXA. Mart-ijul' 1918 g. Azerbajdžanskije pogromy v dokumentax, tom I. Gorod Šemaxa [March-July 1918 Azerbaijani Pogroms in Documents, volume I. The City of Shamakhi]. Bakı.
10. Rustamova-Togidi, Solmaz (2013b). ŠEMAXA. Mart-ijul' 1918 g. Azerbajdžanskije pogromy v dokumentax, tom II. Selenija Šemaxinskogo uezda [March-July 1918 Azerbaijani Pogroms in Documents, volume II. The Village of Shemakha County]. Bakı.
11. Šnierel'man, Viktor (2003). Vojny pamjati: mify, identičnost' i politika v Zakavkaz'e [Wars of Memory: Myths, Identity and Politics in Transcaucasia.]. Moskva.
12. Abışov, Vaqif (2007). *Azerbaycanlıların soyqırımı (1917-1918-ci illər)* [Genocide of Azerbaijanis (1917-1918)]. Bakı.
13. Abışov, Vaqif (2014a). *Bakıda 1918-ci il mart soyqırımı*. [March 1918 Genocide in Bakı] Bakı.
14. Abışov, Vaqif (2014b). *Şamaxı qəzasında Azərbaycan xalqına qarşı soyqırım (1918-1920)* [Genocide against the Azerbaijani people in Shamakhi district (1918-1920)]. Bakı.

15. Abışov, Vaqif (2014c). *Quba Qəzasında Azərbaycan xalqına qarşı soyqırım (1918-1920)*. [Genocide against the Azerbaijani people in Guba province (1918-1920)] Bakı.
16. AMEA Tarix institutu (2017a). The Institute of History of the Azerbaijan National Academy of Sciences, *1905-1906-ci illər kütləvi qırğınları*. <http://tarixinstitutu.az/page/80/kutleviqirgin>. (Accessed: 21/11/2021).
17. AMEA Tarix institutu (2017b). The Institute of History of the Azerbaijan National Academy of Sciences, *31 mart soyqırımı*. <http://tarixinstitutu.az/page/79/31mart>. (Accessed: 21/11/2021).
18. AMEA Tarix institutu (2017c). The Institute of History of the Azerbaijan National Academy of Sciences, *Bakı qəzasında Türk-müsəlman soyqırımı*. <http://tarixinstitutu.az/page/82/genocideinbaku>. (Accessed: 21/11/2021).
Of course, the case of the Artsakh Republic cannot be compared with the case of Palestine solely because Palestine has observer status at the UN (A/RES/67/19) and enjoys more political and international acceptance than the Artsakh Republic. The self-referral of the Artsakh Republic, however, would create political activism at the international level and raise awareness of the international crimes committed during the Second War (the April War of 2016) and the Third War (the Forty-Four-Day War in 2020). Even if the Registrar of the ICC were to accept the self-referral, before starting any investigation the Prosecutor would have to examine, pursuant to the Art. 53(1) of the Rome Statute, (i) whether the information available to the Prosecutor provides sufficient grounds to believe that a crime under the jurisdiction of the Court has been or is being committed, (ii) whether the matter is, or would be, admissible under Art. 17 of the Rome Statute and (that there are no proceedings pending at domestic level), and (iii) whether there are substantial reasons to believe that conducting an investigation would not be in the interests of justice, taking into account the gravity of the crime and the interests of the victims (ICC, Policy Paper on Preliminary Examinations, 2013 8; ICC, Policy Paper on the Interests of Justice, 2007 2). As soon as the ICC Prosecutor is satisfied with the criteria, he/she may start with the investigations in the situation.

However, the first step in activating the ICC by filing a self-referral is tied to a number of political issues and diplomacy with the members of the Assembly of State Parties to accept such a self-referral. At this point, it should be pointed out that the activation of the international criminal justice system is about the individual criminal responsibility of the members of the armed forces who have committed international crimes. This is very different from the international state responsibility that stands before the European Court of Human Rights (ECtHR), for example. At the same time, it has to be taken into account that the ICC Prosecutor will investigate the conflict from all sides.

In view of the political reluctance to activate the ICC at this point in time, it is also important to examine other options for international criminal justice.

Special Tribunal for Artsakh

The establishment of special courts for international crimes is still a visible feature of international criminal justice. This is related to the various factors such as lack of jurisdiction of the ICC, a political decision to create an independent and flexible mechanism, etc. For example, in order to prosecute the former president of Chad, Hissène Habré, for crimes against humanity, the African Union demanded (HRW) that Senegal prosecute the former president, who had found asylum there, as the ICC did not have temporal jurisdiction over the case because the crimes were committed prior to 2001.¹ Thus Senegal created a specialized court in order to prefer charges against him (AU welcomes appeal outcome of the Hissene Habre case by the African Extraordinary Chambers, <https://au.int/en/pressreleases/20170502/au-welcomes-appeal-outcome-hissene-habre-case-african-extraordinary-chambers>. Accessed 14.11.2021). Similarly,

¹ The ICC does not have jurisdiction on the cases before 2001.

the Kosovo Chambers were set up on the basis of an agreement between the EU and Kosovo since the crimes were committed between 1998 and 2000.

With respect to different conflicts, other fact-finding and investigative mechanisms are put in place, however it seems that the establishment of a specialized unit or court or tribunal for the prosecution of international crimes depends on the political will of the states involved. It is not foreseeable that something similar will be established within the OSCE or between the conflicting parties in the near future.

Third States and Artsakh

The Member States of the Rome Statute are, under the provisions of the Statute, obliged to take action against macro-criminals. In accordance with the Nuremberg Trials' established principles, any person who commits an act which constitutes a crime under international law is responsible therefore and liable to punishment (Nuremberg Principles I). The fact that domestic law does not impose a penalty for an act which constitutes a crime under international law does not relieve the person who committed the act from responsibility under international law (Nuremberg Principle II). This means that regardless of the crime scene, the macro-criminal is liable to prosecution.

It is also known as universal jurisdiction (*Weltrechtsprinzip*) where the obligation to prosecute and to punish transnational (BGH 3 StR 372/00 - 21 February 2001) and international crimes¹ derives from the international treaty and customary law. The action of the state in order to prosecute and to punish those crimes is known as international obligation towards international community (*obligatio erga omnes*) (Bassiouni 34), otherwise, any inactivity on the part of the state and ignorance in prosecuting the criminals of "foreign matters" would lead to the breach of international obligation and, accordingly, to state responsibility pursuant to Art. 12 Draft Articles on Responsibility of States for Internationally Wrongful Acts (Draft Articles) (Petrossian, Saatenverantwortlichkeit für Völkermord 157-161). The fundamental question here is why this type of involvement by the so-called third state in punishing criminals, who are in no way related to that state, is necessary. The answer is tied to the core and protected interests of the offenses arising from the international treaty and customary law. The best historical example is piracy. Piracy is considered as an historical problem where the maritime-armed pirates steal, seize and hold cargo vessels, ships and their crews for ransom (Kraska 1-9). Piracy targets the economy and the trade system of the states and threatens not only the sovereignty of the states but also the well-being of the international community (Garrod 197; Cohen 214). Therefore, combatting piracy is everyone's task.² Art. 105 of the UN Convention on the Law of the Sea allows any state to take measures against the pirates and the courts of the state which carried out the seizure to decide upon the penalties to be imposed on the pirates. Similarly, based upon the international multilateral agreements, states agreed to combat certain offences on the principle of universal jurisdiction because those offences treat the fundamental values and interests of the international community (Hovell 443). If, in the event of transnational crimes, it is still disputed whether the principle of universal jurisdiction may apply or not (Ambos §6),³

¹ Such as crimes against humanity, genocide and war crimes.

² Cicero described the piracy as the enemy of all, "Nam pirata non est ex perduellium numero definitus, sed communis hostis omnium; cum hoc nec fides debet nec ius iurandum esse commune" in De Officiis.

³ International conventions on transnational crimes do not explicitly emphasize the universal jurisdiction; it is in margin of appreciation of the member state to adjust the plank from the aut dedere aut judicare principle to universal jurisdiction, e.g. Article 31(3) Council of Europe Convention on Action against Trafficking in Human Beings 2005, Article 15(4) The United Nations

international crimes, especially peremptory norms (*jus cogens*), such as genocide, crimes against humanity, war crimes, slavery and torture are subject to universal jurisdiction because of their international nature (Cockayne et al 254). Recalling the Princeton Principles, universal jurisdiction is criminal jurisdiction based solely upon the nature of the crime, without regard to where the crime was committed, the nationality of the alleged or convicted perpetrator, the nationality of the victim, or any other nexus to the state exercising such jurisdiction (Petrossian, The Nine-Year Term of the New Prosecutor – a Test for International Criminal Justice?).¹

During the conflict in the former Yugoslavia, numerous perpetrators travelled to Europe under the curtain of refugees. European states have initiated criminal prosecutions against those criminals who had committed crimes in the conflict zone and who fled to Europe. The same scenario repeated itself after the conflicts in Syria and Iraq (Safferling, Petrossian 244).

The most active role in the prosecution of macro-criminals on the basis of universal jurisdiction was taken Germany. It initiated hundreds of cases against alleged perpetrators from different conflict zones, including Afghanistan, Syria, Iraq and Sri Lanka (Safferling, Petrossian 245).

Although from a theoretical point of view the prosecution of macro-criminals is clear, on the practical level difficulties arise. Prosecutors in third countries would avoid prosecuting foreign criminals not only because of their political ties or interests but also due to a lack of evidence and a lack of international cooperation in criminal matters. Pursuant to Section 153c of the German Code of Criminal Procedure (*Strafprozeßordnung*; StPO), the public prosecutor's office (*Staatsanwaltschaft*) has the option of refraining from prosecuting offenses abroad without the court having to consent. Moreover, in regard to international crimes, the prosecution's discretion to prosecute is even more restricted (Safferling, *Völkerstrafrecht*). Accordingly, there is a compulsion to prosecute in the event that the act has a domestic connection (if the accused person is in Germany, Section 153f StPO) (DEARJV, 16).

This means that third states' prosecutors will only initiate criminal proceedings if they already have sufficient evidence and materials to bring proceedings against the person who is on their territory. Otherwise, the investigations into the "foreign" affairs will not bear "fruits". This results in an important task for the victim representatives inside and outside Artsakh to conduct their own investigations into war crimes and crimes against humanity. The published video on war crimes and testimony of the victims are the primary source for conducting the investigation using satellite imagery, geolocating the commission of crimes, identifying the armed units and their commanders who have been actively involved in the war crime zones. Social media is another source of evidence that can help conduct the investigation and identify the perpetrators.

Without their own investigation, there is little hope that third state prosecutors will initiate proceedings. Not only the commanders of the armed forces had to be identified, but also the soldiers who executed the orders and directly committed the crimes.

There are already applications to the third state prosecutors by the Ombudsmen of the Republic of Armenia (Armenian ombudsman submits reports on Azerbaijani war crimes to prosecutor's offices of different countries, <https://www.panorama.am/en/news/2020/12/28/Armenian-ombudsman/2428260>. Accessed 14.11.2021), the German-Armenian Lawyers' Association (*Strafanzeige wegen*

Convention against Transnational Organized Crime 2000, Article 4(2) UN Convention against Illicit Traffic in Narcotic Drugs and Psychotropic Substances, 1988.

¹ Princeton University Program in Law and Public Affairs, The Princeton Principles on Universal Jurisdiction 28 (2001), Principle 1.

aserbaidshischer Kriegsverbrechen gestellt, <https://anfdeutsch.com/weltweit/strafanzeige-beim-gba-wegen-aserbaidshischer-kriegsverbrechen-22288>. Accessed 14.11.2021) and the Argentinian-Armenian Lawyers' Association with regard to the war crimes committed by the armed forces of the Republic of Azerbaijan.

Conclusion

All three legal ways to activate international criminal justice are possible. The problem, however, is the political willingness to use the instrument of international criminal justice to prosecute the macro-crimes committed during both the April and the Forty-Four-Day Wars. National authorities appear to be slow in collecting and documenting evidence of international crimes. The international criminal justice mechanism should be used not only to prosecute international crimes but also to prevent future atrocities. The international rules do not have a symbolic function, but must be respected and appropriate steps must be taken by the national authorities to activate them.

Another crucial instrument is the diplomacy of using the mechanism of international criminal justice. Accordingly, the national authorities should use every diplomatic opportunity to raise awareness of the crimes committed by members of the armed forces of the Republic of Azerbaijan.

Works cited

1. Մարգարյան, Աննա. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության դրույթների արտացոլումը ՀՀ քրեական օրենսդրության մեջ: Ղազինյան, Գագիկ և ուրիշներ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի կյուբերի ժողովածու: Երևանի Պետական Համալսարանի հրատարակչություն, Երևան, 2016:
2. Margaryan, Anna. Mijazgayin qreakan datarani kanonadrut'yan druyt'neri artacolumy' HH qreakan o'rensdrut'yan mej [Reflection of the provisions of the Statute of the International Criminal Court in the criminal legislation of the Republic of Armenia]: Ghazinyan, Gagik & urishner. EPH iravagitut'yan fakulteti profesoradasaxosakan kazmi gitajhoghovi nyut'eri jhoghovac'u: Erevani Petakan Hamalsarani hratarakchut'yun, Erevan, 2016:
3. Պետրոսյան, Գուրգեն. Միջազգային քրեական իրավունք: Երևանի Պետական Համալսարանի հրատարակչություն, 2020:
4. Petrossian, Gurgen. Mijazgayin qreakan iravunq [International criminal law]: Erevani Petakan Hamalsarani hratarakchut'yun, 2020.
5. Ambos in MüKoStGB, 4. Aufl. Beck, München, 2020
6. Akcam, Taner, Dadrian, Vahagn. Judgment at Istanbul. Bergbahn books, New York, 2011.
7. Bassiouni, Cheriff. International Crimes: Jus Cogens and Obligatio Erga Omnes. Law and Contemporary Problems, Vol. 59: No. 4, 1996, p. 63-74.
8. Cockayne, James, Grono, Nick, Panaccione, Kari. Slavery and the Limits of International Criminal Justice. *JICJ*, Vol. 14, Issue 2, 2016, pp. 253-267.
9. Cohen, Miriam. The Analogy between Piracy and Human Trafficking: A Theoretical Framework for the Application of Universal Jurisdiction, *Buffalo Human Rights Law Review*, Vol. 16, Article 5, 2010, pp. 201-235.
10. Crowe, David. The Tokyo and Nuremberg International Military Tribunal Trials. In: Dittrich, Viviane, et al. The Tokyo Tribunal. TOAEP, Brussels, 2020.

11. de Wet, Erika. Referrals to the International Criminal Court Under Chapter VII of the United Nations Charter and the Immunity of Foreign State Officials. *AJIL*, 2018, pp. 33-37.
12. Garrod, Mattew. Piracy, the Protection of Vital State Interests and the False Foundations of Universal Jurisdiction in International Law. *Diplomacy and Statecraft*, Vol. 25, Issue 2, 2014, pp. 195-213.
13. Gross, Aeyel. Decolonizing the ICC: The Situation in Palestine and Beyond, JustSecurity, 8 March 2021.
14. Jelinek, Georg. *Allgemeine Staatslehre*. Springer Verlag, Berlin, 1921.
15. Henkel, Gerd. *Leipziger Prozesse*. Hamburger Edition, Hamburg, 2014.
16. Hovell, Devika. The Authority of Universal Jurisdiction. *The European Journal of International Law*, Vol. 29 no. 2, 2018, pp. 427-456.
17. HRW, African Union: Press Senegal on Habré Trial, 28 January 2009.
18. ICC, Policy Paper on Preliminary Examinations, 2013.
19. ICC, Policy Paper on the Interests of Justice, 2007.
20. ICC, Statement of ICC Prosecutor, Fatou Bensouda, respecting an investigation of the Situation in Palestine.
21. Kraska, James. *Contemporary Maritime Piracy: International Law, Strategy, and Diplomacy at Sea*. Praeger, Santa Barbara, 2011.
22. Loengarov, Alexander. State of Jurisdiction: The International Criminal Court and the 'Situation in Palestine', Washington Institute, 24 April 2020
23. Olasolo, Hector. The Triggering Procedure of the International Criminal Court, Procedural Treatment of the Principle of Complementarity, and the Role of Office of the Prosecutor. *ICLR* 5, 2005, pp. 121-146.
24. Petrossian, Gurgen. *Statenverantwortlichkeit für Völkermord*. Duncker und Humblot, Berlin, 2019.
25. Petrossian Gurgen. The Nine-Year Term of the New Prosecutor – a Test for International Criminal Justice? | lawyerblog, 2021.
26. Safferling Christoph, Petrossian Gurgen. Universal Jurisdiction and International Crimes in German Courts – Recent Steps towards Exercising the Principle of Complementarity after the Entry into Force of the Rome Statute, *EuCLR*, 2021, pp. 242-263.
27. Safferling Christoph. *Völkerstrafrecht*, In: Kudlich Hans, et al., *Handbuch des Strafrechts*, C.F. Müller, München, 2021.
28. Schabas William. The abolition of the death penalty in international law. National University of Ireland, Galway, 1992.
29. Schabas William. *The Trial of the Kaiser*. Oxford University Press, Oxford. 2018.
30. Schabas William. Opinion in Accordance with Article 103 of the Rules of Procedure and Evidence, 15 March 2020.

ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԿԱԾ ՄԱԿՐՈՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ

ԳՈՒՐԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Էրլանգեն-Նյուրեմբերգի Ֆրիդրիխ-Ալեքսանդր համալսարանի
ավագ գիտաշխատող, միջազգային քրեական իրավունքի հետազոտական խմբի
ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր (Հայդելբերգ),
ք.Էրլանգեն, Գերմանիա*

Հոդվածը ներկայացնում է միջազգային քրեական իրավունքի հնարավոր իրավական ուղիները՝ Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում կատարված

մակրոհանցագործությունների հետապնդումը ակտիվացնելու համար: Ո՛չ Հայաստանի Հանրապետությունը, ո՛չ Ադրբեջանի Հանրապետությունը և ո՛չ էլ Արցախի Հանրապետությունը Միջազգային քրեական դատարանի (ՄԶԴ) Հռոմի կանոնադրության անդամ չեն: Սա դժվարացնում է միջազգային մակարդակով պատերազմական հանցագործությունների քրեական հետապնդման նախաձեռնումը: Հոդվածում ընդգծվում են միջազգային քրեական հետապնդման ակտիվացման իրավական խոչընդոտները համադրման ու համեմատման միջոցով: Իրավական հնարավոր գործիքների համադրման ու համեմատման միջոցով: Իրավական համեմատությունը և պատմական ակնարկը թույլ են տալիս դիտարկել Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում կատարված միջազգային հանցագործությունների հետապնդման երեք տարբեր մակարդակներ, որոնցից համընդհանուր իրավասության հիման վրա ազգային քրեական հետապնդումը թվում է ամենաարդյունավետ գործիքը:

Հիմնաբառեր՝ *պատերազմական հանցագործություններ, Միջազգային քրեական դատարան, մարդկության դեմ հանցագործություններ, Նյուրնբերգյան սկզբունքներ, Արցախյան պատերազմ, հարկադիր տեղահանում, խոշտանգում, անդամահատում, անմարդկային վերաբերմունք, Ադրբեջան, Արցախի Հանրապետություն, Պաղեստինում իրավիճակ, Քուկ կղզիներ, համընդհանուր իրավասություն:*

МЕЖДУНАРОДНОЕ ПРЕСЛЕДОВАНИЕ МАКРОПРЕСТУПЛЕНИЙ, СОВЕРШЕННЫХ ВО ВРЕМЯ ТРЕТЬЕЙ АРЦАХСКОЙ ВОЙНЫ

ГУРГЕН ПЕТРОСЯН

*старший научный сотрудник Фридрих-Александр
Университета Эрлангена-Нюрнберга,*

*руководитель исследовательской группы международного уголовного права,
доктор юридических наук (Гейдельберг),
г. Эрланген, Германия*

В данной статье сформулированы возможные правовые пути, открытые для международного уголовного права с целью активизации преследования макропреступлений, совершенных в ходе Третьей Арцахской войны. Ни Республика Армения, ни Республика Азербайджан, ни Республика Арцах не являются членами Римского статута Международного уголовного суда (МУС). Это затрудняет инициирование судебного преследования военных преступлений на международном уровне. Следующая статья освещает трудности и альтернативы в преодолении правовых препятствий для активизации международного уголовного преследования, проводя и сравнивая возможные инструменты. Правовое сравнение и исторический обзор позволяют рассмотреть три различных уровня для преследования международных преступлений, совершенных во время Третьей Арцахской войны, где национальное преследование на основе универсальной юрисдикции представляется наиболее эффективным инструментом.

Ключевые слова: *военные преступления, Международный уголовный суд, преступления против человечности, Нюрнбергские принципы, Арцахская война, насильственное перемещение, пытки, увечья, бесчеловечное обращение, Азербайджан, Республика Арцах, ситуация в Палестине, Острова Кука, универсальная юрисдикция.*

1991 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԴԵՐՆ ԱՐՑԱԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ* 1

ՀՏԴ 342

DOI: 10.52063/25792652-2021.3-107

ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) հիմնադիր նախագահ,
«Արցախ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն,
«Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
avetiq.hh@gmail.com

Հոդվածի նպատակն է բացահայտել անկախության հանրաքվեի անցկացման իրավական հիմքերը, նախադրյալները, ընթացքը, արդյունքները և իրավասու կառույցների կողմից տրված գնահատականները:

Նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել 1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեի վերաբերյալ արխիվային փաստաթղթերը, միջազգային դիտորդների կարծիքները և համադրելով ԼՂՀ, ԽՍՀՄ գործող օրենսդրության և միջազգային իրավունքի հետ, անաչառ գնահատական տալ հանրաքվեի գործընթացին:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի և պատմահամեմատական մեթոդները:

Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ ԼՂՀ անկախության հանրաքվեի իրավական արժեքը նախ և առաջ այն է, որ դրա արդյունքում ժողովրդի միաձայն քվեի միջոցով իրավաբանորեն հաստատվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական և իրավական պետության կառուցման հայեցակարգը, այսինքն՝ այդ պետաիրավական ակտը բավարար հիմք է հանդիսացել անկախ պետականություն հիմնադրելու համար:

Դրանից գատ, ԼՂՀ ժողովրդական պատգամավորների Խորհրդի գործկոմի ընդունած որոշումների ուսումնասիրությունն անառարկելիորեն վկայում է, որ մի կողմից՝ դրանց հիմքում ընկած էին միջազգային իրավունքի դրույթները, ԽՍՀՄ Սահմանադրությունը և օրենսդրությունը, որոնք «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագրի եզրափակիչ մասի համաձայն՝ «չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և Հանրապետության առանձնահատկություններին», իսկ մյուս կողմից՝ հետևողական վերաբերմունք կար այդ որոշումները հանրության սեփականությունը դարձնելու, տվյալ պարագայում՝ «Խորհրդային Ղարաբաղ» («Սովետսկի Կարաբախ») թերթի և զանգվածային լրատվության այլ միջոցներով բնակչությանը հասու դարձնելու ուղղությամբ:

* Հոդվածը ներկայացվել է 20.11.2021թ., գրախոսվել՝ 27.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Հետազոտությունն իրականացվել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ՝ SCS20-009 գիտական թեմայի շրջանակներում:

Հիմնաբառեր՝ *Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն, անկախության հանրաքվե, 1991թ. դեկտեմբերի 10, միջազգային դիտորդ, «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագիր, «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենք, Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Ադրբեյջանի գեղծարարություն:*

Ներածություն

Ժողովրդավարական ու իրավական պետությանը ներհատուկ ժողովրդախիշխանության սկզբունքը դրսևորվել է Արցախի Հանրապետության 30-ամյա պետականության ամբողջ ժամանակաշրջանում: Այն սկիզբ է առել 1991 թ.-ի դեկտեմբերի 10-ին կայացած անկախության հանրաքվեով, որի իրավական նշանակության բաղադրիչներին և դրանց հիմքերին կանոնադառնանք սույն հոդվածում:

Արցախի Հանրապետության անկախության հանրաքվեի դերն ու իրավական արժեքը բացահայտելու նպատակով նպատակահարմար ենք համարում անդրադառնալ հանրաքվեի անցկացման իրավական հիմքերին, սախադրյալներին, ընթացքին և իրավասու կառույցների կողմից տրված գնահատականներին:

Ինչպես հայտնի է, 1991թ.-ի սեպտեմբերի 2-ին իրավիքված բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների ժողովրդական պատգամավորների համատեղ նստաշրջանում որոշում ընդունվեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին հռչակագրի ընդունման և նրա պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմինների ձևավորման մասին» (ԼՂՀ ՊԱ Ֆ. 1, ց. 2, կ. 28, պ. մ. 309, թ. 61-62): Հաշվի առնելով այն, որ ԽՍՀՄ կազմից դուրս գալու գործընթացը պետք է լիներ խիստ կանոնակարգված ու ԽՍՀՄ գործող օրենսդրությանը համապատասխան, ղեկավարվելով «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի 2-րդ հոդվածով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդական պատգամավորների խորհուրդը 1991 թ.-ի նոյեմբերի 27-ի որոշման 1-ին կետով որոշեց. «1991 թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անցկացնել հանրաքվե» (ԼՂՀ ՊԱ, Ֆ. 1, ց. 1, կ. 50, պ. մ. 296, թ. 1): Ընդ որում, հանրաքվեի անցկացման համար հիմք է հանդիսացել նաև 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի 3-րդ հոդվածը, ըստ որի. «... իր կազմի մեջ ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ինքնավար շրջաններ ունեցող միութենական հանրապետություններում հանրաքվեյն յուրաքանչյուր ինքնավարությունում անց է կացվում առանձին» (Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР»):

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ստեղծումը

Հանրաքվեի կազմակերպման ու անցկացման նպատակով 1991 թ.-ի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած անդրանիկ նիստում որոշում է կայացվել ստեղծել նոր մարմին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով¹, որին վիճակված էր պատմական այդ

¹ Ընդհանրապես հանրաքվեի կազմակերպման համար ստեղծվող հիմնական հանձնաժողովը կոչվում է հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով (ինչն ամրագրված էր «ԼՂՀ հանրաքվեի անցկացման մասին» ժամանակավոր կանոնակարգի 7-րդ հոդվածում): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե՛ հանրաքվեի, թե՛ ընտրությունների կազմակերպման ու անցկացման համար մշտապես գործող պետական մարմինը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է, ինչպես նաև այն, որ 1991 թ.-ի դեկտեմբերի 28-ին պետք է անցկացվեին ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի ընտրություններ, նպատակահարմար էր ստեղծել

պատասխանատու և վճռորոշ պահին հանձն առած առաքելությունը կատարել հնարավորինս անթերի: Հիշյալ մարմնի գործունեության ամբողջ ընթացակարգը ներառում էր ենթակառուցվածքի ստեղծումը, հանձնաժողովների կազմավորումը, ընտրողների ցուցակների կազմումը, քվեարկության համար տեղամասերի ստեղծումը, ինչպես նաև քարոզչական ու բացատրական աշխատանքները, քվեարկության ընթացակարգը, ձայների հաշվումը, հանրաքվեի արդյունքների որոշումը և այլն:

Որպես այդ ամբողջական շղթայի սկզբնական օղակ՝ 1991 թ.-ի նոյեմբերի 27-ի որոշման 3-ին կետով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին» ժամանակավոր կանոնակարգի 12-րդ հոդվածի հիման վրա ԼՂՀ ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոմին հանձնարարվեց 1991 թ.-ի նոյեմբերի 28-ից ոչ ուշ աշխատանքային կոլեկտիվներում, հասարակական կազմակերպություններում, պետական իշխանության մարմիններում կազմակերպել ժողովներ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմում թեկնածուների առաջադրման նպատակով և 1991 թ.-ի նոյեմբերի 28-ին ներկայացնել նստաշրջանի հաստատմանը (ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 1, կ. 50, պ. մ. 296, թ. 1):

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրաքվե անցկացնելու մասին» ժամանակավոր կանոնակարգի 7-րդ հոդվածի համաձայն՝ «ԼՂՀ հանրաքվեի նախապատրաստումը և անցկացումն իրականացնում էին հետևյալ հանձնաժողովները.

- ԼՂՀ հանրաքվեի կենտրոնական (հանրապետական) հանձնաժողով,
- ԼՂՀ հանրաքվեի շրջանային հանձնաժողովներ,
- ԼՂՀ հանրաքվեի տեղամասային հանձնաժողովներ»:

Տեղերում հանրաքվեի աշխատանքները կազմակերպելու նպատակով յուրաքանչյուր ընտրատարածքում կազմավորվել են տարածքային ընտրական հանձնաժողովներ՝ 7-ից 9-ը մարդու կազմով (ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, կ. 28, պ. մ. 331, թ. 16):

Հանրաքվեի դրվելից հարցի ձևակերպումը

Համաձայն 1991թ.-ի նոյեմբերի 27-ի որոշման՝ հանրաքվեի դրվելից հարցը սկզբնապես ձևակերպվել էր հետևյալ կերպ. «Համաձայն եք Դուք ԽՍՀՄ կամ նրա իրավահաջորդի կազմում ինքնիշխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման հետ» (Սատարում եք Դուք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը Ադրբեյջանի Հանրապետությունից դուրս): Սակայն հաշվի առնելով հանրաքվեի դրվող հարցի շտկման անհրաժեշտությունը՝ նույն որոշման 2-րդ կետով ԼՂՀ ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոմին թույլատրվել է անհրաժեշտության դեպքում ճշգրտել հանրաքվեի դրվող հարցի ձևակերպումը և փոխանցել հանրաքվեի անցկացման Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ քվեաթերթիկ մոցնելու համար (ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 1, կ. 50, պ. մ. 296, թ. 1):

Մինչև ԼՂՀ անկախության հանրաքվեի դրվող հարցի վերջնական տարբերակի ընդունումը տեղի են ունեցել բազմաշերտ քննարկումներ, որոնց արդյունքում առաջարկվել էին մոտ մեկ տասնյակ ձևակերպումներ (ԼՂՀ, ՊԱ, ֆ. 1, ց. 3, կ. 11, պ. մ. 62, թ. 18): Դրանցից ընտրվել է այն տարբերակը, որում խտացված էր ժողովրդի հավաքական կամքի դրսևորման փիլիսոփայությունն ու անկախ պետություն ստեղծելու միջոցով խաղաղ գոյակցության պայմաններում ապրելու բնական իրավունքը: ԼՂՀ ժողպատգամավորների խորհրդի գործկոմը 1991թ.-ի դեկտեմբերի 4-ին ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի դրվող հարցի ճշգրտված ձևակերպման մասին» թիվ 4/151 որոշումը, որի 1-ին կետին

Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որը միաժամանակ կիրականացնելու են հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի գործառույթները:

համապատասխան՝ հաստատվեց հանրաքվեի դրվող հարցի վերջնական ձևակերպումը՝ հետևյալ խմբագրությամբ. «**Համաձայն եք Դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, ինքնուրույն որոշելով համագործակցության ձևը ուրիշ պետությունների և ընկերակցությունների հետ**» (ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, կ. 28, պ. մ. 331, թ.65): Վերոհիշյալ որոշումը փոխանցվել է հանրաքվեի անցկացման Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ հարցը քվեաթերթիկ մտցնելու համար:

Հանրաքվեի քարոզչությունը

Հատկանշական է, որ «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագրում, ինչպես նաև «ԼՂՀ հանրաքվեի մասին» ժամանակավոր կանոնակարգի 2-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված հավասարության ու խտրականության ժխտման սկզբունքները հրապարակայնորեն և միջազգային դիտորդների ներկայությամբ կյանքի են կոչվել 1991թ.-ի դեկտեմբերի 10-ին կայացած հանրաքվեի ընթացքում, երբ ոչ միայն հանրաքվեի քվեաթերթիկներում է հարցը ձևակերպվել երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն), այլև քվեաթերթիկներն ուղարկվել են ադրբեջանաբնակ բնակավայրերի ընտրատարածքներ: Հանրաքվեի կարևորագույն մասն էր կազմում նաև բնակչության շրջանում քարոզչության ու բացատրական աշխատանքների իրականացումը: Այդ իսկ նպատակով «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությանը և ԼՂՀ հեռուստատեսության ու ռադիոհեռարձակման կոմիտեին հանձնարարվել էր մամուլի էջերում, տեղական ռադիոյով ու հեռուստատեսությամբ ընդլայնել բացատրական աշխատանքների շրջանակը՝ առաջիկա ընտրությունների ու հանրաքվեի նշանակության մասին և հրապարակել համապատասխան խորհրդատվություն: Այդ աշխատանքների վերահսկողությունը հանձնարարվել էր Ռ.Քոչարյանին (ԼՂՀ ՊԱ, ֆ.1, ց.2, կ.28, պ.մ.331, թ.63-64): Տեղերում օգնություն ցուցաբերելու և ընտրությունների նախապատրաստման ու հանրաքվեի անցկացման աշխատանքի նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով ԼՂՀ գործկոմի անդամներին հանձնարարվել էր մեկնել շրջաններ:

Ա.Իսազուլուփի խոսքերով հանրաքվեի նախօրեին ԼՂՀ ժողպատգամավորների խորհրդի գործկոմի կողմից տրվել է համապատասխան հանձնարարական, ըստ որի՝ նա պետք է այցելեր Մարտակերտ շրջկենտրոն, շրջանի մյուս գյուղեր և հանդիպումներ ունենար տեղի բնակչության հետ: Հանդիպումների նպատակը հանրաքվեի կարևորությունը ժողովրդի և պետության կյանքում ներկայացնելն էր:

Հանրաքվեի ընտրատարածքների ձևավորումը

ԼՂՀ անկախության հանրաքվեի անցկացման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կազմավորվել է 81 ընտրատարածք (ԼՂՀ ՊԱ, ֆ.1, ց.2, կ.28, պ.մ.331, թ.4), սակայն ինչպես վկայում են փաստերն ու ականատեսները (Օհանջանյան Մ. Անկախության քայլերը..), ընտրատարածքներից 11-ում այն չի կայացել: Ընդ որում, եթե թիվ 25 ընտրատարածքը փակ է եղել (ԼՂՀ ՊԱ, ֆ.1, ց.2, կ.28, պ.մ.331, թ.7), ապա մնացած 10-ն ընդգրկում էր ադրբեջանական բնակավայրերը, որոնք չեն մասնակցել հանրաքվեին: Սա խոսում է այն հեռահար քաղաքականության մասին, որ ադրբեջանցիները դեռևս այդ փուլում խնդրահարույց հարցերը փորձել են լուծել ոչ թե ժողովրդավարական եղանակներով, այլ բացառապես ուժային ճնշումներով, նրանց համար խորթ է եղել մարդկության քաղաքակիրթ հատվածի կողմից մշակված և խաղաղություն երաշխավորող ճանապարհը: Ընդամին, հանրաքվեին չմասնակցած քաղաքացիների ճնշող մեծամասնության՝ ադրբեջանցիներ լինելու փաստն արձանագրել են նաև միջազգային դիտորդներն իրենց արձանագրություններում:

ԼՂՀ անկախության հանրաքվեի քվեարկությունը կազմակերպվել է նաև երկրի սահմաններից դուրս՝ Հայաստանի Հանրապետությունում՝ դրանով իսկ ապահովելով

քաղաքացիների ընտրելու իրավունքի իրացումը: Այդ նպատակով ԼՂՀ ժողպատգամավորների խորհրդի գործկոմը որոշել է. «... քննարկելով ԼՂՀ բոլոր քաղաքացիների՝ ս.թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեին մասնակցությունն ապահովելու հարցը, արձանագրելով, որ Հանրապետության օդատրանսպորտային շրջափակման պատճառով իրենց մշտական բնակության վայրից բնատեղահանված շատ բնակիչներ գրկված են հանրաքվեին մասնակցելու հնարավորությունից, դեկավարվելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրաքվե անցկացնելու մասին» ժամանակավոր կանոնակարգի 5-րդ հոդվածով, ԼՂՀ քաղաքացիներ Յուրի Յովհաննիսյանին (Ասկերանի շրջանի Շոշ գյուղից), Յրանտ Ամիրյանին (Յադրուբի շրջանի Յին Թաղլար գյուղից), որոնք այժմ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում, վերապահել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորություններ և նրանց հանձնարարել ստեղծել ընտրատեղամասեր ժամանակավոր բնակվող բնատեղահանվածների, ուսանողների, գործուղվածների և Հայաստանի Հանրապետությունում գտնվող ԼՂՀ մյուս քաղաքացիների համար» (ԼՂՀ ՊԱ, ֆ.1, ց.2, կ.28, պ.մ.331, թ.63-64):

Ինչպես վկայում է Յուրի Յովհաննիսյանը, ԼՂՀ ժողպատգամավորների խորհրդի գործկոմի որոշումի ընդունումից հետո Երևան քաղաքում ստեղծվել է հանձնաժողով, որը պետք է պատշաճ ձևով կազմակերպեր հանրաքվեն: Նշված հանձնաժողովի կազմում ընդգրկվել են խորհրդային շրջանի գործկոմի աշխատակից Սերգեյ Խալաֆյանը, ինչպես նաև Աիդա Մանուչարովան: Հանձնաժողովը համակարգել է Սերգեյ Խալաֆյանը: Զանի որ արցախահայության սփռվածությունը Հայաստանում բավականին լայն էր, ստեղծվել է 12 ընտրատեղամաս, որոնցից առաջինը «Արցախ» հայրենակցական միությունում էր, երկրորդը՝ օդանավակայաններում, ինչպես նաև երկաթգծի կայարանում, ավտոկայանում, Հրազդանում, Էջմիածնում, Արտաշատում, Արարատում, Կիրովականում և այլ քաղաքներում: Հանրաքվեին մասնակցել են մի շարք միջազգային դիտորդներ՝ ռուսական «ԿՐԻԿ» կազմակերպությունից, Անդրեյ Նույկինը կնոջ հետ, ադմիրալ Թիմուր Գայդարը, Ելենա Բոնները, որոնք եղել են բոլոր 12 ընտրատեղամասերում և իրենց գնահատականները ներկայացրել արձանագրության մեջ: Հանրաքվեի ավարտից հետո արդյունքները պարկով գմռսած վիճակում ուղարկվել են Ստեփանակերտ¹:

Միջազգային դիտորդների հրավիրումը, մասնակցությունը և գնահատականը

Անկախության հանրաքվեն միջազգային չափանիշներին համապատասխան և արտասահմանյան երկրների ներկայացուցիչների ներկայությամբ անցկացնելու նպատակով ԼՂՀ ժողպատգամավորների խորհրդի 1991թ.-ի նոյեմբերի 27-ի որոշման 4-րդ կետով ամրագրվեց, որ «Համաձայն «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի 5-րդ հոդվածի՝ Լեռնային Ղարաբաղի տարածք դիտորդներ հրավիրել միութենական հանրապետություններից, արտասահմանյան պետություններից և միջազգային կազմակերպություններից» (ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 1, կ. 50, պ. մ. 296, թ. 1): «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրաքվե անցկացնելու մասին» ժամանակավոր կանոնակարգի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանրաքվեի անցկացման ընթացքում ապահովվում է հրապարակայնությունը, հանրության և դիտորդների (այդ թվում՝ այլ պետություններից և միջազգային կազմակերպություններից) մասնակցությունը»:

Դիտորդներին հրավիրելու գործընթացին ներգրավվել են բոլոր պետական կառույցներն ու Երևանում գործող կազմակերպությունները: Այդ աշխատանքի

¹ Այս զարգացումների մասին հեղինակին պատմել է Յուրի Յովհաննիսյանը, որ այդ ժամանակ եղել է «Արցախ» հայրենակցական միության նախագահը:

կատարմանն իրենց մասնակցությունն են բերել նաև արտերկրների դեսպանատներն ու ներկայացուցչությունները, որոնք իրենց երկրների համապատասխան կառույցներին էին փոխանցում հանրաքվեին մասնակցելու՝ ԼՂՀ իշխանությունների հրավերը: Հետաքրքրականն այն է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, հանրաքվեի և ընտրությունների հետ կապված որևէ միջազգային պարտավորություն չունենալով հանդերձ, այդ գործընթացները դիտարկելու հրավերներ է ուղարկել միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին:

ԼՂՀ անկախության հանրաքվեին մասնակցել են 50-ից ավելի միջազգային դիտորդներ ու լրատվամիջոցների ներկայացուցիչներ¹, որոնք հանրաքվեի ավարտից հետո կազմել են համատեղ արձանագրություն, իսկ նրանցից շատերն առանձին խմբերով եղել են տարբեր բնակավայրերում և կազմել առանձին ակտեր: Այդ ակտերում առանձնակի շեշտադրվում է հանրաքվեի կազմակերպման ու անցկացման համապատասխանությունը և՛ միջազգային իրավունքին, և՛ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրաքվե անցկացնելու մասին» ժամանակավոր կանոնակարգին, քվեաթերթիկներ՝ 3 լեզուներով կազմված լինելու, քվեարկությունը սահմանված ժամին սկսելու ու ավարտելու մասին և այլն: Ընդ որում, Ստեփանակերտում, Մարտունիում, Հադրուբում դիտորդներն արձանագրել են Ադրբեյջանի կողմից գնդակծության ներքո հանրաքվեին ընտրողների մասնակցության, ինչպես նաև դրանց արդյունքում քաղաքացիների սպանվելու փաստեր (ք.Ստեփանակերտ, գ.Զրակուս): Հատկանշականն այն էր, որ Անկախության հանրաքվեի և ժողպատգամավորների ընտրություններից առաջ՝ նույն օրը և հաջորդող օրերին, Ադրբեյջանը առանձնակի ակտիվությամբ հրթիռահրետակոծում էր ԼՂՀ ամբողջ տարածքը, ինչի մասին վկայում են 1991 թ. ԼՂՀ ներքին գործերի վարչության օպերատիվ ամփոփագրերն (ԼՂՀ ԿԱ ԼՂՀ ոստիկանության արխիվ) ու դիտորդների արձանագրած փաստերը:

Հանրաքվեի մասին պահպանվել են որոշ նյութեր, այդ թվում՝ կադրեր միջազգային դիտորդներ Յուրի Աֆանասևի և Վլադիմիր Սմոլնովի հարցազրույցից (Բաղդյան Վարդգես 98): Խոսելով հանրաքվեի օրվա և կարևորության մասին՝ Վլադիմիր Սմոլնովը տեսակետ է հայտնել, որ. «... հանրաքվեի օրվա ընտրությունն ամենևին էլ պատահական չէ, և հանրաքվեի կազմակերպիչներն այն զուգադիպեցրել են այդ խորհրդանշական օրվա հետ՝ մարդու իրավունքների պաշտպանության օրվան, որովհետև ուրիշ ոչ մի տեղ այնքան չեն ոտնահարվում այդ իրավունքները, որքան Ղարաբաղում» (Բաղդյան Վարդգես 98):

Անկախության հանրաքվեի ավարտից հետո դիտորդները կազմել են «ԼՂՀ անկախության մասին հանրաքվեի արդյունքների մասին» ակտ, որում անդրադարձել են հանրաքվեի ողջ գործընթացին, որն իրականացվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրաքվե անցկացնելու մասին» ժամանակավոր կանոնակարգին համապատասխան: Ըստ նրանց համատեղ կարծիքի՝ քվեարկության արարողակարգի, քվեաթերթիկների տրամադրման, դրանց ձևակերպման, ձայների հաշվման ընթացակարգում դիտորդների կողմից խախտումներ չեն արձանագրվել (Օհանջանյան Մ. Անկախության քայլերը..):

Հանրաքվեի արդյունքների որոշման համար ամենից առաջ անհրաժեշտ էր լուծել ժողովրդական քվեարկության անցկացման վավերականության մասին հարցը: Ակնհայտ է, որ հանրաքվեի վավերականության ընդհանուր պայմաններն են համարվում դրա անցկացման ընթացքում այնպիսի խախտումների անթույլատրելիությունը, որոնք կարող էին ազդել դրա արդյունքների վրա: Դրա հետ

¹ Դիտորդների թվում էին նախկին Խորհրդային Հանրապետությունների ներկայացուցիչներ, ԽՍՀՄ-ի Գերագույն խորհրդի, Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության, Մոսխորի կատգամավորներ, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների ու օտար պետությունների ներկայացուցիչներ:

միաժամանակ օրենսդրությունը երբեմն սահմանում է քվեարկությանն ընտրողների մասնակցության ստորին շեմը:

Հանրաքվեում սովորաբար ընդունված է համարվում այն որոշումը, որի օգտին տրված են քվեարկությանը մասնակցած ընտրողների վավեր ձայների պարզ մեծամասնությունը: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրաքվե անցկացնելու մասին» ժամանակավոր կանոնակարգի 13-րդ հոդվածի 3-րդ ենթակետի համաձայն՝ «Հանրաքվեի դրված հարցը համարվում է ընդունված, եթե քվեարկությանը մասնակցել են քվեարկության համար ցուցակներ մտցված անձանց կեսից ավելին, և հանրաքվեի արդյունքում դրան հավանություն են տվել քվեարկությանը մասնակցած բնակիչների 2/3-ը: Զվեարկության արդյունքներն ամփոփվում են հանրաքվեի Կենտրոնական հանձնաժողովի նիստում, ձևակերպվում են արձանագրության տեսքով, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները, և հրապարակվում է»:

Համաձայն 1989թ.-ի համամիութենական մարդահամարի տվյալների՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ապրում էր 189.029 մարդ, որոնցից 145.450-ը՝ հայեր, 40.632-ը՝ ադրբեջանցիներ և 2.417-ը՝ ռուսներ և ուկրաինացիներ (Де-факто образования постсоветского пространства):

Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական տվյալների՝ ԼՀՀ անկախության հանրաքվեին 132328 ընտրողներից մասնակցել են 108736-ը (82.2 %), որոնց ճնշող մեծամասնությունը՝ 108615 մարդ կամ 99,89%-ը, կողմ է արտահայտվել ԼՀՀ անկախությանը: Հանրաքվեին դրված հարցին դեմ է արտահայտվել 24 ընտրող կամ 0,02%-ը, իսկ անվավեր է ճանաչվել 95 քվեաթերթիկ կամ 0,09%-ը (ԼՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայք):

Չնայած այն հանգամանքին, որ հանրաքվեի օրը ադրբեջանական ուժերը փորձել են խոչընդոտել համապետական կարևորագույն միջոցառման բնականոն ընթացքը, սակայն արցախահայությունը, լի վճռականությամբ և տոգորված անկախությունը վերականգնելու ձգտումով, մասնակցել է հանրաքվեին, իսկ հանրաքվեին չմասնակցած զանգվածը, ինչպես արդեն նշվեց, կազմել են ադրբեջանցիները:

Ադրբեջանի և Նրա «գիտնականների» զեղծարարությունների մասին

Սույն աշխատանքի շրջանակներում թեև մենք խնդիր չենք դրել իրավական գործընթացներին տալ քաղաքական գնահատական, բայց և այնպես քաղաքական որոշ խեղաթյուրված ու անհիմն մեկնաբանություններին պետք է տանք իրավական գնահատական: Այսպես, ադրբեջանցի որոշ «գիտնականներ» փորձում են «ապացուցել», թե իբր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցած հանրաքվեն անօրինական է, զուրկ որևէ իրավական հիմքից և այլև, սակայն չեն ներկայացնում կոնկրետ իրավական փաստարկներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը. «Լեռնային Ղարաբաղում 1991 թ. դեկտեմբերի 10-ին հանրաքվեի անցկացումը, որի արդյունքներով գոյություն չունեցող Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվել է անկախ պետություն, համարվում է ապօրինի և ինչ-որ իրավական հետևանքներ չի առաջացնում» (И.М.Маммадов, Т.Ф.Мусаев 69): Ադրբեջանի ԱԳՆ մամուլի և տեղեկատվական քաղաքականության վարչության ղեկավար Թաիր Տազիզադեի կարծիքով՝ «... անիրական է խոսել հանրաքվեի անցկացման մասին, մինչև չվերականգնվի Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական կազմը, մինչև երկու համայնքների համար հավասար պայմաններ չստեղծվեն: Դրան հավելած Ադրբեջանի սահմանադրությունը չի նախատեսում հանրաքվեի անցկացում առանձին վերցրած շրջանում: Ըստ մեր երկրի գլխավոր օրենքի՝ հանրաքվեն կարող է լինել միայն համազգային և Նրան պետք է մասնակցեն երկրի ամբողջ բնակչությունը» (Карабахский конфликт: азербайджанский взгляд 169): Այստեղ տեղին է ներկայացնել ականավոր միջազգայնագետ, պրոֆեսոր Յու. Բարսեղովի հետևյալ

տեսակետը. «... Չնայած Ադրբեջանական ԽՍՀ կառավարության նպատակաուղղված ժողովրդագրական քաղաքականության արդյունքում նրանց թվաքանակը 20-րդ դարի 20-ական թվականների սկզբից մինչև դարաբաշխական շարժման սկիզբը 7000-ից հասել է 30 հազարի, այն կազմել է ընդամենը 23 % և, բնականաբար, հանրաքվեի արդյունքների վրա ազդել չէր կարող» (Ю. Барцегов 13), բացի այդ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կողմից ստեղծվել էին բոլոր հավասար պայմանները, սակայն դրանից հրաժարվել են ադրբեջանցիները՝ չմասնակցելով հանրաքվեին: Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծության և տեղեկատվական ապահովման բաժնի վարիչ Էլնուր Ալյանովի խոսքերով՝ «... անհնար է ճանաչել 1991 թ. դեկտեմբերի 10-ին Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջանում անօրինական և ինքնակամ անցկացված այսպես կոչված հանրաքվեի արդյունքները, քանի որ այն, համաձայն իրավաբանների փորձագիտական եզրակացության, անցկացվել է ԽՍՀՄ օրենսդրության խախտմամբ, չի ունեցել իրավական հիմք՝ չխոսելով արդեն միջազգային իրավունքին համապատասխանելու մասին» (Азербайджан исключит):

Հանրաքվեի վերաբերյալ ամբողջ կյուբի մանրակրկիտ ու հետևողական ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հանրաքվեի իրավաչափությունը ժխտող տեսակետները զուրկ են որևէ հիմնավորումից, դրանք սոսկ զգացական հարթության վրա են, անտրամաբանական և ուղղակի հնարավոր չէ որպես փաստարկ դիտարկելը:

Կարևոր է ուշադրությունը դարձնել ևս մի կարևոր հանգամանքի, որը վերաբերում է Ադրբեջանում անցկացված հանրաքվեին: Ինչպես հայտնի է, 1991 թ.-ի օգոստոսի 30-ին Ադր.ԽՍՀ գերագույն խորհուրդն ընդունել է Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին հռչակագիր, որին հաջորդել է հոկտեմբերի 18-ին Ադրբեջանի Հանրապետության ԳԽ-ի կողմից «Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության մասին» սահմանադրական ակտի ընդունումը, իսկ դեկտեմբերի 29-ին Ադրբեջանում անցկացվել է համաժողովրդական քվեարկություն: Ընդ որում, հանրաքվեի քվեաթերթիկներում մտցվել էր միայն մեկ հարց. «Դուք կո՞ղմ եք «Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության մասին» սահմանադրական ակտին»:

Հիշյալ հանրաքվեն Ադրբեջանի անկախության վերականգնման ընթացքում կիրառված «իրավական» գործընթացներից ամենախայտառակն ու անիմաստն է, քանի որ «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի գլխավոր պահանջն այն էր, որ միութենական հանրապետությունում անցկացվի հանրաքվե, իսկ Ադրբեջանի հանրաքվեն անցկացվել է 1991 թ.-ի դեկտեմբերի 21-ին՝ Ալվա-Աթայի՝ ԱՊՀ հռչակագրի ընդունումից 8 օր հետո, երբ արդեն ԽՍՀՄ-ը փաստացի և իրավաբանորեն գոյություն չունեին և դրա անցկացումն անտրամաբանական ու անիմաստ էր:

Նախքան այդ հանրաքվեն Ադրբեջանում անցկացվել է ևս մեկը: 1991 թ.-ի մարտի 17-ին ԽՍՀՄ տարածքում անցկացվել է ԽՍՀՄ պահպանման հարցով հանրաքվե, որի մասնակիցների 76.4 %-ը կողմ է արտահայտվել ԽՍՀՄ պահպանմանը: Այդ հանրաքվեին մասնակցել է նաև Ադրբեջանի բնակչությունը, որի 93.3 %-ը նույնպես կողմ է արտահայտվել Միության պահպանմանը: Ընդ որում, ինչպես այս հանրաքվեին, այնպես էլ սեպտեմբերի 8-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններին չի մասնակցել ԼՂՀ բնակչությունը: Եթե ընտրությունների պարագայում ամեն ինչ պարզ է, քանի որ այդ ժամանակ ԼՂՀ-ն արդեն հռչակված պետություն էր, ապա հանրաքվեի պարագայում իրերի դրությունն անհասկանալի է: 1991 թ.-ի մարտի 17-ի և դեկտեմբերի 29-ի հանրաքվեների միջև կա հակասություն, քանի որ առաջինի դեպքում ադրբեջանցիները կողմ են արտահայտվել ԽՍՀՄ պահպանմանը, իսկ երկրորդ դեպքում՝ հաստատել «Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության մասին» սահմանադրական ակտը, որն ինքնին բացառում է նախորդի իրավական հետևանքները: Ընդ որում, դա

միջազգային պրակտիկայում եզակի դեպք է: Ի դեպ, ԽՍՀՄ պահպանման հանրաքվեին չեն մասնակցել Հայաստանը, Վրաստանը, Մոլդովան և Մերձբալթյան հանրապետությունները:

Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրյալ կյուրթ՝ նպատակահարմար ենք համարում առաջադրել հետևյալ եզրահանգումները՝

- ԼՂՀ անկախության հանրաքվեի իրավական արժեքը նախ և առաջ այն է, որ դրա արդյունքում ժողովրդի միաձայն քվեի միջոցով իրավաբանորեն հաստատվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական և իրավական պետության կառուցման հայեցակարգը, այսինքն՝ այդ պետաիրավական ակտը բավարար հիմք է հանդիսացել անկախ պետականություն և հիմնադրելու համար,

- անկախության հանրաքվեի իրավական արժեքը նաև նրանում է, որ, չնայած Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հանրաքվեի և ընտրությունների հետ կապված որևէ միջազգային պարտավորություն չուներ և հիմա էլ չունի, այնուհանդերձ դրա անցկացման ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու հրավերներ է ուղարկել միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին, իսկ վերջիններս իրենց կազմած «ԼՂՀ անկախության մասին հանրաքվեի արդյունքների մասին» ակտում փաստել են, որ քվեարկության արարողակարգի, քվեաթերթիկների տրման, դրանց ձևակերպման, ձայների հաշվման ընթացակարգում դիտորդների կողմից խախտումներ չեն հայտնաբերվել, ինչը ենթադրում է, որ ամբողջ գործընթացը տեղի է ունեցել ԽՍՀՄ Սահմանադրությանը, օրենսդրությանը, տեղական իրավական ակտերին, ինչպես նաև միջազգային իրավունքի տառին ու ոգուն խիստ համապատասխան,

- հանրաքվեի իրավական արժեքը դրսևորվում է նաև նրանում, թե որքանով է իրագործվում դրա միջոցով ընդունված որոշումը, քանի որ պատմությանը հայտնի են դեպքեր, երբ քաղաքացիները վստահությունը կորցնում են այդ ինստիտուտի նկատմամբ՝ ընդունված որոշման չիրացվելու պատճառով¹,

- ԼՂՀ անկախության հանրաքվեն նոր իրողություն ու մշակույթ դարձավ արցախահայրության իրավական կենցաղում և նպաստավոր հիմք հանդիսացավ ԼՂՀ-ում անմիջական ժողովրդավարության ձևավորման ու արմատավորման, ինչպես նաև նոր ինստիտուտի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ստեղծման համար, որը պետք է համակարգեր այդ բոլոր գործընթացները: Տարիներ անց վստահաբար կարելի է ասել, որ ԼՂՀ իրավաքաղաքական պատմության մեջ խոշորագույն միջոցառում համարվող Անկախության հանրաքվեի և ԼՂՀ առաջին գումարման Գերագույն Խորհրդի ընտրությունների անցկացման նպատակով ստեղծված Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր առաքելությունը կատարել է անբասիր ձևով,

- ԼՂՀ ժողովրդական պատգամավորների Խորհրդի գործկոմի ընդունած որոշումների ուսումնասիրությունն անառարկելիորեն վկայում է, որ մի կողմից դրանց հիմքում ընկած էին միջազգային իրավունքի դրույթները, ԽՍՀՄ Սահմանադրությունը և օրենսդրությունը, որոնք «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագրի եզրափակիչ մասի

¹ Խոսքն այն մասին է, որ 1991 թ.-ի մարտի 17-ին անցկացվել է հանրաքվե՝ ԽՍՀՄ որպես ինքնիշխան հանրապետությունների բարեփոխված դաշնության պահպանման նպատակով, որին մասնակցած ընտրողների ճշշող մեծամասնությունը (70,12 %-ը) կողմ է արտահայտվել: Սակայն 1991 թ.-ի դեկտեմբերին դադարեց գոյություն ունենալ ԽՍՀՄ-ը: Արդյունքում քաղաքացիները թերահավատորեն էին մոտենում հանրաքվեի՝ որպես պետական նշանակության հարցերով որոշում ընդունելուն ազդելու միջոցի արդյունավետությանը: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Каденко В.В. Институт референдума в процессе политико-правовой легитимации основного закона России / Юристы – Правовед, 2009, № 5, էջ 23.

համաձայն՝ «չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և Հանրապետության առանձնահատկություններին», իսկ մյուս կողմից հետևողական վերաբերմունք կար այդ որոշումները հանրության սեփականությունը դարձնելու, տվյալ պարագայում «Խորհրդային Ղարաբաղ»¹ («Սովետսկի Կարաբախ») թերթի և զանգվածային լրատվության այլ միջոցներով բնակչությանը հասու դարձնելու (ԼՂՀ ժողովրդական) ուղղությամբ,

- ԼՂՀ հռչակման օրվանից սկսած Ադրբեջանի դեկավարության կողմից ԼՂՀ-ին առնչվող ցանկացած հակաօրինական քայլի տրվում էր համարժեք իրավական պատասխան, որն էլ ստանում էր օրենսդրական ձևակերպում, մասնավորապես՝ էթե 1991թ.-ի օգոստոսի 30-ին ԱդրիՍՄ Գերագույն Խորհուրդն ընդունել է հռչակագիր «Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին», ապա 3 օր անց դրան հաջորդել է Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների ժողովրդական պատգամավորների կողմից «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագրի ընդունումը: Եթե 1991թ.-ի նոյեմբերի 26-ին Ադրբեջանի ԳԽ որոշում է ընդունում «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը» լուծարելու մասին², ապա հաջորդ օրը գումարվում է ԼՂՀ ժողպատգամավորների Խորհրդի նիստ, որտեղ որոշում է ընդունվում դեկտեմբերի 10-ին անցկացնել անկախության հանրաքվե, դեկտեմբերի 28-ին՝ ժողպատգամավորների ընտրություններ, իսկ նոյեմբերի 28-ի որոշմամբ կազմավորվում է ԼՂՀ Սահմանադրության մշակման հանձնաժողով: Եթե վերոհիշյալ դեպքերում Ադրբեջանի ձեռնարկած քայլերից հետո էր ԼՂՀ-ն համարժեք պատասխան տալիս, ապա ԼՂՀ-ում հայտարարված անկախության հանրաքվեից որոշ ժամանակ անց է միայն Ադրբեջանում կայանում հանրաքվե: Տարօրինակն այն է, որ Ադրբեջանում անկախության տոնը նշվում է հոկտեմբերի 18-ին՝ սահմանադրական ակտի ընդունման օրը, այլ ոչ թե հանրաքվեի օրը, որը, ի դեպ, բազմաթիվ աղբյուրներում չի հիշատակվում կամ թռուցիկ կերպով է հիշատակվում,

- Անկախության հանրաքվեից մի քանի օր անց՝ դեկտեմբերի 28-ին, ԼՂՀ-ում տեղի են ունեցել ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի ընտրությունները, որով հիմք դրվեց օրենսդիր մարմնի ստեղծմանը: Դրան հաջորդել է մինիստրների խորհրդի (կառավարության), իսկ 1994թ.-ի դեկտեմբերի 22-ին՝ Նախագահի ինստիտուտի ստեղծումը, որոնք ներհատուկ են միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող ժամանակակից պետություններին՝ հաշվի առնելով իշխանությունների տարանջատման սկզբունքը, և որոնց վրա դրված էր այդ մարմիններին բնորոշ գործառույթներ, որոնք, տարիների ընթացքում դիմակայելով ժամանակի փորձությանը և ավելի հստակորեն բաժանելով լիազորությունները, իրենց արտահայտությունն են գտել երկրի Հիմնական օրենքում:

¹ Ադրբեջանի կողմից 1992թ.-ի փետրվարի 16-ին Ստեփանակերտ մայրաքաղաքը գնդակոծելու հետևանքով ոչնչացվել է մարզային պետական արխիվի այն մասը, որտեղ պահվում էին նաև «Խորհրդային Ղարաբաղ» թերթի համարները: Հիշյալ թերթի 1991թ.-ի հուլիս-դեկտեմբերի համարները երկար պրպտումներից հետո չենք գտել նաև ՀՀ Ազգային գրադարանում: Սակայն ԼՂՀ ժողպատգամավորների Խորհրդի գործկոմի որոշումները, ինչպես նաև «ԼՂՀ-ում հանրաքվե անցկացնելու մասին» ժամանակավոր կանոնակարգով պարտադիր հրապարակման ենթակա նյութերը թերթի հայերեն ու ռուսերեն համարներում տպագրվելու մասին վկայել են Մաքսիմ Հովհաննիսյանը, Արտաշես Գասպարյանը, Վարդգես Բաղդյանը՝ նրանց հետ ունեցած գրույցի ժամանակ:

² Այդ որոշումից 2 օր անց ԽՍՀՄ Պետխորհրդի 1991թ.-ի նոյեմբերի 28-ի որոշմամբ այն ճանաչվել է հակասահմանադրական, ինչը նշանակում էր, որ հիշյալ որոշումը չունի որևէ իրավաբանական ուժ: Այս մասին տե՛ս «Известия», 28.11.1991г.; А.Манасян, «Конфликт между Азербайджаном и НКР в правовом контексте распада СССР», «Голос Армении», 16.07.1993г.

- Վերջապես Անկախության հանրաքվեն, որպես ժողովրդաիշխանության դրսևորման կարևոր ինստիտուտ, մեծ ներդրում ունեցավ երկրում սահմանադրականության ձևավորման գործում, քանի որ, չնայած ԼՂՀ հռչակումից 15 տարի անց է ընդունվել Սահմանադրությունը, հանրաքվեի ամբողջ գործընթացը եղել է աշխարհում ընդունված սահմանադրական նորմերի պահանջներին խիստ համապատասխան:

Օգտագործված գրականություն

1. Բաղդյան Վարդգես. Տեսողապատկեր: 1988-1994 (ղարբարայան ազատամարտ), Ստեփանակերտ, «Սոնա» գրատուն, 2011: Տեսակյուրը՝ Վարդգես Բաղդյանի «Թերթելով պատմության էջերը» ֆիլմաշարի սկավառակ 1, Կողմ Ա, հաղորդում 9:
2. Օհանջանյան Մուշեղ. Անկախության քայլերը. «Սոնա» գրահրատարակչություն, 1998:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ (այսուհետ՝ ԼՂՀ ՊԱ), ֆ. 1, ց. 2, կ. 28, պ. մ. 309, թ. 61-62:
4. ԼՂՀ ժողովրդական պատգամավորների Խորհրդի գործումի թիվ 5/147 որոշումը, 3/150 որոշման 2-րդ կետը, 6/153 որոշման 2-րդ կետը, 1/154 որոշման 2-րդ կետը և այլն:
5. ԼՂՀ ԿԱ ԼՂՀ ոստիկանության արխիվ:
6. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 1, կ. 50, պ. մ. 296, թ. 1:
7. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 1, կ. 50, պ. մ. 296, թ. 1:
8. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 1, կ. 50, պ. մ. 296, թ. 1:
9. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 1, կ. 50, պ. մ. 296, թ. 1:
10. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, կ. 28, պ. մ. 331, թ. 16:
11. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, կ. 28, պ. մ. 331, թ. 63-64:
12. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, կ. 28, պ. մ. 331, թ. 65:
13. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, կ. 28, պ. մ. 331, թ. 4:
14. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, կ. 28, պ. մ. 331, թ. 63-64:
15. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, կ. 28, պ. մ. 331, թ. 7:
16. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 3, կ. 11, պ. մ. 62, թ. 18:
17. ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայք, <http://cecncr.am>:
18. Азербайджан исключил признание результатов референдума 1991 года в Нагорном Карабахе // <http://www.vestikavkaza.ru/news/politika/oppoz/32125.html>, 27.01.2017.
19. Армяно-азербайджанский конфликт: история, право, посредничество / И.М.Маммадов, Т.Ф.Мусаев. 2-е изд.-Тула: Гриф и К, 2007.
20. Барсегов, Юрий. Исторические и правовые основания разрешения проблемы Нагорного Карабаха.
21. Де-факто образования постсоветского пространства: двадцать лет государственного строительства, Аналитические доклады Института Кавказа, №5, январь 2012, С.Маркедонов; Науч. ред. А.Искандарян, Ер., Институт Кавказа, 2012.
22. Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР» № 1409-1 от 3 апреля 1990 года, <http://sevkrimrus.narod.ru/ZAKON/1990.htm>, 01.09.2021.
23. «Известия», 28.11.1991г.; А.Манасян, «Конфликт между Азербайджаном и НКР в правовом контексте распада СССР», «Голос Армении», 16.07.1993г.
24. Каденко В.В. Институт референдума в процессе политико-правовой легитимации основного закона России / Юристы – Правовед, 2009, № 5.
25. Карабахский конфликт: азербайджанский взгляд: Сборник/сост.: ИА REGNUM.-М.: Издательство «Европа», 2006.

Work cited

1. Armjano-azerbajdzhanskij konflikt: istorija, pravo, posrednichestvo [The Armenian-Azerbaijani conflict istorija history, law, mediation] / I.M.Mammadov, T.F.Musaev. 2-e izd.-Tula: Grif i K, 2007.
2. Azerbajdžhan isključil priznanie rezul'tatov referendumu 1991 goda v Nagornom Karabahe [Azerbaijan has ruled out recognition of the results of the 1991 referendum in Nagorno-Karabakh] // <http://www.vestikavkaza.ru/news/politika/oppoz/32125.html>, 27.01.2017.
3. Baghryan Vardges. Tesadasht: 1988-1994 (gharabaghyan azatamart) [Field of view. 1988-1994 (Karabakh Liberation War)], Step'anakert, «Sona» gratun, 2011: Tesanyut'y' Vardges Baghryani «T'ert'elov patmut'yan e'jery'» [Flipping through the pages of history] filmashari skavar'ak 1, Koghm A, haghordum 9.
4. Barsegov Yuirj. Istoricheskie i pravovye osnovanija razreshenija problemy Nagornogo Karabaha [Historical and legal grounds for resolving the Nagorno-Karabakh problem]
5. De-fakto obrazovanija postsovetskogo prostranstva: dvadcat' let gosudarstvennogo stroitel'stva, Analiticheskie doklady Instituta Kavkaza, №5, janvar' 2012 [De facto formation of the post-Soviet space: twenty years of state-building, Analytical reports of the Institute of the Caucasus, No. 5, January 2012], S.Markedonov; Nauch. red. A.Iskandarjan, Er., Institut Kavkaza, [] 2012.
6. «Izvestija», 28.11.1991g.; A.Manasjaan, «Konflikt mezhdru Azerbajdžhanom i NKR v pravovom kontekste raspada SSSR», «Golos Armenii», [The Conflict between Azerbaijan and Nagorno-Karabakh pravovom in the context of the collapse of the Soviet Union", "Golos Armenii"] 16.07.1993g.
7. Kadenko V.V. Institut referendumu v processe politiko-pravovoj legitimacii osnovnogo zakona Rossii [Institute of referendum in the process of political and legal legitimization of the basic law of Russia] / Jurist' – Pravoved, 2009, № 5, e'j 23.
8. Karabahskij konflikt: azerbajdžzhanskij vzgljad: Sbornik/sost.: IA REGNUM.-M.: Izdatel'stvo «Evropa» [The Karabakh conflict Azerbaijani view], 2006.
9. Ler'nayin Gharabaghi Hanrapetut'yan petakan arxiv [State Archive of the Nagorno-Karabakh Republic] (aysuhet` LGhH PA), f. 1, c. 2, k. 28, p. m. 309, t'. 61-62.
10. LGhH Kentronakan y'ntrakan hand'najhoghovi pashtonakan kayq [Official website of the NKR Central Election Commission], <http://cecnkr.am>.
11. LGhH jhoghovrdakan patgamavorneri Xorhrdi gorc'omi t'iv 5/147 oroshumy', 3/150 oroshman 2-rd kety', 6/153 oroshman 2-rd kety', 1/154 oroshman 2-rd kety' & ayln. [Decision of the Council of People's Deputies of the NKR No. 5/147, paragraph 2 of decision 3/150, paragraph 2 of decision 6/153, paragraph 2 of decision 1/154, etc.]
12. LGhH KA LGhH vostikanut'yan arxiv. [NKR Police Archive]
13. LGhH PA, f. 1, c. 1, k. 50, p. m. 296, t'. 1.
14. LGhH PA, f. 1, c. 1, k. 50, p. m. 296, t'. 1.
15. LGhH PA, f. 1, c. 1, k. 50, p. m. 296, t'. 1.
16. LGhH PA, f. 1, c. 1, k. 50, p. m. 296, t'. 1.
17. LGhH PA, f. 1, c. 2, k. 28, p. m. 331, t'. 16.
18. LGhH PA, f. 1, c. 2, k. 28, p. m. 331, t'. 63-64.
19. LGhH PA, f. 1, c. 2, k. 28, p. m. 331, t'.65.
20. LGhH PA, f.1, c.2, k.28, p.m.331, t'.4.
21. LGhH PA, f.1, c.2, k.28, p.m.331, t'.63-64.
22. LGhH PA, f.1, c.2, k.28, p.m.331, t'.7.
23. LGhH, PA, f. 1, c. 3, k. 11, p. m. 62, t'. 18.
24. O'hanjanyan Mushegh. Ankaxut'yan qaylery'. [Steps to Independence] «Sona» grahratarakchut'yun, 1998.

25. Zakon SSSR «O porjadke reshenija voprosov, svjazannyh s vyhodom sojuznoj respubliki iz SSSR» [The Law of the USSR "On the procedure for resolving issues related to the withdrawal of the Union Republic from the USSR"] № 1409-1 ot 3 aprelja 1990 goda, <http://sevkrimrus.narod.ru/ZAKON/1990.htm> (01.09.2021).

THE ROLE OF THE INDEPENDENCE REFERENDUM OF DECEMBER 10, 1991 IN THE FORMATION OF THE REPUBLIC OF ARTSAKH

AVETIK HARUTYUNYAN

Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA),

Founder-Chairman;

«Artsakh» Research Institute, Director;

Journal «Scientific Artsakh», Editor-in-Chief;

Ph.D. in Law, Associate Professor,

Stepanakert, The Republic of Artsakh (NKR)

The purpose of the article is to identify the legal foundations, prerequisites, progress, results of the referendum on independence and the assessments given by the competent structures.

To achieve this goal, the following tasks were put forward: to study archival documents concerning the referendum of December 10, 1991, the opinions of international observers and, comparing the current legislation of the NKR with the USSR and international law, to give an unbiased assessment of the referendum process.

Methods of analysis, synthesis, induction, deduction and historical-comparative methods were used in the course of the study.

The main conclusion of the study is that the legal value of the referendum on the independence of the NKR, first of all, is that as a result of this, the Concept of building the Nagorno-Karabakh Republic as a sovereign, democratic and legal state was legally approved by the unanimous vote of the people, that is, this state-legal act became a sufficient basis for the creation of an independent statehood.

In addition, the study of the decisions adopted by the Executive Committee of the Council of People's Deputies of the NKR indicates that, on the one hand, they were based on the provisions of international law, the Constitution and legislation of the USSR, which, according to the final part of the declaration «On the Proclamation of the NKR», «do not contradict the goals and principles of this declaration and the peculiarities of the Republic», and on the other hand, there was a consistent attitude to the transformation of these decisions into the property of society, in this case, in the direction of informing the population via the «Soviet Karabakh» newspaper and other mass media.

Keywords: *Nagorno-Karabakh (Artsakh) Republic, independence referendum, December 10, 1991, International observer, Declaration «On the Proclamation of the NKR», USSR Law «On the Procedure for Resolving Issues Related to the Withdrawal of the Union Republic from the USSR», Central Election Commission, falsification of Azerbaijan.*

РОЛЬ РЕФЕРЕНДУМА 10 ДЕКАБРЯ 1991 ГОДА В ПРОЦЕССЕ ФОРМИРОВАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ

АВЕТИК АРУТЮНЯН

*учредитель и председатель Объединения молодых ученых и
специалистов Арцаха (ОМУСА),
директор Научно-исследовательского института «Арцах»,
главный редактор журнала «Научный Арцах»,
кандидат юридических наук, доцент,
г. Степанакерт, Республика Арцах*

Целью статьи является представить правовые основы, предпосылки, процесс проведения референдума о независимости, его результаты, а также его оценки со стороны правомочных структур.

Для достижения целей были поставлены следующие задачи: изучить архивные документы о референдуме 10 декабря 1991 года и отзывы международных наблюдателей и дать объективную оценку процессу референдума, основываясь на сопоставлении законодательств СССР и НКР с нормами международного права.

В ходе исследования были использованы методы анализа, синтеза, индукции, дедукции, а также сравнительно-исторический метод.

Основной вывод исследования заключается в том, что правовая основа референдума о независимости НКР, в первую очередь, заключается в том, что единогласным принятым голосованием народа было юридически обосновано положение о провозглашении Нагорно-Карабахской Республики как суверенного, демократического и правового государства, то есть этот государственно-правовой акт стал достаточной основой для создания независимой государственности.

Кроме того, изучение решений, принятых исполкомом Совета народных депутатов НКР, свидетельствует о том, что с одной стороны, в их основе лежали положения международного права, Конституция и законодательство СССР, которые, согласно заключительной части декларации «о провозглашении НКР», «не противоречат целям и принципам настоящей Декларации и характеристикам Республики», с другой стороны, наблюдался последовательный подход к тому, чтобы эти решения стали достоянием общественности, например, через газету «Хордаин Карабах» («Советский Карабах») и другие средства массовой информации.

Ключевые слова: *Нагорный Карабах (Арцах), Республика, референдум о независимости, 10 декабря 1991, международный наблюдатель, Декларация «О независимости НКР», Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР», Центральная избирательная комиссия, фальсификация Азербайджана.*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՏԵՐԱԶՄՈՒՄ*¹

ՀՏԴ 341.1/8

DOI: 10.52063/25792652-2021.3-121

ՄԱՐԻԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գորիսի պետական համալսարանի և
Մեսրոպ Մաշտոց համալսարանի դասախոս,
Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ,
ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
mariamgrigoryan93@yandex.ru

2020թ.-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողությունների հետևանքով կոպտորեն խախտվեցին ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացի հիմքում ընկած միջազգային իրավունքի այնպիսի հիմնական (jus cogens) սկզբունքներ, ինչպիսիք են՝ վեճերի խաղաղ լուծման սկզբունքը և ազգերի ինքնորոշման իրավունքի հարգման սկզբունքը, այլ նաև մարդու իրավունքների, միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի այլ հիմնարար նորմերը և սկզբունքները:

Հոդվածի նպատակն է հետազոտել և վեր հանել Արցախյան երրորդ պատերազմում միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների խախտումները: Այդ նպատակով ուսումնասիրվել են համապատասխան միջազգային իրավական ակտեր ու տեսական գրականություն, ինչպես նաև միջազգային իրավունքի ու միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների խախտումների կոնկրետ դեպքեր:

Հետազոտության իրականացման ընթացքում հեղինակի կողմից կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (համեմատական-իրավական) սկզբունքներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ Արցախյան երրորդ պատերազմում տեղի են ունեցել միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների կոպտագույն խախտումներ:

Հիմնաբառեր՝ միջազգային իրավունք, միջազգային հանրային իրավունք, սկզբունք, Արցախի Հանրապետություն, պատերազմ:

Նախաբան

Ադրբեջանի կողմից սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմական գործողությունները զուգորդվեցին 1949թ. ժնևյան կոնվենցիաների և դրանց լրացուցիչ արձանագրությունների, Մարդու իրավունքների 1948թ. համընդհանուր

* Հոդվածը ներկայացվել է 01.11.2021թ., գրախոսվել՝ 15.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Հետազոտությունն իրականացվել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ՝ SCS20-009 գիտական թեմայի շրջանակներում:

հռչակագրի, Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրի, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի, 1975թ. Հելսինկյան եզրափակիչ ակտի և բազմաթիվ այլ միջազգային փաստաթղթերով նախատեսված իրավադրույթների կոպտագույն խախտումներով:

Վերոնշյալ փաստաթղթերի միջազգային իրավական բովանդակությունից միանշանակ բխում է, որ հարձակողական ռազմական գործողությունների սանձազերծումը, ինչպես նաև այդ գործողությունների ընթացքում մարդու իրավունքների խախտումները ոչ մի հիմքով չեն կարող արդարացվել: Ինչպես հայտնի է, ՄԱԿ-ի կանոնադրությունը, որպես հիմնարար սկզբունք բացառելով միջպետական հարաբերություններում ուժի և ուժի սպառնալիքի կիրառման իրավունքը, անկախ դրա մոտիվացիայից, որպես բացառություն թույլատրում է ինքնապաշտպանության նպատակով ուժի դիմել, եթե ՄԱԿ-ի անդամը ենթարկվել է հարձակման (հոդվ. 51):

ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի նույնիսկ ամենապարզունակ վերլուծությունն անգամ չի կարող հիմք հանդսանալ, որ որևէ պետություն թեկուզ իր շահերից բխող իրավունքները վերականգնի ռազմական ագրեսիայի միջոցով: Ավելին՝ ՄԱԿի կանոնադրության 1-ին հոդվածի 1-ին կետը, ի թիվս այլնի, պահանջում է՝ «... խաղաղ միջոցներով, արդարության և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնելու միջազգային վեճերի կամ խաղաղության համար վտանգավոր իրավիճակների շտկմանը կամ կարգավորմանը»: Այլ կերպ ասած՝ ժամանակակից միջազգային իրավունքը լիովին մերժում է պատերազմի իրավունքը որպես միջազգային վեճերի լուծման գործիք կիրառելու հնարավորությունը:

Ադրբեջանը, խախտելով միջազգային իրավունքի այս անվիճելի հրամայականը, իր ագրեսիվ գործողություններով, ողջ մարդկության լուռ համաձայնությամբ ըստ էության «վերախմբագրեց» միջազգային իրավունքի *jus cogens* սկզբունքները և ձևավորեց բավականին վտանգավոր նախադեպ:

Ադրբեջանի փորձը իր տարածքների մի մասը իր իսկ ագրեսիայի հետևանքով հայկական կողմի իրավագործության ներքո հայտնվելու հանգամանքը որակելով որպես «շարունակական օկուպացիա»՝ ինչպես փաստական, այնպես էլ իրավաբանական առումով հիմք չի կարող հանդիսանալ պնդելու, որ այդպես տեղի է ունեցել «շարունակական հարձակում» Ադրբեջանի վրա: Ավելին՝ միջազգային իրավունքի տեսակետից նման իրավիճակը չէր կարող հիմք հանդիսանալ հենվելով ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի վրա՝ ակներևությամբ իրականացվող արտաքին ագրեսիան ձևակերպել որպես ինքնապաշտպանական պատերազմ կամ «ազատագրական պատերազմ»:

Միջազգային իրավունքի առումով իրավաչափ չէ նաև Բաքվի պնդումը, երբ իր ագրեսիան փորձում է արդարացնել՝ նաև վկայակոչելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1993թ. Չորս բանաձևերը (Резолюции Совета Безопасности ООН, Ситуация в отношении Нагорного Карабаха): Նշված բանաձևերը ընդամենը կոչ են անում դադարեցնել զինված գործողությունները, արդյունավետորեն կատարել հրադադարի պայմանագրերը և շարունակել որոնել «հակամարտության բանակցային լուծում»:

Այն, որ չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերին, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը երկար տարիներ հնարավոր չէրավ լուծել, ոչ մի կերպ Ադրբեջանին իրավունք չէր տալիս դիմելու ինքնօգնության և պարտադրել իր դիրքորոշումը բռնության միջոցով: Հողի նկատմամբ վավեր պահանջը չի արդարացնում ուժի գործադրումը (Reports of international arbitral awards, *Jus Ad Bellum - Ethiopia's*):

Հարկ է նշել, որ Ադրբեջանը, ի տարբերություն Հայաստանի, չի հանդիսանում 1977թ. ժնևի կոնվենցիաներին կից I և II լրացուցիչ արձանագրությունների մասնակից: Մինչդեռ Արցախի Հանրապետությունը, չլինելով միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ, վաղօրոք հայտարարել է իր պատրաստակամությունը բարեխղճորեն կատարելու ինչպես մարդու իրավունքների միջազգային իրավունքի,

այնպես էլ միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ ժնկյան կոնվենցիաների և սովորութային նորմերի պահանջները:

Միջազգային իրավունքի սկզբունքների խախտումները

Նշված ժնկյան Լրացուցիչ արձանագրություններին Ադրբեջանի չմիանալու հանգամանքը ոչ մի կերպ չի կարող արդարացնել կամ մեղմացնել այդ պետության հանցավոր գործողությունները Արցախյան պատերազմում, քանի որ I և II լրացուցիչ Արձանագրություններով Նախատեսված իրավակարգավորումները փոխկապակցված են միջազգային սովորույթային իրավունքի այն դրույթների հետ, որոնք կարգավորում են զինված հակամարտությունների հետ կապված հարաբերությունները և արգելում են իրականացնել ռազմական հանցագործություններ ընդհանրապես, այդ թվում՝ նաև՝ իր անկախության համար պայքարող ազգերի ու ժողովուրդների նկատմամբ: Ասվածի համատեքստում պետք ընգծել, որ ժնկյան կոնվենցիաներին կից լրացուցիչ I արձանագրությունը իրենց ինքնորոշման իրավունքի իրագործմամբ զուգորդվող զինված ընդհարումները դիտարկում է որպես միջազգային բնույթ ունեցող ընդհարումներ (War Crimes Under International Law Committed By Azerbaijani Forces In The Course Of Their Military Operation Against Artsakh (Nagorno Karabakh) And Armenia):

1. Ուժ կամ ուժի սպառնալիք չգործադրելու սկզբունք

Մինչ ժամանակակից միջազգային իրավունքի ձևավորումը պետությունների ինքնիշխանության կարևոր տարրերից էր պատերազմի իրավունքը (jus ad bellum): Պատմությունը վկայում է, որ այս փաստը մարդկության համար ունեցավ ողբերգական հետևանքներ:

Պատերազմը որպես վեճերի լուծման միջոց օգտագործելու արգելքը փորձ արվեց ամրագրել դեռևս 1928թ.-ի օգոստոսի 27-ին Փարիզի պայմանագրում: Այդ փաստաթուղթը կարևոր քայլ էր զավթողական պատերազմների արգելման սկզբունքի՝ որպես միջազգային իրավունքի համընդհանուր նորմի կայացման ճանապարհին: Ավելի ուշ ուժ կամ ուժի սպառնալիք չգործադրելու սկզբունքը վերջնականապես համապարտադիր ուժ ձեռք բերեց ՄԱԿ-ի կանոնադրության ընդունմամբ:

Ըստ Կանոնադրության՝ ուժի սպառնալիքը հակաիրավական է ճիշտ այնպես, ինչպես, ինչպես դրա կիրառումը: Այս դրույթը հաստատվեց նաև ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից (Праваяк 156):

ՄԱԿ-ի Կանոնադրությունը Նախատեսում է զինված ուժի իրավաչափ կիրառման միայն երկու դեպք՝ ինքնապաշտպանության նպատակներով (հոդված 51) և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ՝ խաղաղության սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի դեպքում (հոդված 39 և 42):

Հարկ է նշել, որ միջազգային իրավունքում ուժ հասկացությունը Նախ և առաջ ներառում է ագրեսիվ պատերազմը, որը որակվում է որպես խաղաղության դեմ ուղղված հանցագործություն, ընդ որում՝ դա դիտվում է այնքան վտանգավոր, որ արգելվում է նաև դրա հետ փոխկապակցված ագրեսիվ պատերազմի քարոզչությունը:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1974թ.-ին ընդունված ագրեսիայի բնորոշումը (United Nation. Definition of aggression resolution) պարունակում է գործողությունների ցանկ, որոնք ագրեսիվ գործողության ակտեր են, ընդ որում՝ դրանք ագրեսիայի դրսևորում են անկախ նրանից՝ տեղի՝ Ե ունեցել պատերազմ սկսելու վերաբերյալ պաշտոնական հայտարարություն, թե՞ ոչ:

Ուժի չկիրառման սկզբունքի միջազգային իրավական բովանդակությունը բացահայտելու համար էական նշանակություն ունի ինքնապաշտպանության իրավունքի հստակեցումը: ՄԱԿ-ի կանոնադրությունն այն որակում է որպես պետության անքակտելի իրավունք: Միջազգային դատարանն այս իրավունքը

համարում է յուրաքանչյուր պետության գոյատևման հիմնական իրավունքներից մեկը: Ինքնապաշտպանության իրավունքը պետք է իրականացվի միայն անհրաժեշտության դեպքում, և ձեռնարկվող միջոցները պետք է լինեն համաչափ: Դրանք չպետք է դուրս գան այն սահմաններից, որոնք պահանջվում են ագրեսիան հետ մղելու համար:

ՄԱԿ-ի կանոնադրությունը նախատեսում է ոչ միայն անհատական, այլև հավաքական ինքնապաշտպանության իրավունք, որը կարող է տեղի ունենալ միայն հարձակման ենթարկված պետության խնդրանքով:

Համադրելով Ադրբեջանի իրականացրած ագրեսիան վերոնշյալ միջազգային իրավական իրավադրույթների հետ՝ կարելի է միանշանակ ասել, որ Ադրբեջանի որոշումը՝ ոտնահարել իր իսկ կողմից ստանձնած միջազգային իրավական պարտավորությունները և Արցախի հետ կապված հիմնախնդիրը բացառապես լուծել ռազմական ճանապարհով («Ադրբեջանի Հանրապետության կառարած իրավախախտումները ԼՂՀ-ում և միջազգային կառույցներին դիմելու հնարավորությունները» զեկույց)՝ ագրեսիայի դասական դրսևորում է և որպես միջազգային հանցագործություն՝ վաղ թե ուշ պետք է դատապարտվի պետությունների միջազգային ընտանիքի և միջազգային դատական մարմինների կողմից:

2. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունք

ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամներն իրենց միջազգային վեճերը լուծում են խաղաղ միջոցներով այնպես, որ չվտանգվի միջազգային խաղաղությունը, անվտանգությունն ու արդարությունը:

ՄԱԿ-ի Կանոնադրության 33-րդ հոդվածի համաձայն՝ վեճի մասնակիցները պետք է նախ և առաջ ձգտեն վեճը լուծել բանակցությունների, ուսումնասիրության, միջնորդության, հաշտեցման, արբիտրաժի, դատական քննության, տարածաշրջանային մարմիններին կամ համաձայնություններին դիմելու կամ իրենց ընտրությամբ այլ խաղաղ միջոցներով:

Այսպիսով՝ ՄԱԿ-ի Կանոնադրությունը վեճի լուծման միջոցի ընտրության հարցում պետություններին ընձեռնում է հայեցողության բավականին մեծ հնարավորություն: Բնականաբար, վեճի լուծման միջոցի ընտրության հարցը կողմերը որոշում են փոխադարձ համաձայնությամբ՝ հաշվի առնելով իրենց շահերը և տվյալ միջոցի արդյունավետությունը:

1992թ.-ի փետրվարից Արցախյան հակամարտության խնդրի խաղաղ լուծման գործընթացն իրականացվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից: Ընդ որում, ո՛չ հայկական կողմը և ո՛չ էլ ադրբեջանական կողմը երբեք պաշտոնապես կասկածի տակ չեն դրել ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքների արդյունավետությունը: Այդուհանդերձ, այսօր հավելյալ միջազգային ջանքեր գործադրելու անհրաժեշտություն կա՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափը խթանելու և Լեռնային Ղարաբաղի հակամարտության տևական քաղաքական լուծման շուրջ քննարկումները շարունակելու համար:

3. Պետական սահմանների անխախտելիության սկզբունք

Պետական սահմանների անխախտելիության սկզբունքը նշանակում է, որ յուրաքանչյուր պետություն պարտավոր է ձեռնպահ մնալ ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից, որն ուղղված է այլ պետության միջազգային սահմանները խախտելուն կամ այն որպես միջազգային վեճերը լուծելու միջոց ընտրելուն, այդ թվում՝ տարածքային վեճեր լուծելիս, որոնք վերաբերում են պետական սահմաններին (Глосов 58):

Ադրբեջանը, այս պատերազմում խախտելով 1994թ.-ի հրադադարի և 1995թ.-ի հրադադարի ռեժիմի ամրապնդման մասին համաձայնագրերը, ռազմական

գործողությունների արդյունքում խախտել է Արցախի Հանրապետության պետական սահմանների անխախտելիությունը:

4. Պետությունների տարածքային ամբողջականության սկզբունք

Այս սկզբունքը հաստատվել էր 1945թ.-ին ՄԱԿ-ի կանոնադրության ընդունմամբ: Այս սկզբունքի նշանակությունը շատ մեծ է միջպետական հարաբերությունների կայունացման տեսակետից: Դրա իմաստը ցանկացած ոտնձգությունից պետության տարածքի պաշտպանությունն է:

ՄԱԿ-ի կանոնադրությունն արգելել է ուժի կամ դրա գործադրումը ցանկացած պետության տարածքային ամբողջականության (անձեռնմխելիության) և քաղաքական անկախության դեմ: 1970թ.-ին պետությունների միջև ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն՝ բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին Հռչակագրում ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի ձևակերպման ժամանակ դրա մեջ արտացոլվեցին տարածքային ամբողջականության (անձեռնմխելիության) սկզբունքի շատ տարրեր՝ չնայած ինքն առանձին չի հիշատակվում:

Տվյալ սկզբունքի զարգացման հաջորդ փուլը 1975թ.-ին Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության եզրափակիչ ակտն է, որը պարունակում է պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի առանձին և առավել լիարժեք ձևակերպում (Կուլմեցով 25-26):

Տարիներ ի վեր Ադրբեջանը մեղադրում էր հայերին իր տարածքային ամբողջականությունը խախտելու մեջ: Մինչդեռ այս պատերազմական գործողություններում հենց նրանք խախտեցին Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականությունը: Նրանք անընդհատ գերակա դիրքում էին դնում պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը՝ հակադրելով այն արցախահայության ինքնորոշման իրավունքին:

5. Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման սկզբունք

ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածը թվարկում է այդ կազմակերպության նպատակները, այդ թվում՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքը: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (որն Ադրբեջանը վավերացրել է 1991թ.-ի օգոստոսի 13-ին) 1-ին հոդվածը սահմանում է, որ «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի բերումով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում են իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»: Հատկանշական է ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտի 8-րդ սկզբունքի ձևակերպումը. «Բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն լիակատար ազատության պայմաններում, երբ և ինչպես նրանք ցանկանում են, որոշել իրենց ներքին և արտաքին քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության, և սեփական հայեցողությամբ իրականացնել իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը», ինչպես նաև «մասնակից պետությունները [...] ընդգծում են այդ սկզբունքի խախտման ցանկացած ձևը վերացնելու կարևորությունը»:

Արդարադատության միջազգային դատարանը Կոսովոյի վերաբերյալ խորհրդատվական կարծիքում նշել է, որ անկախության միակողմանի հռչակագիրը չի ոտնահարում միջազգային իրավունքը (International court of justice, *advisory opinion* 22/07/2010):

Արցախահայությունը օգտվեց միջազգային իրավունքով ամրագրված ինքնորոշման իրավունքից և հռչակեց Արցախի Հանրապետությունը: Մինչդեռ Ադրբեջանը ուժ գործադրեց Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը ճնշելու համար՝ խախտելով ՄԱԿ-ի կանոնադրությունը, որը, ի թիվս այլոց, հստակ

սահմանում է, որ բոլոր միջազգային վեճերը պետք է կարգավորվեն խաղաղ ճանապարհով:

6. Մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունք

Այս սկզբունքը պարտավորեցնում է յուրաքանչյուր պետության համատեղ ուժերով հասնել ՄԱԿ-ի կանոնադրության համապատասխան մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր հարգմանը և հետևմանը:

Մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքը, բացի ՄԱԿ-ի կանոնադրությունից, ամրագրված է նաև 1948թ. Մարդու իրավունքների միջազգային հռչակագրում և 1966թ. զույգ դաշնագրերում:

Մարդու իրավունքների մասին միջազգային բազմաթիվ փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից միջազգային իրավունքում կա նորմ, համաձայն որի՝ պետությունները պարտավոր են հարգել ու պահպանել մարդու իրավունքներն և բոլորի համար հիմնական ազատությունները՝ առանց ռասայական, սեռական, լեզվական ու կրոնական խտրականության: Նշված պարտականությունը կրում է համընդհանուր բնույթ:

Վերջին պատերազմի ընթացքում Ադրբեյջանի զինված ուժերի գործողությունները զուգորդվել են մարդու իրավունքների լայնածավալ դաժան ու դիտավորյալ խախտումներով: Բազմաթիվ են կյանքի իրավունքի, մարդու արժանապատվության իրավունքի, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքի և այլ իրավունքների խախտումների փաստերը:

7. Միջազգային պարտավորությունների բարխիղճ կատարման սկզբունք

Այս սկզբունքը հանդիսանում է միջազգային իրավունքի հնագույն սկզբունքներից մեկը, առանց որի խստագույն հետևման և իրագործման չեն կարող գոյություն ունենալ կայուն միջազգային հարաբերություններ պետությունների միջև, առանց որի հնարավոր չէ ապահովել միջազգային անվտանգությունն ու խաղաղությունը:

Ադրբեյջանը ՄԱԿ-ի անդամ է 1992 թվականից: Բացի այդ, նա հանդիսանում է մի շարք միջազգային-իրավական պայմանագրերի կողմ, ինչպիսիք են՝ Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը և դրանց կից արձանագրությունները, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիան, ԵԱՀԿ Յեյխնկյան եզրափակիչ ակտը և այլն:

Միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների խախտումները

Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը պարունակում են պատերազմող կողմերի վարքագծի կանոններ: Ունենալով իրենց յուրահատկությունը, որը պայմանավորված է այն կարգավորող հասարակական հարաբերությունների կարգավորման առանձնահատուկ ոլորտով, դրանք պետք է լիովին համապատասխանեն ժամանակակից միջազգային իրավունքի համապարտադիր սկզբունքներին, որոնք գործում են ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմի ժամանակ: Ըստ բովանդակության՝ միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները բաժանվում են երեք խմբի՝

1. համակարգը ձևավորող ճյուղային սկզբունքներ,
2. սկզբունքներ, որոնք կարգավորում են զինված հակամարտության միջոցները և եղանակները,
3. սկզբունքներ, որոնք ուղղված են զինված հակամարտության մասնակիցների, ինչպես նաև քաղաքացիական բնակչության պաշտպանությանը:

Միջազգային հումանիտար իրավունքի համակարգը ձևավորող ճյուղային սկզբունքները հանդիսանում այս իրավունքի ճյուղի մյուս սկզբունքների համար հիմնաքար (Батырь 34):

Մարդասիրության սկզբունք: Մարդասիրության սկզբունքն առաջին անգամ ամրագրվել էր 1868թ.-ի դեկտեմբերի 11-ի Սանկտ Պետերբուրգի պայթյունի և կրակող փամփուշտների օգտագործման վերացման մասին հռչակագրում:

Խտրականության արգելքի սկզբունքը: Այս սկզբունքն արտահայտվում է նրանում, որ միջազգային մարդասիրական իրավունքի դրույթները հավասարապես տարածվում են զինված հակամարտության բոլոր կողմերի վրա:

Չինված հակամարտության բոլոր մասնակիցները, ռազմական գործողություններին իրենց մասնակցությունը դադարեցրած անձինք, պատերազմի զոհեր, քաղաքացիական անձինք, քաղաքացիական օբյեկտներ և այլն, օգտվում են հումանիտար կոնվենցիաների պաշտպանությունից՝ անկախ ցանկացած հանգամանքից:

Իհարկե, հումանիտար կոնվենցիաների պաշտպանության և հովանավորության իրավունքը չի կարող պայմանավորված լինել նաև ըստ ցեղի, մաշկի գույնի, կրոնի, սեռի, գույքային կարգավիճակի, քաղաքական և այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման և այլ հիմքերով (Толочко):

Պատասխանատվության սկզբունքը միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի և սկզբունքների խախտման համար: Պետությունների պատասխանատվության սկզբունքը սահմանվում է միջազգային սովորույթներով ու պայմանագրերով: Կողմը, որը գտնվում է զինված ընդհարման մեջ, որոնք խախտում են ժնկյան կոնվենցիաները կամ Արձանագրությունները, պետք է հատուցի պատճառված վնասը, եթե այն հիմնավորված է: Դրույթները, որոնք վերաբերում են անհատական քրեական պատասխանատվությանը, որևէ կերպ չեն ազդում միջազգային իրավունքով սահմանված պետությունների պատասխանատվության վրա: Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների համար պետությունը կրում է ինչպես քաղաքական պատասխանատվություն՝ սաթիսֆիկցիայի ձևով, այնպես էլ կյուրակական պատասխանատվություն՝ ռեստիտուցիայի կամ կոմպենսացիայի ձևով:

Պատասխանատվությունը վրա է հասնում այն դեպքում, եթե խախտումը կատարվել է պետության կողմից: Դա նշանակում է, որ պետությունը պատասխանատվություն է կրում այն գործողությունների համար, որոնք կատարվել են այն անձանց կողմից, որոնք մտնում են նրա զինված ուժերի կազմի մեջ: Պետությունը պատասխանատվություն է կրում միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների համար, երբ դրանք կատարել են այլ անձինք և կազմավորումներ, որոնք պետական իշխանության իրագործման իրավասություն ունենին կամ փաստացի գործում են պետության անունից՝ նրա ղեկավարության կամ հսկողության ներքո: Մասնավոր անձանց կամ անձանց խմբի գործողությունների համար պետության պատասխանատվության հարց կարող է ի հայտ գալ միայն այդ գործողությունների ճանաչման ու ընդունման պարագայում (Ануфриева 873-874):

Ինչ վերաբերում է անհատների քրեական պատասխանատվությանը, ապա մարդասիրական կոնվենցիաների դրույթների համաձայն՝ այդ պատասխանատվությունը պետք է նախ և առաջ ամրագրվի յուրաքանչյուր պետության ներպետական օրենսդրությամբ՝ քրեական, վարչական և այլն: Այսպես՝ ժնկյան կոնվենցիաներից յուրաքանչյուրը բովանդակում է դրույթ, համաձայն որի՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորություն են ստանձնում գործողության մեջ դնել արդյունավետ քրեական պատիժների ապահովման համար անհրաժեշտ օրենսդրություն այն անձանց համար, ովքեր կատարել կամ հրամայել են կատարել Կոնվենցիայի այս կամ այն լուրջ խախտումներ»:

Ռազմական գործողությունների մասնակիցների՝ զինված պայքարի միջոցների և մեթոդների ընտրության հարցում սահմանափակման սկզբունքը: Սկզբունքի էությունն այն է, որ յուրաքանչյուր զինված ընդհարման կողմ իրավունք ունի կիրառել միայն այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են հակառակորդին ճնշելու և նրան մարդկային նվազագույն վնասներ հասցնելու համար:

Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949թ. օգոստոսի 12-ի ժնևի կոնենցիաների Լրացուցիչ I արձանագրության 35-րդ հոդվածում ամրագրված է. «1. Ցանկացած զինված ընդհարման դեպքում ընդհարման մեջ գտնվող կողմերի՝ պատերազմելու մեթոդների և միջոցների ընտրության իրավունքն անսահմանափակ չէ:

2. Արգելվում է կիրառել այնպիսի զենքեր, արկեր, կյուրթեր, ինչպես նաև պատերազմելու այնպիսի մեթոդներ, որոնք կարող են ավելորդ վնասներ կամ ավելորդ տառապանքներ պատճառել:

3. Արգելվում է կիրառել պատերազմելու այնպիսի մեթոդներ կամ միջոցներ, որոնք նպատակ ունեն շրջակա միջավայրին պատճառել, կամ, կարելի է ենթադրել, որ կպատճառեն լայնածավալ, տևական և լուրջ վնաս»:

Պատերազմող կողմերի պատերազմի վարման միջոցների և մեթոդների ընտրության հարցում սահմանափակելու սկզբունքից ուղղակիորեն հետևում են կոնկրետացնող հետևյալ սկզբունքները.

Ըստ անձանց պատերազմի վարման միջոցներն ու մեթոդները սահմանափակելու սկզբունքը (ratione personae): Թույլատրելի են միայն պատերազմի վարման այնպիսի միջոցներ ու մեթոդներ, որոնք կարող են պաշտպանել խաղաղ բնակիչներին և առանձին քաղաքացիական անձանց ռազմական գործողությունների վտանգներից:

Այս սկզբունքն արտահայտված է հետևյալ կանոններում.

- Քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների նկատմամբ հարձակվելու և պաշտպանությունն ապահովելու նպատակով ընդհարման մեջ գտնվող կողմերը մշտապես պետք է տարբերակեն քաղաքացիական բնակչությունը և մարտիկներին, ինչպես նաև քաղաքացիական օբյեկտները ռազմական օբյեկտներից, և համապատասխանաբար իրենց գործողություններն ուղղեն միայն ռազմական օբյեկտների դեմ (Լրացուցիչ I Արձանագրության 48-րդ հոդված):
- Քաղաքացիական բնակչությունը, որպես այդպիսին, ինչպես նաև քաղաքացիական առանձին անձինք չպետք է հարձակումների օբյեկտ հանդիսանան: Արգելվում են բռնության գործողությունները կամ բռնության սպառնալիքները, որոնց հիմնական նպատակն է ահաբեկել քաղաքացիական բնակչությանը:

Այնուամենայնիվ, կա վերապահում բացառիկ դեպքում՝ բնակչության ինքնաբուխ զանգվածային գործողությունը զավթիչների դեմ: Այս դեպքում բնակչությունը համարվում է պատերազմող կողմ՝ դրանից բխող հետևանքներով, սակայն պայմանով, որ քաղաքացիական անձինք բացահայտ զենք են կրում և հետևում են պատերազմի օրենքներին և սովորույթներին (Толочко):

Արցախյան պատերազմում քաղաքացիական անձանց և քաղաքացիական օբյեկտների նկատմամբ ոտնահարումների օրինակները բազմաթիվ են (ԱՀ Մարդու իրավունքների պաշտպան միջանկյալ գեկույց, 2021):

Ըստ օբյեկտների պատերազմի վարման սահմանափակման սկզբունքը (ratione loci):

Լրացուցիչ I Արձանագրության 52-րդ հոդվածը սահմանում. «1. Քաղաքացիական օբյեկտները չպետք է հանդիսանան հարձակման կամ փոխճնշումների օբյեկտ: Քաղաքացիական օբյեկտներ են հանդիսանում բոլոր այն

օբյեկտները, որոնք չեն հանդիսանում ռազմական օբյեկտներ, ինչպես դրանք սահմանված են 2 կետում:

2. Հարձակումները պետք է խստագույնս սահմանափակվեն ռազմական օբյեկտներով: Ինչ վերաբերում է օբյեկտներին, ապա ռազմական օբյեկտները սահմանափակվում են այն օբյեկտներով, որոնք իրենց բնույթով, տեղադրությամբ, նշանակությամբ կամ գործածությամբ արդյունավետ ներդրում են կատարում ռազմական գործողություններում, և որոնք լիակատար կամ մասնակի ոչնչացումը, զավթումը կամ չեզոքացումը տվյալ պահին առկա հանգամանքներում տալիս է բացահայտ ռազմական առավելություն»:

Արցախյան պատերազմում քաղաքացիական անձանց և քաղաքացիական օբյեկտների նկատմամբ ռոնահարումների օրինակները բազմաթիվ են (War Crimes Under International Law Committed By Azerbaijani Forces In The Course Of Their Military Operation Against Artsakh (Nagorno Karabakh) And Armenia):

Պատերազմի վարման միջոցների և մեթոդների սահմանափակման սկզբունքը (ratione conditionis):

Արգելվում է կիրառել այնպիսի զենքեր, արկեր, նյութեր, ինչպես նաև պատերազմելու այնպիսի մեթոդներ, որոնք կարող են ավելորդ վնասներ կամ ավելորդ տառապանքներ պատճառել (Լրացուցիչ I Արձանագրության 35-րդ հոդվածի 2-րդ մաս):

Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի՝ հոկտեմբերի 18-ին հրապարակած միջանկյալ զեկույցն արձանագրում է, որ «շատ դեպքերում քաղաքացիական բնակչության դեմ հարձակումները եղել են թիրախավորված և դիտավորյալ, քանի որ ռազմական թիրախները տեղակայված են եղել քաղաքացիական օբյեկտներից շատ հեռու, իսկ ադրբեջանական ուժերը կիրառել են ճշգրիտ խոցման զինամթերք, ինչպիսիք են՝ հրթիռներն ու հարվածող անօդաչու թռչող սարքերը: Հարվածների մոտակայքում ռազմական թիրախների բացակայությունը լրացուցիչ հաստատում է դրանց դիտավորյալ բնույթը, ինչը պատերազմական հանցագործություն է»: Մինչև պատերազմի ավարտը հայկական կողմից սպանվել է 50 և վիրավորվել 148 քաղաքացիական անձ:

Քաղաքացիական ենթակառուցվածքները հատուկ թիրախավորվել են Արցախի ողջ տարածքում: Հոկտեմբերի սկզբին Ադրբեջանը թիրախավորել է Շուշիի Մշակույթի պալատը, Ստեփանակերտի էլեկտրական ցանցի շենքը, էլեկտրական ենթակայանները, ինչը էլեկտրաէներգիայի անջատումների է հանգեցրել:

Փաստաթղթավորված է նաև Ադրբեջանի կողմից կասետային զինատեսակների կիրառման հանգամանքը: Դրանց արտադրությունը, պահուստավորումը, փոխանցումն ու կիրառումն արգելված է Կասետային զինատեսակների մասին 2008 թ. կոնվենցիայով, որն Ադրբեջանն ու Հայաստանը չեն ստորագրել: Ըստ Human Rights Watch (HRW) միջազգային իրավապաշտպան կազմակերպության՝ կասետային զինատեսակները ունեն «համատարած անկանոն ազդեցություն և տևական վտանգ քաղաքացիական բնակչության համար»:

Ինչպես արդեն նշել ենք, 3-րդ խմբի սկզբունքներն ուղղված են զինված հակամարտության մասնակիցների, ինչպես նաև քաղաքացիական բնակչության պաշտպանությանը:

Մարդասիրական օգնություն ցուցաբերող և մարդասիրական գործառույթներ իրականացնող պետությունների և անձանց չեզոքության սկզբունքը: Մարդասիրական օգնությունը երբեք միջամտություն չէ հակամարտության մեջ (Լրացուցիչ I Արձանագրության 70-րդ հոդված):

Չեզոքության սկզբունքը մասնավորապես նշանակում է.

1. Ոչ մի պարագայում որևէ անձ չի կարող պատժի ենթարկվել նրա կողմից այնպիսի բժշկական գործառույթներ կատարելու համար, որոնք համատեղելի են

բժշկական էթիկայի հետ՝ անկախ այն բանից, թե ի շահ ո՞ր անձի են կատարվում այդ գործառույթները:

2. Բժշկական գործառույթներ կատարող անձանց չի կարելի հարկադրել իրականացնելու գործողություններ կամ կատարելու աշխատանքներ, որոնք հակասում են բժշկական էթիկայի նորմերին կամ վիրավորների և հիվանդների շահերին ծառայող բժշկական այլ կանոնների կամ կոնվենցիաների և սույն արձանագրության դրույթներին, ինչպես նաև հարկադրել չկատարելու այդպիսի նորմերով և դրույթներով պահանջվող գործողություններ:

3. Բժշկական գործառույթներ կատարող ոչ մի անձի չի կարող պարտադրվել որևէ մեկին՝ հակառակորդ կողմից, թե նրա սեփական կողմից՝ բացառությամբ վերջինիս՝ օրենսդրությամբ նախատեսվող դեպքերի, տրամադրելու որևէ տեղեկատվություն այն հիվանդների և վիրավորների վերաբերյալ, որոնք գտնվում են կամ գտնվելիս են եղել նրա խնամքի տակ, եթե այդպիսի տեղեկատվությունը, նրա կարծիքով, վնաս կհասցնի հիշյալ բուժվողներին կամ նրանց ընտանիքներին (Լրացուցիչ I Արձանագրության 16-րդ հոդված):

4. Ոչ ոք չպետք է հետապնդվի կամ դատապարտվի վիրավորներին կամ հիվանդներին խնամելու համար (Գործող բանակում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին կոնվենցիայի 18-րդ հոդվածի 3-րդ մաս):

Նորմալության սկզբունքը: Պաշտպանված անձինք պետք է կարողանան հնարավորինս նորմալ կյանք վարել:

Պաշտպանված անձանց պետական պաշտպանության սկզբունքը: Այս սկզբունքը մասնավորապես նշանակում է, որ պետությունն է, որ պարտավոր է ապահովել նրանց պաշտպանությունը, ութեր հայտնվում են իր իշխանության մեջ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:

Այս պոստուլատը կոնկրետացնող դրույթները հետևյալն են.

- Պաշտպանված անձինք (ռազմագերիներ, վիրավորներ, քաղաքացիական անձինք և այլն) գտնվում են ոչ թե իրենց գրաված զորքերի, այլ պետության կողմից, որին ծառայում են այդ զորքերը:
- Պետությունը պատասխանատու է իր իշխանության տակ գտնվող պաշտպանված անձանց համար, հասարակական կարգի պահպանման և հանրային ծառայությունների գործունեության համար, այդ թվում՝ գրավյալ տարածքներում:

Հովանավորվող անձանց միջազգային պաշտպանության ապահովման սկզբունքը: Զանի որ հակամարտության զոհերը զրկված են իրենց պետության բնական պաշտպանությունից, նրանց պետք է միջազգային պաշտպանություն տրամադրել: Միջազգային հումանիտար իրավունքում միջազգային պաշտպանությունը նշանակում է պաշտպանող տերության կամ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պաշտպանություն, որը չէզոք վերահսկողություն է իրականացնում 1949թ. ժնևյան կոնվենցիաներին և միջազգային մարդասիրական իրավունքի այլ նորմերի իրագործման համապատասխանության նկատմամբ:

Համաձայն միջազգային մարդասիրական իրավունքի՝ ռազմագերիները, ներկայվածները և «ժնևյան իրավունքի» սուբյեկտների մեջ մտնող մյուս կատեգորիաները կարող են բողոքներ ներկայացնել վերստուգիչ մարմիններին, որոնք իրենց պատվիրակներին ուղարկում են ճամբարներ՝ առանց վկաների ձերբակալվածների հետ խոսելու:

Անհրաժեշտ է արձանագրել, որ Ադրբեջանը չի հետևել նաև համավարակի ընթացքում համաշխարհային զինադադարի վերաբերյալ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կոչին և դրան հաջորդած Անվտանգության խորհրդի 2020թ. հուլիսի 1-ի թիվ. 2532 բանաձևին (Резолюция Совета Безопасности ООН):

Եզրակացություն

Ադրբեջանի 2020թ. լայնամասշտաբ պատերազմը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ հանգեցրեց հազարավոր զոհերի, տասնյակ հազարավոր վիրավորների, տեղահանվածների՝ մեր երկրին պատճառեց կյուրական մեծ կորուստներ և վնասեց նրա ենթակառուցվածքները:

Ադրբեջանի սանձազերծած պատերազմի արդյունքում ոչ միայն կոպտորեն խախտվեցին միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի վերոնշյալ սկզբունքները, այլև միտումնավոր ու համակարգված թիրախավորվեցին քաղաքացիական ենթակառուցվածքները, մասնավորապես՝ դպրոցները, հիվանդանոցները, ծննդատները, կապի միջոցները, ինչպես նաև վանդալիզմի ենթարկվեց ու ոչնչացվեց հայկական մշակութային ու կրոնական ժառանգությունը: Մինչ օրս Ադրբեջանը շարունակում է իր ոտնձգությունները՝ հրաժարվելով վերադարձնել գերության մեջ գտնվող հայ ռազմագերիներին, տարածքային պահանջներ ներկայացնելով և փորձելով զավթել ՀՀ ինքնիշխան տարածքները և արգելափակել միջազգային մարդասիրական ջանքերի մուտքը Արցախ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մի շարք շրջաններ ուժի կիրառման արդյունքում բռնազավթվեցին ու ենթարկվեցին էթնիկ զտման, իսկ այդ շրջանների բնակչությունը դարձավ ռազմական հանցագործությունների ու զանգվածային վայրագությունների զոհ:

Կարծում ենք, որ Ադրբեջանի հանցավոր գործողությունները պետք է արժանանան միջազգային հանրության պատշաճ գնահատականին: Իսկ մարդասիրական առաքելությունների և հատկապես ՄԱԿ-ի համապատասխան մարմինների մասնակցությունը Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովման գործին պետք է արագ և անվերապահ ապահովվի:

Օգտագործված գրականություն

1. «Ադրբեջանի Հանրապետության կատարած իրավախախտումները ԼՂՀ-ում և միջազգային կառույցների դիմելու հնարավորությունները» զեկույց, Երևան 2016, <https://armia.am/wpcontent/uploads/2016/05/%D4%B1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A5%D5%BA%D6%84%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>

2. ԱՀ Մարդու իրավունքների պաշտպան, «Միջանկյալ զեկույց ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախի քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ» Ստեփանակերտ 2021, <https://www.artsakhombuds.am/hy/document/785>

3. Կուզնեցով Յուրի. Միջազգային իրավունք. պատ. Խմբ. Վ.Հովհաննիսյան. ՌԴ ԱԳՆ Դիվանագիտ. Ակադեմիա, ՌԴ ԱԳՆ Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետ. ինստիտուտ, Երևան, 1996:

4. International court of justice. ACCORDANCE WITH INTERNATIONAL LAW OF THE UNILATERAL DECLARATION OF INDEPENDENCE IN RESPECT OF KOSOVO ADVISORY OPINION OF 22 JULY 2010 <https://www.icj-cij.org/public/files/case-related/141/141-20100722-ADV-01-00-EN.pdf>

5. Reports of international arbitral awards, Eritrea-Ethiopia Claims Commission - Partial Award: Jus Ad Bellum - Ethiopia's Claims 1-8 19 December 2005, United Nations. https://legal.un.org/riaa/cases/vol_XXVII/457-469.pdf

6. United Nation. Definition of aggression resolution. 14 December 1974, <https://undocs.org/en/A/RES/3314>

7. War Crimes Under International Law Committed By Azerbaijani Forces In The Course Of Their Military Operation Against Artsakh (Nagorno Karabakh) And Armenia, https://peacedialogue.am/en/2020/11/07/war_crimes_en/

8. Ануфриева Людмила и другие. Международное публичное право, 5-е изд., Проспет. Москва, 2010.

9. Батырь, Вячеслав. Международное гуманитарное право; Учебник для вузов/ 2-е издание, преработанное и дополненное. «Юстицинформ», Москва 2011.

10. Глебов И. Международное право, издательство: Дрофа, 2006.

11. Лукашук, Игорь. Международное право. Москва, 2005.

12. Совета Безопасности ООН. резолюция S/RES/884. 1993.

13. ---.S/RES/874 резолюция 1993.

14. ---.S/RES/853 резолюция 1993.

15. ---.S/RES/822 резолюция 1993.

16. Резолюция Совета Безопасности ООН от 1 июля 2020 года, [https://undocs.org/ru/S/RES/2532\(2020\)](https://undocs.org/ru/S/RES/2532(2020))

17. Толочко, Ольга. Международное гуманитарное право: Учеб. пособие. ГрГУ., Гродно, 2003.

Works Cited

1. «Adrbejani Hanrapetut'yan katarac' iravaxaxtumneri' LGhH-um & mijazgayin kar'uycnerin dimelu hnaravorut'yunnery'» zekuyc, [Report "Violations of the Republic of Azerbaijan in the NKR and the possibility of applying to international structures"] Erevan 2016, <https://armla.am/shhpcontent/uploads/2016/05/%D4%B1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A5%D5%BA%D6%84%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>

2. AH Mardu iravunqneri pashtpan, «Mijankayl zekuyc adrbejanakan zinvac' ujheri koghmic Arcaxi qaghaqaciakan and'anc spanut'yan depqeri veraberyal» [Human Rights Defender of the Republic of Artsakh, interim report on the cases of the killing of civilians in Artsakh by the Azerbaijani armed forces] Step'anakert 2021, <https://www.artsakhombuds.am/hy/document/785>

3. Kuznecov Yuri. Mijazgayin iravunq. [International Law] pat. Xmb. V.Hovhannisyan. R'D AGN Divanagit. Akademia, R'D AGN Mijazgayin haraberut'yunneri Moskvayi pet. institut, Erevan, 1996.

4. International court of justice. ACCORDANCE ShhITH INTERNATIONAL LASHH OF THE UNILATERAL DECLARATION OF INDEPENDENCE IN RESPECT OF KOSOVO ADVISORY OPINION OF 22 JuLY 2010 <https://www.icj-cij.org/public/files/case-related/141/141-20100722-ADV-01-00-EN.pdf>

5. Reports of international arbitral awards, Eritrea-Ethiopia Claims Commission - Partial Award: Jus Ad Bellum - Ethiopia's Claims 1-8 19 December 2005, United Nations. https://legal.un.org/riaa/cases/vol_XXVI/457-469.pdf

6. United Nation. Definition of aggression resolution. 14 December 1974, <https://undocs.org/en/A/RES/3314>

7. War Crimes Under International Law Committed By Azerbaijani Forces In The Course Of Their Military Operation Against Artsakh (Nagorno Karabakh) And Armenia, https://peacedialogue.am/en/2020/11/07/war_crimes_en/

8. Anufrieva Ljudmila i drugie. Mezhdunarodnoe publichnoe pravo, 5-e izd. [International Public Law, 5th ed.], Prospet. Moskva, 2010.

9. Batyr' Vjacheslav. Mezhdunarodnoe gumanitarnoe pravo; Uchebnik dlja vuzov/ 2-e izdanie, prerabotannoe i dopolnennoe. [International Humanitarian Law; Textbook for Universities/ 2nd edition, revised and supplemented.] "Justicinform", Moskva 2011.
10. Glebov I. Mezhdunarodnoe pravo, [International Law] izdatel'stvo: Drofa, 2006.
11. Lukashuk Igor' .Mezhdunarodnoe pravo. [International Law] Moskva, 2005.
12. Soveta Bezopasnosti OON. [UN Security Council resolution] rezoljucija S/RES/884. 1993.
13. ---.S/RES/874 rezoljucija 1993.
14. ---.S/RES/853 rezoljucija 1993.
15. ---.S/RES/822 rezoljucija 1993.
16. Rezoljucija Soveta Bezopasnosti OON ot 1 ijulja 2020 goda, [UN Security Council Resolution of July 1, 2020] [https://undocs.org/ru/S/RES/2532\(2020\)](https://undocs.org/ru/S/RES/2532(2020))
17. Tolochko Ol'ga. Mezhdunarodnoe gumanitarnoe pravo: Ucheb. posobie. GrGU. International Humanitarian Law: Textbook. GrSU., Grodno, 2003.

VIOLATIONS OF THE PRINCIPLES OF INTERNATIONAL LAW AND INTERNATIONAL HUMANITARIAN LAW DURING THE THIRD ARTSAKH WAR

MARIAM GRIGORYAN

Goris State University, Lecturer;

Mesrop Mashtots University, Lecturer;

*Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA), Member;
Stepanakert, The Republic of Artsakh (NKR)*

On September 27, as a result of the military actions unleashed by Azerbaijan, not only the basic principles of international law (*jus cogens*) underlying the negotiation process for the peaceful settlement of the Nagorno-Karabakh problem, such as the principle of peaceful settlement of disputes and the principle of respect for the right of nations to self-determination, but also the other fundamental norms and principles of international human rights law and international humanitarian law, were grossly violated.

The purpose of this article is to investigate the violations of the principles of international law and international humanitarian law during the third Artsakh war. For this purpose, relevant international legal acts, theoretical literature, as well as specific cases of violations of international law and principles of international humanitarian law have been studied.

During the research, the author applied both symmetrical (analysis, historical principle) and special (comparative-legal) principles.

As a result of the research, we came to the conclusion that in the third Artsakh war, gross violations of international law and the principles of international humanitarian law took place.

Keywords: *international law, international public law, principle, Artsakh Republic, war.*

НАРУШЕНИЯ ПРИНЦИПОВ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА И МЕЖДУНАРОДНОГО ГУМАНИТАРНОГО ПРАВА В ТРЕТЬЕЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ

МАРИАМ ГРИГОРЯН

*преподаватель Горисского государственного университета и
Университета Месроп Маштоц,
член Объединения молодых ученых и
специалистов Арцаха (ОМУСА),
г.Степанакерт, Республика Арцах (НКР)*

27 сентября в результате военных действий, развязанных Азербайджаном, были серьезно нарушены не только основные принципы международного права (*jus cogens*), лежащие в основе переговорного процесса по мирному урегулированию нагорно-карабахской проблемы, такие, как принцип мирного урегулирования споров и принцип уважения права наций на самоопределение, а также другие основополагающие нормы и принципы международного права прав человека и международного гуманитарного права..

Целью данной статьи является расследование нарушений принципов международного права и международного гуманитарного права в ходе Третьей Арцахской войны. Для этого были изучены соответствующие международно-правовые акты, теоретическая литература, а также конкретные случаи нарушения международного права и принципов международного гуманитарного права.

В ходе исследования автор применял как симметричные (анализ, исторический принцип), так и специальные (сравнительно-правовые) принципы.

В результате исследования мы пришли к выводу о том, что в Третьей Арцахской войне имели место грубые нарушения международного права и принципов международного гуманитарного права.

Ключевые слова: *международное право, международное публичное право, принцип, Республика Арцах, война.*

ԵՐԵՒԱՅԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՈՐՈՇԵԼԸ*

ՀՏԴ 347.63

DOI: 10.52063/25792652-2021.3-135

ՀԱՅԱՐՓԻ ՉԱՐԳԱՐՅԱՆ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
zargaryanhayarpi03@gmail.com

Սույն հոդվածի նպատակն է վեր հանել և լուսաբանել Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում առկա բացերը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի «Ճնողական իրավունքների իրականացումը» վերտառությամբ 53-րդ հոդվածի և «Երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացումը» վերտառությամբ 54-րդ հոդվածի բովանդակությունն ու կառուցվածքը, ինչպես նաև դրանց վերտառությունները չեն համապատասխանում հոդվածների բովանդակությանը, այնինչ հիշյալ դրույթներն են դատական պրակտիկայում հիմք հանդիսանում երեխայի բնակության վայրը սահմանելու մասին հայցի հարուցման համար: Երեխայի բնակության վայրի որոշման հարցում չափազանց կարևոր է խնդրո առարկա երկու հոդվածներով սահմանված կարգավորումներն առանձնացնելը, ինքնուրույն հոդվածով սահմանելը, ուստի և հոդվածը նպատակաուղղված է հեղինակի կողմից առաջ քաշված հիշյալ խնդիրները վեր հանել և առաջարկված լուծումներով կատարելագործել օրենսդրությունը, նպաստել միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը:

Հոդվածը շարադրվել է իրավահամեմատական-վերլուծական մեթոդով, կատարվել են լայնածավալ ուսումնասիրություններ, որոնց առարկան են հանդիսացել օտարերկրյա իրավաբան-գիտնականների կողմից առաջ քաշված գիտական կարծիքները, Սարգոս իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ դատարանների կողմից ձևավորած դատական պրակտիկան:

Հեղինակը հանգել է այն եզրակացության, որ առկա է անհրաժեշտություն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ և 54-րդ հոդվածներում խմբագրական փոփոխություններ կատարելու, ինչպես նաև օրենսգիրքը «Երեխայի բնակության վայրը որոշելու կարգը» վերտառությամբ հոդվածով լրացնելու:

Հիմնաբառեր՝ երեխայի բնակության վայր, ծնողական իրավունքներ, երեխայից առանձին ապրող ծնող, երեխայի լավագույն շահերը իրավունք, երեխայի կարծիքը հաշվի առնել, խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցություն, ծնողների համաձայնություն, համաձայնության գրավոր ձև:

* Հոդվածը ներկայացվել է 22.10.2021թ., գրախոսվել՝ 03.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Ներածություն

Երեխայի բարեկեցության, ֆիզիկական ու հոգեբանական բնականոն զարգացման ապահովման նպատակով նրա լավագույն շահը պետք է ուղենշային լինի օրենսդրի կողմից իրավական քաղաքականության մշակման հարցում: Այդ հիմնական սկզբունքներից մեկը պետք է լինի երեխայի՝ բնակության վայր ունենալու իրավունքը (Шиловская 132):

Ծնողների՝ միմյանցից առանձին բնակվելու պարագայում օրենսդիրը չի սահմանել, թե երեխայի տեղաշարժման հետ կապված հարցերի լուծման իրավասությունը ծնողներից ում է վերապահված՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխայի բնակության վայրը ծնողներից մեկի բնակության վայրում սահմանելը դեռևս չի նշանակում, որ երեխայի հետ կապված իրավական և մի շարք այլ հարցեր իրավասու է լուծել միայն նշված ծնողը:

Այս առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք կա, որ երեխայի հետ կապված իրավաբանական բնույթի հարցերի լուծումն անմիջականորեն իրականացնում է այն ծնողը, որի հետ համատեղ բնակվում է երեխան (Нечаева 24, Абрамов 223):

Մեր համոզմամբ՝ այս հարցում օրենսդրությունը պահանջում է լրացումներ ու փոփոխություններ, այն է՝ պետք է սահմանել այն ծնողի իրավունքը, երեխայի հետ համատեղ բնակվող ծնողի իրավունքն անձամբ որոշումներ կայացնելու այն հարցերում, որոնք պահանջում են անհապաղ լուծում և կապված են երեխայի առօրյա կենսական պահանջմունքների ապահովման, ինչպես նաև կյանքի և առողջության պահպանման հետ:

Հարկ է նշել, որ օրենսդրությունը երեխայի բնակության վայրի որոշման հարցի լուծումը առաջին հերթին վերապահում է ծնողներին՝ հնարավորություն ընձեռնելով այս հարցի կապակցությամբ կնքելու համաձայնություն, սակայն համաձայնության որևէ ձև կամ պարտադիր վավերապայման չի սահմանվում:

Երեխայի բնակության վայրը

Ծնողների փոխադարձ համաձայնությամբ որոշելու կարգը

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածը՝ «**Ծնողական իրավունքների իրականացումը**», սահմանում է, որ «1. Ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ:

Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան:

Ծնողական իրավունքներն իրականացնելիս ծնողներն իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն ֆիզիկական կամ հոգեբանական բռնությունը որպես դաստիարակության միջոց կիրառելը, ինչպես նաև նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը:

Ծնողական իրավունքներն ի վնաս երեխաների իրավունքների և շահերի իրականացնող ծնողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

2. Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը: Ծնողները (նրանցից մեկը) փոխադարձ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կարող են առկա տարաձայնությունները լուծելու համար դիմել ինսամակալության և հոգաբարձության մարմին կամ դատարան:

3. Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության

դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրույթունը և այլն)»:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածը՝ «**Երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացումը**», սահմանում է, որ «1. Երեխայից առանձին ապրող ծնողը իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու:

Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը:

2. Ծնողներն իրավունք ունեն գրավոր համաձայնություն կնքելու երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին:

Եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է դատարանը:

3. Դատարանի վճիռը չարամտորեն չկատարելու դեպքում երեխայից առանձին ապրող ծնողի պահանջով դատարանը կարող է որոշում կայացնել երեխան նրան հանձնելու մասին՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը:

4. Երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի իր երեխայի մասին տեղեկատվություն ստանալու դաստիարակչական ու բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից, ինչպես նաև ծնողից, որի մոտ ապրում է երեխան: Տեղեկատվություն տրամադրելը կարող է մերժվել միայն ծնողի կողմից երեխայի կյանքին և առողջությանն սպառնացող վտանգի առկայության դեպքում: Տեղեկատվություն տրամադրելու մերժումը կարող է վիճարկվել դատական կարգով»:

Հիշյալ երկու հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է երկուսի մասով օրենսդրական որոշակի խնդիրների առկայության մասին, որոնցից ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությանն անդրադարձել է ՀՀ Սահմանադրական դատարանը:

ՀՀ Սահմանադրական դատարանը Նշել է, որ «...ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի համաձայն՝ երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման համար հոգ տանելը ծնողների իրավունքն ու պարտականությունն է: Սահմանադրաիրավական այս պահանջի իրացմանն է ուղղված ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմը: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների վերլուծությունից ելնելով, մասնավորապես, հիմք ընդունելով վիճարկվող դրույթներում «ընդ որում» և «և այլն» բառակապակցությունների առկայությունը, սահմանադրական դատարանն արձանագրել է, որ վիճարկվող դրույթներում «ընդ որում» բառակապակցությունից հետո ամրագրված պայմանները, այն է՝ «երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրույթունն)» այն նվազագույն պայմաններն են, որոնք ճշգրտում և բացահայտում են

վիճարկվող դրույթներում «երեխաների շահերից» հասկացության բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը: Ընդ որում, վերը նշված պայմանները սպառնիչ չեն, և երեխայի շահը գնահատելիս օրենսդիրը դատարանների հայեցողությանն է վերապահում նաև այլ պայմաններ հաշվի առնելը»:

ՀՀ Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր ՍԴՈ-7473 և ՍԴՈ-7804 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով ևս ընդգծել է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունները չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահեր» հասկացությանը և դրա բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո թվարկված պայմանները պարտավորեցնում են դատարաններին երեխայի շահը գնահատելիս հիմք ընդունել այդ պայմանները, ինչպես նաև առաջնորդվելով իրենց հայեցողական լիազորությամբ՝ հիմք ընդունել նաև այլ պայմաններ, թեթ դատարանի գնահատմամբ այդպիսիք կան: Դատարանների այդպիսի պարտականության մասին իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանն իր՝ 30.03.2007թ. թիվ 3-432 (ՏԴ) որոշման մեջ: ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ նման պարտականությունը միաժամանակ ապահովում է դատական ակտի պատճառաբանվածությունը, որի վերաբերյալ Սահմանադրական դատարանն իր՝ մասնավորապես 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-6905, 2007 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-6916 և մի շարք այլ որոշումներում բազմիցս արտահայտել է համապատասխան իրավական դիրքորոշումներ:

Անդրադառնալով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակության պարզաբանմանը՝ սահմանադրական դատարանը գտել է, որ նշված բառակապակցությունը վերաբերում է տասը տարին լրացած երեխայի՝ դատարանում լսվելու իրավունքին և դատարանի համապատասխան պարտականությանը՝ լսելու երեխայի կարծիքը: Միաժամանակ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ, այնուամենայնիվ, տվյալ իրավակարգավորման համատեքստում երեխայի կարծիքը դատարանի համար պարտադիր չէ: Նման եզրահանգման համար հիմք է երեխայի շահը, որն առաջնային է ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրը որոշելիս: Բացի դրանից, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում երեխայի շահը գնահատելիս օրենսդիրն օգտագործում է «ելնելով» բառը, մինչդեռ տասը տարին լրացած երեխայի կարծիքի կապակցությամբ օրենսդիրն օգտագործում է «հաշվի առնելով» բառակապակցությունը: Այսինքն՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո շարադրված դրույթները փոխկապակցված են նշված բառակապակցությունից առաջ շարադրված դրույթների հետ, բացահայտում են «երեխայի շահեր» հասկացության բովանդակությունը, իսկ թեթ դատարանի գնահատմամբ երեխայի կարծիքը չի համընկնում երեխայի շահերի հետ, ապա դատարանը պարտավոր է առաջնորդվել երեխայի շահերով, այն է՝ երեխայի կարծիքը գնահատել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո շարադրված պայմանների համատեքստում:

Արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրի, ինչն էլ ու դաստիարակությունը ծնողներից որևէ մեկին հանձնելու հետ կապված վեճի լուծման իրավասությունը բոլոր դեպքերում վերապահվում է դատարանին՝ վերջինիս վերապահելով հայեցողական ազատություն: Ընդ որում, հիմնականում օրենսդիրը չի օգտագործում «երեխաների շահեր» հասկացությունը, իսկ այդ հասկացությունն օգտագործելու դեպքում, այնուամենայնիվ, չի սահմանում նշված հասկացության նվազագույն չափորոշիչները, և երեխաների շահերի գնահատման իրավասությունը վերապահում է դատարանների հայեցողությանը:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ վերջինս նույնպես օգտագործում է «երեխայի լավագույն շահ» հասկացությունը՝ առանց սահմանելու նշված հասկացության նվազագույն չափորոշիչները:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից քննարկվող հարցին բազմիցս անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ երեխայի ինչն էլ ու դաստիարակության վերաբերյալ վեճը լուծելիս դատարանները պետք է առաջնորդվեն երեխայի լավագույն շահերով (C. v. Finland գործով 2006թ. մայիսի 9-ի վճիռը, Olsson v. Sweden գործով 1988թ. մարտի 24-ի վճիռը):

ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն առավել մանրակրկիտ է կարգավորում ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի ինչն էլ ու դաստիարակությունը ծնողներից որևէ մեկին հանձնելու հետ կապված հարաբերությունները՝ օգտագործելով «երեխաների շահեր» հասկացությունը և սահմանելով նշված հասկացության նվազագույն չափորոշիչները:

Վերոգրյալի, ինչպես նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների տրամաբանության հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ընտանեկան իրավահարաբերություններում «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և հանդիսանում է ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք:...» (ՀՀ Սահմանադրական դատարան, ՍԴՈ-919):

Մեր համոզմամբ՝ ինչո՞ր առարկա հոդվածներն իրենց մեջ բովանդակում են նաև այլ ինդիկներ: Այսպես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ»:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Ծնողներն իրավունք ունեն գրավոր համաձայնություն կնքելու երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին»:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված ծնողների փոխադարձ համաձայնության առկայության վերաբերյալ եզրահանգում կատարելու համար պետք է առկա լինի մինչև դատարան դիմելը ծնողների միջև կնքված՝ երեխայի բնակության վայրի որոշման վերաբերյալ գրավոր համաձայնություն կամ գործով ձեռք բերված փաստերն ու տվյալները բավարար լինեն՝ հաստատված համարելու նման համաձայնության առկայությունը:

Մեր համոզմամբ՝ նման համաձայնությունները պետք է լինեն **գրավոր**, այդպիսիք պետք է բովանդակեն ծնողների ու երեխայի անհատականացնող բոլոր տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, անձնագրի սերիա և համար), հստակ նշում երեխայի բնակության վայրի հասցեի վերաբերյալ, ինչպես նաև

Նման համաձայնությունների կազմմանը պետք է պարտադիր կարգով մասնակից դարձվեն խնամակալության և հոգաբարձության մարմինները, և համաձայնությունը պետք է ներառի ոչ միայն ծնողների, այլև խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի ստորագրությունը: Ինչ վերաբերում է գրավոր փաստաթղթի կազմման ձևին, ապա կարծում ենք, որ հասարակ գրավոր ձևով կազմված փաստաթուղթը լիովին բավարար է, քանի որ նոտարական վավերացման պահանջ սահմանելու պարագայում անհարկի կառաջանան լրացուցիչ ծախսեր՝ կապված պետական տուրքի վճարման հետ, ինչը լրացուցիչ խոչընդոտ կարող է ստեղծել համաձայնության կնքման և նման եղանակով միմյանցից առանձին ապրող ծնողների կողմից երեխայի բնակության վայրը փոխադարձ համաձայնությամբ լուծելու հարցում:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ կարծիք է հնչել նաև երեխային՝ «համաձայնության վերաբերյալ» փաստաթղթի կազմմանը մասնակից դարձնելու և նրա անուկից համաձայնության գրավոր տեքստի ստորագրությունը նույնպես ապահովելու հարցում, որի հետ համամիտ չենք, քանի որ երեխան իրավասու չէ ստորագրել իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ, իսկ նրա անուկից ծնողների՝ որպես օրինական ներկայացուցիչների երկրորդ ստորագրության առկայությունն ինքնին ձևական բնույթ կկրի: Այլ բան է խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի կողմից համաձայնության կազմմանը և դրա բովանդակության «հավաստիացմանը» մասնակից դառնալը: Վերջին հանգամանքի կապակցությամբ իրավագետ Դ.Վ.Գորդեյուկը նշել է. «Իրավաբանական գրականության մեջ առաջարկվում է կնքել համաձայնություն ծնողների, երեխայի և խնամակալության ու հոգաբարձության մարմնի միջև և սահմանել երեխայի բնակության վայրի վերաբերյալ համաձայնության պետական գրանցման ընթացակարգ խնամակալության և հոգաբարձության մարմնում» (Гордеюк 54):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասը նաև սահմանում է, որ «...Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը»:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է դատարանը»:

Հիշյալ հոդվածների և դրանց վերտառությունների ու բովանդակության ուսումնասիրությունն ու վերլուծությունը թույլ են տալիս առաջին հերթին արձանագրելու, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածը վերնագրված է «**Ծնողական իրավունքների իրականացումը**», իսկ 54-րդ հոդվածը՝ «**Երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացումը**», մինչդեռ 53-րդ հոդվածի 3-րդ մասում է օրենսդիրը սահմանել ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը դատական կարգով որոշելու նորմը:

Ընդ որում, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը վերաբերում է ծնողների կողմից իրենց ծնողական իրավունքների իրականացմանը, իսկ 2-րդ մասում երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողների փոխադարձ համաձայնությամբ լուծելու կարգը:

Մեր համոզմամբ՝ հիշյալ երկու հոդվածների մասերն ունեն սխալ դասավորվածություն, և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասը պետք է տեղ գտներ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածում, որի դեպքում դրույթի բովանդակությունը կհամապատասխաներ նաև հոդվածի վերտառությանը:

Բացի այդ, անտրամաբանական է ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը ծնողների փոխադարձ համաձայնությամբ

լուծելու, իսկ չլուծվելու դեպքում դատական կարգով որոշելու նորմը ՀՀ ընտանեկան օրենսգրքի և՛ 53-րդ, և՛ 54-րդ հոդվածում սահմանելը:

Հետևաբար գտնում ենք, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասը օրենսգրքի 54-րդ հոդվածի ներքո նախատեսելու պարագայում նշված հոդվածից պետք է հանել 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, ըստ որի՝ «Եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է դատարանը»:

Նման պայմաններում առկա ձևակերպմամբ ստացվում է, որ «Ծնողական իրավունքների իրականացումը» վերտառությամբ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածում օրենսդիրը խոսում է երեխայի բնակության վայրի որոշման հարցի և դրա կարգավորման վերաբերյալ, ընդ որում, այդ համատեքստում նշում անգամ չկա այն մասին, որ խնամակալության և հոգաբարձության մարմինը պետք է պարտադիր մասնակցություն ունենա երեխայի բնակության վայրը որոշելու հարցի դատական կարգով քննությանը, իսկ 54-րդ հոդվածում՝ «**Երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին՝** նախատեսելով, որ եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է դատարանը»:

Այսպիսով՝ մեր համոզմամբ, այս երկու հոդվածները, որոնք դատական պրակտիկայում հիմք են երեխայի բնակության վայրը սահմանելու մասին հայցի հարուցման համար, ինքնին ունեն սիսալ կառուցվածք: Ավելին՝ երեխայի բնակության վայրի որոշման հարցում չափազանց կարևոր է այդ կարգավորումներն ինքնուրույն հոդվածով սահմանելը, որի դեպքում կապահովվի այս իրավունքի կարևորության շեշտադրումը, օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից՝ նաև համակարգվածությունը:

Եզրակացություն

Առաջարկում ենք ՀՀ ընտանեկան օրենսգրքում կատարել փոփոխություն՝ լրացնելով այն «**Երեխայի բնակության վայրը որոշելու կարգը**» վերտառությամբ հոդվածով:

Հոդվածի բովանդակությունն առաջարկում ենք ձևակերպել հետևյալ կերպ.

«1. Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ:

2. Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրի որոշմանը պետք է պարտադիր կարգով մասնակից դարձվի երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը:

3. Համաձայնությունը կազմվում է գրավոր ձևով և հավաստվում ծնողների, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի ստորագրությամբ:

Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրի որոշման հարցում համաձայնության բացակայության դեպքում նրանց կամ նրանցից մեկի պահանջով ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ծնողների բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:

Երեխաների բնակության վայրի որոշման հարցում դատարանը ելնում է երեխաների շահերից և հաշվի է առնում երեխաների համաձայնությունը՝ ըստ հասունության աստիճանի: Դատարանը կարող է հաշվի առնել նաև երեխայի

կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական ու անձնական այլ հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների զբաղվածության կամ աշխատանքի բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն)»:

Ինչպես վերը նշվեց, ծնողների միջև երեխայի բնակության վայրի որոշման հարցում Եական դերակատարություն ունի խնամակալության ու հոգաբարձության մարմինը, որի ակտիվ մասնակցությունն օժանդակում է շատ դեպքերում նաև դատական վեճերի՝ հաշտության համաձայնությամբ ավարտին: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ երեխայի տատերի ու պապերի հետ տեսակցության հարցի լուծման հարցում պարտադիր արտադատական կարգի սահմանումը նպաստում է դատարանում այդ բնույթի վեճերի գրեթե բացակայությանը:

Ներպետական իրավական համակարգում երեխայի բնակության վայրը որոշելու հարցում կողմնորոշիչ նշանակություն ունի խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը (եզրակացությունը), սակայն ինչպես վկայում է դատական պրակտիկան, խնամակալության և հոգաբարձության մարմինները ոչ միշտ են պատշաճ իրականացնում իրենց պարտականությունները, հաճախ միայն դատական հանձնարարության շրջանակներում են ձեռնամուխ լինում իրենց՝ եզրակացություն տալու պարտականության իրականացմանը:

Այնինչ մեր համոզմամբ՝ չափազանց կարևոր է այս մարմնի դերը ինչպես երեխայի լավագույն շահերը վեր հանելու հարցում, այնպես էլ դատարանին օժանդակելու: Կարծում ենք, որ խնամակալության և հոգաբարձության մարմնի գործառույթների շրջանակը պետք է վերանայել և սահմանել այնպիսի լիազորություններ, որոնք հնարավորություն կընձեռեն այս մարմնին ավելի որակյալ և մասնագիտական առումով առավել հիմնավորված եզրակացություններ տալու, ինչպես նաև ակտիվ օժանդակելու արդարադատության իրականացմանը, իսկ դատավորին ընձեռել լիազորություն՝ անիրաժեշտության դեպքում արտադատական կարգով լսելու խնամակալության և հոգաբարձության մարմիններին, ներկա գտնվելու նրանց կողմից երեխայի լավագույն շահերի վերհանման գործընթացին, ինչպես նաև անիրաժեշտության դեպքում բնակարանային և այլ կենսապայմանների հետազոտության գործընթացում ունենալ վերահսկողության հնարավորություն (Бахарева 19):

Ուշադրության է արժանի նաև այն, որ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից պրակտիկայում հաճախ երեխայի բնակության վայրի շուրջ որոշումներ կայացնելիս ցուցաբերվում է երեխայի շահերից չբխող անգործություն, երբ երեխայի բնակության վայրի որոշման հետ կապված հարցերի շուրջ պատշաճ հետազոտություն կատարելու և եզրակացություն տալու փոխարեն հարցի լուծումը թողնվում է դատարաններին այն դեպքում, երբ դատարանները նման վեճը լուծում են հենց մասնագիտական եզրակացության կողմնորոշիչ դերը հաշվի առնելով:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթային կարևորությանն անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներով, որոնցից մեկով արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «...խնամակալության և հոգաբարձության մարմնի վրա ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով դրված է երեխայի և այն անձի կյանքի հետազոտություն անցկացնելու պարտականություն, ով հավակնում է նրա դաստիարակությանը: Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է նաև հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը ներկայացնել դատարան: Թեև խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացությունը դատարանի համար կրում է մասնագիտական-խորհրդատվական բնույթ, և

դատարանն այն պարտավոր է գնահատել գործում առկա այլ ապացույցների հետ համակցության մեջ, այնուամենայնիվ, նմանատիպ գործերով վերոնշյալ եզրակացության առկայությունը պարտադիր է, քանի որ դրանում արտահայտված փաստարկները գործում առկա մյուս ապացույցների հետ համադրության արդյունքում դատարանին հնարավորություն են ընձեռում կոնկրետ գործով պարզելու երեխայի լավագույն շահը: Այնուամենայնիվ, դատարանը չպետք է սահմանափակվի միայն խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացության մեջ նշված դրույթները կրկնելով, այլ պետք է հավաստիանա դրանց հիմնավորվածության մեջ և այն համեմատի գործով ձեռք բերված մյուս ապացույցների հետ, որից հետո միայն, հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը, որոշի գործի ելքը:...» (ՀՀ վճռաբեկ դատարան, ԵԱՆԴ/4073/02/14):

Ուստիև կարևորում ենք նաև երեխայի բնակության վայրի որոշման հարցում խնամակալության և հոգաբարձության մարմնի դերի ու գործառույթների ընդլսումը և համապատասխան լիազորություններով վերջինիս օժտելու անհրաժեշտությունը, քանի որ, մեր համոզմամբ, երեխայի բնակության վայրի որոշման հարցում ծնողների՝ միմյանց միջև համաձայնության բացակայության դեպքում արտադատական պարտադիր կարգի սահմանումը կհանգեցնի այդ բնույթի վեճերի ոչ միայն արագ ու արդյունավետ լուծմանը, այլև կնվազեցնի դատական գործերի առկայությունը:

Այսպես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ «1. Երեխայի պապերը, տատերը, եղբայրները, քույրերը և այլ ազգականներն իրավունք ունեն շփվելու երեխայի հետ:

2. Մերձավոր ազգականների հետ երեխային շփվելու հնարավորություն տալուց ծնողների կամ նրանցից մեկի մերժման դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է պարտավորեցնել ծնողներին կամ նրանցից մեկին՝ չխանգարելու այդ շփմանը:

3. Եթե ծնողները կամ նրանցից մեկը չեն կատարում խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը, երեխայի մերձավոր ազգականները կարող են երեխայի հետ շփվելու արգելքները վերացնելու հայցով դիմել դատարան: Դատարանը վեճը լուծում է՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը»:

Անդրադառնալով երեխայի բնակության վայրի իրավունքի պահպանմամբ մերձավոր ազգականների կողմից երեխայի հետ տեսակցության իրավունքի իրացմանը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկով արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ երեխայի պապերի, տատերի, եղբայրների, քույրերի և այլ ազգականների իրավունքն է շփվելու երեխայի հետ: Ընդ որում, երեխայի հետ շփումը որևէ ձևով չպետք է խոչընդոտվի ո՛չ երեխայի ծնողների, ո՛չ էլ երեխայի պապերի, տատերի, եղբայրների, քույրերի և այլ ազգականների կողմից: ՀՀ Վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ հիշյալ անձանց կողմից իրենց իրավունքների իրացման հարցում պետք է ելնել բացառապես երեխայի լավագույն շահերից և շփման կարգ սահմանել նաև առանց երեխային այլ տեղ տեղափոխելու կարգ սահմանելու (ՀՀ վճռաբեկ դատարան, ՇԴ/1501/02/10):

Նման մոտեցման պարագայում վերը ներկայացված առաջարկի համատեքստում **«Երեխայի բնակության վայրը որոշելու կարգը»** վերտառությամբ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությանը պետք է նախորդի ևս մեկ պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրի որոշման հարցում համաձայնության բացակայության դեպքում նրանց կամ նրանցից մեկի պահանջով երեխաների բնակության վայրը որոշում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

Եթե ծնողներից մեկը չի կատարում խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը, ապա մյուս ծնողն իրավասու է դիմել

դատարան՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշմանը պարտավորեցնելու կամ այդ որոշման հետ համաձայն չլինելու դեպքում՝ երեխաների բնակության վայրը որոշելու պահանջով»:

Արտադատական կարգի սահմանումը հնարավորություն կընձեռնի առավել արագ լուծելու ծնողների միջև տարաձայնությունները երեխաների բնակության վայրի որոշման, ինչպես նաև այն փոփոխելու հարցերը, կնպաստի խնամակալության և հոգաբարձության մարմնի դերակատարության մեծացմանը, ինչպես նաև կբացառի այնպիսի վեճերով դատարան դիմելը, որոնք պարզ են իրենց բնույթով և մասնագետների միջամտությամբ հեշտությամբ կարող են կարգավորվել առանց դատարան դիմելու:

Օգտագործված գրականություն

1. Шиловская А. Л., *Проблемы защиты жилищных прав несовершеннолетних*, <https://cyberleninka.ru/article/n/problemy-zaschity-zhilischnyh-prav-nesovershennoletnih/viewer>, Доступно: 09.09.2021.
2. Нечаева А. М., *Проблемы охраны прав несовершеннолетних в Российской Федерации*: автореф. дис. д-ра юрид. наук. М., 1995, Абрамов В. И., *Права ребенка в России*: (теоретический аспект). Саратов, 2005.
3. Гордеюк Д. В., *Реализация права ребенка на место жительства*, Владимир, 2003.
4. Бахарева О.А., *Порядок защиты жилищных прав несовершеннолетних в гражданском судопроизводстве* /О.А. Бахарева, Т.М. Цепкова// Арбитражный и гражданский процесс. 2015, № 5.
5. ՀՀ Սահմանադրական դատարան, թիվ ՍԴՈ-919 գործով որոշում. 05.10.2010:
6. ՀՀ վճռաբեկ դատարան, թիվ ԵԱՆԴ/4073/02/14 քաղաքացիական գործով որոշում, 22.07.2016:
7. ..., թիվ ՇԴ/1501/02/10 քաղաքացիական գործով որոշում, 27.05.2011:

Works Cited

1. Shilovskaja A. L., *Problemy zashhity zhilishhnyh prav nesovershennoletnih*, [Problems of protection of housing rights of teenagers] <https://cyberleninka.ru/article/n/problemy-zaschity-zhilischnyh-prav-nesovershennoletnih/viewer>, Dostupno: 09.09.2021.
2. Nechaeva A. M., *Problemy ohrany prav nesovershennoletnih v Rossijskoj Federacii* [Problems of protection of the rights of minors in the Russian Federation]: avtoref. dis. d- ra jurid. nauk. M., 1995, Abramov V. I., *Prava rebenka v Rossii*: (teoreticheskij aspekt) [The rights of the child in Russia: (theoretical aspect)]. Saratov, 2005.
3. Gordejuk D. V., *Realizacija prava rebenka na mesto zhitel'stva*, [Realization of the child's right to a place of residence] Vladimir, 2003.
4. Bahareva O.A., *Porjadok zashhity zhilishhnyh prav nesovershennoletnih v grazhdanskom sudoproizvodstve* /O.A. Bahareva, T.M. Tsepkova// Arbitrazhnyj i grazhdanskij process. [The procedure for protecting the housing rights of minors in civil proceedings /O.A. Bakhareva, T.M. Tsepkova// Arbitration and civil procedure] 2015, № 5.
5. ՀՀ Սահմանադրական դատարան, t'iv SDO-919 gorc'ov voroshum. [The Constitutional Court of the Republic of Armenia, decision on the case SDO-919] 05.10.2010:
6. ՀՀ վտր'abek dataran, t'iv EAND/4073/02/14 qaghaqaciakan gorc'ov voroshum [The RA Court of Cassation/4073/02/14 the decision on the civil case], 22.07.2016:
7. ..., t'iv ShD/1501/02/10 qaghaqaciakan gorc'ov voroshum, [SD number/1501/02/10 The decision on the civil case] 27.05.2011:

DETERMINING THE CHILD'S PLACE OF RESIDENCE BY MUTUAL CONSENT OF THE PARENTS

HAYARPI ZARGARYAN

*Yerevan State University, Faculty of Law, Chair of Civil Law, Applicant;
Court of First Instance of the City of Yerevan, Judge,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to identify and address the gaps in the Family Code of the Republic of Armenia.

The content of Article 53 of the RA Family Code, entitled "Exercise of Parental Rights" and the content of Article 54 of the RA Family Code, entitled "Exercise of parental rights by a parent living separately from a child", as well as their titles do not correspond to the content of the articles. In practice, it is the basis for filing a lawsuit to determine the child's place of residence. In determining the child's place of residence, it is very important to separate the provisions of the two articles in question, to define them in a separate article, therefore, the article aims to raise the mentioned issues raised by the author, to improve the legislation with the proposed solutions, to promote common jurisprudence.

The article was compiled by the legal-comparative-analytical method, large-scale studies were carried out, the subject of which was the scientific opinions put forward by foreign jurists, the case law of the European Court of Human Rights, the RA Constitutional Court and the RA courts.

The author came to the conclusion that there is a need to make editorial changes in Articles 53-54 of the Family Code of the Republic of Armenia, as well as to supplement the Code with an article entitled "Procedure for determining the place of residence of a child".

Keywords: *place of residence of the child, parental rights, parent living separately from the child, right of the child to be heard, consideration of the child's opinion, mandatory participation of the guardianship body, consent of the parents, written consent form.*

ОПРЕДЕЛЕНИЕ МЕСТА ЖИТЕЛЬСТВА РЕБЕНКА ПО ОБОЮДНОМУ СОГЛАСИЮ РОДИТЕЛЕЙ

ԱԿԱՐՔԻ ՅԱՐԳԱՐՅԱՆ

*судья суда первой инстанции города Еревана,
соискатель кафедры гражданского права юридического факультета
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является выявление и устранение проблем в Семейном кодексе Республики Армения.

Содержание статьи 53 Семейного кодекса РА «Осуществление родительских прав» и содержание статьи 54 Семейного кодекса РА «Осуществление родительских прав одним из родителей, проживающих отдельно от ребенка», а также их названия не соответствуют содержанию статей. На практике эти статьи

являются основными для подачи иска для определения места жительства ребенка. При определении места жительства ребенка очень важно разделить положения двух рассматриваемых статей, дать им определение в отдельной статье, и данное исследование направлено на постановку упомянутых вопросов, отмеченных автором, с целью совершенствования законодательства, а также с предлагаемыми решениями, чтобы внести свой вклад в развитие общей судебной практики.

Данная работа проведена с применением сравнительно-правового метода; проведены масштабные исследования, предметом которых стали научные выводы зарубежных юристов, практика Европейского Суда по правам человека, Конституционного Суда РА и судов РА.

Автор пришел к выводу о необходимости внесения редакционных изменений в статьи 53-54 Семейного кодекса РА, а также дополнения Кодекса статьей «Порядок определения места жительства» ребенка».

Ключевые слова: *место жительства ребенка, родительские права, родитель, проживающий отдельно от ребенка, право ребенка быть выслушанным, учет мнения ребенка, обязательное участие органа опеки, согласие родителей, форма письменного согласия.*

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**



**ՐԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ STATUS QUO-Ն ԱՐՑԱԽՈՒՄ. ՀԱՅՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ
ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ***

ՐՏԴ 327.5

DOI: 10.52063/25792652-2021.3-147

ԽԱԶԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դասախոս,
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհրդի անդամ,
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
khqalstyan@ysu.am

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը Արցախի Հանրապետության դեմ սանձազերծեց լայնամասշտաբ պատերազմ, որի հետևանքով հակամարտության գոտում նոր նախափուլով (STATUS QUO) հաստատվեց: Պատերազմից հետո խորացել է հայ հասարակության բարոյա-հոգեբանական ճգնաժամը, որն արդեն գոյաբանական ինքնառնչչացման սպառնալիքի է վերածվել: Նոյեմբերի 9-ին Հրադադարի հաստատման եռակողմ փաստաթղթի ստորագրումից հետո Ադրբեջանը չի դադարեցրել իր ռազմատենչ քաղաքականությունը:

Հողվածի նպատակն է պարզել, թե նման Էկզիստենցիալ բնույթի մարտահրավերների հաղթահարման գործում հայեցակարգային ու հարացույցային ի՞նչ փոփոխություններ են հարկավոր: Այս նպատակին հասնելու համար հողվածում առաջ են քաշվում մի քանի գիտա-գործնական խնդիրներ: Մասնավորապես, քննության առարկա է դառնում «ռազմավարական մշակույթ» հասկացությունը, վերլուծության են ենթարկվում հայության ռազմավարական մտածողության բնորոշիչները, շրջանառության են դրվում հայության նոր ռազմավարական մշակույթի հիմնատարրերը:

Հետազոտությունը իրականացվել է պատմա-համեմատական մեթոդի կիրառմամբ: Որպես հիմնական եզրակացություն՝ սույն հողվածի շրջանակներում հիմնավորվում է հայության նոր ռազմավարական մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը և առաջ են քաշվում ռազմավարական

* Հողվածը ներկայացվել է 17.11.2021թ., գրախոսվել՝ 23.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

մշակույթի մի շարք հիմնատարրեր, որոնք կարող են հայ ժողովրդի առջև ծառայած համերկրային մարտահրավերների հաղթահարման նոր հարացույցային ընկալման հիմք հանդիսանալ:

Հիմնաբառեր՝ *ռազմավարական մշակույթ, ռազմավարական մտածողություն, ռազմավարական պլանավորում, ազգային նպատակ, ազգային ինքնություն, ինքնության ճգնաժամ, հայկական SMART POWER:*

Ի՞նչ է «ռազմավարական մշակույթը»

«Ռազմավարական մշակույթ» հասկացությունը ակադեմիական միջավայրում շրջանառության է դրվել 1970-ականների վերջին ամերիկյան մասնագիտական հանրույթի ներկայացուցիչ, միջազգայնագետ Ջ. Սնայդերի կողմից (Snayder): Հեղինակը «սառը» պատերազմն ու խորհրդա-ամերիկյան միջուկային դոկտրինները դիտարկում էր տարբեր պատմական, քաղաքական, կազմակերպական ու տեխնիկական սահմանափակումների համատեքստում: Նրա կարծիքով՝ ելիտաները գնեցրած կամ արտաբերում են յուրօրինակ ռազմավարական մշակույթ, որը լայն առումով հասարակական կարծիքի հիման վրա ձևավորված որոշակի կոնկրետ ռազմավարական մտածողության սոցիալականացված տարբերակ է: Ըստ Ջ. Սնայդերի՝ նման սոցիալականացման հավաքական արդյունքը վերաճում է որոշակի կայուն համոզմունքների, մոտեցումների ու վարքագծային մոդելների, որն ավելի շատ մշակութային, քան քաղաքական երևույթ է: Որոշակի քննադատության ենթարկվելով տարբեր մասնագետների կողմից (Алексева 134), այնուամենայնիվ, «ռազմավարական մշակույթը» Սառը պատերազմից հետո «երկրորդ կյանք» ստացավ, իսկ Ի. Նոյմանի և Հ. Հեյկայի (Neumann, Heikka), Ա. Ջոնսթոնի (Johnston) աշխատանքների շնորհիվ հարացուցային նոր մակարդակի հասավ: Մասնավորապես, Ա. Ջոնսթոնը «ռազմավարական մշակույթը» համարում է խորհրդանիշների ամբողջական այնպիսի համակարգ, որը ձևավորում է միջպետական հարաբերություններում ռազմական ուժի դերի և կիրառման արդյունավետության մասին որոշակի պատկերացումներ, դրանով իսկ կառուցակարգելով երկարաժամկետ ռազմավարական նախապատվություններ (Johnston 32-64): Այլ կերպ ասած՝ «ռազմավարական մշակույթը» փորձում է պարզել, թե այս կամ այն հանրույթը, էթնիկ միատարր կամ բազմազգ պետական միավորներն ու նրանցում առկա ռազմավարական մակարդակի որոշումներ ընդունողները ինչպես են վերաբերվում պատերազմի ու խաղաղության, հնարավոր սպառնալիքների համատեքստում ուժի կիրառման հարցերին: Այսինքն՝ ինչպես նշում է Մ. Ռիխտիկը, խոսքը գնում է այն մասին, թե ինչպես է հասարակությունը մտածում, խոսում, գրում, նկարահանում ֆիլմեր կամ պատմում անեկդոտներ անվտանգության սեփական պատկերացումների ու դիսկուրսի մասին (Рыхтик 203):

Ի մի բերելով «ռազմավարական մշակույթ» հասկացության բովանդակությանն ու ծավալին առնչվող մասնագիտական դիսկուրսի առանցքային թեգերը՝ կարող ենք գալ այն եզրակացության, որ «ռազմավարական մշակույթը» ոչ այլ ինչ է, քան «ռազմավարական մտածողության» և «ռազմավարական պլանավորման» Sui generis կամ ինքնատիպ համաձուլվածք: Այսպիսի եզրահանգման հիմք է ծառայում այն համոզմունքը, որ «ռազմավարական մշակույթը» մի կողմից՝ առնչվում է որոշակի հանրույթի (ազգ, էթնոս, սոցիալական խումբ) ավանդույթների, սովորույթների, մենթալիտետի (ռազմավարական մտածողություն), մյուս կողմից՝ դրանցից բխող վարքագծային մոդելների (ռազմավարական պլանավորում) ընտրության հետ: Հետևաբար «ռազմավարական մշակույթի» բովանդակային քննարկումների ու հարցադրումների տեսա-գործնական դիսկուրսն անհնար է իրականացնել առանց «ռազմավարական մտածողության» ու «ռազմավարական պլանավորման» եզրույթների լայն շրջանառության: Ընդ որում, «ռազմավարական մշակույթը» պետք է

հասկանալ հիմնահարցերի լուծման ու կոնֆլիկտների հաղթահարման համատեքստում ուժային գործոնով պայմանավորված (հարկադրանք, բռնություն, պատերազմ) պատմական փորձի արդյունքում տվյալ ազգի մոտ ձևավորված համապատասխան մտածողության ու գործողությունների ալգորիթմի համալիր ամբողջությունը: Ավելի պարզ՝ «ռազմավարական մշակույթն» այն մասին է, թե ազգային անվտանգության համատեքստում ինչպես է ազգը վերաբերվում պատերազմին և պատերազմի վարման ինչպիսի մշակույթ ունի:

Ո՞րն է հայության «ռազմավարական մշակույթը»

Ելնելով վերոնշյալ սահմանումից՝ փորձենք անդրադառնալ այն հարցին, թե պատմական անցքերի և իրադարձությունների բարդ հորձանուտում, որում հայտնվել է հայ ժողովուրդին իր ձևավորման ու զարգացման հազարամյակների ընթացքում, ռազմավարական ինչպիսի մշակույթ է ձևավորվել, բնորոշ է մեզ արդյոք ռազմավարական մտածողությունը և դրանից բխող ռազմավարական պլանավորումը, թե՛ մենք ինչպես հազարամյակներ առաջ, այժմ էլ «խարխուլ մակույկով խարխափում ենք փոթորկոտ օվկիանոսում»: Մեծ պատմահայրը՝ Մովսես Խորենացին, անդրադառնալով մեր պատմության ծայքերին ու հայերի ծագումնաբանության հարցերին, խիստ քննադատության է ենթարկում հայոց հին նախնիների «անիմաստասեր բարքերը», քանզի ինչպես Խորենացին է նշում. «...մեզ ամենիս հայտնի է մեր թագավորների և մյուս նախնիների անփութությունը դեպի գիտությունը և բնական հոգու անկատարությունը» (Խորենացի 70): Միգուցե պատճառը սեփական գրերի բացակայությունն էր կամ էլ անընդհատ պատերազմների առկայությունը. փորձելով ռացիոնալ բացատրություն գտնել՝ խորհում է Խորենացին: Բայց հետո հենց ինքն էլ հակադարձում է, որ «ինչպես այժմ, այնպես էլ հին հայերը չեն ունեցել սեր դեպի գիտությունը և իմաստալից երգարանները: Ուստի ավելորդ է մեզ խոսել անբան, թուլամիտ և վայրենի մարդկանց մասին» (Խորենացի 71): Ինչ է սա, եթե ոչ մեզանում «ռազմավարական մտածողության» բացակայության կամ հատվածականության մասին դարերի խորքից փոխանցված զգուշացում-ուղերձ, հատկապես՝ ընտրանուն ուղղված: Ինչու՞ ընտրանուն, որովհետև «ռազմավարական մտածողությունը» նախևառաջ Էլիտային բնորոշ հատկանիշ է: Էլիտաներն են պատասխանատվություն կրում իշխանության իրականացման և պետության քաղաքական կառավարման համար, հետևաբար հենց Էլիտաների մակարդակում էլ պետք է ձևավորվեն «ռազմավարական մշակույթի» տարրեր: Պատահական չէ, որ սուր քննադատության ենթարկելով հին և իր ժամանակների հայ ռազմա-քաղաքական ընտրանուն՝ Խորենացին միաժամանակ վստահանում է այն առաջնորդներին, որոնք «լավ էին համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում հայրենիքի սահմաններն ու տիրում արյունակից հարազատների վրա» (Խորենացի 89): Այդ առաջնորդների թվում հատկապես առանձնացնում է Հայկ, Արամ, Տիգրան եռյակը՝ որպես հայի ինքնության և քաջագործության յուրօրինակ խորհրդանիշներ:

Ըստ Էության, Խորենացու նկարագրած հայ ժողովրդի պատմությունը ոչ այլ ինչ է, քան պատերազմի ու խաղաղության երկընտրանք, որոնց առաջ կանգնած է եղել մեր ազգն իր սկզբնավորման օրվանից ի վեր: Այս դիլեման ըստ Էության անբաժան է մեր պատմական ընթացքից, որն էլ իր կնիքն է դնում նաև մտածողության վրա: Մի կողմից՝ գիտակցվում է ռազմական ուժով հայրենիքի սահմանները գծելու և պաշտպանելու կամքն ու կորովը (քաջերի սահմանը նրանց գենքն է, որքան կկտրե, այնքան էլ կտիրե (Խորենացի), մահ իմացյալ անմահություն է (Եղիշե), գենքով կա միայն հային փրկություն), մյուս կողմից՝ խաղաղասիրության չափից դուրս ընդգծված հայի գոյաբանական կողը հանգեցնում է այլասիրության (հռոմեասերներVS պարսկասերներ, արևմտամետներVS ռուսամետներ), օտարին ապավինելու և երրորդ

կողմի միջոցով սեփական կենսական շահերի ու պահանջմունքների բավարարման մոլուցքի:

Մեր «ռազմավարական մտածողության» մյուս առանձնահատկությունը հատվածականությունն է: Տեղին է նշում Յ. Մանուչարյանը, որ հայ իրականության մեջ նախորդ ու հաջորդ պատմաշրջանների միջև խզումն այնքան խորն է եղել, որ ամեն նոր դարաշրջանի կենտրոնում կանգնած գործիչը նախ ջանքեր է թափել վերականգնելու, հայտնագործելու նախորդ պատմաշրջանի ձեռքբերումները, ապա նոր մակարդակով մշակել, ուղենշել գալիքի, ապագայի հիմնապահանջները, գրոյից սկսել, վերականգնել, հաղթահարել, յուրացնել անցյալի արժեքները և նոր միայն կերտել նորը (Մանուչարյան 27): Մեր պատմությունն ու մտածողությունը շատ նման է Գուժիլյովյան պատիճար բռնկումներին, երբ տվյալ էթնոսի զարգացման որոշակի փուլում ի հայտ են գալիս որոշակի թվով պատիճար անհատներ, որոնք «վարակում են» մնացածին իրենց էներգիայով՝ դառնալով ընդօրինակման առարկա: Ընդ որում, հատվածականությունը դրսևորվում է ոչ միայն հայի հավաքական ինքնության ձևավորման պատմական տարբեր փուլերի, այլև հենց միմյանց ընկալման սուբէթնիկական հարթությունում: Ըստ իս՝ մեր ազգային ինքնությանն ու միասնականությանը հարվածող ամենախորքային արքետիպներից են Արցախի VS հայաստանցի, մշեցի VS վանեցի, լոռեցի VS երևանցի, սևեր VS սպիտակներ, նախկիններ VS ներկաներ և այլ նմնաօրինակ արհեստածին բաժանումները: Մենք Բաքվից, Գանձակից ու Ադրբեջանի այլ հայահոծ բնակավայրերից մագապուրծ եղած մեր հայրենակիցներին «կնքեցինք» «բաքվեցի», «կիրովբաղցի», «ղարաբաղցի» պիտակներով: Շուրջ հինգ հարյուր հազար փախստականների մեծ մասն այդպես էլ չհնտեգրվեց հայաստանյան միջավայրում, իսկ բուն ՀՀ-ում գնալով խորացավ «ղարաբաղցի VS հայաստանցի» անտոգոնիզմը՝ հասնելով աստվածության ու թշնամանքի անթույլատրելի չափաբաժնի: Արդյունքում աստիճանաբար Արցախյան հիմնահարցն իր կարևորությամբ սկսեց տեղը զիջել կենցաղային, սոցիալական բնույթի թեմաներին: 2018թ.-ի իրադարձություններից հետո իշխանության եկած քաղաքական թիմն այլ օրակարգեր առաջ տարավ: Նոր իշխանությունների կողմից հռչակված «բանակցությունները սեփական կետից սկսելու», «ինչ ուզում, այն էլ բանակցում ենք» ինքնահավան մոտեցումները, հայկական կողմերի՝ տասնամյակների ընթացքում ձևավորված բանակցային գործընթացի ինստիտուցիոնալ հիշողության մերժումը ոչ այլ ինչ է, քան «ռազմավարական մշակույթի»՝ համապատասխան մտածողության ու ռազմավարական պլանավորման ցածր մակարդակ կամ իսպառ բացակայություն, որն էլ արդյունքում մեզ կանգնեցրեց պատերազմի ողբերգական հետևանքների առջև:

Ռազմավարական մտածողությանը բնորոշ է հետևողականությունը: Այդ առումով էլ հայության ռազմավարական մտածողության մեջ նկատելի է հետևողականության պակասը: Մենք պոռթկումներով ապրող ազգ ենք, «այժմ և հիմա» սկզբունքով ապրող ազգ ենք, չենք սիրում երկարաժամկետ ծրագրեր կազմել, ապագայի հորիզոններ գծել, այլ կերպ ասած՝ ռազմավարական պլանավորմամբ առաջ շարժվել: Մինչդեռ **«ռազմավարական մշակույթը» ապագայի կանխատեսման ու կառավարման մշակույթ է** նախևառաջ, այն մտածողության մետամակարդակ է, որը տարածա-ժամանակային կոնտինիումի ընկալման ու նախագծման լրիվ ուրիշ հարթություն է ենթադրում: Ընդհանրապես ասում են, որ նա, ով ապրում է անցյալով, ներկա չունի, իսկ ով ապրում է ներկայով՝ ապագա: Մենք՝ հայերս, անցյալով ապրող ազգ ենք եղել, ապրել ենք անցյալի փառավոր նախնիների հուշերով, անցյալում մեծ հայրենիքի ցավի կորստով, հիմա դարձել ենք բացառապես ներկայով ապրող ժողովուրդ, օրվա կուրսով շարժվող, օրվա քաղաքական օրակարգերին, հասարակական տրամադրություններին արձագանքող. ոչ մի լուրջ բովանդակային դիսկուրս ապագայի մասին: Մինչդեռ ապագայի կառավարման տեսլականը կամ նոր

«Ռազմավարական մշակույթը» ներկա-անցյալ, ներկա-ապագա կապի միակցումն է ու դրա պրոյեկցիան մասսայական հասարակական գիտակցության վրա:

Յետպատերազմյան իրողություններ. հայության նոր ռազմավարական մշակույթի ձևավորման հիմնատարրերի վերլուծություն

44-օրյա պատերազմը և դրան հետևած հասարակական-քաղաքական իրադարձություններն ի ցույց դրեցին այն խորքային բացերը, որոնք առկա են այսօր հայ հասարակության ու հատկապես քաղաքական, ռազմական ու մտավորական էլիտաների մակարդակում «ռազմավարական մշակույթի» պակասի կամ դրա նորովի վերարժևորման հարցում: Թվում էր, թե պատերազմի ծանր կորուստներից հետո մենք արմատական քայլեր կանեինք, արագ դուրս կգայինք սոցիալական ապատիայի այս ծանր թմբիից և կփորձեինք ազգային համախմբման, մեր պետականության առջև ծառայած նոր մարտահրավերներին դիմակայելու կենսունակ լուծումներ առաջադրել: Սակայն հետպատերազմյան իրողությունները իրենց հետ բերել են հուսահատության ու անորոշության նոր ալիքներ, հայկական երկու հանրապետությունների գոյութենական նոր սպառնալիքներ, որոնց հաղթահարումը «հին» ռազմավարական մշակույթի շրջանակներում անհնար է թվում: Մեզ հարկավոր է հայության «ռազմավարական մշակույթի» նոր մոդել, որի ձևավորման գործում, մեր կարծիքով, առանցքային նշանակություն կարող են ունենալ հետևյալ հիմնատարրերը.

1. Ազգային նպատակի սահմանում

«Ռազմավարական մշակույթի» հիմքում միշտ դրվում են որոշակի ազգային, պետական նպատակներ ու այդ նպատակներին հասնելու ուղիներ (ռազմավարական պլանավորման տեսքով): Ո՞րն է ժամանակակից հայության ազգային գերագույն նպատակը, ազգային գաղափարը կամ գաղափարախոսությունը՝ գոյապահպանությունը, Արարատ սարի վերադարձը, պատմական հայրենիքի ազատագրումը, Արցախի միացումը մայր Հայրենիքին, թե՛ Մասլոյի բուրգի ստորոտում գտնվող ամենապարզ մարդկային բնական պահանջմունքների բավարարումը՝ ուտել, խմել, հանգստանալ, սեփական առողջությունը հետևել: Ի դեպ, Ֆուկույաման հենց այդպես էլ նկարագրում է վերջին մարդուն, որի համար սեփական մաշկի, ինչ ուտելու կամ ինչ խմելու մտահոգություններն ավելի կարևոր են, քան բարոյականության ու արժեքների մասին պատկերացումները (Фукуяма 815-816): Ինչքան նման է հետպատերազմյան հայ հասարակության իրողություններին. գինարբուքների փառատոններ, լեփ-լեցուն սրճարաններ, հանգստյան գոտիներ ու «խրախճանք ժանտափտի ժամանակ»: Ո՞րն է այն ազգային նպատակը, որը բոլորիս կհամախմբի: Գուցե Արցախի, Սյունյաց աշխարհի և ընդհարապես հայոց պետականության ռեալ կորստյան վտանգը: Չէ՞ որ հայ ժողովրդի պատմական ընթացքի հենց նման ծանր կորստից հետո սկիզբ առավ հայոց Ոսկեդարը: Արշակունիների դինաստիայի անկման ժամանակաշրջանում ծնունդ առան հայոց գրերի գյուտի, հայ ժողովրդի պատմության, մեր ազգային ինքնությանը նվիրված բազում աշխատություններ: Խորենացին, Եղիշեն, Բյուզանդն ու այլ մեծանուն հայ պատմիչներ դարերի մշուշից վեր հանեցին հայ ժողովրդի փառավոր անցյալի բազում հերոսական դրվագներ, տվեցին իրենց ժամանակի հայի մտածողության ու վարքագծի ախտորոշումը, հայի ապագա սերունդներին ոգեշնչեցին ազգային ինքնության պահպանման ու ազգային պետականության վերականգնման վեհ գաղափարներով: Մեր սերնդի հասարակական-քաղաքական մտքի առջև ծառայած գերխնդիրներից է հայության նոր «ռազմավարական մշակույթի» հիմքում դրվելիք համազգային մեծ գաղափարի կամ նպատակի ձևավորումը և դրան հասնելու ուղիների մշակումը:

2. Հայկական Էթնոարեալի (Արցախի տարածքի) սրբագործում

Ռազմավարական մշակույթի հաջորդ կարևոր հիմնատարը որոշակի գաղափարի, երևույթի կամ տարածքի սրբագործումն է, որը, որպես կանոն, համընկնում է Հայրենիքի գաղափարի հետ: Այլ կերպ ասած՝ թե դու ինչի՞ ես պատրաստ հանուն այդ հողի պաշտպանության կամ ազատագրման, մեր դեպքում վերաազատագրման համար: Հայոց հողի մոգականության և հայրենիքի սրբագործման մասին բազում առասպելական պատմություններ են մեզ հասել: Հիշենք թեկուզ հայոց Արշակ II և պարսից Շապուհ արքաների միջև երկխոսությունը, որի ժամանակ Հայաստանից բերված հողի վրա քայլելիս հայոց թագավորը կարծես մոգական ուժ է ստանում, ըմբոստանում և հոխորտում է հակառակորդի վրա, և ընդհակառակը, օտար հողում մենք կարծես թե զրկվում ենք մեր կենարար ուժից, Էներգիայի ու ոգեշնչման աղբյուրից, որը պարփակված է հայրենի հողի ընդերքում:

Հետևաբար մենք առնվազն ռազմավարական պլանավորման մակարդակում 20-25 տարվա կտրվածքով պետք է մշակենք ներկա ու գալիք սերունդների ռազմավարական մշակույթի նոր հայեցակարգ, որը կառուցված է լինելու հայկական ռևանշիզմի վրա: Օկուպացված Հայդուկը, Շուշին, Թալիշը, Դադիվանքը և հայրենիքի՝ հայ զինվորի արյամբ սրբագործված տարածքները սպասում են իրենց վերաազատագրմանը: Ինչպես ասում է հորենացին, քաջերի սերունդը քաջերն են:

3. Ինքնաճանաչում, XXI դարի հայի ինքնության սահմանում. ո՞վ ենք մենք և ի՞նչ առաքելություն ունենք այս աշխարհում

Բայց որպեսզի տեղի ունենա հայկական նոր, մեծ վերաազատագրումը, մենք պետք է վերադառնանք ակունքներ՝ անցյալ-ներկա քրոնոտոպային կոնտինումի մեջ պատասխան տալով, թե ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ի՞նչ առաքելություն ունենք այս աշխարհում՝ որպես հավաքական ամբողջություն: Կարողավո՞ւմ ենք ինքնաճանաչվել, Նարեկացի կամ Թումանյան՝ քեզ թվում է, թե մարգարեական իմաստությամբ կրանք մեր ժամանակներն են նկարագրում, ինչպես Հեգելն է ասում՝ պատմությունը մեզ մի բան է սովորեցնում, որ մենք ոչինչ էլ պատմությունից չենք սովորում: Ըստ Էռլայան, ինքնության խնդիրները հատկապես սրվում և արդիական են դառնում ճգնաժամային իրավիճակներում: Այսօր հայ հասարակության ներսում առկա է բարոյահոգեբանական ու արժեմշակութային խոր ճգնաժամ, որն ավելի է խորանում պետական մակարդակում այս ուղղությամբ տարվող սխալ քաղաքականության կամ դրա իսպառ բացակայության արդյունքում:

4. Ինքնակատարելագործում, վարքաբանական փոփոխություններ

Սրանից բխում է հաջորդ հարցը՝ ինքնակատարելագործում: Աշխարհում շատ քիչ ազգեր կան, որ այդքան լավ գիտեն իրենց ազգային հոգեկերտվածքի ուժեղ ու թույլ կողմերը, սակայն դժվար է գտնել մի հայի, որ բռնել է ինքնակատարելագործման ուղին: Մինչդեռ ազգային գաղափարախոսության ինքնաճանաչում, ինքնահամախմբում, ինքնաազատագրում հայեցակարգային տրիադայի (Մանուչարյան 27) մեջ պետք է ավելացվի նաև ինքնակատարելագործումը՝ որպես աստվածային ամենամեծ շնորհներից մեկը, որը տրված է մեզ: Արարիզմը, որպես հայության միասնական արարչագործական գաղափարախոսություն (Փալստյան 85-88), կարող է ինչ-որ չափով այդ խնդիրը լուծել: Մենք արարչական սկիզբ ունեցող ազգ ենք, մենք արարչագործական առաքելություն ունենք այս աշխարհում, ուղղակի պատմական ընթացքի այս շրջափուլում շեղվել ենք մեր հիմնական գոյաբանական «ԵՍ»-ից:

5. Նոր կոնստրեկտայի ձևավորում

Ո՛վ պետք է զբաղվի «նազմավարական մշակույթի» ձևավորմամբ: Չէ՞ որ «նազմավարական մշակույթը», ինչպես արդեն նշվել է, էլիտար զբաղմունք է, կամ ավելի ճիշտ՝ էլիտաների զբաղմունք է: Համաձայն Պարետոյի՝ պատմությունը էլիտաների հավերժական շրջապտույտ է. էլիտաներին հակադրվում են կոնստրեկտաները, որոնք փոխարինում են մեկը մյուսին: Հենց կոնստրեկտայի մակարդակում է հնարավոր հայության նոր նազմավարական մշակույթի հիմնատարների մշակումը, համալրումը և փոխհարստացումը: Դրա համար հարկավոր է առնվազն կոնստրեկտայի մակարդակում համահայկական մեծ կոնսենսուսի հաստատում: Եթե դա տեղի չունենա, ապա մենք փրկության որևէ շանս չունենք: Նոր էլիտաները կամաց-կամաց խժժում են առողջ բանականության ու ազգային ակունքներին վերադառնալու յուրաքանչյուր փորձ: Նոր քաղաքական էլիտան ապագային է իր բնույթով, իսկ մտավորական էլիտայի մեջ դանդաղ, բայց արդեն սողոսկում են ապագայնության էլեմենտները:

6. Վերաազատագրման հայեցակարգի մշակում

Մեզ հարկավոր է վերաազատագրման նոր հայեցակարգ: Ստեղծված իրավիճակին համակերպվելը, սեփական ուժերի ու հնարավորությունների նկատմամբ թերահավատության սերմանումը վտանգավոր ու մահացու հետևանքներ կարող են ունենալ ազգի ինքնապահպանման և ինքնաառողջացման համար: Առնվազն «նազմավարական մտածողության» մակարդակում մեր միջից պետք է վանել սոցիալական էթնոկոնֆորմիզմը, որը մտել է մեր արյան մեջ, փտեցնում է մեր կենսական անոթները, ջլատում է մեր ուժերը, խլում է հավատը սեփական ուժերի նկատմամբ: Աստվածաշունչն ասում է՝ «Ընդամենը մանանեխի հատիկի չափ հավատ ունենանք, սարեր շուռ կտաք»: Մեր ազգին հարկավոր են նոր հաղթանակներ: Մենք պարտք ենք մեր նախնիներին, նահատակներին: Մեզնից խլվել են հաղթանակի բոլոր խորհրդանիշները՝ հունվարի 28-ը, Մայիսի 9-ը՝ Շուշիի ազատագրումը: Մենք պետք է վերադարձնենք մեր ազգին հաղթանակների խորհուրդը:

7. Հայկական SMART POWER –ի ձևավորում

Միակողմանի խաղաղասիրությունը կործանարար նազմավարություն է: Մեզ հարկավոր է հայկական «խելամիտ ուժի» ձևավորում: Կոշտ ուժի կիրառմամբ խաղաղության պարտադրումը մեզ համար ավելի ընդունելի տեսլական է: Ի դեպ, խաղաղության տևողությունը ուղիղ համեմատական է պատերազմական ձեռքբերումներով: Արցախյան առաջին պատերազմի արդյունքները մեզ տվեցին ընդամենը 26 տարվա խաղաղություն: Այս պատերազմի արդյունքները թե ինչքան երկար կպահպանեն Ադրբեջանի հաղթական էյֆորիան, կախված է միմիայն մեզնից, թե մենք երբ «դանդաղ Ղավթի» նման դուրս կգանք լեթարգիական քնից ու նորից կբարձրացնենք հայոց սրբազան «թուր կեծակին», կախված է մեզնից, միմիայն մեզնից:

8. Ապագայի կառավարում, նազմավարական պլանավորում

«Նազմավարական մշակույթն» ինչ-որ առումով վերաբերում է ապագայի տեսլականի գծագրմանը կամ նազմավարական պլանավորմանը: Դե ուրեմն կպնենք գործին, օր առաջ ձևավորենք մեր ազգային նոր նազմավարական մշակույթը և կառուցենք ապագայի մեր երազանքների հայրենիքը վահանով կամ վահանի վրա: Արցախով, արցախցու կամքով, հայության հավաքական բազկի գորուքամբ և Աստծու օրհնությամբ մենք կարող ենք հասնել մեր ազգային բոլոր նվիրական

երազանքներին: Խաղաղություն, պատվախնդրություն ու արժանապատվություն մեր ժողովրդին:

Օգտագործված գրականություն

1. Գալստյան Խաչիկ. Փոքր ժողովրդի մեծ երազանքը. Արցախյան շարժումը հայոց ինքնության գոյաբանության համատեքստում // Գիտական Արցախ, N 1 (2), 2019:
2. Մանուչարյան Ջ. Արարատիզմ. հայոց ազգայնականությունը պատմության շրջադարձային հանգրվաններում, Եր., 2021:
3. *Մովսես Խորենացի*. Հայոց պատմություն, Եր., 1997:
4. Алексеева Т. А. Стратегическая культура: Эволюция концепции // ПОЛИС, 2012, N 5.
5. Гегель Г. Феноменология духа // Гегель Г. Феноменология духа. Философия истории. М., Эксмо, 2007.
6. Рыхтик М. Стратегическая культура и новая концепция национальной безопасности США. // Вестник Нижегородского Государственного университета, 2005, вып. 1,
7. Фукуяма Ф. Конец истории и последний человек. М., АСТ, 2004.
8. Хантингтон С. Столкновение цивилизаций. М., АСТ, 2003.
9. Johnston A. Cultural Realism: Strategic Culture and Grand Strategy in Chinese History. Princeton: Princeton University Press, 1997.
10. Johnston A. Thinking about Strategic Culture // International Security. Vol.19. No. 4. 1995
11. Neumann I., Heikka H. Grand Strategy, Strategic Culture, Practice. The Social Roots of Nordic Defence. // Cooperation and Conflict, 2005, vol. 40, № 1.
12. Snyder J. The Soviet Strategic Culture: Implications for Nuclear Options. Santa Monica: RAND Corporation, 1977.

Works Cited

1. Galstyan Xachik. P'oqr jhoghovrdi mec' erazanqy'. Arcaxyan sharjhumy' hayoc inqnut'yan goyabanut'yan hamateqstum // Gitakan Arcax, [The Big Dream of a Small People: The Artsakh Movement in the Context of Armenian Identity / Scientific Artsakh] N 1 (2), 2019:
2. Manucharyan H. Araratizm. hayoc azgaynakanut'uny' patmut'yan shrjadard'ayin hangrvannerum, [Araratism: Armenian Nationalism in the Turning Stages of History] Er., 2021:
3. Movses Xorenaci. Hayoc patmut'yun, [History of Armenia] Er., 1997
4. Alekseeva T. A. Strategicheskaja kul'tura: Jevoljucija koncepcii [Strategic culture: Evolution of the concept] // POLIS, 2012, N 5.
5. Gegel' G. Fenomenologija duha // Gegel' G. Fenomenologija duha. Filosofija istorii. [Phenomenology of the spirit. Philosophy of History] M., "Jeksmo", 2007.
6. Ryhtik M. Strategicheskaja kul'tura i novaja koncepcija nacional'noj bezopasnosti SShA. // Vestnik Nizhegorodskogo Gosudarstvennogo universiteta, [Strategic culture and the new concept of US national security. // Bulletin of Nizhny Novgorod State University] 2005, vyp. 1,
7. Fukujama F. Konec istorii i poslednyj chelovek. [The End of history and the Last Man] M., "AST", 2004.
8. Hantington S. Stolknovenie civilizacij. [Clash of Civilizations] M., "AST", 2003.

9. Johnston A. *Cultural Realism: Strategic Culture and Grand Strategy in Chinese History*. Princeton: Princeton University Press, 1997.
10. *Johnston A. Thinking about Strategic Culture //International Security*. Vol.19. No. 4. 1995
11. Neumann I., Heikka H. *Grand Strategy, Strategic Culture, Practice. The Social Roots of Nordic Defence. // Cooperation and Conflict*, 2005, vol. 40, № 1.
12. Snyder J. *The Soviet Strategic Culture: Implications for Nuclear Options*. Santa Monica: RAND Corporation, 1977.

POST-WAR STATUS QUO IN ARTSAKH: THE IMPERATIVE OF FORMING A NEW STRATEGIC CULTURE OF ARMENIANS

KHACHIK GALSTYAN

*Yerevan State University, Faculty of International Relations,
Chair of Theory and History of Political Science,
Journal «Scientific Artsakh», Member of the Editorial Board;
Doctor of Political Sciences, Professor, Lecturer;
Yerevan, Republic of Armenia*

On September 27, 2020, Azerbaijan unleashed a large-scale military aggression against the Republic of Artsakh. As a result of the new STATUS QUO installed in the conflict zone, the security systems of the two Armenian states have been seriously disrupted. The Armenian society is in a deep moral and psychological crisis, which may turn into a threat to the ontological self-destruction of the nation. After the signing of a trilateral ceasefire agreement on November 9, Azerbaijan did not end its militant policy.

The purpose of this article is to find out what conceptual and paradigmatic changes are necessary to overcome such existential challenges and problems facing the Armenian society. To achieve this goal, the article raises a number of scientific and practical issues. In particular, the subject of research are the concept of "strategic culture", the features of strategic thinking, the elements of the formation of a new strategic culture of the Armenians. The research method is historical comparative analysis. As the main conclusion, the article substantiates the need for the formation of a new strategic culture of the Armenians, and also puts forward a number of elements of strategic culture that can serve as the basis for a new paradigmatic perception to overcome the existential challenges facing the Armenian society.

Keywords: *strategic culture, strategic thinking, strategic planning, national goal, national identity, identity crisis, Armenian SMART POWER.*

ПОСТВОЕННОЕ STATUS QUO В АРЦАХЕ. ИМПЕРАТИВ ФОРМИРОВАНИЯ НОВОЙ СТРАТЕГИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ АРМЯНСТВА

ХАЧИК ГАЛСТЯН

*профессор кафедры теории и истории политической науки
Ереванского государственного университета,
член редакционного совета журнала «Научный Арцах»,
доктор политических наук, профессор,
г.Ереван, Республика Армения*

27 сентября 2020 года Азербайджан развязал широкомасштабную военную агрессию против Республики Арцах. В результате установленного нового STATUS QUO в зоне конфликта серьезно нарушены системы безопасности двух армянских государств. Армянское общество находится в глубоком морально-психологическом кризисе, которое может превратиться в угрозу онтологического самоуничтожения нации. После подписания 9 ноября трехстороннего соглашения о прекращении огня Азербайджан не прекратил свою воинственную политику.

Цель данной статьи - выяснить, какие концептуальные и парадигмальные изменения необходимы для преодоления таких экзистенциальных вызовов и проблем, перед которыми стоит армянское общество. Для достижения поставленной цели в статье поднимаются ряд научно-практических вопросов. В частности, предметом рассмотрения становится понятие «стратегическая культура», анализируются особенности стратегического мышления, вводятся в оборот элементы формирования новой стратегической культуры армянства. Основным методом исследования является историко-сравнительный анализ. Как основной вывод, в рамках статьи обосновывается необходимость формирования новой стратегической культуры армянства, а также выдвигаются ряд элементов стратегической культуры, которые могут служить основой нового парадигмального восприятия для преодоления тех экзистенциальных вызовов, перед которыми стоит армянское общество.

Ключевые слова: *стратегическая культура, стратегическое мышление, стратегическое планирование, национальная цель, национальная идентичность, кризис идентичности, армянская Умная Сила.*

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ 44 -ՕՐՅԱ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ*

ՀՏԴ 327

DOI: 10.52063/25792652-2021.3-157

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ, պատմական գիտությունների թեկնածու, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
g.balasanjan@ysu.am

Թեմայի ուսումնասիրության նպատակն է ուսումնասիրել 44-օրյա Արցախյան պատերազմում պարտության դիվանագիտական պատճառները:

Հողվածի հիմնական խնդիրն է ներկայացնել, թե ինչու Հայաստանը հայտնվեց դիվանագիտական մեկուսացման մեջ, ինչ քայլեր ձեռնարկվեցին հետհեղափոխական իշխանությունների կողմից, որոնց արդյունքում մեր դաշնակից և բարեկամ պետությունների հետ ունեցած հարաբերությունները սառեցվեցին կամ երկկողմ շփումների մակարդակը բավականին իջեցվեց:

Չարմանալիորեն կարծես աներևույթ մի ձեռք հետևողական վատթարացնում էր հատկապես ՀՀ դաշնակից ու բարեկամ այն պետությունների հետ հարաբերությունները, որոնք ակտիվ ներկայացված էին տարածաշրջանում և առերևույթ չէզոք, սակայն իրականում բավականին հայամետ դիրքորոշում ունեին ԼՂ հակամարտության հարցում: Հատկապես Ռուսաստանի Դաշնության, Չինաստանի, Իրանի նկատմամբ քաղաքականության փոփոխությունը հանգեցրեց նրան, որ այդ երկրները հիմնականում չէզոք դիրք գրավեցին 44-օրյա պատերազմի ժամանակ:

Ուսումնասիրությունը կատարվել է հիմնականում ժամանակի մամուլի ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված նյութերի հիման վրա, ինչպես նաև հողվածի շարադրման ժամանակ օգտագործվել են պետական բարձրաստիճան պաշտոնյաների՝ տարբեր լրատվամիջոցներին տված հարցազրույցները:

Հիմնաբառեր՝ հեղափոխություն, արտաքին քաղաքականություն, Արցախ, բանակցային գործընթաց, Ռուսաստանի Դաշնություն, Իրան, Չինաստան, Հնդկաստան, պատերազմ:

Ներածություն

2018թ.-ի հեղափոխությունից հետո ՀՀ նոր իշխանությունները սկսեցին վարել արտաքին քաղաքականություն, որը բավականին հարցեր առաջացրեց առաջին հերթին փորձագիտական հանրության շրջանում թե՛ ՀՀ ներսում և թե՛ ՀՀ սահմաններից դուրս: Չարմանալիորեն կարծես աներևույթ մի ձեռք հետևողական

* Հողվածը ներկայացվել է 15.11.2021թ., գրախոսվել՝ 27.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

վատթարացնում էր հատկապես ՀՀ դաշնակից և բարեկամ այն պետությունների հետ հարաբերությունները, որոնք ակտիվ ներկայացված էին տարածաշրջանում և առերևույթ չեզոք, սակայն իրականում բավականին հայամետ դիրքորոշում ունեին ԼՂ հակամարտության հարցում: Դրանց շարքում էին նախևառաջ ՀՀ ռազմաքաղաքական դաշնակից Ռուսաստանի Դաշնությունը, ՀՀ հարևան, տարածաշրջանային կարևոր գործընկեր և պանթոնրքիստական ծրագրերին հակակշռող Իրանի Իսլամական Հանրապետությունը, Չինաստանը, Հնդկաստանը և այլն: Պետք է արձանագրել, և դեպքերի հետագա ընթացքի ուսումնասիրությունը և այլն: Պետք է տալիս, որ դա արվեց ոչ թե և ոչ այնքան նոր իշխանությունների անփորձության, որքան հետևողականորեն իրականացվող քաղաքականության պատճառով:

Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունների Էվոյուցիան հեղափոխությունից հետո

Չնայած հեղափոխության ժամանակ Երևանի Հանրապետության հրապարակում Նիկոլ Փաշինյանի հավաստիացումներին առ այն, որ ՌԴ-ի հետ հարաբերությունները հեղափոխության արդյունքում չեն տուժելու, այլ ընդհակառակը՝ ավելի բարձր մակարդակի հարաբերություններ են կառուցվելու, գործնականում ակնատես եղանք ճիշտ հակառակ պատկերի: Հայտնի փաստ է, որ յուրաքանչյուր երկրի արտաքին քաղաքականությունը երկրի ներսում իրականացվող քաղաքականության շարունակությունն է: Հեղափոխությունից հետո իրականացված կադրային քաղաքականության արդյունքում պետական կառավարման համակարգում առանցքային բարձր պաշտոններ ստացան մարդիկ, որոնք հիմնականում արևմտամետ գործչի համբավ ունեին: Նրանց շարքում էր նաև արևմտամետ գործչի համբավ ունեցող Դավիթ Տոնոյանը, որի նշանակումը ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնին ևս մեծապես ազդեց հայ-ռուսական ռազմաքաղաքական ու ռազմատեխնիկական համագործակցության մակարդակի վրա:

Անվտանգային նույն համակարգում գտնվող ՀՀ և ՌԴ Անվտանգության խորհուրդները վերջին շրջանում, ըստ Եւրոյան, ակտիվորեն չէին համագործակցում միմյանց հետ: Բավականաչափ պասիվ էին նաև շփումները հատուկ ծառայությունների մակարդակով: Սա ունի մեկ անուն՝ ԱՆՎԱՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնից Յուրի Խաչատուրովի խայտառակ կերպով հետկանչը, որն ըստ Եւրոյան ՌԴ միջազգային վարկին ու հեղինակությանը հասցված հարված էր, ևս բացասական ազդեցություն ունեցավ երկկողմ հարաբերությունների վրա: Եվ վերջապես քաղաքական հետապնդումները ՌԴ նախագահ Վ. Պուտինի ընկեր, ՀՀ-ՌԴ հարաբերությունների զարգացման գործում մեծ ավանդ ունեցող, ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Զոչարյանի, ԱԺ խորհրդարանական մեծությամբ երկրորդ խմբակցության ղեկավար, ԲՀԿ նախագահ, ՌԴ-ի հետ սերտ հարաբերությունների կողմնակից Գ. Ծառուկյանի նկատմամբ ևս չէին կարող աննկատ մնալ:

2019թ.-ի հոկտեմբերի 9-ին Երևանում անցկացվեց ԵԱՏՄ հերթական գագաթնաժողովը («Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստ»), և հրավիրված երկրների ղեկավարներն ականատես եղան ակնհայտ արհամարհական վերաբերմունքի դրսևորման ՌԴ նախագահի նկատմամբ: Մենք չենք կարող պնդել, թե դա արվել է ՀՀ բարձրագույն իշխանության ցուցումով, սակայն փաստը մնում է փաստ, որ այն իր վնասակար ազդեցությունը ունեցավ հայ-ռուսական հարաբերությունների վրա:

Դեռևս 2018թ.-ի սեպտեմբերին ՌԴ կատարած պաշտոնական այցի շրջանակներում Վ.Պուտինի հետ հանդիպման ժամանակ Ն. Փաշինյանը, կարևորելով հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունները, միաժամանակ նշեց, որ երկկողմ հարաբերությունները տեսնում է նաև իբրև միմյանց գործերին չմիջամտելու և ինքնիշխանության սկզբունքի վրա կառուցված հարաբերություններ, ինչը

Մոսկվայում միանշանակ չընկալվեց («Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Ռուսաստանի Դաշնություն»):

2018թ. հեղափոխությունը և ՀՀ-ի անհարաբերությունները

2018թ.-ի հեղափոխությունից հետո Իրանի հետ հարաբերությունները ևս տրանսֆորմացիայի ենթարկվեցին, ինչի արդյունքում մեր հարավային հարևանը սկսեց չվատահել ՀՀ իշխանություններին: Ն. Փաշինյանը հայ-իրանական հարաբերություններում սկսեց չափից ավելի կարևորել այդ հարցում երրորդ երկրների, հատկապես ԱՄՆ-ի իշխանությունների ունեցած դիրքորոշումը՝ մոռացության տալով այն հանգամանքը, որ Իրանը մեր ամենավստահելի հարևանն է, որի միջոցով ապահովվում է դեպի Պարսից ծոցի տաք ծովային նավահանգիստներ ՀՀ անխափան ուղին:

2018թ.-ին հոկտեմբերի 26-ին ԱՄՆ նախագահի խորհրդական Ջոն Բոյթոնը դեպի Հարավային Կովկաս տարածաշրջանային այցի շրջանակներում եղավ Նան Երևանում, հանդիպեց Ն. Փաշինյանին և անվտանգության խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին: Բոյթոնը, որ Իրանի նկատմամբ կոշտ քաղաքականության կողմնակից է, իր այցի շրջանակներում հայտարարեց, որ ԱՄՆ-ը ցանկանում է առավելագույն ճնշում գործադրել Իրանի վրա և այս առումով հայ-իրանական սահմանը լուրջ խնդիր կլինի («Բոյթոնի հայաստանյան այցի գլխավոր շեշտադրումները»): Այլ կերպ ասած՝ ԱՄՆ-ը ցանկանում է երաշխիքներ ստանալ ՀՀ ներկա իշխանություններից, որ Իրանի նկատմամբ ճնշում գործադրելու որոշիչ պահին ՀՀ իշխանությունները կփակեն հայ-իրանական սահմանը՝ վերջինիս լիարժեք շրջափակման ենթարկելու համար:

Այս այցից մի քանի օր անց՝ 2018թ.-ի նոյեմբերի 1-ին, ԱԺ-ում պատասխանելով ՀՀԴ խմբակցության պատգամավոր Ռուզաննա Առաքելյանի հարցին, ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ն. Փաշինյանը նշեց, որ «... որ հայ-իրանական սահմանը, օրինակ, ամեն պահի կարող է դե-ֆակտո փակվել ԱՄՆ-ի և Իրանի հետ հարաբերությունների և մնացած աշխարհաքաղաքական խնդիրների պատճառով» («Հայ-իրանական սահմանը ամեն պահի կարող է փակվել»): Դրանով փաստորեն մեսիջ ուղարկվեց Թրամփի վարչակարգին, որ ՀՀ իշխանությունները Իրանի հարցում ընդունում են նրանց պայմանները:

Տարբեր ժամանակահատվածներում ՀՀ իշխանությունների վրա եղել են ճնշումներ հայ-իրանական սահմանի հետ կապված, սակայն միշտ էլ Հայաստանի իշխանությունները կարողացել են խուսափել սահմանը փակելուց՝ հաշվի առնելով Իրանի դերն ու նշանակությունը և Իրանում մեծ հայ համայնքի առկայությունը: Փաստորեն Ն. Փաշինյանի կառավարությունը ՀՀ անկախության 30 տարիների ընթացքում առաջին անգամ խոսեց հայ-իրանական սահմանի հնարավոր փակման մասին:

2019թ.-ի հունվարին գրանցվեց հերթական հակաիրանական միջադեպը իշխող քաղաքական մեծամասնության մասնակցությամբ: Հունվարի 16-ին ԱԺ Իմ քայլը խմբակցության պատգամավոր Հայկ Կոնջորյանը, խոսելով ՀՀ հարևանների մասին, Իրանը ներկայացրեց իբրև ավտորիտար պետություն («Պատգամավորի իրանական կիքը»): Այս հայտարարությունը ևս իր բացասական ազդեցությունը թողեց ՀՀ-ի անհարաբերությունների վրա:

2020թ.-ի հունվարին Բաղդադում ամերիկյան օդուժի հասցրած հարվածներից սպանվեց Իրանի իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի Ղոթս ստորաբաժանման հրամանատար, բավականին հայամետ կողմնորոշում ունեցող գեներալ Ղասեմ Սոլեյմանին: Իբրև բարեկամ երկիր՝ ՀՀ իշխանությունները պարտավոր էին ցավակցական ուղերձ հղել Իրանի իշխանություններին և Իրանի բարեկամ ժողովրդին, սակայն ՀՀ-ի կողմից արձագանք եղավ միայն ԱԳՆ մակարդակով՝ Մնացականյան-Չարիֆ հեռախոսազրույցի ժամանակ («Ղասեմ Սոլեյմանի սպանության» թեմայի քարոզական բաղադրիչը): Սակայն ՀՀ

վարչապետը ձեռնպահ մնաց ցավակցական հեռագիր ուղարկելուց: ԶԶ ԱԺ փոխոստանակ Վահե Էնֆիաջյանը, տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Մ. Մելքունյանը և Բարգավաճ Հայաստան խմբակցության քարտուղար Ա. Աբովյանը այցելեցին ԶԶ-ում Իրանի դեսպանատուն և գրառումներ կատարեցին Սոլեյմանիի սպանության առիթով դեսպանատանը բացված սգո մատյանում:

Իրանի նկատմամբ ԶԶ իշխանությունների կողմից վարած նման քաղաքականության արդյունքը եղավ այն, որ 2020թ.-ի սեպտեմբերի 27-ին ադրբեջանական ագրեսիայի ժամանակ Իրանը խիստ չեզոք դիրքորոշում որդեգրեց՝ ըստ էության մեկ հարթության վրա դնելով Հայաստանը և Ադրբեջանը:

ԶԶ-Զինաստան հարաբերությունների վրա ազդող գործոնները հետհեղափոխական շրջանում

Հեղափոխությունից հետո ԶԶ-Զինաստան հարաբերությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ոչ միայն չեն զարգացել, այլ ընդհակառակը՝ անկում են ապրել: Պատճառներից մեկը ԶԶ իշխանությունների կողմից կայացրած տարօրինակ որոշումն էր առ այն, որ Հայաստանը 2020թ.-ի հունիսի 12-ին միացավ «Կրոնական ազատությունների միջազգային այլանս»-ին («ԶԶ անդամակցությունը Կրոնական ազատության միջազգային դաշինքին»), որը ոչ այլ ինչ է, քան հակաչինական դաշինք: Դեռևս 2019թ.-ի սեպտեմբերին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Սալլիվանը փակ քննարկում էր կազմակերպել ՄԱԿ-ում, որի թեման էր «Մարդու իրավունքների ճգնաժամը Սինցյանում»: Քննարկվում էր Զինաստանի հյուսիսում բնակվող ուլուրների, էթնիկ դազախների, էթնիկ դրոզների և այլ մահմեդականների դեմ Զինաստանի ճնշումները («Ինչո՞ւ է պետք «ափալ-թափալ» մեզ «մեջ գցել» գիզանտների մեծ կռվի մեջ»): Ահա այս տեղեկատվությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ալյանսը ոչ այլ ինչ է, քան Զինաստանի թյուրքալեզու ժողովուրդների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող դաշինք, որին միանալը ԶԶ-ին ոչ միայն ոչինչ չտվեց, այլև փչացրեց հարաբերությունները Զինաստանի հետ: Սա է պատճառը, որ սեպտեմբերին սկսված ադրբեջանա-թուրքական ագրեսիայի ժամանակ պաշտոնական Պեկինը որևէ հայտարարություն չարեց:

Հատկանշական է, որ Ալյանսի նկատմամբ բացասական վերաբերմունք կա նաև ՌԴ-ում, որտեղ հնչում են կարծիքներ, որ այն ստեղծվել է Միացյալ Նահանգների կողմից ամերիկյան արժեքները տարածելու նպատակով և կրոնական ազատությունների հետ որևէ կապ չունի («Ինչո՞ւ է պետք «ափալ-թափալ» մեզ «մեջ գցել» գիզանտների մեծ կռվի մեջ»): Դաշինքի անդամ երկրների նախնական ցանկը ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ այնտեղ բացակայում են Թուրքիան և Ադրբեջանը: Սա այն դեպքում, երբ խնդիրը վերաբերում է առաջին հերթին Զինաստանի թյուրքալեզու ժողովուրդներին, և զարմանալի է ԶԶ թյուրքալեզու հարևանների բացակայությունը: Անդամ չեն նաև Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետությունները: Ամեն ինչ այնքան բարդ չէ, որքան թվում է առաջին հայացքից: Ուղղակի նրանք հասկացել են, որ այս դաշինքն իրականում հակաչինական ուղղվածություն ունի և չեն ցանկանում մասնակցել Միացյալ Նահանգների կողմից սկսված այս մեծ խաղին: Եվ այս պայմաններում իրոք զարմանալի է Չոհրաբ Մնացականյանի փոխարեն ԶԶ արտաքին գործերի նախարար նշանակված Արա Այվազյանի հայտարարությունն առ այն, թե «...դիվանագիտության մեջ մենք ձախողում չենք ունեցել» («Ասել՝ այս պատերազմն ու հրադադարի հայտարարությունը դիվանագիտական ձախողում չեն, իրականության աղճատում է»):

Արցախյան երրորդ պատերազմում տարօրինակ լռություն էր պահպանում նաև պաշտոնական Դելին՝ չնայած այն հանգամանքին, որ պաշտոնական Իսլամաբադը պաշտպանեց ադրբեջանական ագրեսիան և ըստ որոշ տեղեկությունների՝ Արցախում

հայկական ուժերի դեմ կռվում էին նաև կամավորականներ Պակիստանից: Ավանդաբար, ի հակակշիռ Պակիստանի վարած քաղաքականության, որը, ի դեպ, դեռևս չի ճանաչել Հայաստանի Հանրապետության անկախությունը, ՀՀ իշխանությունները Հնդկաստանի հետ միշտ էլ ունեցել են բարձր մակարդակի քաղաքական հարաբերություններ: Բայլեր են իրականացվել նաև ռազմատեխնիկական հարաբերությունների զարգացման ուղղությամբ, որոնք, սակայն, վերջին 2.5 տարում բավականին պասիվ են եղել և դա, անշուշտ, ՀՀ արտաքին քաղաքականության համար մեծ բացթողում է, եթե չասենք՝ ձախողում:

ԼՂ բանակցային գործընթացում տեղ գտած հիմնական բացթողումները հետհեղափոխական շրջանում

Գալով իշխանության՝ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Ադրբեջանի հետ բանակցությունները սկսում է սեփական՝ 0-ական կետից՝ դրանով, փաստորեն, հրաժարվելով օգտագործել այն շահեկան վիճակը, որը ՀՀ-ն ուներ 2017թ.-ին Վիեննայում և Սանկտ-Պետերբուրգում ունեցած բանակցությունների արդյունքում: Այդ ժամանակ Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևը բողոքում էր, որ փակ դռների հետևում իրեն ստիպում են ճանաչել Արցախի անկախությունը:

Հեղափոխությունից հետո ՀՀ իշխանություններն իրենց չկշռադատված քայլերի ու հայտարարությունների պատճառով բանակցային գործընթացը մտցրին փակուղի՝ դրանով զգալիորեն մեծացնելով պատերազմի վտանգը: Այս վտանգների մասին մեր կողմից բարձրաձայնվել է դեռևս 2018թ.-ի սեպտեմբերին Ստեփանակերտում կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» խորագրով 3-րդ միջազգային գիտաժողովի ժամանակ: «Այնուամենայնիվ պետք է կշռել, որ ամեն ինչ այնքան էլ հարթ չէ: Հայաստանում իշխանափոխությունից հետո Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ բանակցությունները դադարել են: Սա շատ վտանգավոր է, քանի որ բանակցությունների բացակայության պայմաններում Ադրբեջանը անընդհատ կարող է բարձրացնել լարվածության աստիճանը՝ փորձելով դրա միջոցով ստիպել Հայաստանի նորընտիր իշխանություններին գնալ զիջումների: Նիկոլ Փաշինյանը, ի տարբերություն իր նախորդ Սերժ Սարգսյանի, նոր մարդ է բանակցություններում և նրան ժամանակ է հարկավոր ադրբեջանական կողմի վարքագծին ծանոթանալու և նաև որոշակի առումով հարմարվելու համար: Բացի այդ, հայկական կողմը պետք է պատրաստ լինի նաև ռազմաճակատում իրավիճակի կտրուկ վատթարացմանը, քանի որ հայտարարելով բանակցային ֆորմատի ոչ լիարժեք լինելու և Արցախի ղեկավարության՝ բանակցային սեղանի շուրջ վերադառնալու անհրաժեշտության մասին՝ Հայաստանը ծանր պայմաններ է ստեղծում ադրբեջանական ղեկավարության համար, որը ամեն ինչ կանի ձևաչափի փոփոխությունը մի որոշ կամ տևական ժամանակ հետաձգելու համար: Այս պարագայում ևս հակամարտության թեժացում բացառել հնարավոր չէ: Պակաս անհանգստացնող չէ նաև ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի կողմից կազմակերպված «Կանայք հանուն խաղաղության» արշավը: 2018թ.-ին հուլիսի 25-ին ելույթ ունենալով Մոսկվայի Տրետյակովյան թանգարանում՝ տիկին Հակոբյանը ներկաներին առաջարկեց միանալ իր կողմից կազմակերպված արշավին: Բնավ դեմ չլինելով խաղաղությանը՝ կարծում ենք, որ նմանօրինակ արշավներ կազմակերպելը ժամանակավորեալ է: Համոզված ենք, որ ադրբեջանական կողմը երբեք չի միանա այս նախաձեռնությանը, քանի որ նրանց համար խաղաղասիրությունը պարտվողականությանը հավասար կատեգորիա է: Խաղաղության մասին կարելի կլինի խոսել միմիայն ապշերոնյան հանրապետության կողմից Արցախի պաշտոնական ճանաչումից հետո և այդ դեպքում նմանօրինակ արշավը հնարավոր կլինի դիտարկել որպես երկու ժողովուրդների միջև առկա թշնամության վերացման կամ գոնե մեղմացման միջոց: Սենք մնում ենք այս

համոզմանը, որ այս պահին նման հայտարարությունները ավելի շատ կարող են խանգարել, քան նպաստել բանակցություններին» (Բալասանյան 184):

Հասարակության մեջ սկսեց շրջանառվել այն կարծիքը, որ հնարավոր է ադրբեջանցիների հետ պայմանավորվել, նույնիսկ գնալ միակողմանի զիջումների՝ հանուն խաղաղության: Դրան զուգահեռ զինված ուժերում մեծ հեղինակություն ունեցող գեներալների, ինչպես նաև Արցախյան առաջին պատերազմում հերոսացած դաշտային հրամանատարների նկատմամբ հարուցվեցին քրեական գործեր, թուլացվեց նաև Երկրպագի կամավորականների միությունը, որը 2016թ.-ի Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ իրեն գերազանց էր դրսևորել: Առաջին անգամ Ն. Փաշինյանը շրջանառության մեջ դրեց նաև թեզ այն մասին, որ Արցախյան հարցի կարգավորումը հավասարապես պետք է բավարարի Արցախի ժողովրդին, Հայաստանի ժողովրդին և Ադրբեջանի ժողովրդին, ինչը, ըստ Էուլթյան, նվազագույնը տարօրինակ էր: Եվ վերջապես Արցախում անցկացված նախագահական ընտրություններ, ինչի արդյունքում ձևավորվեց նոր իշխանություն Արախիկ Հարությունյանի գլխավորությամբ, որ պատերազմի ժամանակ ըստ Էուլթյան չկարողացավ ընդդիմանալ շատ հաճախ Երևանից եկող կասկածելի հրամաններին ու հրահանգներին:

Եզրակացություն

Հեղափոխությունից հետո իշխանությունների կողմից վարվող արտաքին քաղաքականության ուսումնասիրությունը և ընթացիկ կառավարման գործընթացն ապացուցում է, որ արտաքին քաղաքականության վերահսկման ու կարգավորման մարմինները չեն աշխատել: Արտաքին հարաբերություններ իրականացնող մարմինների միջև չի գործել նաև հակակշիռների ու փոխադարձ զսպման համակարգը: Տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ հանրային պատշաճ իրազեկում չի ապահովվել: Դեռևս հուլիս-օգոստոս ամիսներին Ադրբեջանում սկսված թուրք-ադրբեջանական զորքերի համատեղ զորավարությունների փաստը ՀՀ իշխանությունների կողմից ըստ Էուլթյան անտեսվեց, ժամանակին պատշաճ գործողություններ չարվեցին այդ զորավարությունները դատապարտելու կամ վերլուծելու ուղղությամբ: Համենայն դեպս հրապարակային քննադատություն պատկան մարմինների կողմից չերևաց: Հայաստանի փորձագիտական դաշտը ևս պարբերաբար կարծիքներ էր հնչեցնում ՀՀ արտաքին քաղաքականության շտկման, հասկանալի դառնալու, ռազմավարական դաշնակիցների ու գործընկերների հետ պատշաճ աշխատանքներ տանելու ուղղությամբ, սակայն ապարդյուն: Ոչ մի աշխատանք չտարվեց նաև ՀՀ արտաքին քաղաքականության հայեցակարգ ընդունելու ուղղությամբ: Ակնհայտ է, որ արտաքին քաղաքական ճակատում ՀՀ-ն պարտվեց ոչ թե 2020թ.-ի սեպտեմբերի 27-ից հետո, այլ սկսած 2018թ.-ի մայիսից, երբ որոշ դեպքերում նաև վարած անհեռատես արտաքին քաղաքականության պատճառով երկիրը կանգնեց պատերազմի շեմին:

Օգտագործված գրականություն

1. «Ասել՝ այս պատերազմն ու հրադադարի հայտարարությունը դիվանագիտական ձախողում չեն, իրականության աղճատում է»․ քաղաքագետ, <https://www.azatutyun.am/a/30970809.html>, Հասանելի է 27.07.21:

2. Բալասանյան Գ., Հեղափոխությունը Հայաստանում և դրա հնարավոր ազդեցությունը դարաբաղյան բանակցային գործընթացի վրա, ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ գիտական հոդվածների ժողովածու, №1, 2018 <https://artsakhlib.am/2019/04/07/%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AF%D5%>

[A1%D5%B6-%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD-%E2%84%961-2018/](https://www.azatutyun.am/a/30884070.html),

Հասանելի է 27.07.21:

3. Երևանում մեկնարկեց Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստը, <https://www.azatutyun.am/a/30884070.html>, Հասանելի է 27.07.21:

4. Հայ-իրանական սահմանը ամեն պահի կարող է փակվել ԱՄՆ-իրան հարաբերությունների պատճառով. Փաշինյան, <https://news.am/arm/news/478858.html>, Հասանելի է 27.07.21:

5. ՀՀ անդամակցությունը Կրոնական ազատության միջազգային դաշինքին. հնարավորությունները և մարտահրավերները, <https://armenpress.am/arm/news/1018938/>, Հասանելի է 27.07.21:

6. «Ղասեմ Սոլեյմանիի սպանության» թեմայի քարոզչական բաղադրիչը և Հայաստանը, <https://armenpress.am/arm/news/1000652.html>, Հասանելի է 27.07.21:

7. Որո՞նք էին Բոլթոնի հայաստանյան այցի գլխավոր շեշտադրումները, <https://armenpress.am/arm/news/952533.html>, Հասանելի է 27.07.21:

8. Պատգամավորի իրանական կիքը. Թեհրանն առհասարակ հապճեպ չի արձագանքում, <https://armeniasputnik.am/region/20190118/16812781/hayk-konjoryani-iranakan-anzgushutyuny.html>, Հասանելի է 27.07.21:

9. Վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Ռուսաստանի Ղաշնություն, <https://www.primeminister.am/hy/foreign-visits/item/2018/09/08/Nikol-Pashinyan-visit-to-Moscow/>, Հասանելի է 27.07.21:

10. Զաղաքագետ. Ինչո՞ւ է պետք «ափալ-թափալ» մեզ «մեջ գցել» գիզանտների մեծ կռվի մեջ ու չինացիների հետ լարվել, <https://www.panorama.am/am/news/2020/06/13/%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%A3%D5%A5%D5%BF-%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B9%D5%AB%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6/2309386>, Հասանելի է 27.07.21:

Works Cited

1. «Asel` ays paterazmn u hradadari haytararut'yuny' divanagitakan d'axoghum chen, irakanut'yan aghtwatum e'». qaghaqaget, ["To say that this war and the declaration of a ceasefire are not a diplomatic failure, is a distortion of reality." political scientist] <https://www.azatutyun.am/a/30970809.html>, Hasaneli e' 27.07.21:

2. Balasanyan G., Heghap'oxut'yuny' Hayastanum & dra hnaravor azdecut'yuny' gharabaghyan banakcayin gorc'y'nt'aci vra, GITAKAN ARCAX gitakan hodvac'neri jhoghovac'u, [The revolution in Armenia and its possible impact on the negotiation process on Karabakh, collection of scientific articles of Scientific Artsakh] №1, 2018, <https://artsakhlib.am/2019/04/07/%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD-%E2%84%961-2018/>, Hasaneli e' 27.07.21:

3. Erevanum meknarkec Evrasiakan mijkar'avarakan xorhrdi nisty', [A meeting of the Eurasian Intergovernmental Council has started in Yerevan] <https://www.azatutyun.am/a/30884070.html>, Hasaneli e' 27.07.21:

4. Hay-iranakan sahmny' amen pahi karogh e' p'akvel AMN-Iran haraberut'yunneri pattwar'ov. P'ashinyan, [The Armenian-Iranian border may be closed at any time due to US-Iran relations. - Pashinyan] <https://news.am/arm/news/478858.html>, Hasaneli e' 27.07.21:

5. HH andamakcut'yuny' Kronakan azatut'yan mijazgayin dashinqin. hnaravorut'yunner & martahraverner, [Armenia's membership in the International Union of Religious Freedom. opportunities and challenges] <https://armenpress.am/arm/news/1018938/>, Hasaneli e' 27.07.21:

6. «Ghasem Soleymanii spanut'yan» t'emayi qarozchakan baghadrichy' ev Hayastany' [The propaganda component of the topic "The murder of Gasem Soleimani" and Armenia], <https://armenpress.am/arm/news/1000652.html>, Hasaneli e' 27.07.21:

7. Voronq e'in Bolt'oni hayastanyan ayçi glxavor sheshtadrumnery', [What are the main accents of Bolton's visit to Armenia?] <https://armenpress.am/arm/news/952533.html>, Hasaneli e' 27.07.21:

8. Patgamavori iranakan kiqsy'. T'ehran ar'hasarak haptwep chi ard'aganqum, [Iranian deputy's miss. Tehran does not react hastily at all] <https://armeniasputnik.am/region/20190118/16812781/hayk-konjoryani-iranakan-anzgushutyuny.html>, Hasaneli e' 27.07.21:

9. Varchapet Nikol P'ashinyani ashxatanqayin ayçi' R'usastani Dashnut'yun, [Prime Minister Nikol Pashinyan's working visit to the Russian Federation] <https://www.primeminister.am/hy/foreign-visits/item/2018/09/08/Nikol-Pashinyan-visit-to-Moscu/>, Hasaneli e' 27.07.21:

10. Qaghaqaget. Incho w e' petq «ap'al-t'ap'al» mez «mej gcel» gigantneri mec' kr'vi mej u chinacineri het larvel, [Political scientist. Why is it necessary to "scorch" us "in" a big fight of giants and strain with the Chinese?] <https://www.panorama.am/am/news/2020/06/13/%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%A3%D5%A5%D5%BF-%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B9%D5%AB%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6/2309386>, Hasaneli e' 27.07.21:

DEFICIENCIES AND OMISSIONS OF THE REPUBLIC OF ARMENIA'S FOREIGN POLICY AND THE 44-DAY ARTSAKH WAR

GRIGOR BALASANYAN

Yerevan State University,

Chair of International Relations and Diplomacy,

Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA), Member;

PH.D. in History, Associate Professor

Yerevan, Republic of Armenia

After the revolution in 2018, the new Armenian authorities began to implement a foreign policy, which raised many questions, both inside and outside the scientific community. Surprisingly, there seemed to be an invisible hand cause to worsen especially the relationships with the allied and friendly states of the Republic of Armenia, which were actively represented in the region and actually had a rather pro-Armenian position on the Nagorno-Karabakh conflict. Especially the change in policy towards the Russian Federation, China and Iran led to the fact that these countries were mainly a neutral position during the 44-day war.

The Armenian expert field also regularly expressed opinions on the handling the implementation of the RA foreign policy, making it clear, carrying out proper works with strategic allies and partners, but unfortunately, it was all for nothing. No work was taken to accept the Armenian Foreign Policy Concept. It is obvious that Armenia lost on the foreign policy front not after September 27, but since 2018 as in some cases, due to short-sighted foreign policy, the country has stood on the verge of war.

Keywords: *Revolution, foreign policy, Artsakh, negotiation process, Russian Federation, Iran, China, India, war.*

НЕДОСТАТКИ И УПУЩЕНИЯ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ АРМЕНИИ И 44-ДНЕВНАЯ АРЦАХСКАЯ ВОЙНА

ГРИГОР БАЛАСАНИЯ

*доцент кафедры международных отношений и дипломатии
Ереванского государственного университета,
член Объединения молодых ученых и
специалистов Арцаха (ОМУСА),
кандидат исторических наук,
г.Ереван, Республика Армения*

После революции 2018г. новые армянские власти начали проводить внешнюю политику, которая вызвала достаточно много вопросов среди научного сообщества как внутри страны, так и за его пределами. Удивительным образом какая-то невидимым сила последовательно портила отношения Республики Армения с союзными и дружескими государствами, которые активно были представлены в регионе и имели нейтральную, но фактически довольно проармянскую позицию по нагорно-карабахскому конфликту. Изменение политики, в частности, в отношении Российской Федерации, Китая, Ирана привело к тому, что эти страны, в основном, заняли нейтральную позицию во время 44-дневной войны.

Экспертное сообщество Армении периодически высказывало точку зрения в отношении поправления внешней политики Армении, становления предсказуемым у союзников и партнёров государства. Не была проведена работа для принятия внешнеполитической стратегии страны. Очевидно, что на внешнеполитическом фронте Республика Армения терпела поражение не после 27-го сентября 2020 года, а с мая 2018-го, когда, в некоторых случаях в результате проведения недальновидной внешней политики страна оказалась на грани войны.

Ключевые слова: *революция, внешняя политика, Арцах, переговорный процесс, Российская Федерация, Иран, Китай, Индия, война.*

АРЦАХ В ГЕОПОЛИТИЧЕСКОЙ ПОВЕСТКЕ ЮЖНОГО КАВКАЗА: СТРОЯ УСТОЙЧИВОЕ БУДУЩЕЕ* 1

УДК 327

DOI: 10.52063/25792652-2021.3-166

РУБЕН ЭЛАМИРЯН

заведующий кафедрой мировой политики и международных отношений
Российско-Армянского (Славянского) университета,
Академия государственного управления РА,
доцент кафедры политического управления и публичной политики,
кандидат политических наук, доцент,
г. Ереван, Республика Армения
rub.elamiryan@gmail.com

Третья Арцахская война продемонстрировала трансформацию геополитической среды на Южном Кавказе. В данном контексте в статье ставится цель выявить основные потенциальные сценарии геополитического будущего Арцаха.

Для достижения поставленной цели решаются следующие задачи: раскрыть основных акторов данных трансформаций и проанализировать их интересы в регионе. В частности, рассматриваются такие акторы, как Россия, США, ЕС и Китай. Наряду с этим, обсуждается фактор Турции в контексте концепции роста «средних держав» в современных международных отношениях.

Работа основана на методе анализа акторов и интересов, а также построения потенциальных сценариев. Учитывая трансформирующуюся стратегическую среду на Южном Кавказе, автор предлагает четыре сценария геополитического будущего Арцаха: 1). сохранение статуса-кво, 2). вхождение Арцаха в состав Азербайджана, 3). обмен территориями между Арменией и Азербайджаном, и 4). усиление Арцаха, восстановление его территориальной целостности и дальнейшая интеграция с Республикой Армения в единую Армению.

Основываясь на вышесказанном, автор приходит к выводу, что наиболее оптимальным сценарием не только для Армении и Арцаха, но и для региональной стабильности и безопасности на Южном Кавказе и за его пределами является усиление Арцаха, восстановление его территориальной целостности и дальнейшая интеграция с Республикой Армения в единую Армению.

Ключевые слова: Арцах, Третья Арцахская война, центры силы, стратегическая среда, трансформация, Южный Кавказ, будущее.

Введение: Армения² в условиях меняющегося миропорядка.

Начало 21-го века ознаменовалось глобальными трансформациями в международных отношениях. Речь, в частности, идет о наметившемся изменении

* Հոդվածը ներկայացվել է 30.11.2021թ., գրախոսվել՝ 15.12.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

¹ Статья подготовлена при финансовой поддержке Фонда Галуста Гюлбеяна.

² Употребляя понятие «Армения», автор имеет в виду Республику Армения и Республику Арцах вместе взятых.

миропорядка, который по «эффекту домино» влияет как на глобальную архитектуру безопасности, так и стратегическую среду в различных регионах мира.

В данном контексте одним из ключевых вопросов в современных международных отношениях является вопрос о том, каким будет «лицо» нового миропорядка, который наступит через пять, десять или двадцать лет. Используются различные, зачастую взаимоисключающие понятия: «новый миропорядок», «беспорядок», «полицентричный» и «многополярный мир», «беспольярный миропорядок» и т.д.

Не вдаваясь в академический спор относительно формулировок, тем не менее, можно утверждать, что трансформация миропорядка характеризуется, в частности, укреплением и процессом возвращения на международную арену потерянных после распада Советского Союза позиций России, стратегической неопределенностью и поиском геополитического будущего в ЕС, смещением стратегического фокуса США в Азиатско-тихоокеанский регион, а также ростом и расширением интересов и влияния Китая (Elamiryan). Наряду с этим, технологические изменения и, в частности, Четвертая промышленная революция, вносят свой вклад в изменение геополитической среды.

Վերջին տարիներին Էրդողանը լիակատար վերահսկողություն է հաստատել ոչ միայն զինվորականության ու բանակի, այլև պետական մյուս ինստիտուտների նկատմամբ՝ զրկելով նրանց նախկինում ունեցած ազդեցիկ ինստիտուցիոնալ, ինքնավար դերակատարությունից: Արտաքին գործերի նախարարությունը, որ ավանդաբար եղել է թուրքիայի կայացած պետական առանցքային ինստիտուտներից, կորցրել է առանցքային սուբյեկտայնությունը: Այն ավելի շատ ստորադասված է նախագահական ապարատին, իսկ որոշումների կայացման հարցում Էական կշիռ չունի՝ վերածվելով ավելի շուտ դիվանագիտական-արարողակարգային դերակատարի (Neset, Aydın, Bilgin, Gürcan and Strand): ԱԳԼ-ի սուբյեկտայնության կորուստն ավելի ցայտուն սկսեց երևալ Ա. Դավութօղլուի՝ գերատեսչության ղեկավարի պաշտոնից

¹ Ուշագրավ է, որ Աքսաքալըի սիրիական արկածախնդրությանը և թուրքիային Սիրիայում պատերազմի մեջ ներքաշելու ընդդիմացել է հատուկ նշանակության ուժերի գեներալ Սեմիի Թերզին, ով ԳԸ-ին գեկույցներ էր ներկայացրել Աքսաքալըի և ԱԳԿ-ի ընդհատակյա գործողությունների մասին: 2016թ. ռազմական հեղաշրջման փորձի գիշերը Աքսաքալըի հրամանով գեներալ Թերզին գնդակահարվեց հատուկ նշանակության ուժերի ենթասպայի կողմից:

հեռանալուց հետո: Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ գերատեսչության կադրային կազմի ապահովման համակարգը խախտվեց, երբ սկսեցին գերակշռել քաղաքական ու կուսակցական նախապատվություններով կադրային նշանակումները, ինչը գերատեսչության պրոֆեսիոնալ սուբյեկտայնության թուլացման վրա ոչ պակաս ազդեցություն է ունեցել:

Բացի այդ, ԱԶԿ-ի և Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ) քաղաքական դաշինքի արդյունքում գերատեսչությունում սկսեցին ամրանալ ազգայնամոլների դիրքերը, քանի որ ԱՇԿ-ն ստացել էր կադրային ապարատը համալրելու իր մասնաբաժինը գյուլենականների «վիոլկների որսից» հետո: Կարևոր գործոն է նաև երկրում ազգայնականության վերելքը, որը քաղաքական առումով ամրագրվեց ԱԶԿ-ԱՇԿ դաշինքով, երբ պետության անվտանգային ու արտաքին քաղաքականության նախապատվությունների ու տեսլականի հարցում առկա էր ամբողջական համընկնում: Այդ քաղաքական դաշինքը գաղափարախոսական առումով ցույց տվեց իսլամական-ազգայնական միաձուլման կենսունակությունն ու հասարակության շրջանում դրա աջակցության աճը (Pitel): Այսինքն՝ երկրում ազգայնամոլական տրամադրությունների աճը կոչված էր ոչ միայն ապահովելու հանրային միասնականություն, այլև սպասարկելու և լեգիտիմացնելու ռազմատենչ արտաքին ու անվտանգային քաղաքականության հավակնությունները: Ազգայնամոլների աճող ազդեցությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա ենթադրում էր ազդեցիվ ու ռազմատենչ արտաքին քաղաքականություն (Ulgen): 2016թ.-ին ներքին ու արտաքին քաղաքականության մեջ սկսվեց վերանսվտանգայնացման ու միլիտարիզացման ժամանակաշրջան, երբ տարածաշրջանային քաղաքականության մեջ սկսեց առաջնայնություն տրվել ռազմական ուժին, ինչը պայմանավորված էր նաև պաշտպանական համակարգում գրանցած հաջողություններով, արդիականացմամբ ու զգալի չափով ինքնաբավության ձեռքբերմամբ: Սիրիայում, Լիբիայում ռազմական միջամտությունների փորձն ու որոշակի հաջողությունները լրացուցիչ ինքնավստահություն հաղորդեցին Թուրքիային՝ ռազմական ուժի վրա հիմնված արտաքին ու տարածաշրջանային քաղաքականության իրականացման առումով: Դա հանգեցրեց Էլիտայի մոտ ռազմական ինքնավստահության մակարդակի բարձրացման:

Վերջին 15 տարիներին հետևողական քայլեր իրականացվեցին ռազմական կարողությունների ու հնարավորությունների մեծացման ուղղությամբ՝ ապահովելով որոշակի ռազմական ինքնաբավություն: Ռազմական ներուժով ու կարողություններով ժամանակակից Թուրքիան Եսկանորեն տարբերվում է 1990-ականների Թուրքիայից: ԱԶԿ-ի իշխանության շրջանում գրանցած տնտեսական աճի ցուցանիշները մեծացրեցին ռազմական ոլորտում հատկացումների ծավալները՝ նպաստելով ռազմական լայնածավալ արդիականացմանը: Էրդողանի ազդեցիվ արտաքին քաղաքականությունը սնուցող կարևոր, առանցքային գործոններից է տեղական ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը, ինչը մեծացնում է ոչ միայն ուժային գործոնի ուղղակի կիրառման, դաշնակից ու հովանավորյալ երկրներին զինելու և ռազմաքաղաքական իր դերը բարձրացնելու հնարավորությունները, այլև ապահովում է հովանավորյալ պրոքսի ուժերի ռազմատեխնիկական մատակարարման հուսալիությունը:

Նշենք, որ միայն 2020թ.-ի սեպտեմբեր ամսվա ընթացքում, երբ Արցախի դեմ սանձազերծվեց ադրբեջանական ագրեսիան, ռազմարդյունաբերական հատվածից ամենաշատ արտահանումն իրականացվել է Ադրբեջան՝ կազմելով ավելի քան 77 մլն դոլար (Akşam 2020): Իսկ ողջ 2020թ.-ին Թուրքիայից Ադրբեջանին մատակարարվել է 260 մլն դոլարը գերազանցող սպառազինություն և ռազմական նշանակության արտադրանք (Türk Savunma ve Havacılık Sanayii İhracatı ve 2020 yılı Raporu): 1990-ականների սկզբին Թուրքիան ռազմական ու աշխարհաքաղաքական առումով չուներ

այդ ինքնաբավությունն ու ինքնավստահությունը, ինչը ևս կաշկանդող հանգամանք էր:

Չափազանց կարևոր գործոն էր Թուրքիայի մասնակցության տեսանկյունից նաև այն, որ ի տարբերություն Արցախյան առաջին պատերազմի՝ Թուրքիայի ու Ադրբեջանի ռազմական համակարգերն արդեն անցել էին փոխգործակցության ու ներդաշնակեցման երկարատև գործընթաց, ինչի արդյունքում Ադրբեջանի ուժային համակարգում աստիճանաբար Թուրքիան ձեռք էր բերել ծանրակշիռ դերակատարություն և ազդեցություն: Երկու երկրների զինված ուժերի «ինտեգրացիոն» գործընթացը որակական նոր փուլ մտավ 2010թ.-ին «Ռազմավարական համագործակցության ու փոխօգնության մասին» համաձայնագրի ստորագրումից հետո: Երկու երկրների զինված ուժերի ներդաշնակեցման ու փոխգործակցության կարողությունների մեծացման ուղղությամբ քայլերն ակտիվացան հատկապես 2012թ.-ից հետո, երբ աննախադեպ ինտենսիվությամբ սկսեցին իրականացվել ռազմական տարբեր օղակների համատեղ զորավարություններ (Յոլսեփյան 43-45): Շուրջ 2 տասնամյակ ռազմաքաղաքական համագործակցությունից հետո միայն հնարավոր եղավ ձևակերպել ռազմական դաշինքի իրավապայմանագրային հիմքը, ինչի կարիքը երկար ժամանակ ունեցել է հենց ադրբեջանական կողմը: Երկկողմ ռազմական դաշինքի հարցը նախկինում բարձրացվել է Ադրբեջանի կողմից, սակայն թուրքական կողմի սառնության պատճառով այն որևէ առարկայացում չէր ստացել: Որպես ռազմական դաշինքի արդյունք՝ Ադրբեջանը ցանկանում էր օգտվել Թուրքիայի ռազմական ու ռազմատեխնիկական կարողություններից, իսկ Թուրքիան դա դիտարկում էր որպես Ադրբեջանի սկստմամբ ռազմաքաղաքական վերահսկողության մեծացման միջոց: Ադրբեջանի պաշտպանության նախարար Չ. Յասանովը պատերազմից հետո տված հարցազրույցում կարևորել էր հատկապես ադրբեջանական բանակի մարտական պատրաստության գործում Թուրքիայի ծանրակշիռ ներգրավվածությունն ու դերակատարությունը՝ նշելով թուրքական բոլոր ռազմաուսումնական հաստատություններում ադրբեջանցի սպաների ու զինծառայողների՝ կրթություն ու պատրաստություն անցնելու հանգամանքը (Бутцов): Հիրավի, տարիներով Թուրքիայի կողմից պատրաստված և այդ երկրում կրթություն ստացած հազարավոր ադրբեջանցի զինվորականները բավական ազդեցիկ էին դարձել ադրբեջանական ռազմական համակարգում՝ նպաստելով Թուրքիայի դիրքերի ամրապնդմանն ու թուրքական «ռազմական դպրոցի» կայացմանն Ադրբեջանում (Ak Gazete 2021):

Պատերազմի ընթացքում Թուրքիայի առանցքային ներգրավվածությունը, իսկ դրանից հետո Ադրբեջանի ուժային համակարգում խորացող թուրքական ռազմական դոմինանտությունը կասկածից վեր է դարձնում Թուրքիայի կողմից Ադրբեջանի ռազմաքաղաքական ամբողջական կլանումը, ինչը լիովին փոխում է տարածաշրջանում Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքավորումը: 2021թ.-ի հունիսի 15-ին ստորագրված երկկողմ հռչակագիրը կողմերի միջև ռազմական փոխգործակցության որակական նոր փուլ է ենթադրում (Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Müttefiklik İlişkileri Hakkında Şuşa beyannamesi): Պատերազմից հետո ընթանում է թուրքական ու ադրբեջանական զինված ուժերի ինտեգրացիոն նոր գործընթաց, որում Թուրքիան իր ձեռքում է կենտրոնացնում ադրբեջանական պաշտպանական համակարգի կառավարումը:

Եզրակացություն

Թեև ուժային գործոնի ու միջամտությունների վրա հիմնված մերօրյա Թուրքիայի ագրեսիվ տարածաշրջանային քաղաքականության հարցում միջազգային համակարգային գործոնների նշանակությունն առանցքային է, այդուհանդերձ, Եական նշանակություն ունեն նաև ներքին/ներպետական գործոնները, որոնց թերազնահատումը Թուրքիայի արտաքին ու անվտանգային քաղաքական վարքագծի

բացատրությունը դարձնում է ոչ ամբողջական: Ժամանակակից թուրքիայի արտաքին քաղաքականությունը շատ դեպքերում պայմանավորված է ներքաղաքական իրողություններով, երբ ներքին քաղաքականությունն է թելադրում արտաքին քաղաքական վարքագիծը: Այս համատեքստում ներքին/ներպետական գործոնների նշանակությունը դառնում է էական:

Արցախյան առաջին պատերազմում Անկարայի վարքագիծը կարելի է բնորոշել որպես զգուշավոր, երբ ներպետական (ամենևին չթերազնահատելով միջազգային համակարգային) տարբեր սահմանափակող գործոններ հնարավորությունն չտվեցին և գերծ պահեցին թուրքիային ուղղակիորեն ներգրավել պատերազմում: Զաղաքական, պետական, ռազմական ու այլ սահմանափակող գործոնները կաշկանդող նշանակություն ունեցան թուրքիայի վարքագծի վրա:

2020թ.-ի 44-օրյա լայնամասշտաբ պատերազմում թուրքիան ունեցավ ուղղակի, առանցքային ներգրավվածություն՝ ի տարբերություն Արցախյան առաջին պատերազմի: 1990-ական թվականների սկզբների համեմատությամբ՝ թուրքիայի ներպետական/միավորային մակարդակի գործոնների փոխակերպումները էական նշանակություն ունեցան Արցախյան վերջին պատերազմում թուրքիայի բացահայտ ռազմական ներգրավման և ընդհանրապես արտաքին ու տարածաշրջանային ագրեսիվ անվտանգային քաղաքականության ուղեգծի որդեգրման վրա: Մասնավորապես վերջին տարիներին ներպետական զսպման և հակակշռման մեխանիզմի չեզոքացումը, որոշումների կայացման և ուժի կիրառման մոնոպոլիզացիան, Էրդողանի անձնիշխանության կոնսոլիդացիան, ռազմական հզորության և փորձառության մեծացումը իշխող Էլիտային տվեցին գերինքնավստահություն ծավալապաշտական ու ագրեսիվ արտաքին քաղաքականության իրականացման հարցում:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ ԱԳՆ հայտարարությունը Ադրբեջանի ՉՈՒ կողմից Արցախի Հանրապետության քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորման վերաբերյալ, 2 հոկտեմբերի, 2020, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/10/02/mfa_statement_/10485:
2. ՀՀ ԱԳ նախարարությունը թուրքիայի և Ադրբեջանի կողմից տարածաշրջան օտարերկրյա զինյալ սահբեկիչների տեղակայման վերաբերյալ, 1 նոյեմբերի, 2020, <https://www.mfa.am/hy/press-releases/2020/11/01/fm-statement/10622>:
3. Հովսեփյան, Լ.Ն. «Թուրքիայի արտաքին և անվտանգային քաղաքականության փոխակերպումները. վերազնահատելով Հայաստանի անվտանգության մարտահրավերները», Հայկական բանակ, թիվ 4, 2018:
4. Барри Д., Дерлугьян Г.М., Искандарян А.М., Казалет М., Лавров А.В., Макиенко К.В., Маркедонов С.М., Нерсисян Л.А., Пухов Р.Н., Тренин Д.В., Хас К., Шеповаленко М.Ю. Буря на Кавказе, под ред. Пухова Р.Н.- Москва: Центр анализа стратегий и технологий, 2021.
5. Бутусов, Юрий. Министр обороны Азербайджана об уроках Карабахской войны: "Некоторые люди стандарты НАТО понимают неправильно", https://censor.net/ru/resonance/3275324/ministr_oborony_azerbayidjana_ob_urokah_karabahskoyi_voyiny_nekotorye_lyudi_standarty_nato_ponimayut?fbclid=IwAR3htNPGWLCpQrbl2JA8_-SmELX2Xlthw9I62_3w5mEkXsXRgz9WccMdX58.
6. Кто из турецких генералов руководил атакой на Карабах, Взгляд, 12 ноября 2020.
7. Принуждение к конфликту, *Коммерсантъ*, 16.10.2020.
8. Bolukbasi, Suha. "Ankara's Baku-Centered Transcaucasia Policy: Has It Failed?", *Middle East Journal* Vol. 51, No. 1 (Winter, 1997).

9. Bozkurt, Abdullah. "Turkish army secretly shipped arms to Syria after filing off serial numbers to prevent tracing", September 1, 2021, <https://nordicmonitor.com/2021/09/turkish-army-secretly-shipped-arms-to-syria-after-defacing-serial-numbers-to-prevent-tracing/>.

10. Էրդողանի «Նոր Թուրքիայի» տեսլականի մասին տե՛ս Christofis, Nikos. "The AKP's "Yeni Türkiye": Challenging the Kemalist Narrative?", *Mediterranean Quarterly*, 29:3, 2018.

11. Cornell, Svante E. *Azerbaijan Since Independence*, New York-London: M.E.Sharpe, 2011.

12. Kenez, Levent. "Erdoğan forced out nearly all generals and admirals from Turkish military", <https://nordicmonitor.com/2019/11/erdogan-wiped-out-nearly-all-generals-and-admirals-from-turkish-army/>.

13. Kirişci, Kemal, Moffatt, Andrew. "Turkey and the South Caucasus: An Opportunity for Soft Regionalism?", *Regional Security Issues*: 2015, https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/07/KirisciMoffatt_Turkey-and-the-SouthCaucasus_April16.pdf?fbclid=IwAR1pX8RHZ_Nlpa3p7dVdlv_cFh0gRnJZzYLxNiF0paaF_WkVvHCCMJRgmqY.

14. Hale, William. *Turkish foreign policy since 1774*, London: Routledge, 2013.

15. Mufti, Malik. "Daring and Caution in Turkish Foreign Policy", *Middle East Journal*, Vol. 52, No. 1 (Winter, 1998).

16. Neset, Siri, Aydın, Mustafa, Bilgin, Dikici Hasret, Gürcan Metin and Strand, Arne, *Turkish foreign policy: structures and decision-making processes*, (Bergen: Chr. Michelsen Institute Report R 2019:3), <https://www.cmi.no/publications/6854-turkish-foreign-policy-structures-and-decision-making-processes>

17. Pitel, Laura. "Kingmaker brings ultra-nationalism to Erdogan's Islamist mix", <https://www.ft.com/content/bb04bb2e-7b91-11e8-bc55-50daf11b720d> .

18. Pope, Hugh. "Ozal brings moral support but little material help for Azeris", *Independent*, 13 April, 1993.

19. Ulgen, Sinan. "Get Ready for a More Aggressive Turkey", <https://foreignpolicy.com/2018/07/02/turkeys-foreign-policy-is-about-to-take-a-turn-to-the-right/>.

20. Weymouth, Lally. "Turkey Facing The High Costs of Being America's Ally", *Washington Post*, May 19, 1991.

21. Azeri hain gitti Karabağ kurtuldu Türkiye ihaneti ortaya çıkardı, *Ak Gazete*, 30 Ocak 2021, <https://www.akgazete.com.tr/haber/azeri-hain-gitti-karabag-kurtuldu-turkiye-ihaneti-ortaya-cikardi-26789>.

22. Balcı, Ali. "1990'lar Basınında "Ermenistan Tehdidi'nin" İnşası: Milliyet Gazetesi Örneği", <https://dergipark.org.tr/tr/download/article-file/17784>

23. Üstel, Aziz, Başkan" Turgut Özal Kafkaslar'da savaşı göze almıştı!, *Star*, 23.01.2017, <https://www.star.com.tr/yazar/baskan-turgut-ozal-kafkaslarda-savasi-goze-almisti-yazi-1178966/>

24. İbrahim Kalın: Ermenistan ile normalleşmeye olumlu bakıyoruz, *Cumhuriyet*, 28.09.2021, <https://www.cumhuriyet.com.tr/turkiye/ibrahim-kalin-ermenistan-ile-normallesmeye-olumlu-bakiyoruz-1872662>

25. Sanayi ihracatında rakamlar açıklandı: Savunmada aslan payı Azerbaycan'ın, *Akşam*, 11.10.2020, <https://www.aksam.com.tr/teknoloji/sanayi-ihracatinda-rakamlar-aciklandi-savunmada-aslan-payi-azerbaycanin/haber-1116904>

26. Türk Savunma ve Havacılık Sanayii İhracatı ve 2020 yılı Raporu, <https://www.defenceturk.net/turk-savunma-ve-havacilik-sanayii-ihracati-ve-2020-yili-raporu>

27. Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Müttefiklik İlişkileri Hakkında Şuşa beyannamesi, <https://www.tccb.gov.tr/assets/dosya/2021-06-15-Azaebaycan-SusaBeyannamesi.pdf>

28. Zaferin nişanesi Füzuli'den güçlü mesaj, *Yeni Şafak*, 08.11.2021, <https://www.yenisafak.com/dusunce-gunlugu/zaferin-nisanesi-fuzuliden-guclu-mesaj-3710509>

WORKS CITED

1. HH AGN haytararowt'yowny' Aذربejani ZU koghmic Arcaxi Hanrapetowt'yan qaghaqaciakan ent'akar'owcvac'qneri t'iraxavorman veraberyal, [Statement of the MFA of Armenia on targeting civilian infrastructure of the Republic of Artsakh by the Azerbaijani Armed Forces, October 02, 2020], https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/10/02/mfa_statement_/10485 (in Armenian)

2. HH AG naxararowt'yowny' T'owrqiayi ev Aذربejani koghmic tarac'ashrjan o'tarerkrya zinyal ahabekichneri teghakayman veraberyal, [Statement by the Foreign Ministry of Armenia regarding the deployment of foreign terrorist fighters in the region by Turkey and Azerbaijan, November 01, 2020], <https://www.mfa.am/hy/press-releases/2020/11/01/fm-statement/10622> (in Armenian)

3. Hovsepyan, Levon. T'owrqiayi artaqin ev anvtangayin qaghaqakanowt'yan p'oxakerpowmneri'. veragnahatelov Hayastani anvtangowt'yan martahravernery', Haykakan banak, [Turkey's foreign and security policy transformations: reassessing challenges to Armenia's security, Armenian Army], no. 4 (98), 2018 (in Armenian)

4. Barry D., Derlugyan G., Iskandaryan A., Kazalet M., Lavrov A., Makienko K., Markedonov S., Nersisyan L., Pukhov P., Trenin D. Khas K., Shepovalenko M. [Burya na Kavkaze, Moskva], (Storm in the Caucasus, Moscow), 2021 (in Russian)

5. Butusov, Youri. Ministr oborony Azerbajdzhana ob urokah Karabahskoj vojny: "Nekotorye ljudi standarty NATO ponimajut nepravil'no", [Defense Minister of Azerbaijan on the lessons of the Karabakh war: "Some people misunderstand NATO standards], 2021, (in Russian)

6. Kto iz Turec'kikh generalov rukovodil atakoy na Karabakh, Vzglyad, [Which of the Turkish generals led the attack on Karabakh, Vzglyad] November 12, 2020 (in Russian).

7. Prinuzhdeniye k konfliktu, Kommersant [Forcing to conflict], Коммерсантъ, October 16, 2020 (in Russian)

8. Bolukbasi, Suha. "Ankara's Baku-Centered Transcaucasia Policy: Has It Failed?", Middle East Journal Vol. 51, No. 1 (Winter, 1997).

9. Bozkurt, Abdullah. "Turkish army secretly shipped arms to Syria after filing off serial numbers to prevent tracing", September 1, 2021, <https://nordicmonitor.com/2021/09/turkish-army-secretly-shipped-arms-to-syria-after-defacing-serial-numbers-to-prevent-tracing/>.

10. E'rdoghani «Nor T'urqiayi» teslakani masin [About Erdogan's vision of a "new Turkey "] Christofis, Nikos. "The AKP's "Yeni Turkiye": Challenging the Kemalist Narrative?", Mediterranean Quarterly, 29:3, 2018.

11. Cornell, Svante E. *Azerbaijan Since Independence*, New York-London: M.E.Sharpe, 2011.

12. Kenez, Levent. "Erdoğan forced out nearly all generals and admirals from Turkish military", <https://nordicmonitor.com/2019/11/erdogan-wiped-out-nearly-all-generals-and-admirals-from-turkish-army/>.

13. Kirişçi, Kemal, Moffatt, Andrew. "Turkey and the South Caucasus: An Opportunity for Soft Regionalism?", Regional Security Issues: 2015, https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/07/KirisciMoffatt_Turkey-and-the-

SouthCaucasus_April16.pdf?fbclid=IwAR1pX8RHZ_Nlpa3p7dVdlv_cFh0gRnJZzYLxNiFOpaaF_WkVvHCCMJRgmqY.

14. Hale, William. *Turkish foreign policy since 1774*, London: Routledge, 2013.

15. Mufti, Malik. "Daring and Caution in Turkish Foreign Policy", *Middle East Journal*, Vol. 52, No. 1 (Winter, 1998)

16. Neset, Siri, Aydın, Mustafa, Bilgin, Dikici Hasret, Gürçan Metin and Strand, Arne, *Turkish foreign policy: structures and decision-making processes*, (Bergen: Chr. Michelsen Institute Report R 2019:3), <https://www.cmi.no/publications/6854-turkish-foreign-policy-structures-and-decision-making-processes>

17. Pitel, Laura. "Kingmaker brings ultra-nationalism to Erdogan's Islamist mix", <https://www.ft.com/content/bb04bb2e-7b91-11e8-bc55-50daf11b720d>.

18. Pope, Hugh. "Ozal brings moral support but little material help for Azeris", *Independent*, April 13, 1993.

19. Ulgen, Sinan. "Get Ready for a More Aggressive Turkey", <https://foreignpolicy.com/2018/07/02/turkeys-foreign-policy-is-about-to-take-a-turn-to-the-right/>.

20. Weymouth, Lally. "Turkey Facing the High Costs of Being America's Ally", *Washington Post*, May 19, 1991.

21. Azeri hain gitti Karabağ kurtuldu Türkiye ihaneti ortaya çıkardı, *Ak Gazete*, 30 Ocak 2021, <https://www.akgazete.com.tr/haber/azeri-hain-gitti-karabag-kurtuldu-turkiye-ihaneti-ortaya-cikardi-26789>.

22. Balcı, Ali. "1990'lar Basınında "Ermenistan Tehdidini" İnşası: Milliyet Gazetesi Örneği", <https://dergipark.org.tr/tr/download/article-file/17784>.

23. Üstel, Aziz, Başkan" Turgut Özal Kafkaslar'da savaşı göze almıştı!, *Star*, 23.01.2017, <https://www.star.com.tr/yazar/baskan-turgut-ozal-kafkaslarda-savasi-goze-almisti-yazi-1178966/>

24. İbrahim Kalın: Ermenistan ile normalleşmeye olumlu bakıyoruz, [We look positively at normalization with Armenia] *Cumhuriyet*, 28.09.2021, <https://www.cumhuriyet.com.tr/turkiye/ibrahim-kalin-ermenistan-ile-normallesmeye-olumlu-bakiyoruz-1872662>

25. Sanayi ihracatında rakamlar açıklandı: Savunmada aslan payı Azerbaycan'ın, [Figures on industrial exports announced: the lion's share of Azerbaijan for defense] *Akşam*, 11.10.2020, <https://www.aksam.com.tr/teknoloji/sanayi-ihracatinda-rakamlar-aciklandi-savunmada-aslan-payi-azerbaycanin/haber-1116904>

26. Türk Savunma ve Havacılık Sanayii İhracatı ve 2020 yılı Raporu, [Turkish Defense and Aerospace Industry Exports and 2020 Report] <https://www.defenceturk.net/turk-savunma-ve-havacilik-sanayii-ihracati-ve-2020-yili-raporu>

27. Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Müttefiklik İlişkileri Hakkında Şuşa beyannamesi, [Shushi's Decree on the Allied Relations between the Republic of Turkey and the Republic of Azerbaijan] <https://www.tccb.gov.tr/assets/dosya/2021-06-15-Azaebaycan-SusaBeyannamesi.pdf>

28. Zaferin nişanesi Füzuli'den güçlü mesaj, [A powerful message from Fusuli, the sign of victory] *Yeni Şafak*, 08.11.2021, <https://www.yenisafak.com/dusunce-gunlugu/zaferin-nisanesi-fuzuliden-guclu-mesaj-3710509>

THE INFLUENCE OF DOMESTIC FACTORS ON MILITARY-POLITICAL BEHAVIOR OF TURKEY IN THE FIRST AND 44-DAY ARTSAKH WARS: COMPARATIVE ANALYSIS

LEVON HOVSEPYAN

*Yerevan State University, Chair of Political Institutions and Processes,
Ph.D. in History, Associate Professor, YSU Academic Secretary,
Yerevan, Republic of Armenia*

Through a comparative analysis of the first Karabakh war, the article aims at revealing the influence of the Turkish domestic factors and their transformations on the immediate and apparent involvement of Turkey in the 44-day Karabakh war. Though Turkey's foreign policy in general and its involvement in the war in question is often accounted for basically taking into account the international system and geopolitical processes, the influence and significance of the domestic, unit-level factors is of no less importance, because the foreign and security policy of a state depends on the unit-level variables.

Therefore, as a research problem, the domestic catalysts of Turkey's apparent military involvement are viewed in the context of the neutralization of the state mechanisms of checks and balances, monopolization of decision-making, military might and experience through a comparative analysis method.

The article argues that the transformation of the stated domestic factors had a vital importance in Turkey's immediate involvement in the last Karabakh war and in adopting a line of an aggressive foreign and regional security policy in general.

Keywords: *Turkey, Azerbaijan, Karabakh war, military involvement, foreign policy, security policy, Demirel, Ozal, Erdogan.*

ВЛИЯНИЕ ВНУТРИГОСУДАРСТВЕННЫХ ФАКТОРОВ НА ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЕ ПОВЕДЕНИЕ ТУРЦИИ В ПЕРВОЙ И 44-ДНЕВНОЙ ВОЙНАХ В АРЦАХЕ: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ

ЛЕВОН ОВСЕПЯН

*доцент кафедры политических институтов и процессов
Ереванского государственного университета, учёный секретарь ЕГУ,
кандидат исторических наук,
г.Ереван, Республика Армения*

Цель статьи – выявить внутритурецкие / внутригосударственные факторы и их трансформации в вопросе прямого и открытого участия Турции в 44-дневной войне в Арцахе в рамках сравнительного анализа поведения Турции во время первой и 44-дневной войн. В профессиональных кругах внешняя политика Турции в целом и ее участие в войне в частности объясняются в основном в рамках логики международной системы и геополитических процессов. Не менее важны влияние и значение внутригосударственных факторов, поскольку внешняя политика государства и ее политика безопасности зависят от внутригосударственных/внутренних факторов и переменных.

Поэтому была поставлена задача методом сравнительного анализа выявить внутренние катализаторы открытого военного вмешательства Турции в контексте нейтрализации внутригосударственного механизма противовеса и сдерживания, монополизации принятия решений, военной мощи и опыта.

Основным выводом статьи является то, что преобразование и трансформации рассматриваемых внутригосударственных / единичных уровневых факторов сыграли важную роль в явном военном вовлечении Турции в последней войне в Арцахе и принятии в целом агрессивной внешней и региональной политики безопасности.

Ключевые слова: *Турция, Азербайджан, Карабахская война, военное вмешательство, внешняя политика, политика безопасности, Демирель, Озал, Эрдоган.*

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՒՄ*

ՀՏԴ 327:008

DOI: 10.52063/25792652-2021.3-209

ՍՈՖՅԱ ՕՅԱՆՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
հասարակական գիտությունների ամբիոնի դոցենտ,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sofyaohanyan@mail.ru

Հոդվածի նպատակն է առաջադրել և հիմնավորել այն գաղափարը, որ արտաքին քաղաքականության գործիքակազմում ներառված մշակութային մեթոդների կիրառման շրջանակներում մշակվել են արդյունավետ եղանակներ ու հնարներ, որոնք համաշխարհային քաղաքական ու տնտեսական ոլորտներում բարձր դիրքեր չգբաղեցնող երկրներին հնարավորություն են տալիս բարձրացնել արտաքին քաղաքականության արդյունավետությունը և ճանաչելի դառնալ միջազգային մշակութային ասպարեզում: Մեր խնդիրն է ընդգծել մշակութային դիվանագիտության առանձնահատուկ կարևորությունը հանրային դիվանագիտության գործիքակազմում՝ ներկայացնելով այն դրույթը, ըստ որի՝ քանի որ հատկապես մշակույթի միջոցով է ազգն աշխարհին բացահայտում իր նույնականությունը, ներկայացնում իր արժեքներն ու գաղափարները, ուստի իր հիմնարար նպատակներին հասնելու համար Արցախի Հանրապետությունը պետք է մշակի հետևողական, համալիր գործողությունների ծրագիր, որը մեր պատմության այս ծայրահեղ ժամանակահատվածում թույլ կտա առավելագույնս գրավիչ ներկայանալ միջազգային հանրությանը, այսինքն՝ գործածել մշակույթի մեծ ներուժը պետության գրավիչ կերպարի ձևավորման համար:

Հետազոտության իրականացման ընթացքում ընդհանուր-աշխարհայացքային դիալեկտիկական մեթոդին զուգահեռ կիրառել ենք նաև ընդհանուր-գիտական (համանմանության, համեմատության, վերլուծության, համադրության) և մասնավոր-գիտական (նկարագրական, վիճակագրական) մեթոդներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Արցախի արտաքին մշակութային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը թերևս կարելի է համարել պատմամշակութային ժառանգության գրագետ կառավարումը, ուստի այս ուղղությամբ մշակվող ռազմավարությունները պետք է հիմնված լինեն հասարակայնության պահանջների, տնտեսական գործունեության և պատմական միջավայրի պահպանության միջև հավասարակշռված հարաբերությունների վրա:

Հիմնաբառեր՝ հանրային դիվանագիտություն, արտաքին դիվանագիտություն, քաղաքականություն, մշակութային քարոզչություն, պատմամշակութային ժառանգություն, հուշարձանների պետական պահպանություն, հուշարձանների դասակարգում:

* Հոդվածը ներկայացվել է 18.11.2021թ., գրախոսվել՝ 27.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

Մշակութային դիվանագիտության`

որպես հատուկ բնագավառի ձևավորումն ու նշանակությունը

Գլոբալիզացիայի պայմաններում փոխկապակցված աշխարհում, երբ գանգվածային հաղորդակցության տեխնոլոգիաների տարածումը նպաստում է տարբեր երկրների քաղաքացիների շփմանը, մշակութային դիվանագիտությունը բացառիկ կարևոր դեր է խաղում խաղաղության և կայունության ապահովման գործում, ներառյալ է համաշխարհային հանրության կարծիքի ձևավորման, միջազգային հարաբերությունների կայացման ու պետական քաղաքականության իրականացման վրա:

Որպես հանրային դիվանագիտության և «փափուկ ուժի» տեսակ, որը ներկայանում է մտքերի, տեղեկատվության, մշակույթի փոխանակման ձևով, մշակութային դիվանագիտությունը ոչ միայն սերտացնում է ժողովուրդների միջև փոխըմբռնումը, այլև առաջին հերթին հանդես է գալիս որպես սեփական մշակույթի քարոզման ու տարածման արդյունավետ տեսակ, ուստի ներկայումս աշխարհի առաջնորդների հայտարարություններում, արտաքին քաղաքական դոկտրինաներում ու ռազմավարություններում ավելի ու ավելի հաճախ կարելի է դիտարկել հղումներ մշակույթին ու համաշխարհային մշակութային ժառանգությանը:

Դեռ 1785 թ.-ին ԱՄՆ-ի հիմնադիր հայրերից մեկը` Թոմաս Ջեֆերսոնը, լինելով դեսպան Փարիզում, գրում էր Ջ. Մեդիսոնին, որ մշակույթի ու արվեստի օգնությամբ կարելի է զարգացնել հայրենակիցների ճաշակը, բարելավել նրանց վարկը, ապահովել նրանց հարգանքն ու պատիվն աշխարհում: Սակայն հետազոտողների կարծիքով` մշակութային դիվանագիտությունը ծագել է Ֆրանսիայում 1883 թ.-ին «Այլանս Ֆրանսեզ» հասարակական կազմակերպության հիմնադրմամբ, որն այսօր գործում է մոտ 150 երկրում:

Մշակութային դիվանագիտության հիմնական սկզբունքներն են.

- մշակութային բազմազանության և ժառանգության հարգումն ու ճանաչումը,
- միջմշակութային երկխոսությունը,
- արդարությունն ու հավասարությունը,
- մարդու միջազգային իրավունքների պաշտպանությունը,
- գլոբալ խաղաղությունն ու կայունությունը:

Մշակութային դիվանագիտության առանձնահատկությունները

Ժամանակակից գրականության մեջ առավել տարածված է ամերիկացի հետազոտող Միլթոն Ջամինգս կրտսերի մեկնաբանությունը, համաձայն որի` մշակութային դիվանագիտությունը գաղափարների, տեղեկատվության, արժեքների, ավանդույթների, հավատալիքների և մշակույթի այլ բաղադրիչների փոխանակում է, ինչը կարող է նպաստել փոխըմբռնման բարելավմանը: Ընդ որում, մշակութային դիվանագիտությունը հանրային դիվանագիտության բաղադրիչն է և իրենից ներկայացնում է պետությունների, միջազգային կազմակերպությունների և այլ ինստիտուտների մշակութային փոխազդեցության ոլորտում ռազմավարական ու մարտավարական նպատակներ ունեցող պրակտիկ գործողությունների համալիր:

Մշակութային դիվանագիտության ուսումնասիրությամբ զբաղվողները համակարծիք են, որ ժամանակակից աշխարհում Էլիտաների (դիվանագետներ, քաղաքական ու հասարակական գործիչներ) դիվանագիտության հետ մեկտեղ ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում ժողովրդական դիվանագիտությունը, որը ենթադրում է սովորական մարդկանց միջև մեծաչափ մշակութային փոխանակում: Այսպիսով` գլոբալացվող աշխարհում մշակույթը դառնում է միջազգային քաղաքականության ու պետության «փափուկ ուժի» կարևոր բաղադրիչը:

Կարելի է ասել, որ մշակութային դիվանագիտությունը պետության հանրային դիվանագիտության ինքնատիպ բանալին է, քանի որ հատկապես մշակույթի միջոցով

Է ազգն աշխարհին բացահայտում իր նույնականությունը, ներկայացնում իր արժեքներն ու գաղափարները (Որոշ 22):

Պետության մշակութային դիվանագիտության վրա ազդող գործոններն են.

- արտաքին քաղաքականության առաջնահերթությունները,
- դրական վարկանիշ ստեղծելու ձգտումը,
- երկրի պատմությունը,
- մշակութային քաղաքականության ռեսուրսներն ու ֆինանսավորումը,
- աշխարհում երկրի պետական լեզվի տարածումն ու ժողովրդականությունը,
- պետության առևտրային շահերը:

Մշակութային դիվանագիտության նախաձեռնությունների շրջանակներում կարող են օգտագործվել.

- արվեստը, այդ թվում՝ թատրոնը, կինեմատոգրաֆը, երաժշտությունը, պարը, գեղանկարչությունը, քանդակագործությունը,
- ցուցահանդեսները, ներառյալ միջազգային EXPO ցուցահանդեսները,
- կրթական ծրագրերն ու ակադեմիական և գիտական փոխանակման ծրագրերը, լեզվական ծրագրերը արտերկրում,
- գրականությունը. արտերկրում գրադարանների ստեղծումը և ազգային ստեղծագործությունների թարգմանությունը օտար լեզուներով,
- նորությունների և մշակութային հաղորդումների հեռարձակումն արտերկրում,
- կրոնական դիվանագիտությունը, այդ թվում՝ միջկրոնական երկխոսության նախաձեռնությունները:

Մշակութային դիվանագիտության հիմնական ուղղություններից մեկը սովորական մարդկանց հետ երկարաժամկետ փոխհարաբերությունների հաստատումն է մշակութային ու ակադեմիական փոխանակումների ծրագրերի, դրամաշնորհների ու կրթաթոշակների, թրեյնինգների, գիտաժողովների միջոցով: Այսպիսով՝ մշակութային կապերը կարող են դառնալ պետության հանրային դիվանագիտության արդյունավետ գործիքը և ներդրում ունենալ երկրի բարենպաստ վարկանիշի ձևավորման գործում:

Ներկայումս ցանկացած երկիր մշակութային նոր կերպարներ ու խորհրդանշաններ գտնելու և հներն արդիականացնելու խնդիր ունի՝ երկրի արժանի իմիջի ստեղծման և օտարերկրյա լսարանի ներգրավման համար:

Արցախի Հանրապետության մշակութային դիվանագիտության ուղղվածությունը

Բնականաբար, մշակույթն ընդունակ չէ փոխարինելու արտաքին քաղաքականության ռազմական գործիքները, ինչպես նաև լիովին չի փոխհատուցում միջազգային տնտեսական ռեսուրսների պակասը: Սակայն համաշխարհային քաղաքական ու տնտեսական ասպարեզում բարձր դիրքեր չզբաղեցնող երկրներն այս կամ այն կերպ պետք է զբաղվեն արտասահմանում ազգային մշակույթի ժողովրդայնացմամբ: Ուստի մշակութային դիվանագիտությունը կարող է Եական ներդրում ունենալ Արցախի հիմնարար նպատակներին հասնելու, արտաքին քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու և միջազգային մշակութային ասպարեզում ճանաչելի դարձնելու հարցում (Օհանյան 45-57): Մշակույթի միջոցով պետք է նոր ըմբռնում տալ Արցախին միջազգային ասպարեզում, քանզի դիվանագիտական գործիքակազմում մշակույթը ներգործության թերևս ամենաարդյունավետ լծակն է:

Հետևաբար մշակութային քաղաքականության ոլորտում անհրաժեշտ է մշակել հետևողական, համալիր գործողությունների ծրագիր, որը սահմանափակ ռեսուրսների պայմաններում թույլ կտա առավելագույնս գրավիչ ներկայանալ

միջազգային հանրությանը: Այս առումով Արցախի մշակութային դիվանագիտությունը կարող է տարվել երկու ուղղությամբ.

1. Ազգային մշակույթի արժեքների ծրագրավորված, մշակված, նպատակադրված տարածում և քարոզում պետական ու հանրային կազմակերպությունների միջոցով՝ ակտիվորեն օգտագործելով հայկական սիյուռնի ներուժը: Այս համատեքստում անհրաժեշտաբար պետք է ընդգծել Ադրբեյջանի՝ որպես հակամշակութային երկրի գործունեությունը Արցախի՝ ժամանակավորապես բռնագրավված տարածքներում: Այս առումով հատկանշական է Արցախի Հանրապետության պետական պաշտոնյաների ակտիվությունը միջազգային տարբեր կառույցներում Ադրբեյջանի ժամանակավոր վերահսկողության տակ հայտնված հայկական հուշարձանների՝ ոչնչացման վտանգի առջև գտնվելու փաստի բարձրաձայնման առնչությամբ:

2. Մշակույթի և արվեստի առևտրայնացում, ինչը կապահովի Արցախի ներդրումային գրավչությունը, կնպաստի միջազգային հարթակում համագործակցության ընդլայնմանը, կհանդիսանա Արցախի Հանրապետության բնակչության բարեկեցության գրավականը:

Մշակույթի բնագավառում Արցախի Հանրապետության իրականացրած քաղաքականությունը կարգավորվում է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ԼՂՀ օրենքի (ընդունված 18.06.2003 թ.) 2-րդ («Պետական մշակութային քաղաքականության կազմակերպումը»), 3-րդ («Պետական մշակութային քաղաքականության սկզբունքները») և 4-րդ («Պետական մշակութային քաղաքականության նպատակները») հոդվածներով: Հարկ է ընդգծել, որ դեռևս մինչև քառասունչորսօրյա պատերազմը Արցախի մշակութային դիվանագիտության ասպարեզում հստակ տարրորշվել են հետևյալ գերակա ուղղությունները.

1. փառատոների ու մրցույթների կազմակերպում Արցախում,
2. մասնակցություն արտերկրյա ցուցահանդեսներին, մրցույթներին ու շնորհանդեսներին,
3. մարզական միջազգային մրցաշարերի կազմակերպում և մասնակցություն,
4. զբոսաշրջային հոսքերի գրագետ կառավարում:

Արցախի պատմամշակութային ժառանգության նշանակությունը մշակութային դիվանագիտության համար

Վերոգրյալներից Արցախի արտաքին մշակութային քաղաքականության գերակայություններից թերևս պետք է համարել պատմամշակութային ժառանգության գրագետ կառավարումը: Առանց մշակութային ժառանգության անհնար է պատկերացնել Արցախի ժամանակակից կյանքը և Նրա զարգացման հեռանկարները: Ժառանգությունը մեծապես պայմանավորում է արցախցիների հատուկ հոգեկերտվածքը, հաստատում հումանիստական արժեքների ժառանգորդումը և կարող է ստեղծել ԱՀ-ի համաշխարհային իմիջը:

Սակայն հայկական դարավոր մշակութային արժեքները, որոնք իրենց բացառիկությամբ կարող են հետաքրքրել քաղաքակիրթ աշխարհին, ոչ միայն ճանաչված չեն արտերկրում, այլև ըստ արժանավույնս գնահատված չեն հենց մեր երկրում:

Այստեղ հիմնարար սկզբունք է մշակութային ժառանգության համալիր պահպանությունը, որը պետք է դառնա մշակույթի բնագավառում քաղաքականության առանցքային բաղադրիչներից մեկը: Հետևաբար այս ուղղությամբ մշակվող ռազմավարությունները պետք է հիմնված լինեն հասարակայնության պահանջների, տնտեսական գործունեության և պատմական միջավայրի պահպանության միջև հավասարակշռված հարաբերությունների վրա:

Մշակութային ժառանգության պահպանման առանցքը համապատասխան իրավական հիմքն է: Արցախի Հանրապետության տարածքում գտնվող

հուշարձանները գտնվում են պետության պահպանության ներքո: Ոլորտի օրենսդրությունը կարգավորվում է «Մշակութային ժառանգության կարևորությունը հասարակության համար» Եվրախորհրդի շրջանակային կոնվենցիայով, ԱՅ Սահմանադրությամբ, մի շարք օրենքներով, ԱՅ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 20-25-րդ դրույթներով, կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով: Հուշարձանների պետական պահպանությունն իրականացվում է ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմում ներառված երկու գործակալությունների, ինչպես նաև պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության, ԱՅ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գործունեությամբ:

Ըստ պաշտոնական տվյալների և համացանցային աղբյուրների՝ Արցախի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության պետական ցուցակում հաշվառված է ավելի քան 4.000 հուշարձան, որոնց մեծ մասն այժմ անցել է Ադրբեջանի ժամանակավոր վերահսկողության տակ:

Այս հուշարձանները դասակարգվում են ըստ արժեքավորման չափանիշների (հանրապետական ու տեղական նշանակության) և ըստ բնույթի (հնագիտական, պատմական, քաղաքաշինական և ճարտարապետական, մոնումենտալ արվեստի): Սակայն ներկայումս աշխարհում ընդունված է պատմության ու մշակույթի անշարժ հուշարձանների դասակարգումն ըստ վտանգավորության աստիճանի: Դա արվում է կատալոգների, գրքերի, էլեկտրոնային հարթակների, ինտերակտիվ քարտեզների տեսքով, որոնցում ներկայացված հուշարձանները բաժանվում են երեք խմբի՝ սև, կարմիր ու սպիտակ: Սև ցանկերում ներառվում են այն հուշարձանները, որոնք գործնականում այնքան վնասված են, որ հիմնարար վերանորոգման անհրաժեշտություն է զգացվում, ըստ էության դրանք պետք է նորից կառուցել, կարմիր ցանկերում մշակութային այն օբյեկտներն են, որոնց վիճակը բավարար է, բայց վերանորոգման կարիք կա, իսկ սպիտակ ցանկերում՝ նրանք, որոնք լավ և նույնիսկ գերազանց վիճակում են: Ելնելով այդ դասակարգումից՝ հուշարձանները ստորաբաժանվում են՝ ըստ հետևյալ սկզբունքի.

- հուշարձաններ, որոնք օժտված են եկամտի ներգրավման համար փոքր ներուժով և օգտագործվում են մշակութային նպատակներով,
- հուշարձաններ, որոնք օգտագործվում են մշակութային նպատակներով, բայց օժտված են եկամտի ներգրավման համար ներուժով,
- հուշարձաններ, որոնք օգտագործումը հիմնականում տնտեսական բնույթ ունի, և դրանց վերականգնումը կարող է շահութաբեր լինել (Օհանյան <https://asue.am/amberd/publications/three/colors/of/armenian/monuments>):

Մշակութային ժառանգության օբյեկտների այսպիսի դասակարգումը, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, նպաստում է ոչ միայն դրանց պետական պահպանության իրականացմանը, այլև հովանավորական աջակցության ապահովմանը և ներդրումային մեխանիզմների մշակմանը:

Հայաստանում (այդ թվում՝ Արցախում) ևս մշակութային քաղաքականությունը, ի թիվս այլ խնդիրների, ուղղված է պատմամշակութային ժառանգության պահպանմանը: Սակայն այդ խնդրի իրականացման համար ծախսերը մեր երկրում կազմում են ընդհանուր ծախսերի չնչին մասը: Մինչդեռ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ Հայաստան ժամանող զբոսաշրջիկների մեջ տարեցտարի մեծանում է հանգստի ու ժամանցի նպատակով այցելողների թիվը: Հետևաբար հարկ է կատարելագործել հայկական մշակութային քաղաքականությունը պատմամշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ: Իսկ դրա համար բացի պատմամշակութային հուշարձանների պահպանությունը հատկացվող ծախսերի մեծացումից, անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

1. Իրականացնել արցախյան հուշարձանների ավելի լիարժեք ցուցակագրում և դրանց դասակարգում միջազգային չափանիշներով: Մշակութային ժառանգության դասակարգումը ըստ վտանգավորության աստիճանի ու վերականգնելիության հնարավորություն կտա ուղի հարթել մասնավոր ներդրումներ ներգրավելու համար:

2. Ստեղծել հարցման ավելի ճկուն համակարգ՝ պարզելու, թե հանգստի ու ժամանցի նպատակով Արցախի ժամանոդ զբոսաշրջիկների որ մասն է այցելում մեր երկիր պատմամշակութային զբոսաշրջության նպատակներով:

3. Կատարելագործել օրենսդրական դաշտը, որը թույլ կտա որոշ հուշարձաններ վարձակալությամբ տրամադրել մասնավոր կազմակերպություններին՝ դրանց տալով հարկային արտոնություններ՝ պայմանով, որ նրանք կստանան են այդ հուշարձանների խնամքը: Մասնավորապես, մեծացնել հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում մասնավոր կազմակերպություններին տրվող իրավասությունները, սակայն պետությունը պետք է ունենա այդ գործընթացի վերահսկողության և միջամտության բավականաչափ մեխանիզմներ:

4. Ստեղծել անկախ կազմակերպություն, որը կկոորդինացնի մշակութային ժառանգության հարցերով զբաղվող գերատեսչությունների աշխատանքը, կհանդիսանա միջնորդ օղակ պետության և մասնավոր հատվածի, ինչպես նաև հայկական և օտարերկրյա համանման կազմակերպությունների միջև:

Օգտագործված գրականություն

1. Օհանյան Սոֆյա. *Արցախի մշակութային դիվանագիտության անհրաժեշտությունը որպես երկրի միջազգային ծանաչման եղանակ*. «Գիտական Արցախ», 2020, N 2 (5), էջ 45-57:

2. Օհանյան Սոֆյա. *Հայկական հուշարձանների երեք գույները*. <https://asue.am/amberd/publications/three/colors/of/armenian/monuments>

3. Попов Виктор. *Современная дипломатия: теория и практика*. Дипломатия – наука и искусство. М. 2003.

WORKS CITED

1. Ohanyan, Sofya. Arc'akhi mshakutayin divanagitutyan anhrageshtutyuny vorpes yerki mijazgayin ch'anachman eghanak, «Gitakan Arc'akh», [The need for cultural diplomacy of Artsakh as a way of international recognition of the country. "Scientific Artsakh"] 2020, N 2 (5), ej 45-57 (In Armenian)

2. Ohanyan, Sofya. Haykakan husharz'anneri yereq guynery, [Three colors of Armenian monuments] <https://asue.am/amberd/publications/three/colors/of/armenian/monuments> (In Armenian)

3. Popov, V. Sovremennaya diplomatiya: teoriya I praktika. Diplomatiya – nauka I iskustvo. [Modern diplomacy: Theory and Practice. Diplomacy is a Science and an Art.] М., 2003 (In Russian).

THE IMPORTANCE OF CULTURAL DIPLOMACY IN THE DIPLOMATIC TOOLKIT OF ARTSAKH

SOFYA OHANYAN

*Armenian State University of Economics (ASUE), Chair of Social Sciences,
Ph.D. in Philosophy, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is to put forward and support the idea that within the framework of the application of cultural methods included in the foreign policy toolkit, effective methods and techniques have been developed that allow countries not having high positions in the global political and economic spheres to increase the effectiveness of foreign policy and become recognizable in the international cultural scene. The task of the research is to emphasize the special importance of cultural diplomacy in the public diplomacy toolkit, by presenting the fact that a nation reveals its identity to the world and presents its values and ideas through culture. Thus, for achieving its fundamental goals, the Republic of Artsakh should develop a consistent, complex plan of actions which in this extreme period of our history will make it possible to appear the most attractive to the international community, that is, to use the great potential of culture to form an attractive image of the country.

In the course of the research, along with the general philosophical dialectical method, general scientific methods (analogy, comparison, analysis, confrontation) and private scientific (descriptive, statistical) methods were also implied.

As a result of the research, it was concluded that one of the priorities of Artsakh's foreign cultural policy, perhaps, can be considered competent management of historical and cultural heritage, therefore, strategies developed in this direction should be based on the requirements of the public, balanced relations between economic activity and the protection of the historical environment.

Key words: *Public diplomacy, cultural diplomacy, foreign policy, propaganda, historical and cultural heritage, state protection of monuments, classification of monuments.*

ЗНАЧЕНИЕ КУЛЬТУРНОЙ ДИПЛОМАТИИ В ДИПЛОМАТИЧЕСКОМ ИНСТРУМЕНТАРИИ АРЦАХА

СОФЬЯ ОГАНЯН

*доцент кафедры общественных наук
Армянского государственного экономического университета,
кандидат философских наук,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – предложить и обосновать идею, согласно которой в рамках применения включенных во внешнеполитический инструментарий культурных методов разработаны эффективные способы и формы, которые странам, не занимающим высокие позиции на всемирной политической и экономической арене, предоставляют возможность повысить эффективность внешней политики и стать узнаваемыми на всемирном культурном поле. Наша задача – подчеркнуть особую

важность культурной дипломатии в инструментарии публичной дипломатии, предложив точку зрения, согласно которой, поскольку нация именно с помощью культуры демонстрирует миру свою идентичность, представляет свои ценности и идеи, то для достижения фундаментальных целей Арцаха необходимо разработать программу комплексных действий, которая во время сегодняшнего кризисного периода нашей истории позволит использовать большой потенциал культуры для формирования привлекательного имиджа государства.

В процессе исследования, кроме общемировоззренческого диалектического метода, используются также общенаучные (аналогия, сравнение, анализ, синтез) и частно-научные (описательные, статистические) методы.

В результате исследования мы пришли к выводу о том, что приоритетным направлением внешней политики Арцаха можно считать грамотное использование массива историко-культурного наследия, поэтому разрабатываемые в этом направлении стратегии должны основываться на требованиях общественности, на сбалансированных отношениях между экономической деятельностью и сохранением исторической среды.

Ключевые слова: *публичная дипломатия, культурная дипломатия, внешняя политика, пропаганда, историко-культурное наследие, государственное сохранение памятников, классификация памятников.*

ПОЗИЦИИ МЕЖДУНАРОДНЫХ АКТОРОВ ВО ВРЕМЯ ТРЕТЬЕЙ КАРАБАХСКОЙ ВОЙНЫ И В ПОСТВОЕННЫЙ ПЕРИОД: АНАЛИЗ И ПЕРСПЕКТИВЫ*

УДК 327.5

DOI: 10.52063/25792652-2021.3-217

ДЕСЯЕВ ДМИТРИЙ

научный сотрудник НОЦ «Политический анализ территориальных систем» при ФГБОУ ВО «Национальный исследовательский Мордовский государственный университет им. Н. П. Огарёва»,
аспирант НИИ Гуманитарных наук при Правительстве
Республики Мордовия, магистр политологии,
г. Саранск, Российская Федерация
exprise@mail.ru

В статье анализируются позиции международных акторов в рамках третьей крупномасштабной эскалации конфликта в Нагорном Карабахе. К задачам исследования автор отнес анализ деятельности РФ, США, Франции, Великобритании и Турции, их мотивы, степень заинтересованности, и предпринимаемые ими действия. В качестве материалов исследования использовались труды экспертов по нагорно-карабахскому конфликту, заявления официальных лиц, политиков, общественных деятелей; применены сравнительно-политологический, семантический, сценарный и другие методы. Исследование позволяет сделать выводы, что усилия России по урегулированию конфликта имеют практический результат и направлены на предотвращение его дальнейшей эскалации. Турция активно поддерживает агрессивные действия Азербайджана и выступает дестабилизирующим актором с амбициями регионального лидера. Великобритания поощряет турецкую сторону в контексте геополитического противостояния с Россией, преследуя при этом собственные экономические выгоды. США и Франция фактически не предпринимают реальных шагов для урегулирования конфликта и в целом не против экспансионистской политики Турции, несмотря на некоторые разногласия.

Ключевые слова: Нагорный Карабах, Арцах, Армения, Азербайджан, нагорно-карабахский конфликт, международные отношения.

Введение. В 2020 г. в активную фазу перешел один из масштабных конфликтов постсоветского пространства. Нагорно-карабахский конфликт – противостояние между Арменией и Азербайджаном, возникшее вследствие распада Советского Союза, но корнями уходящее в период существования Российской Империи.

Эскалация конфликта привела к значительным потерям территории Нагорно-Карабахской Республики (НКР) и создала прецедент для разрешения подобных территориальных конфликтов силовым методом. Азербайджан готовился к

* Հոդվածը ներկայացվել է 17.11.2021թ., գրախոսվել՝ 04.12.2021թ., տպագրության նախնական 25.12.2021թ.:

вторжению в НКР на протяжении всего периода с момента окончания первого этапа боевых действий в 1994 г., который завершился подписанием Бишкекского протокола при содействии России. Благодаря первому перемирию, Баку смог избежать более крупных территориальных потерь, помимо семи районов вокруг НКР (пяти полностью и двух частично), ввиду активных и успешных наступательных действий армянской стороны. С этого времени начинается планомерная модернизация азербайджанской армии и закупка вооружения за рубежом. Основным поставщиками были Россия, Турция, Израиль, Франция, Болгария и другие (Аветисян и Назаретян).

вопросу, отметим следующее: Китай придерживается концепции, что Арцахский вопрос должен быть решён исключительно мирным путём, поэтапно и в рамках международного права, занимая нейтральную позицию в ходе голосования по резолюциям, отображающим интересы только одной из конфликтующих сторон.

Использованная литература

1. Խեչոյան, Լուսիկ. «Զայներ և տեսիլքներ». Նաիրի, Երևան, 2006, էջ 231:
2. Մարության, Զարուբյուն. «Ղարաբաղյան շարժման» կամ հայկական հեղափոխության հիմնական առանձնահատկությունները». Երևան, 2014, էջ 268:
3. Մկրտչյան, Շահեն. «Լեռնային Ղարաբաղ. Արդրեջանի իրականացրած գեղափոխության անատոմիան». Ազատ Արցախ, Ստեփանակերտ, 2003, էջ 250:
4. Kazimirov, Vladimir. "Karabakh and UN Security Council Resolutions". www.vn.kazimirov.ru/k100.htm. Accessed:15.08.2021
5. Svante, Cornell. "The Nagorno-Karabakh Conflict". *Journal of South Asia and Middle Eastern Studies*, vol. 20, no. 4, 1997, pp. 5-24.
6. "UN Security Council calls for immediate end to fighting in Nagorno-Karabakh". France24: <https://amp.france24.com/en/20200930-un-security-council-calls-for-immediate-end-to-fighting-in-nagorno-karabakh>. Accessed: 05.10.2021
7. «Бишкекский протокол». Официальный сайт Национального Собрания Республики Армения: http://parliament.am/library/LGH/doc_9.pdf. Доступно: 05.10.2021.
8. Благова, Галина. «К становлению обобщающего имени тюркоязычных народов». Москва, 1973, с. 344.
9. Васильев, Леонид. «Проблемы генезиса китайского государства». Наука, Москва, 1983, с. 368.
10. «Декларация о независимости Республики Армения». Официальный сайт Правительства Республики Армения: <http://www.gov.am/ru/independence/>. Доступно: 14.09.2021
11. «Китай готов содействовать карабахскому урегулированию». РИА Новости: <https://ria.ru/20160415/1411940488.html>. Доступно: 14.09.2021
12. «Китай сказал своё слово по Карабаху: нужны сдержанность и диалог». Eurasia Daily: <https://easaily.com/ru/ampnews/2020/09/28/kitay-skazal-svoyo-slovo-po-karabahu-nuzhny-sderzhannost-i-dialog>. Доступно: 14.09.2021
13. «Конституционный Акт о восстановлении государственной независимости Азербайджанской Республики». База данных законодательств стран СНГ: http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=2889. Доступно: 14.09.2021
14. «Резолюции СБ ООН». Официальный сайт ООН: <http://www.un.org/ru/sc/documents/resolutions/>. Доступно: 20.08.2021.
15. «Резолюция ГА ООН №48/114». Официальный сайт ООН: <http://www.un.org/ru/ga/61/docs/61res.shtml>. Доступно: 20.08.2021.
16. «Резолюция ГА ООН №62/243». Официальный сайт ООН, <http://www.un.org/ru/ga/63/docs/63res.shtml>. Доступно: 20.08.2021.
17. «Референдум о независимости Республики Арцах». Официальный сайт МИД НКР: <http://www.nkr.am/ru/referendum/42/>. Доступно: 20.08.2021.
18. «Референдум о независимости Республики Армения». Официальный сайт Национального Собрания Республики Армения: <http://www.parliament.am/legislation.php?sel=sho=rus/>. Доступно: 20.08.2021.
19. «Свод законов СССР». Том 1. Москва, 1990.
20. Спицын, Юрий. «Крымская эпопея». Москва, 2015, с. 461.

Works Cited

1. “Bishkekskyj protokol”. Oficialnyj sajt Nacional'nogo Sobranija Respubliki Armenija: http://parliament.am/library/LGH/doc_9.pdf. Dostupno: 05.10.2021. [“Bishkek protocol”. The official website of the National Assembly of the Republic of Armenia: http://parliament.am/library/LGH/doc_9.pdf. Accessed: 05.10.2021].
2. Blagova, Galina. “K stanovleniju obobshajush'ego imeni tjurkojazychnih narodov” // Tjurkologicheskij slovar'. Moskva, 1973, s. 344. [Blagova, Galina. “The formation of a generalized name for the Turkic-speaking peoples” // Turkic dictionary. Moscow, 1973, pp. 344].
3. “Deklaracija o nezavizimosti Respubliki Armenija”. Oficialnyj sajt Pravitel'stva Respubliki Armenija: <http://www.gov.am/ru/independence/>. Dostupno: 14.09.2021. [“Declaration of the independence of the Republic of Armenia. The official website of the Government of the Republic of Armenia: <http://www.gov.am/ru/independence/>. Accessed: 14.09.2021].
4. Hechojan, Lusik. “Dzajner ev tesilqner”. Nairi, Erevan, 2006, ej 231. [Khechoyan, Lusik. “Voices and ghosts”. Nairi, Yerevan, 2006, pp. 231].
5. Kazimirov, Vladimir. “Karabakh and UN Security Council Resolutions”. www.vn.kazimirov.ru/k100.htm. Accessed: 15.08.2021
6. “Kitaj skazal svojo slovo po Karabahu: nuzhnij sderzhannost' I dialog”. Eurasia Daily: <https://eadaily.com/ru/ampnews/2020/09/28/kitay-skazal-svoyo-slovo-po-karabahu-nuzhny-sderzhannost-i-dialog>. Dostupno: 14.09.2021. [“China has had its say: restraint and dialogue is needed”. Eurasia Daily: <https://eadaily.com/ru/ampnews/2020/09/28/kitay-skazal-svoyo-slovo-po-karabahu-nuzhny-sderzhannost-i-dialog>. Accessed: 14.09.2021].
7. “Kitaj gotov sodejstvovat' Karabahskomu uregulirovaniju”. RIA novosti: <https://ria.ru/20160415/1411940488.html>. Dostupno: 14.09.2021. [“China is ready to promote the Karabakh settlement”. RIA News: <https://ria.ru/20160415/1411940488.html>. Accessed: 14.09.2021].
8. “Konstitucionnij akt o vostonovleniji nezavisimosti Azerbajdžanskoj Respubliki”. Baza dannyh zakonodatelstv stran SNG: http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=2889. Dostupno: 14.09.2021. [“Constitutional act on the independence of the Republic of Azerbaijan”. Database of legislation of the CIS countries: http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=2889. Accessed: 14.09.2021].
9. Marutjan, Harutj'un. Gharabaghj'an sharzhman kam haj'kakan heghap'ohuti'an himnakan ar'andznahatkut'junnere. Erevan, 2014, ej 268. [Marutyán, Harutyun. “The main features of the Karabakh Movement or the Armenian Revolution”. Yerevan, 2014, pp. 268].
10. Mkrtchjan, Shahan. “Ler'najin Gharabahh. Adrbejani irakanacrac' ceghaspanutjan anatomian. Azat Arcax, Step'anakert, 2003, ej 250. [Mkrtchyan, Shahan. “NagornoKarabakh: The anatomy of a genocide, which was realized by Azerbaijan”. Azat Artsakh, Stepanakert, 2003, pp. 250].
11. “Referendum o nezavisimosti Respubliki Arcax”. Oficialnij sajt MID NKR: <http://www.nkr.am/ru/referendum/42/>. Dostupno: 20.08.2021. [“Referendum on the independence of the Republic of Artsakh”. The official website of the MFA of NKR: <http://www.nkr.am/ru/referendum/42/>. Accessed: 20.08.2021].
12. “Referendum o nezavisimosti Respubliki Armenija”. Oficialnyj sajt Nacional'nogo Sobranija Respubliki Armenija: <http://www.parliament.am/legislation.php?sel=sho=rus/>. Dostupno: 20.08.2021. [“Referendum on the independence of the Republic of Armenia”. The official website of the National Assembly of the Republic of Armenia: <http://www.parliament.am/legislation.php?sel=sho=rus/>. Accessed: 20.08.2021].

13. “Rezoljuciji SB OON”. Officialnij sajt OON: <http://www.un.org/ru/sc/documents/resolutions/>. Dostupno: 20.08.2021. [“UN Security Council resolutions”. The official website of the UN: <http://www.un.org/ru/sc/documents/resolutions/>. Available: 20.08.2021].
14. “Rezoljuciji GA OON”. Officialnij sajt OON: <http://www.un.org/ru/ga/61/docs/61res.shtml>. Dostupno: 20.08.2021. [UN General Assembly resolution”. The official website of the UN: <http://www.un.org/ru/ga/61/docs/61res.shtml>. Available: 20.08.2021].
15. “Rezoljuciji GA OON №62/243”. Officialnij sajt OON: <http://www.un.org/ru/ga/63/docs/63res.shtml>. Dostupno: 20.08.2021. [UN General Assembly resolution No№62/243”. The official website of the UN: <http://www.un.org/ru/ga/63/docs/63res.shtml>. Accessed: 20.08.2021].
16. Svante, Cornell. “The Nagorno-Karabakh Conflict”. Journal of South Asia and Middle Eastern Studies, vol. 20, no. 4, 1997, pp. 5-24.
17. Spicyn, Jurij. “Krymskaja epopeja”. Moskva, 2015, s. 461. [Spicyn, Yuri. “Crimean epic”. Moscow, 2015, pp. 461].
18. “Svodzakonov SSSR”. Tom 1. Moskva, 1990. [Code of laws of the USSR”. Volume 1. Moscow, 1990].
19. “UN Security Council calls for immediate end to fighting in Nagorno-Karabakh”. France24: <https://amp.france24.com/en/20200930-un-security-council-calls-for-immediate-end-to-fighting-in-nagorno-karabakh>. Accessed: 05.10.2021
20. Vasiljev, Leonid. “Problemy genezisa kitajskogo gosudarstva”. Moskva, Hayka, 1983, s. 368. [Vasilyev, Leonid. “Problems of the genesis of the Chinese state”. Nauka, Moscow, 1983, pp. 368].

ԱՐՑԱԽՅԱՆ (ՂԱՐԱԲԱՂՅԱՆ) ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ

*Հայ-Ռուսական համալսարանի հայցորդ,
ք. Պավլոդար, Ղազախստանի Հանրապետություն*

20-րդ դարի վերջում Արցախում մեկնարկեց տեղի հայ բնակչության պայքարը հանուն անկախության և ընդդեմ ադրբեջանական ագրեսիայի: Սույն հոդվածի նպատակը միջազգային տարբեր հարթակներում 1991 թ.-ից մինչև 2021 թ.-ը ընկած ժամանակահատվածում Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ Չինաստանի դիրքորոշման ուսումնասիրությունն ու վերլուծությունն է:

Աշխատանքի խնդիրը գիտական ու լայն հանրությանը Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ ՉԺՀ-ի դիրքորոշման փաստավորված ներկայացումն է: Աշխատանքը շարադրված է իրավական փաստերի համադիր քննությամբ ու պատմաքննական վերլուծության սկզբունքների կիրառմամբ:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է պնդել, որ Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ ՉԺՀ-ի դիրքորոշումը չեզոք է: Ավելին՝ 1991-ից ի վեր Չինաստանը հավատարիմ է այն հայեցակարգին, որ Արցախյան հիմնախնդիրը պետք է լուծվի բացառապես խաղաղ ճանապարհով՝ միջազգային իրավունքի շրջանակներում:

Հիմնաբառեր՝ Արցախյան հիմնախնդիր, Արցախ, Ղարաբաղ, ազգերի ինքնորոշման իրավունք, Չինաստան, արտաքին քաղաքականություն, միջազգային կազմակերպություններ:

ARTSAKH (KARABAKH) ISSUE IN CHINA'S FOREIGN POLICY**ANDRANIK HOVHANNISYAN***Russian-Armenian University, Ph.D. Student,
Pavlodar, Republic of Kazakhstan*

At the end of the 20th century in Artsakh (Karabakh), the local indigenous Armenian population began to fight for independence and against Azerbaijani aggression. The purpose of this article is to study and analyze China's position on the Artsakh issue at various International platforms from 1991 to 2021.

The main task of the work is to present to the scientific and general public the position of the PRC on the Artsakh issue.

The article is based on a combined study of legal facts and the application of the principles of historical analysis.

As a result of the research, it can be argued that China's position on the Artsakh issue is neutral. Moreover, since 1991, China has adhered to the concept that the Artsakh issue should be settled exclusively by peaceful means within the framework of International law.

Keywords: *Artsakh issue, Artsakh, Karabakh, the right of a people to self-determination, China, foreign policy, international organizations.*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ***

ՀՏԴ 338.24.021.8 (479.25)

DOI: 10.52063/25792652-2021.3-250

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան,
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհրդի անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sargsyan.yso@gmail.com

ՆԱՐԻՆԵ ԶՈՉԻՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
akochinjan@mail.ru

Հայաստանի Հանրապետության տնտեսության դիմագծի ռետրոսպեկտիվ ուրվագիծը ներկայացնելուց հետո քննության առարկա են հանդիսացել երկրի առջև ծառայած որոշ մարտահրավերների բացահայտումն ու լուծումների առաջադրումը: Դրանք երկարատև կայուն զարգացմանը միտված, խաղաղ գոյակցության պայմաններում առաջադրվող, իրենց կարևորությամբ առանձնացվող հետևյալ հիմնահարցերն են՝

- ✓ Տնտեսական հեղափոխության իրողությունը և դրա հնարավոր գործարկումը ետճգնաժամային հորձանուտներում,
- ✓ Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացումն ու տնտեսության թվայնացման հիմնախնդիրները,
- ✓ Գիտության գիտելիքահենք կառավարումը որպես կարևորագույն առաջնահերթություն:

Վերջին տասնամյակների տնտեսական կոնյուկտուրան առավել խոցելի է դարձել, մեծացել է ֆինանսատնտեսական ճգնաժամերի (մեր դեպքում նաև՝ պատերազմների) հաճախականությունը՝ հանգեցնելով ընթացիկ տնտեսական հարացույցների ու քաղաքականության նոր մարտահրավերներ հաղթահարելու անհրաժեշտությանը: Այդ հարափոփոխ տնտեսական միջավայրում առավել կարևորություն են ստանում տնտեսության արժեքանական հիմնարարների (ֆունդամենտալների) գործարկումը, որոնք կողողորդեն Էֆեկտիվ տնտեսական հարաբերությունների խթանմանը երկարաժամկետ հեռանկարում: Այդ նպատակով ներկայացվում է

* Հոդվածը ներկայացվել է 14.10.2021թ., գրախոսվել՝ 16.11.2021թ., տպագրության ընդունվել՝ 25.12.2021թ.:

տնտեսական հարաբերությունների սահմանադրականացման շրջանակը, տնտեսության թվայնացման դերակատարումը սահմանադրականության մակարդակի բարձրացման գործում: Առանձնակի քննարկման առարկա են դարձել գիտության կառավարման կատարելագործման հիմնահարցերը երկրի ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) ձևավորման ու գործարկման համատեքստում:

Հիմնաբառեր՝ ՀՀ տնտեսության դիմագիծ, տնտեսական հեղափոխություն, սահմանադրականություն, սոցիալական պետություն, մարդու իրավունք, կառավարում, տնտեսության թվայնացում, ռազմաարդյունաբերական համալիր:

Նախաբան

Անկախությունից ի վեր տնտեսական կյանքում տեղի ունեցած վերափոխումների կամ փոխակերպումների վերաբերյալ առկա են բազում վերլուծություններ: Դրանց ընդհանրական, ամփոփ գնահատականը թերևս այն է, որ վարվող տնտեսական քաղաքականության արդյունքում թե՛ տնտեսությունը և թե՛ հասարակությունը հայտնվել են անցանկալի (եթե ոչ դժգույն ...) իրավիճակում:

Անցած երեք տասնամյակների ՀՆԱ-ի հետագիծը վկայում է, որ ճամփագծի կեսին միայն (2005թ.) երկիրը կարողացավ ապահովել ՀՆԱ-ի ընդամենը ելակետային (1990թ.) վերականգնողական մակարդակը, իսկ մյուս կեսին այն հասցրեց ընդամենը 13 մլրդ ԱՄՆ դոլարի: Այսպիսի արդյունքի հետևանքն են աղքատությունը՝ եկամուտների զգալի գերբևեռացմամբ, սոցիալական լարված իրավիճակը, ահազանցող միգրացիան, ՀՆԱ-ի 60 տոկոսը գերազանցող պետական պարտքի բեռը, վերջին տարիներին էապես կրճատվող օտարերկրյա ուղղակի ներդրումները և այլն:

Նման պատկերն ինքնին հետևանք է այն բանի, որ

- ✓ տարիներ ի վեր տարաբնույթ վայրիվերումներով իրականացվող տնտեսական քաղաքականության պարագայում չի իրականացվել կրթական ու գիտատարտադրական միասնական համակարգի առաջանցիկ զարգացում, չեն ձևակերպվել ու գործադրվել մարդկային կապիտալի, հողի, ջրի և այլ բաղադրիչների մասով օպտիմալ ռեսուրսաօգտագործում:
- ✓ Երկիրը չի մշակել հեռանկարին միտված ռազմավարություն, ապագայի տեսլական: Տնտեսական աճին ուղղված ծրագրերը, ամենատարբեր ոլորտների մակարդակների տնտեսափրավական կարգավորումները ամրագրված չեն եղել պոտենցիալ հնարավորությունների բացահայտման, այնուհետև դրանց գործադրման բավարար պայմաններով: Հապաղումը որակյալ բարեփոխումների հարցում չի հանգեցրել ցանկալի կառուցվածքային տեղաշարժերի: Հայաստանի ու Արցախի տնտեսությունների քառորդարյա զարգացման ընթացքը մանրակրկիտ վերլուծվել և լուսաբանվել է (Հ. Սարգսյան, Ա. Մարկոսյան, 552 էջ):

Ներկայումս ՀՀ տնտեսության իրական հատվածը թողարկում է ՀՆԱ-ի շուրջ 50 տոկոսը: Դեռևս չի ընդլայնվում տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտը (ստեղծված արդյունքը տարբեր գնահատականներով կազմում է ՀՆԱ-ի մինչև երեք տոկոսը: Տեղեկատվական տեխնոլոգիաների սեգմենտում ներկայիս մինչև 20 հազար զբաղվածների թվաքանակը հնգամյա ժամկետում ծրագրվում է հասցնել 35 հազարի: Տնտեսությունում արդյունքի կեսը ստեղծվում է ծառայությունների ոլորտում (առևտուր, կրթություն, առողջապահություն, ֆինանսական հատված և այլն), իսկ մեկ քառորդը բաժին է ընկնում ագրոպարենային համակարգին: Այն հարցին, թե որքանով է ձևավորված կառուցվածքը նպաստավոր տնտեսությունում ճեղքում ապահովելու տեսանկյունից, կանդիդատանք ստորև: Առաջ անցնելով՝ կարող ենք պնդել, որ մեր երկրի իմիջը կառուցվածքային տեղաշարժերի և տեխնոլոգիական բարձր մակարդակի հիմքի վրա

պետք է լինեն պաշտպանական ու ռազմաարդյունաբերական համակարգերը, կրթությունն ու գիտությունը:

Գյուղատնտեսության և գյուղի զարգացման հարցի օրինակով կարելի է տեսնել մեր գործելակերպի վերանայման ու արմատական վերափոխումների պահանջվածությունը: Գործելակերպի (վարվող քաղաքականության) արդյունքում ակնհայտ է դառնում հողային, ջրային, մարդկային ներուժի օգտագործման ծայրահեղ թերբեռնվածությունը, որը շարունակաբար իրականացվող կարճաժամկետ պահանջարկային քաղաքականության արդյունք է: ՀՀ կառավարության կողմից ընդունված «ՀՀ գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը» հայեցակարգը այդպես էլ չունեցավ պահանջվող դերակատարումը և բավարար լուծումների առաջադրումը առնվազն այնպիսի հարցերում ինչպիսիք են՝

- ✓ ոլորտում ստեղծված արդյունքի երաշխավորված իրացումը, այդ թվում՝ արտահանման խրախուսման գործիքակազմով,
- ✓ պարենային անվտանգությունը, ինչպես նաև ջրոռոգման ու անհրաժեշտ այլ ենթակառուցվածքների, գյուղկոոպերացիայի, խորհրդատվության, ապահովագրության ապահովումը և այլն: Հարցերի այս շրջանակը մեր կողմից դարձել է քննարկման առարկա (Հ. Սարգսյան, Խ. Հարությունյան Վ. Մանասյան, 79 էջ):

Ինչպես խնդրո առարկա ոլորտի (իսկ այն առանցքային է մնալու ինչպես ՀՀ-ի, այնպես էլ Արցախի Հանրապետության համար), այնպես էլ սոցիալ-տնտեսական բացառապես բոլոր ոլորտներում սպասումների հետաձգումը և որ կարևոր է, առաջիկա միջնաժամկետ հատվածում դրանց ամբողջական իրագործման կասկածելիությունը ոչ բավարար նախադրյալների ստեղծման հետևանք են: Վերջինս էլ, ինչպես նշվել է, հետևանք է ՀՀ և ԱՀ երկարաժամկետ զարգացման ռազմավարության ոչ հստակ մշակվածության և «խախուտ» ինստիտուցիոնալ կազմավորումների գործունեության: Արցախի պարագայում ազգաբնակչության սպասումների ու անորոշությունների չեզոքացման ու մեղմման առումով խնդրահարույց են մտում կենսունակ միջավայրի և բնակվածության ապահովման հիմնախնդիրները:

2019 թվականին կուտակված խնդիրների լուծման և երկարաժամկետ կայուն զարգացման նպատակով ձեռնարկվեցին որոշակի քայլեր, հրավիրվեցին խորհրդաժողովներ երկրում տնտեսական հեղափոխությանը օժանդակելու համար: Չնայած ժամանակային դադարից հետո տնտեսական հեղափոխության իրականացումը հետաձգվում է, համոզված ենք, որ դրա գործարկումը որպես գերակա խնդիր այլընտրանք չունի, չպետք է կասեցվի և որոշակի խմբագրումներից ու ճշգրտումներից հետո պետք է նորովի ներմուծվի տնտեսական քաղաքականություն:

Տնտեսական հեղափոխությունը ետճգնաժամային հորձանուտներում

Տնտեսական հեղափոխության գաղափարաբանության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում դրա իրագործելիության խնդիրներին նվիրված լուսաբանումից հետո (Հ. Սարգսյան, էջ 3-15) երկրում իրավիճակ փոխվեց: 2020 թվականին նախ COVID 19-ը, ապա սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետություն ադրբեջանա-թուրքական ներխուժումն ու պատերազմը առաջ բերեցին տնտեսական հեղափոխության ուղեգծի լուրջ վերանայման անհրաժեշտություն: Ուղեգծը ոչ միայն բեկվեց, այլև հայտնվեց դժվար շտկելի ու հաղթահարելի միջավայրում: Դժվար է լինելու հաղթահարումը, բայց այն պարտադրված է՝ մեր ժողովրդի քաղաքակրթական ձեռքբերումներին բնականոն ընթացք հաղորդելու տեսանկյունից:

Բեկված ուղեգծի շտկումը պայմանավորված է լինելու ճգնաժամի հաղթահարմանն ուղղված հավելյալ ջանքերի (ճգնելու) ու ծախսերի ներդրումով: Ամբողջ թափով տնտեսական հեղափոխության իրագործելիությունը («ռեստարտ»,

«իմպլիմենտացիա») մեծապես պայմանավորված է լինելու նաև նրանով, թե որքանով մեզ կհաջողվի երկրում սկիզբ առած (սկատենք՝ ձգձգումներով ընթացող) ժողովրդավարական, ինստիտուցիոնալ, քաղաքական ու իրավատնտեսական բարեփոխումներն ու կարգավորումներն ուղղորդել էֆեկտիվ տնտեսություն ունենալուն: Կարծում ենք, որ թվարկված ուղղություններով բարեփոխումների պետք է շեշտադրումը վերապահեն «ներկա - ապագա» ընթացքին: Ընդ որում, այդպիսի շեշտադրումը իր արտացոլումը պետք է գտնի զարգացման քաղաքական օրակարգը թելադրող ռազմավարական նշանակության փաստաթղթերում: Չորրինակ՝ օրինակելի է, որ ՌԴ սահմանադրական փոփոխություններում (2020, հուլիսի 1) երեխաները համարվում են պետական քաղաքականության առաջնահերթություն:

Տնտեսական հեղափոխության տրանսֆորմացիայի՝ ելակետի փոփոխությանը պետք է հետևի նոր հնարավորությունների բացահայտման փնտրտուքը: Որքան էլ տարբեր լինեն նոր միջավայրի ու հնարավորությունների դրսևորումները, օպերատիվ կառավարմանը որևէ կերպ չպետք է վերադասվեն այնպիսի ռազմավարական խնդիրների լուծումները, ինչպիսիք են՝

- ✓ երկրի անվտանգությունն ապահովող պետական կառավարման համակարգի անխափան ու էֆեկտիվ աշխատանքը,
- ✓ տնտեսական հեղափոխության մոդելի՝ կառուցվածքային ու նորարարական բարեփոխումների հիման վրա քաղաքականության բարելավումը՝ նոր միջավայրում ռեսուրսների օպտիմալ օգտագործման չափանիշներով,
- ✓ բիզնեսի պայմանների բարելավումը նախևառաջ դատաիրավական համակարգի գործունեության շեշտակի բարեփոխումների, «քաղաքական իշխանություն - բիզնես» տարանջատման, «պետություն – մասնավոր հատված» սերտ համագործակցման և այլ ուղղություններով:

Սրանք սոսկ ներքին խնդիրներն են, որով պետք է ներբեռնվի տնտեսական հեղափոխության լոկոմոտիվը: Վերջինս կլինի այնքան հզոր ու սլացիկ, և նշմարվող բոլոր հանգույցներում կհաղթահարվեն «դժվարանցանելի բարձունքներ ու ոլորաններ», որքան լավորակ կլինի սահմանադրությունը: Դեռևս 2018թ.-ի քաղաքական հեղափոխությունից հետո նախանշելով ՀՀ իշխանությունների օրակարգային խնդիրների շրջանակը առաջիկա տարիների համար՝ մեր կողմից ընդգծվել է սահմանադրական փոփոխություններին ձեռնամուխ լինելու անհրաժեշտությունը (Հ. Սարգսյան, էջ 9-16):

Որքան լավորակ է գրավոր սահմանադրությունը՝ ամրագրված սկզբունքներով, դրույթներով ու նորմերով՝ վերաբերող իշխանությունների տարանջատմանը, զապման ու հակակշիռների կառուցակարգերին, ներքին ու արտաքին սպառնալիքներին դիմակայությանը, հանրային կյանքին ու տնտեսությանը, այնքան ոլորտին են հաղթահարվելու տարաբնույթ դժվարությունները: Զանի որ սահմանադրություններում կատարվող հիմնարար փոփոխությունները հաճախ չեն նպաստում մարդկային զարգացման ցուցիչի բարելավմանը (այն ցույց է տրվել Էմպիրիկ հետազոտություններով), հետևաբար հաճախակի փոփոխությունները միշտ չէ, որ արդարացված են: Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացումը, սուբյեկտիվ գործոնի դերի ու կամայականությունների շրջանակի նվազեցումը, քաղաքական ու տնտեսական հնարավոր մենիշխանության կանխումը, ընթացիկ ու հեռանկարային առաջնահերթությունների հստակեցումն ու դրանց համարժեք ծրագրանպատակային քաղաքականությանը միտված առաջարկությունների մշակումը այլընտրանք չունի: Հարցադրումների ու լուծումների մոտեցումները կարելի է տեսնել [1]-ում (Գ. Հարությունյան, Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, 139 էջ):

Գործող սահմանադրության օրակարգում տնտեսական հեղափոխության ուղեգիծ դուրս գալու հնարավորությունները պետք է փնտրել առաջընթացի

խոչընդոտներ ու խթանիչներ առաջացնող հանգույցներում՝ մատնանշելով դրանց իրագործման իրավատեսության կործուկ կառուցակարգերը:

Տնտեսական հեղափոխության գործարկման մոդելների առանձնահատկությունը միջգիտակարգային թնջուկների բացահայտումն է: Դրա ելությունը խնդրի զուտ տնտեսագիտական պարկուճից դուրս բերումն ու նման մոտեցումից ձերբազատումն է: Որպես միջգիտակարգային խնդրի օրինակ կարող է հանդիսանալ գիտակրթական, նորարարությունների, մշակութային, վարքագծային խնդիրների համալուծ դիտարկումը:

Երկրի հեղափոխական զարգացման նշմարվող կաշկանդումը (հուսով ենք, որ այն չի ուժգնանա, նկատի չունենք կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված անխուսափելի ազդեցությամբ) պայմանավորված է զարգացման սցենարների «հիմնավորումով» նեղ տնտեսագիտական դիտանկյունից՝ ստորադասելով երկրաքաղաքական, ժողովրդավարական, դիվանագիտական, ինստիտուցիոնալ, բարոյահոգեբանական, մշակութային ներազդման միջոցները:

Չարգացման սցենարների տեսանկյունից այդ խնդիրների շարքում առանցքային են լինելու զուգահեռաբար գործող երկու միություններում ինտեգրման ճշգրիտ կողմնորոշումները: Ակներև է, որ դրանք խնդիրներ են առաջացնելու, քանզի ԵՄ հարևանության ու գործընկերության (այս ծրագրերով ակնկալվում է 2,6 մլրդ եվրոյի աջակցություն) և ԵԱՏՄ ծրագրերը միշտ չէ, որ ներդաշնակ են պարտավորությունների, կանոնակարգերի, սերտիֆիկատների և այլ հարցերում:

Տնտեսական հեղափոխության գործարկման առանցքային խնդիրը մնալու է կապիտալ ներդրումներով տնտեսության սնուցումը՝ լինի դրսից, թե ներսից: Լրացուցիչ կապիտալ ներդրումներից գատ, բարելավվում է արտահանման ճիշտ քաղաքականության իրականացումը: Արդարացված կողմնորոշումն արտահանման խթանման հարցում, ըստ որի կբարելավվի երկրի վճարային հաշվեկշիռը, պետք է ուղեկցվի ներմուծման կառուցվածքի բարելավմամբ: 2020թ.-ին ներմուծման ծավալում այն հասնում է 0,8 մլրդ դոլարի (ընդհանուր ներմուծման 17 տոկոսը), ինվեստիցիոն ապրանքների տեսքով:

Այս առումով հետաքրքրական էին ոչ վաղ անցյալում կապիտալի շուկայի զարգացվածության վերաբերյալ իշխանությունների «մտահոգությունների» հետ կապված լուծումները: Ստանդարտ իրավիճակում և կայուն զարգացում ունեցող երկրներում դրանք արդարացված են, սակայն տնտեսական հեղափոխության գործարկման այս փուլում դրանց գերաթեւորումը, երբ չկան կապիտալի շուկայի կայացման հիմնարար նախադրյալները՝ կապիտալի բաժնետիրացման ոլորտում խորը ռեֆորմացիայի առումով, կառավարության համապատասխան որոշման պրոդուկտիվությունը միանշանակ չէ: Տնտեսական հեղափոխության իրականացման համար կարող ենք թվարկել երկու տասնյակի հասնող հիմնախնդիրներ, այդ թվում՝ «Ի՞նչ չի կարելի անել», որոնց կստորադասվեր կապիտալի շուկայի հիմնախնդիրների քննարկումը:

Պարզից էլ պարզ է, որ կապիտալի շուկայում առաջարկի ու պահանջարկի գործոնները ոչ այնքան ենթակառուցվածքներով են պայմանավորված, որքան միջավայրով՝ ինստիտուտների կայացվածությամբ, դատաիրավական, վարվելակերպային խնդիրներով, և կապիտալի շուկայի զարգացվածությունը ընդամենը հետևանք կարող է լինել թվարկված հիմնախնդիրների լուծման առումով:

Ինստիտուտների չկայացումը կամ դրանց դիսֆունկցիան (ֆունկցիայի խաթարումը) ոչ թե ինստիտուտի ներսում նպատակաուղղված գործունեության, այլ որոշ առումով ինստիտուտի ոչ ադեկվատ Էվոյուցիայի հետևանք է: Երբեմն ինստիտուտների դիսֆունկցիան կապում են հասարակության ներսում տնտեսական ու սոցիալական գործընթացների զարգացման հետ, երբ որոշ ինստիտուտներ չեն հասցնում հարմարվել հասարակական հարաբերությունների դինամիկ զարգացմանը: Ուստիև առաջանում են կառավարման՝ գոյություն ունեցող մեթոդների փոփոխման

կամ ինստիտուտի կազմակերպման նոր, համարժեք կառուցակարգի ընտրության անհրաժեշտություն, որոնց վերաբերյալ առկա են լուսաբանումներ (Յ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, էջ 15-28):

Հարցին՝ ինչու՞, ի վերջո, տնտեսվարողները (նաև հայտնի) չեն թողարկում բաժնետոմսեր, չեն ուզում թափանցիկ լինել, պայմանավորվում է նրանց կողմից դրսևորվող օպորտունիստական վարքագծով: Տնտեսական գործակալի օպորտունիզմը սահմանվում է որպես իր շահին հետամուտ երևույթ, որն իրականացվում է ամեն գնով՝ չխորշելով խարդավանքներից, հանրային կյանքին խորթ, անընդունելի բարքերից, որոնք ունենում են ի սկզբանե (ex ante) և ի վերջո (ex post) դրսևորումներ:

Տնտեսական հեղափոխության անցումային (տրանզիտիվ) փուլում մինչև ժամկետի ավարտը գործերը բարեհաջող կընթանան, եթե նորընտիր ՀՀ Ազգային ժողովը և Կառավարությունը չհապաղեն հատկապես ինստիտուցիոնալ ռեֆորմների բավարար կենսագործման առումով: Այն առաջին հերթին վերաբերում է տնտեսվարողների ու մարդկանց վարքագծային շեղումների հաղթահարմանը, հեղափոխության դիտակետից՝ «չաշխատող» ինստիտուտների փոխլրացմանը: Ինստիտուտների դիսֆունկցիայի, «պետության զավթման» երևույթների առնվազն մեղմմանը կնպաստի ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտների վերացման հնարավոր ուղիների բացահայտումը, որին նվիրված է ինստիտուտների նորովի կազմակերպման՝ վերը ցիտված աշխատանքը:

Երկրում ցանկալի կառուցվածքային տեղաշարժերին նպաստող բոլոր խնդիրները տնտեսության իրական հատվածի և հատկապես գյուղատնտեսության զարգացման, ռեսուրսաօգտագործման (մարդկային կապիտալի, ընդերքի, հողի ու ջրի և այլն), տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը առավել թափ հաղորդելու խնդիրների կարևորությունը կասկած չի հարուցում և պահանջում է գիտելիքահեղք կառավարում:


Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացումն ու տնտեսության թվայնացման հիմնահարցը

Վերջին տասնամյակներում տնտեսական իրադրությունը համաշխարհային ու ազգային տնտեսությունների մակարդակում առավել խոցելի ու հեղիեղուկ է դարձել, տնտեսական ու ֆինանսական ճգնաժամերի հաճախականությունն աճել է, իսկ յուրաքանչյուր ճգնաժամ անխուսափելիորեն իր հետ բերել է հետճգնաժամային նոր «ստատուս-քվո», որը երբեք չի կրկնել մինչճգնաժամային իրավիճակը՝ մարտահրավեր նետելով տնտեսագիտական գործող հարացույցերին ու ընթացիկ տնտեսական քաղաքականություններին:

Այս հարափոփոխ տնտեսական միջավայրում գնալով ավելի է կարևորվում *տնտեսական արժեքանակյան հիմնարարների* (ֆունդամենտալների) գոյությունը, որոնք, անկախ ամենատարբեր տնտեսական վայրիվերումներից, կխարսխեն և կուղենշեն տնտեսական հարաբերություններն ու տնտեսական քաղաքականությունը երկարաժամկետ հեռանկարում՝ դառնալով տնտեսության կայուն զարգացման հուսալի երաշխիք: Այդպիսիք են ***տնտեսական հարաբերությունների սահմանադրական-ինստիտուցիոնալ սկզբունքներն ու կանոնները***:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է, մարդու արժանապատվությունն անօտարելի է և իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու արժանապատվության գումարելիներից մեկը նրա պատշաճ կենսամակարդակն է, որը կարող է ապահովվել ինչպես տնտեսական հարաբերություններին հավասար մասնակցային հնարավորությունների, սեփականության և աշխատանքի իրավունքների արդյունավետ իրացմամբ, այնպես էլ պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության միջոցով:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է՝ հիմնված մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության վրա (գծապատկեր 1): Վերջին տարիներին մասնագիտական գրականության մեջ բանավիճային է դառնում տնտեսության արդյունավետության առաջնահերթությունների հիմնահարցը՝ նկատի առնելով դրանց պատճառահետևանքային հարաբերությունները:



Նկար 1. ՀՀ տնտեսական կարգի հենասյուները

Արդյունավետության առաջնահերթություններից մեկը այս դիտանկյունից համեմատաբար քիչ ուսումնասիրված տնտեսության թվայնացման ու «թվային հասարակություն» ունենալու հիմնահարցն է: Գծապատկերում բերված հենասյուները բովանդակող ագրեգացված նորմերի ու դրանց հարյուրավոր բաղադրիչների իրացվելիության վճռորոշ ու հուսալի երաշխիքներից մեկը առաջիկա տարիներին հանդիսանալու է տնտեսության թվային փոխակերպումը: Այս հանգամանքով է պայմանավորված տնտեսության թվայնացման առանձնացումն ու շեշտադրումը գծապատկերում:

Հասարակության թվային փոխակերպումը (տրանսֆորմացիան) թվային հեղափոխության արդյունք է: Չորրորդ արդյունաբերական հեղափոխության շրջափուլը թվային տեխնոլոգիական հեղափոխության երկրորդ փուլն է: Առանձնահատկությունը նորագույն տեխնոլոգիաների, արհեստական բանականության, մեքենայական ուսուցման և համանման այլ գործիքների լայն կիրառությունն է տնտեսական գործընթացում: Այս միտումներին համարժեք արձագանքելը, իհարկե, կիբեռանվտանգության հաշվառմամբ, արդի մարտահրավեր է կառավարությունների, գործարար շրջանակների ու հասարակությունների համար:

Թվային հարթակները ներտնտեսական խնդիրների լուծումից բացի (ամենատարբեր ոլորտներում բիզնես մոդելների արդյունաբեր գործարկում, տրանսակցիոն ծախքերի իջեցում և այլն), գլոբալ մասշտաբներ են ընդունում, մեծացնում են միջազգային կոմունիկացիաների ու տրանսակցիայի արժեքը: Թվային փոխակերպումները կարող են տեղի ունենալ տարբայնորեն կամ մտածված պետական քաղաքականության արդյունքում: Պետությունները ստիպված են լինելու արագացնել, ինչպես նաև թույլ տալ խուսափել տարաբնույթ ռիսկերից նոր կարգավորումների ու խաղի կանոնների սահմանմամբ:

Աշխարհի բազմաթիվ պետություններ, դիտարկելով թվայնացման ընձեռած արդի հնարավորությունները, ձեռնարկում են ռազմավարական-ինստիտուցիոնալ միջոցառումներ՝ թվային փոխակերպումների ճանապարհով երկարաժամկետ հորիզոնում տնտեսական ներուժի էական ընդլայնման և տնտեսական բարձր աճի ապահովման համար: Հատկանշական է Սինգապուրի օրինակը, որը պետականորեն մշակել է «խելացի ազգ» նախաձեռնությունը, որն ուղղված է 5 առանցքային ոլորտներում (կրթություն, առողջապահություն, տրանսպորտ, ֆինանսներ, քաղաքային տնտեսություն) թվային փոխակերպումների իրականացմամբ թվային տնտեսական հեղափոխության իրականացմանը: Համանման նախաձեռնություններն ակտիվորեն առաջ են մղում Չինաստանը, Հարավային Կորեան, Կանադան, Դանիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, ինչպես նաև Եվրասիական տնտեսական տարածքի երկրները: ԵԱՏՄ կողմից մշակվել և հետևողականորեն առաջ է մղվում ԵԱՏՄ թվային օրակարգը: Հայաստանի Հանրապետությունը, որպես ԵԱՏՄ անդամ-պետություն, ունի ուղղակի մասնակցություն և ստանձնած պարտավորություններ նշված ինտեգրացիոն ձևաչափի շրջանակներում:

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման համար ՀՀ կառավարության առաջնահերթ նպատակների շարքում նշվում է տնտեսության թվայնացման և տեղեկատվության հասանելիության մակարդակի բարձրացումը: Թվայնացման խնդիրներին վերաբերող հնարավոր լուծումները քննարկման առարկա են դարձել (Յ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, Կ. Մինասյան, Ժ. Մխիթարյան, Հ. Չաքարյան, 159 էջ): Տնտեսության թվայնացման հիմնախնդիրների լուծմանը հետամուտ համապատասխան կառույց 2021 թվականին ստեղծվել է նաև Արցախի Հանրապետությունում:

Հայաստանի տնտեսությունը կարող է Եապես շահել տնտեսության թվայնացման ընձեռած հնարավորություններից՝ այդպիսով հաղթահարելով ազգային տնտեսության զարգացմանն ավանդաբար խոչընդոտող այնպիսի հիմնարար գործոնների զսպող ազդեցությունը, ինչպիսիք են՝ փոքր ներքին շուկայով ու մասշտաբի էֆեկտի բացակայությամբ, տնտեսական շրջափակմամբ, դեպի ծով ելք չունենալով, տրանսպորտային, լոգիստիկ ցանցի սահմանափակությամբ, ռեսուրսասակավությամբ (գազ, նավթ) և այլ հանգամանքներով պայմանավորված անմրցունակությունը և տնտեսական սահմանափակ ներուժը:

Թվային տնտեսությունը թույլ է տալիս վերացնել տնտեսությունների միջև գոյություն ունեցող ավանդական սահմանները, համաշխարհային տնտեսության մասնակիցներին ընձեռում է այդ տնտեսությունից օգուտներ քաղելու համահավասար հնարավորություններ: Մյուս կողմից տնտեսության թվային փոխակերպումները առաջ են բերում մարտահրավերներ, որոնք պետք է ժամանակին հասցեագրվեն, առաջացող ռիսկերը՝ արդյունավետորեն կառավարվեն: Դեռևս 2018թ.-ին հրապարակվեց «Հայաստանի թվային փոխակերպման օրակարգ» (ՀԹՓՕ) շրջանակային փաստաթուղթը, որում մինչև 2030թ. ժամանակահատվածի համար համակարգված կերպով ներկայացված էր ՀՀ թվային փոխակերպման ընդհանուր տեսլականը՝ ներառելով գործունեության հետևյալ ուղղությունները.

- «խելացի» համագործակցային, արդյունավետ և գործուն կառավարություն,
- ապագայամետ թվային հմտություններին տիրապետող, արագ ադապտացվող և ստեղծարար աշխատուժ, որն ունակ է առաջ մղել նորարարությունը,
- պահանջարկից միշտ մի քայլ առաջ՝ բարձր արդյունավետությամբ, հուսալի և մատչելի ենթակառուցվածք,
- անվտանգ և դիմակայուն կիրառարածք՝ թվային էկոհամակարգի նկատմամբ վստահության մակարդակը բարձրացնելու համար,
- թվային նորարարությամբ ուղղորդվող, համաշխարհային մակարդակով մրցունակ մասնավոր հատված,

○ փոխկապակցված համագործակցային և գործուն ինստիտուցիոնալ շրջանակ՝ թվային փոխակերպման գործընթացն իրականացնելու համար:
 ՀԹՓՕ փաստաթղթում ձևակերպված են նաև փոխակերպման ծրագրի գործարկման ինստիտուցիոնալ միջավայրը՝ թվարկված գործառույթների նկարագրմամբ:

Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացման հիմնարար խնդիրների լուծման, ինչպես նաև դրան նպաստող թվայնացման շրջանակի համար տվյալների միջազգային շտեմարաններից առանձնացվել են ՀՀ Սահմանադրությամբ նախանշված տնտեսական կարգի՝ ստորև բերվող հասանելի ցուցիչները (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1
ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական կարգի որոշ ցուցիչների տվյալները միջազգային գնահատումներում

	Ցուցիչը և բաղադրյալ ենթացուցիչները (Ցուցչակազմը)	Գնահատականը	Ծանուցում (Նպատակայնությունն ու իրացվելիությունը)
ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՓՎԱՆՈՒԹՅՈՒՆ	Սեփականության իրավունքներ (Հերիթիջ հիմնադրամ)	2021թ. 57.3 միավոր, 78-րդ տեղը 186 երկրների շարքում ¹	Մասնավոր սեփականության իրավունքների պաշտպանության, թույլ մակարդակ ուշացումներ գործընթացում և
	Սեփականության իրավունքների միջազգային համաթիվ (Սեփականության իրավունքների այլանս)	2020թ. ֆիզիկական և մտավոր սեփականության իրավունքների գծով համապատասխանաբար 7 միավոր, 43-րդ տեղը և 3.4 միավոր, 121-րդ տեղը 129 երկրների շարքում ²	
	Սեփականության իրավունքներ և մտավոր սեփականության պաշտպանություն (Համաշխարհային տնտեսական համաժողով)	4.8 և 4.2 միավոր (7 միավորանոց սանդղակում), 46-րդ և 65-րդ տեղերում համապատասխանաբար՝ 141 երկրների շարքում	
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆ	Գործարարության ազատություն (Հերիթիջ հիմնադրամ)	2020թ. 81.9 միավոր, 21-րդ տեղը 186 երկրների շարքում ³	Հիմնված է ՀԲ «Գործարարությամբ զբաղվելու» համաթվի վրա՝ բիզնեսի ոյուրիսության 13 ցուցիչների վրա բիզնեսը սկսելու, վարելու, դադարեցնելու առումներով:
ԱՉԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ	Տեղական	2020թ. գնահատվել է	

¹ <https://www.heritage.org/index/download>:

² <https://internationalpropertyrightsindex.org/country/armenia>:

³ <https://www.heritage.org/index/download>:

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ	մրցակցության ինտենսիվությունը	73.6 միավոր, 36-րդ տեղը աշխարհի 131 երկրների շարքում ¹ :	
	(Համաշխարհային տնտեսական համաժողով)		
	Շուկայական գերիշխանությունը	2018թ. 4.3 միավոր, 28-րդ տեղը 141 երկրների շարքում	Կորպորատիվ ակտիվության բնութագիր՝ գերիշխում են մի քանի գործարարներ, կա սիռվաձուլություն
	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը	2018թ. 4.2 միավոր, 40-րդ տեղը 141 երկրների շարքում	
ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	Հարկեր / ՀՆԱ (Համաշխարհային բանկ)	2019թ. 22.2%, 31-րդ տեղը 132 երկրների շարքում ²	
	Ֆիսկալ առողջությունը (Յերիթիջ հիմնադրամ)	2020թ. 84.3 միավոր, 81-րդ տեղը 186 երկրների շարքում ³	Վերջին երեք տարիների բյուջեի դեֆիցիտների, պարտք / ՀՆԱ հարաբերակցության ազդեցացիա
ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ	Գնաճը (Համաշխարհային բանկ)	2020թ. 1.2%, 118-րդ տեղը 180 երկրների շարքում ⁴	Գնաճի թիրախային միջակայքի ստորին շեմից ցածր է 1.3%-ային կետով
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ	Կապիտալի համարժեքության ցուցանիշը	2020թ. 16.9%, 72-րդ տեղը 143 երկրների շարքում ⁵	Նորմատիվային կապիտալի հարաբերակցությունը ռիսկով կշռված ակտիվներին ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն շեմը 12%-ն է
	Ընդհանուր իրացվելիության ցուցանիշ	2020թ. 25.6%, 57-րդ տեղը 145 երկրների շարքում ⁶	Իրացվելի ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր ակտիվներին
	Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը համախառն վարկերում	2020թ. 6.6%, 30-րդ տեղը 144 երկրների շարքում ⁷	
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ⁸	Պատշաճ կենսամակարդակի իրավունքը (Համաշխարհային բանկ)		
	Շնչային ՀՆԱ-ն	2020թ. 13,284 մլրդ դոլար, 109-րդ տեղը 225 երկրների շարքում	Ըստ գնողունակության համարժեքի

¹ https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2020/am.pdf:

² https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2020/a

³ [6docs/pubdocs/en/wipo_pub_gii_2020/am.pdf](https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2020/am.pdf)

⁴ https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2020/am.pdf:

⁵ <https://www.data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?end=2020&start=2015>:

⁶ <https://www.data.imf.org/>:

⁷ <https://www.data.imf.org/>:

⁸ <https://www.data.worldbank.org/>:

Աղքատության մակարդակ	2019թ. 44%	Օրական 5.5 ԱՄՆ դոլար աղքատության պարագայում
Զինիի գործակից	2019թ. 29.9 միավոր	
Աշխատանքի իրավունք		
Գործազրկության մակարդակ (ԱՄԿ մեթոդաբանություն)	2020թ. 20.2%, 8-րդ տեղը 235 երկրների շարքում	
Արդարացի վարձատրության իրավունքը	2020թ. 35.8% ¹	Նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցությունն է: Եվրոպական ստանդարտների համաձայն՝ պետք է կազմի առնվազն 60%:

Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացման թվայնացված շրջանակի հիման վրա, տնտեսագիտամաթեմատիկական մեթոդների կիրառությամբ հնարավոր է կառուցել սահմանադրականացման մակարդակն արտացոլող ազդեցացված ցուցիչ՝ համաթիվ, և իրականացնել համեմատական վերլուծություններ ինչպես ըստ տարիների, այնպես էլ աշխարհի այլ երկրների հետ՝ վեր հանելով «Նեդ» տեղերը և առաջադրելով լուծումներ՝ միտված տնտեսական հարաբերությունների սահմանադրականացման մակարդակի բարձրացմանը: Ազդեցացված ամբողջ ցուցիչի կառուցումը ինքնուրույն, ոչ ոլորին հետազոտության առարկա է:

Գիտության գիտելիքահենք կառավարումը ՌԱՀԻ ձևավորման համատեքստում

Երկրի զարգացման, նրա տնտեսությունը լճացումից դուրս բերելու և այնուհետ հզորացնելու գործում գիտության արդյունավետ, տնտեսագիտահենք կառավարումը բացառիկ նշանակություն ունի, որում առանձնացվում են մի շարք առաջնահերթ հիմնախնդիրներ:

Առաջին հիմնադրույթը վերաբերում է ՀՀ գիտության կառավարման բարեփոխման մոդելի ընտրությանը: Այն կոչված է լինելու առավելագույնս նպաստել տնտեսության կառուցվածքային ու տեխնոլոգիական արդյունավետ բարելավումների իրականացմանը: Բարելավված կառուցվածքում (իսկ վերջինս դիտարկվում է որպես երկրի հեռանկարային զարգացման ծրագրի արդյունք) իր ուրույն տեղը պետք է ունենա ռազմաարդյունաբերական համալիրը (ՌԱՀ): Տնտեսության կառուցվածքում հիմնավորված ՌԱՀ-ի «կոնֆիգուրացիայի» ձևավորման մեխանիզմը կարող է խարսխվել հետևյալ համալուծ ռազմավարական փոխգործակցման վրա.

- ✓ ռազմական գերատեսչության պետական պատվերով նախանշվում է առաջիկա տարիների սպառազինությունների պահանջարկը՝ հնարավոր պատերազմական իրավիճակներում պաշտպանական ու հարձակողական գիմնուցների արդիականացման ու համալրման հնարավորինս մանրակրկիտ հաշվառմամբ, «ռազմական տնտեսություն» գիտակարգի դրույթներին համապատասխան,
- ✓ պետական պատվերը «իջեցվում է» շահառու գիտահետազոտական (չի բացառվում նաև մասնավոր հատվածի) կազմակերպություններին՝

¹ ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://www.armstat.am>:

համապատասխան նկարագրիչների՝ ռազմական «պրոդուկտի» բաղադրիչների կազմի ու ծավալների մասին տեղեկատվությամբ:

- ✓ Անվտանգային խնդիրների լուծման մշակումները երկրի՝ այդ նպատակներով ստեղծված ռազմաքաղաքական կառույցի հավանությանն արժանանալուց հետո հասցեագրվում են փորձարարական-կոնստրուկտորական ստորաբաժանումներին և արտադրությանը:

Երկրորդ հիմնադրույթը ՀՀ գիտության արդյունավետ կառավարման խնդիրների ամբողջական ու համապարփակ ցանկի բացահայտումն է: Վերջինս ինքնին բարդ խնդիր է, որը ներկայումս բազային ու թեմատիկ ֆինանսավորմամբ առաջադրվում է հետազոտական կազմակերպություններին ու խմբերին: Ընդ որում, այդ միջոցների առաջանցիկ չափերը պետք է ամրագրվեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մինչև 15-20 տարիների հեռանկարային ու միջնաժամկետ ծրագրերում, նորմատիվային փաստաթղթերում:

Առաջադրվող խնդիրների ցուցակագումում ակներև են պետբյուջեից գիտությանը հատկացվող միջոցների «արդար» բաշխման և դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները: Միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման չափանիշները այնքան բազմազան ու ընդգրկուն են, որ տնտեսության զարգացման կարիքներին հատկացվող միջոցների որոշակի նվազագույն շեմից հետո ընդհուպ կասկածի տակ կարող է առնվել դրանց արդար բաշխման հնարավորությունը:

Ներկայումս առկա է «չեղածի ի՛նչը բաշխել» մտահոգիչ իրավիճակը՝ դրանից հետևող միջոցների փոշիացման վտանգով հանդերձ: Տեսանելի է փոշիացման վտանգի մուտքման աղբյուրը. այն տնտեսությունում զբաղվածների միջին աշխատավարձին գիշող ցուցանիշն է գիտության ոլորտում զբաղվածների միջին աշխատավարձից, որից հետևությունն ակնհայտ է:

Երրորդ հիմնադրույթը գիտությանը հատկացվող միջոցների (մոտ 30 մլն ԱՄՆ դոլարի չափով) բաշխման չափանիշների հստակեցումն է գիտության զարգացման հայեցակարգերում ու օրենսդրական-նորմատիվային տարբեր փաստաթղթերում, որը ստեղծել է ինստիտուցիոնալ լուրջ ճեղքվածք:

Այսուհանդերձ, միջոցների արդարացի բաշխման ճեղքվածքը կարող է մեղմվել, եթե «ինչպես բաշխելը» ստորադասվի այն կանխարգելող հետևյալ խնդիրների լուծմանը.

- ✓ Ճշգրտվեն անվտանգային խնդիրների լուծման հնարավորությունները տարածաշրջանում պատերազմական գործողություններում մեկուսի ու դաշնակցային եղանակներով դիմակայելու հարցում: Այս խնդրի լուծումը ռազմաքաղաքական համատեքստում է:
- ✓ Ճշգրտվեն ՀՀ-ում իրականացվելիք հետազոտություններից կառավարության սպասելիքները (սպառնալիքների կանխման արագ արձագանքման համակարգեր և այլն):
- ✓ Սահմանվեն գիտական հետազոտությունների հիմնական ուղղություններն ու ծավալները (հիմնարար ու կիրառական հատվածներով՝ ըստ ոլորտների հնարավոր մաքսիմալ տարբերակմամբ):
- ✓ Սահմանվեն հետազոտությունների վերջնարդյունքները՝ դրանց իրականացման ժամկետների նախանշմամբ:

Ինքնին բարդ խնդիր է գիտական արդյունքների շահառուների ցանկի կազմավորումը, որի ձևավորումը կարող է ներկայացվել հայտատուների ու պատվիրատուի նախաձեռնության զուգորդմամբ:

Հետազոտությունների ցանկի ընտրության, կառուցակարգերի, ծավալների և այլ բնութագրերի ձևավորման հնարավոր դրվագներից մեկը տեսնենք վերը դիտարկված ՌԱՀ-ի օրինակով: Որոշումների կայացման նկարագրված սխեմայով առաջնորդվելիս, որքան էլ պարադոքսալ հնչի, գիտական հիմնավորվածությունը

կարող է հանգեցնել այնպիսի եզրահանգման, որ ՌԱՀ-ի լայնամասշտաբ գործարկումը նպատակահարմար չհամարվի, որ անհրաժեշտ սպառազինությունները կամ դրանց ճշող մասը գնվի պետական պատվերով՝ միջոցներն ուղղելով առավել մրցունակ ճյուղերի զարգացմանը և հավելյալ եկամուտներով համալրել ՌԱՀ-ին հատկացվելիք ֆինանսական միջոցները: Չի ժխտվում, որ գիտական հիմնավորվածությամբ կարող է հաստատվել տեսակետ, ըստ որի՝ ՌԱՀ-ը կարող է ծավալվել լայն սպեկտրով (ընդգրկմամբ) և դառնալ ՀՆԱ-ի արտահանման զգալի բաղադրիչ:

Բարձրացված հիմնահարցերի վերաբերյալ լիարժեք պատասխանների ակնկալիքը համակարգի ինստիտուցիոնալ արդյունավետության տեսանկյունից պահանջում է Հայաստանում խնդրո առարկա ոլորտի գործունեությունը քննության առնել նորանկախ գիտության կառավարման բազմասպեկտ հիմնախնդիրների դիրքերից:

Նկատի ունենալով մշակումների և դրանց արդյունաբերական նմուշների, փորձակոնստրուկտորական աշխատանքների, նախագծման ու փորձնական արտադրանքի նոր տեսակների և զանգվածային արտադրություններում ներդրման բարդ ու աշխատատար գործընթացը՝ հիմնավորված է թվում ՀՀ Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության կողմից «Գիտության և տեխնիկայի, տեխնոլոգիական նորարարական ուղղությունների» 10-15-ամյա ծրագրի մշակումը և դրա հետագա գործարկումը: Այդ ծրագիրը կարող է մանրամասնվել հնգամյա կամ եռամյա կտրվածքով, որոնք օրենքի տեսքով հաստատվելուց հետո կարող են դառնալ կատարման համար պարտադիր՝ ամենամյա հաշվետվությունը ներկայացնելով Ազգային ժողովի հաստատմանը: Նշված օրենքների նախագծերը մասնագիտական հանրության քննարկումից հետո պետք է վերաճեն և դառնան ոլորտի զարգացման համալիր նպատակային ծրագրեր:

Օգտագործված գրականություն

1. Հարությունյան Գագիկ, Սարգսյան Հայկ, Գևորգյան Ռուբեն, Սահմանադրականություն. Ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ, «Չանգակ», Երևան, 2017:

2. Սարգսյան Հայկ, Մարկոսյան Աշոտ, Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, «Չանգակ», Երևան, 2014:

3. Սարգսյան Հայկ, Հարությունյան Խոսրով, Մանասյան Վոլոդյա, ՀՀ տնտեսության ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011:

4. Սարգսյան Հայկ, Տնտեսական հեղափոխության գաղափարական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, Բանբեր Երևանի համալսարանի, Տնտեսագիտության գիտական հանդես (1), Երևան, 2020:

5. Սարգսյան Հայկ, Իշխանության գերխնդրի սահմանադրականության մակարդակի բարձրացումն է: Ի՞նչ անել, Գիտագործնական խորհրդածողով: «Հայաստանի տնտեսության զարգացման հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները»: «Անտարես», Երևան, 2018:

6. Սարգսյան Հայկ, Գևորգյան Ռուբեն, Ներկառուցված ոչ ֆորմալ ինստիտուտների գործառնումը սահմանադրականության համատեքստում, Էկոնոմիկա գիտական, թիվ 1, 2019:

7. Սարգսյան Հայկ, Գևորգյան Ռուբեն, Մինասյան Կարինե, Մխիթարյան Ժիրայր, Չաքարյան Հրաչյա, ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2020:

Works Cited

1. Harutyunyan Gagik, Sargsyan Hayk, Gevorgyan Ruben, “Sahmanadrakanut’yun. Axtoroshman, mshtaditarkman ev karavarman xndirner”, Yerevan, [Constitutionalism: Issues of diagnostics, monitoring and administration, Yerevan] 2017 (In Armenian)
2. Sargsyan Hayk, Markosyan Ashot, “Hayastani tntesut’yan verap’oxumner’ ev verelqi herankarnery”. , Yerevan [Reforms and perspective of rise of the economy of Armenia. Yerevan] 2014. (In Armenian)
3. Sargsyan Hayk, Harutyunyan Xosrov, Manasyan Volodya, “HH tntesutyan agrarayin hatvac’i ev gyughi kayun zargacman social-tntesakan himnaxndirner’”, Yerevan, [Socio-economic problems of sustainable development of the agrarian sector and rural territories of the RA economy. Yerevan] 2011. (In Armenian),
4. Sargsyan Hayk, “Tntesakan heghapoxut’yan gaghaparan himqery Hayastani Hanrapetut’yunum”. Yerevan. [Ideological Basis of Economic Revolution in the Republic of Armenia. Yerevan] 2020. (In Armenian)
5. Sargsyan Hayk, “Ishxanut’yan gerxndiry sahmanadrakanut’yan makardaki bardzracumn e”, “Inch anel”. Yerevan [The main task of the government is to increase the level of constitutionalism. “What to do”. Yerevan] 2020. (In Armenian)
